

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՍԱՍՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

#### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԺԲ.00.02- Հանրային իրավունք** (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան

ԵՐԵՎԱՆ - 2020

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....4**

**ՑՈՒՆ.....4**

**ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....21**

§ 1. Երկրի պաշտպանության խնդիրը պետության սահմանադրական գործառույթների համակարգում.....21

§ 2. Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգի առանձնահատկությունները.....34

§ 3. Պաշտպանության ոլորտի իրավական կարգավորման ու կառավարման սկզբունքները պետության կառուցակարգի սահմանադրական հիմունքների համակարգում.....50

**ԳԼՈՒԽ 2. ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԻՐԱՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....62**

§ 1. Պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հետազոտման առարկան, հիմնական հասկացությունները և հետազոտման մեթոդը.....62

§ 2. Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման տարալուծված իրավական տեխնիկան և դրա հիմնական ինստիտուտները.....6

9

§ 3. Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանձնացված ու խառն իրավական տեխնիկան և դրանց հիմնական ինստիտուտները.....78

§ 4. Երկրի պաշտպանության հարաբերությունների կառավարման տարատեսակ կարգերի հիմնահարցը.....87

**ԳԼՈՒԽ 3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՏՏՈՒՄ.....96**

§ 1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության (զինված ուժերի) բարձրագույն կառավարման սովորական (խաղաղ) համակարգը և գլխավոր հրամանատարի ինստիտուտը.....96

§ 2. Պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման առանձնահատկությունները պատերազմական իրավիճակում.....110

§ 3. Պատերազմական իրավիճակում արագացված օրենսդրման կառուցակարգերի այլ երկների սահմանադրական փորձը.....122

§ 4. Պաշտպանության նպատակով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորման հիմնախնդիրը.....  
.132

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....146**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....160**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսական հետազոտության արդիականությունը:** Երկրի պաշտպանությունը որպես պետության գործառույթ կարևոր, առաջնային նշանակություն ունի պետության սահմանադրական գործառույթների համակարգում: Այս հիմնարարությամբ քաղաքագիտության և իրավագիտության մեջ հանրաճանաչ և գրեթե անբեկանելի, հիմնավորված գաղափար է: Այդ գաղափարի սահմանադրական իրավական կողմերն արտացոլված են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում, որում Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է ինքնիշխան պետություն, իսկ ինքնիշխանության ապահովման և երաշխավորման կարևորագույն միջոցը պաշտպանական գործառույթի իրականացումն է: Այս հիմքով ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների շարքում իր ուրույն տեղն է գտել զինված ուժերին և պաշտպանությանը նվիրված հոդվածը: Այս փաստն արդեն առաջ է բերում հետազոտական խնդիրը՝ պարզել թե ինչպես է իրացված երկրի պաշտպանությանը նվիրված սահմանադրական կարգի հիմունքը ՀՀ սահմանադրական և ընթացիկ օրենսդրական կարգավորման կառուցվածքում:

Երկրի պաշտպանության գործառույթը բավականին բարդ, բազմատարր ու բազմակողմանի գործունեություն է և արդի իրավական պետության մեջ դրա ապահովման կարևոր միջոցներից մեկն էլ իրավական կարգավորումն է, դրա արդյունավետությունը, պաշտպանության խնդիրների լուծմանը նպաստակամղվածությունը: Իր հերթին երկրի պաշտպանության իրավական ապահովումը ևս բազմամակարդակ նորմատիվային համակարգ է, այն սկսվում է Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներից, այնուհետև կոնկրետացվում սահմանադրական հիմնական իրավական ինստիտուտներում, հատկապես պետական կառուցակարգի օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթներում: Իրավական կարգավորման այս շղթան կարիք ունի հատուկ սահմանադրական իրավական հետազոտության՝ ուղղված դրա ամբողջականության, տրամաբանականության, համակարգային միասնության հատկանիշների բացահայտմանը, այդ կարգավորման մեջ առկա իրավական խնդիրների վեր հանմանը, իմաստավորմանը և լուծումների մշակմանը և առաջարկմանը:

Երկրի պաշտպանության խնդրի լուծմանն ուղղված սահմանադրական գործառույթը լինելով ցանկացած պետության գործունեության առաջնային, առանցքային

ուղղությունը, ձեռք է բերում որոշակի կարևորություն նաև տվյալ երկրի աշխարհաքաղաքական առանձնահատկությունների պատճառով: Կախված աշխարհաքաղաքական պայմաններից պետություններից ամեն մեկը որոշակիորեն ավելի շատ է կարևորում իր պաշտպանության խնդիրը: Երբ շրջակա աշխարհաքաղաքական միջավայրը պարունակում է ավելի քիչ, ապապես ասած, ենթադրվող, հնարավոր, բայց ոչ իրական սպառնալիքներ կամ վտանգներ, ապա պաշտպանության գործառույթի իրականացման չափերը, մասշտաբներն ու ինտենսիվությունը որոշակիորեն նվազում են: Հակառակ դեպքում, այսինքն՝ աշխարհաքաղաքական միջավայրում առկա արտաքին սպառնալիքների ու վտանգների իրական ու արդեն հավանական բնույթը ստիպում են պետությանն ավելի ու ավելի անընդհատ կատարելագործել իր պաշտպանական համակարգը և դրա կառավարման իրավական կարգավորման բաղադրատարրը:

Այս տեսանկյունից խնդիրը ՀՀ-ի համար դառնում է ավելի հրատապ, քանզի նրա աշխարհաքաղաքական դրությունը բավականին բարդ է, դրանում սպառնալիքներն ու վտանգները ավելի շատ են, հետևաբար ամեն պահ հնարավոր է նոր պատերազմ, օրինակ՝ 2016 թ. Ապրիլյան քառօրյան: Այս հանգամանքը հաստատում է այն անհրաժեշտությունը, որ պաշտպանական համակարգի սահմանադրական և ճյուղային իրավական կարգավորումը պետք է լինի գրեթե կատարյալ, իսկ այդ հատկությանը հասնելու միջոցը մանրազնին ու բազմակողմանի գիտական հետազոտությունն է, պաշտպանության կառուցակարգի իրավական տարրի գնահատականը, դրանում առկա խնդիրների վեր հանումը և լուծումների առաջադրումը:

Պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հիմնահարցերի տեսական իրավական հետազոտման հրատապության հիմքերը գալիս են նաև պաշտպանական համակարգի, հատկապես դրա կառավարման և իրավական կարգավորման տարրերի ձևավորման պատմաիրավական միտումներից: Պետությունները, որոնք կան արդեն մի քանի հարյուրամյակ, ունեն պաշտպանության ու պատերազմելու բավականին հարուստ փորձ, հետևաբար նաև՝ արդեն մշակված ու պատմականորեն փորձարկված պաշտպանական պետաիրավական կառուցակարգեր: Հայաստանի Հանրապետությունը չունի այդպիսի պատմական-իրավական փորձ: Բանակաշինությունը այստեղ սկսվել է անկախության հռչակումով:

Մյուս կողմից գրեթե տասնամյակը մեկ իրականացվող սահմանադրական բարեփոխումները շոշափում են նաև երկրի պաշտպանության համակարգի բարձրագույն կառավարման հարաբերությունները: Սահմանադրական բարեփոխումների վերջին գործընթացը, որն հանգեցրեց նաև կառավարման ձևի փոփոխության, արմատական վերակառուցում իրականացրեց նաև մեզ հետաքրքրող հարաբերությունների կարգավորման նորմատիվային հիմքերում:

Թվարկված և մի շարք այլ կարևոր գործոններ առավել հրատապ ու արդիական են դարձնում երկրի պաշտպանության սահմանադրական գործառույթի իրականացման և ռազմաստրատեգիական կառավարման իրավական հետազոտությունը:

**Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը երկրի պաշտպանության գործառույթի իրականացման (կառավարման ու կարգավորման) հետ կապված հասարակական հարաբերություններն են, դրանց սահմանադրաիրավական կարգավորման կազմակերպական կողմերը: Հետազոտության առարկան այդ հարաբերությունների պետական կառավարման ընդհանուր համակարգի սահմանադրական կարգավորման նորմատիվային համակարգն է, դրա հետ կապված տեսական-իրավական, գործնական-իրավական հասկացությունները, իրավական ինստիտուտները, վերջինների բնութագրական գծերը:

**Ատենախոսական հետազոտության նպատակն է** ամբողջական տեսաիրավական վերլուծության ենթարկել պաշտպանական ոլորտի պետական կառավարման ընդհանուր սահմանադրաիրավական (վերին մակարդակի) համակարգը, այդ գործառույթի իրականացման իրավական առանձնահատկությունները՝ պայմանավորված զինված ուժերի յուրահատուկ բնույթով, կառավարման տարբեր մակարդակների հարաբերակցությունը, պաշտպանական ոլորտի հիմնական սահմանադրական ինստիտուտները, փորձելով վեր հանել առկա խնդիրները, իրավական կարգավորման բացերը, մշակել բացերի լրացման, խնդիրների լուծման ու պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման կատարելագործման իրավական առաջարկություններ:

Ատենախոսական հետազոտության թեմայի բովանդակությանը և շրջանակին համապատասխան որոշված նպատակին հասնելու համար առաջարկվել են հետազոտական հետևյալ խնդիրները.

ա) իրականացնել երկրի պաշտպանության խնդրի և համապատասխան գործառույթի դերի և տեղի վերլուծությունը պետության սահմանադրական գործառույթների համակարգում,

բ) վեր հանել, համակարգել և վերլուծել երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգերի առանձնահատկությունները պետության սահմանադրական այլ գործառույթների համակարգում,

գ) վերլուծել երկրի պաշտպանության կառավարման մակարդակները, դրանցից ամեն մեկին բնորոշ սկզբունքները, առանձնացնել բուն զինված ուժերի կառավարման սկզբունքների համակարգը, վերլուծել դրանց հիմքում ընկած պատմական օրինաչափությունները,

դ) բնութագրել երկրի պաշտպանության կառավարման և իրավական կարգավորման տարամակարդակ սկզբունքների հարաբերակցությունը հակասականության, փոխգործակցության և համահունչության տեսանկյուններից՝ հիմք ընդունելով սահմանադրական սկզբունքների բարձրագույն իրավական ուժը,

ե) հետազոտել պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավատեխնիկական կողմերը, կատարել սահմանադրությունների դասակարգում այդ չափանիշով,

զ) համաշխարհային փորձի հիման վրա ամփոփել երկրի պաշտպանական ոլորտը կարգավորող հիմնական սահմանադրական ինստիտուտների շրջանակը,

է) առանձնացնել պաշտպանական ոլորտի կառավարման սովորական (ընդհանուր) և արտակարգ (շեղվող) տեսակները, կատարել դրանցից յուրաքանչյուրի կառուցակարգի առանձնահատկությունների վերլուծություն,

ը) համեմատել ՀՀ Սահմանադրության նախատեսած պաշտպանական ոլորտի սովորական և արտակարգ-ռազմական կառուցակարգերը ազատական վարչաձևի երկրների համապատասխան սահմանադրական կարգավորումների հետ,

թ) հետազոտել, վեր հանել և ընդհանրացնել պատերազմի ժամանակի համար սահմանված արագացված օրենսդրման ընթացակարգերի սահմանադրական կարգավորման համաշխարհային փորձը,

ժ) վերլուծել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման սահմանադրաիրավական ինստիտուտը պաշտպանության ապահովման նպատակների տեսանկյունից:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Հետազոտության թեմայի առարկայի և դրանից բխող խնդիրների շրջանակներում կատարված հատուկ իրավական ուսումնասիրություններ գրեթե չկան: Հայաստանի Հանրապետությունում մատնանշված հարցերի գիտական հետազոտություններ չկան ո՛չ ընդհանուր տեսական, ոչ էլ ճյուղային իրավական գիտություններում՝ սահմանադրական և վարչական<sup>1</sup>: Հրապարակում եղած մենագրական հետազոտություններից աչքի է ընկնում Ս. Տ. Քոչարյանի «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումն ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012, (374 էջ) աշխատությունը: Սակայն ինչպես երևում է վերտառությունից, հաստատվում բովանդակությամբ, այն ունի անվտանգաբանական ուղղվածություն: Հեղինակն այդ աշխատության մեջ քննարկել է նաև ՀՀ ռազմական կառավարման հիմնահարցերը (տե՛ս 167-213 էջերը), սակայն դրանք հիմնված են պետության կիսանախագահական կառավարման ձևի ռազմական կառավարման ինստիտուտների վրա, հետևաբար կառավարման նոր ձևի պայմաններում կորցրել են իրենց արդիականությունը:

Ընդհանուր տեսապատմական իրավական օրինաչափությունների դիրքերից Ա. Վաղարշյանը հատուկ հետազոտման առարկա է դարձրել երկրի պաշտպանության խնդիրը, դրա իրավական կարգավորման հիմնահարցերը: Նա Հայաստանի առաջին հանրապետության պետական շինարարության ու գործառնությունների փորձի հիման վրա առաջարկել է արդի հայկական պետության կազմակերպման ու գործունեության սկզբունք՝ անվանելով այն պաշտպանունակություն<sup>2</sup>:

Արդի պետութենագիտության մեջ բազմաթիվ են իրավական պետության հասկացության, բնութագրերի, այդ տեսության ծագման ու գաղափարի կենսագործման և այդ պետության հայեցակարգի բազմաթիվ այլ տարրերի վերաբերյալ հետազոտությունները: Սակայն դրանցից ոչ մեկում չկա իրավական պետության ու երկրի

---

<sup>1</sup> Համապատասխանաբար պետության և իրավունքի տեսության ուսումնական ձեռնարկներում անտեսվում է այդ հարցը (տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ /Հեղ. խումբ, գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Ս. Մուրադյան, Եր.: Լուսաբաց հրատարակչության տուն, 2014, 692 էջ; Ա. Աղասյան, Պետության և իրավունքի տեսություն: Դասախոսություններ /Եր., Տիգրան Մեծ, 2011, էջ 127-128: Հայերեն հրապարակվածներից աչքի է ընկնում Վ.Ն. Խրոպանյուկի ռուսերենից թարգմանված դասագիրքը, որը ներկայացնում է երկրի պաշտպանության պետական գործառնությունը:

<sup>2</sup> Տե՛ս **Վաղարշյան Արթուր Գրիշայի**, Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր.: ԵՊՀ հրատ., - ԵՊՀ, 2012, էջ 195-241; **Վաղարշյան Ա.Գ.** «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 2 (88). 2016, էջ 45-53; **Վաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 203-206:



պաշտպանության խնդրի փոխկապակցված հետազոտություն<sup>3</sup>: Նույնիսկ աշխարհաքաղաքականությունը չի փորձել պետության, քաղաքականության, աշխարհի քաղաքական վերաբաժանումների, պատերազմի ու քաղաքական աշխարհագրության համատեքստում քննարկել, իմաստավորել երկրի պաշտպանության խնդիրը<sup>4</sup>:

Եվ արտասահմանյան, և՛ հայրենական հեղինակները հետազոտության առարկայի տիրություն ներառված սահմանադրական-իրավական հիմնախնդիրներից առավել շատ անդրադարձել են արտակարգ և ռազմական դրության ռեժիմներին, իսկ գերակշռող մասով՝ այդ դրությունների պայմաններում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերի չափանիշների կտրվածքով: 2015 թ. Սահմանադրության ընդունումից հետո ՀՀ-ում միայն Վ. Պողոսյանը և Ն. Սարգսյանը փորձեցին կանգ առնել կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում զինված ուժերի ղեկավարման հարցերի վերլուծության վրա<sup>5</sup>: Սակայն այս հեղինակները ընդամենը նկարագրում են սահմանադրական դրույթները, վեր հանված չեն պաշտպանական համակարգի կառավարմանը բնութագրական թերությունները սահմանադրական նոր կարգավորման պայմաններում: Հեղինակները կառավարման նոր ձևի պայմաններում պաշտպանական համակարգը գնահատելուց հիմք ընդունելով ճիշտ մեկնակետ, այն է՝ «իրականում կառավարման համակարգն ինքնին որևէ անմիջական կապ չունի զինված ուժերի օպերատիվ կառավարման արդյունավետության հետ, այն պայմանավորված է կոնկրետ կառավարման համակարգում ներդրված մեխանիզմներով», իսպառ չեն նկատում ՀՀ զինված ուժերի բարձրագույն կառավարման համակարգի ակնհայտ թերությունները, նույնիսկ գերազնահատում են դրա հնարավորությունները:

Պաշտպանական հարաբերությունների կառավարման վերաբերյալ հոդվածներ են հանդիպում «Հայկական բանակ» հանդեսում, սակայն դրանք մեծամասամբ վերաբերում են պաշտպանական համակարգի կառավարման միջին և ստորին մակարդակներին, դրանց բարեփոխման հիմնահարցերին<sup>6</sup>: Ռազմական իրավունքի

<sup>3</sup> Իրավական պետության նշված հիմնահարցերի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Соколов А.Н.**, Правовое государство: от идеи до ее материализации. - Калининград: ФГУИПП, «Янтарный сказ», 2002. - 456 էջ:

<sup>4</sup> Տե՛ս **Վալեսյան Ա., Վալեսյան Լ.**, Քաղաքական աշխարհագրություն. - Եր., ԵՊՀ հրատ.: 2005, 339 էջ:

<sup>5</sup> Տե՛ս **Պողոսյան Վ., Սարգսյան Ն.**, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը (համառոտ պարզաբանումներ), Եր., Տիգրան Մեծ, 2016, էջ 3, 124-125:

<sup>6</sup> Տե՛ս օրինակ՝ «Պաշտպանության ռազմավարական վերանայում», Հայկական բանակ, թիվ 3 (85), 2015, 130 էջ, «ՀՀ զինված ուժերի զարգացման տեսլականը», Հայկական բանակ, թիվ 1-2 (95-96). 2018, 261 էջ:

տեսության շրջանակներում իրականացված ատենախոսական հետազոտությունների թեմաների մոտ կեսդարյա կտրվածքով ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետազոտողներն ավելի հաճախ ուսումնասիրել են ռազմական դրության, ռազմական կառույցի իրավական բարեփոխումները և դրանց պատմությանը, զինված բախումների միջազգային իրավական կարգավորումները, ռազմական իրավունքի առանձին, նեղ, հիմնականում իրավապահպան բնույթի ինստիտուտները<sup>7</sup>: Թեմայի հետ մասամբ առնչվող հետազոտություններ իրականացրել սահմանափակ թվով հեղինակներ: Սակայն դրանց մի մասն ունի պատմաիրավական ուղղվածություն, հետևաբար անհամադրելի է արդի պետաիրավական իրողությունների հետ<sup>8</sup>: Մյուսները, հիմնականում ՌԴ կառավարման ձևի տեսանկյունից հետազոտել են ռազմական կառավարման համակարգի որոշակի ենթահիստիտուտներ, մասնավորապես՝ զինված ուժերի կիրառման, ռազմական անվտանգության, ռազմական բարեփոխումների սահմանադրական հիմքերի, նախագահի պաշտպանական լիազորությունների հիմնահարցերը<sup>9</sup>: Տեսաբաններից միայն Ի. Գ. Տոմիլովն է քննարկել զինված ուժերի ղեկավարման հարցերը իշխանությունների բաժանման համատեքստում: Սակայն այդ հետազոտությունը կառուցված է ՌԴ կառավարման ձևի փորձի վրա<sup>10</sup>:

---

<sup>7</sup> Տե՛ս օրինակ՝ **Мигачев Ю.И.**, Конституционные права военнослужащих (Сравнительное исследование законодательства Российской Федерации, США, Франции и ФРГ): Дисс. ... канд. юрид. наук. М.: ВКИ, 1993; **Кучма Ю.Н.**, Законодательство военного времени - средство управления государством в условиях Великой Отечественной войны (системный анализ): Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 1995; **Пчелинцев С.В.**, Правовое регулирование военного положения в Российской Федерации: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 1998.

<sup>8</sup> Տե՛ս օրինակ՝ **Бурдин П.К.**, Правовые основы организации Красной Армии в 1918-1919 гг.: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВЮА, 1950; **Ордин К.В.**, Конституционные основы организации обороны Советского государства в первой, главной фазе его развития: Дисс. ... канд. юрид. наук. М., 1952; **Скрипилев Е.А.**, Военное право Древнего Рима в 6-3 вв. до н.э. (историко-юридическое исследование): Дисс. ... канд. юрид. наук. М., 1948; **Бирюков Ю.М.**, Советское военное законодательство и его роль в строительстве и укреплении Вооруженных Сил СССР: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВПА, 1968; **Стрекозов В.Г.**, Конституционные основы защиты социалистического Отечества: Дисс.: докт. юрид. наук. М.: ВКИ, 1981.

<sup>9</sup> Տե՛ս օրինակ՝ **Андреев А.Ф.**, Правовые основания применения Вооруженных Сил Российской Федерации по защите целостности и неприкосновенности территории России: Дисс. : канд. юрид. наук. М.: ВУ, 2001; **Золотарев В.А.**, Военная безопасность России: политико-правовые проблемы: Дисс. ... докт. юрид. наук. М.: ВУ, 1999; **Озеров В.А.**, Конституционно-правовые основы военной реформы в Российской Федерации: Дисс. : канд. юрид. наук. М.: РАГС, 2001; **Писарев А.Н.**, Полномочия Президента Российской Федерации в области обороны: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВАЭФиП, 1995; **Писарев А.Н.**, Полномочия органов государственной власти Российской Федерации в области обороны (системно-правовое исследование): Дисс. ... докт. юрид. наук. М.: ВУ, 2001; **Русин С.А.**, Право как средство управления Вооруженными Силами Российской Федерации: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 2000; **Русское С.В.**, Организационно-правовые основы оборонной деятельности органов местного самоуправления в Российской Федерации: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 1999.

<sup>10</sup> **Томилов И.Г.**, Реализация принципа разделения властей в деятельности государственных органов по руководству Вооруженными Силами РФ: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 1999.

Սույն ատենախոսության թեմայի հետ կապված հրատարակված հետազոտություններից աչքի են ընկնում Լ. Բարսեղյանի մի շարք հոդվածներ, որոնցում արծարծվում են ՀՀ պաշտպանության սահմանադրավական կարգավորման հիմնահարցերը<sup>11</sup>: Դրանցում հեղինակը քննարկելով ՀՀ աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական առանձնահատկությունները հիմնավորում է դրանց համահունչ պետական կառավարման սահմանադրական կարևոր սկզբունքի՝ պաշտպանության անհրաժեշտությունը և այդ սկզբունքի դիրքերից վերլուծում է ՀՀ պաշտպանության կառավարման իրավական հիմքերը 1990 թ.-ից մինչև մեր օրերը:

Այսպիսով, թեմայի առարկայի տեսանկյունից իրավագիտության մեջ նկատվում է հետազոտությունների պակաս, իսկ որոշ հիմնահարցերում նաև տեսական-իրավական իմաստավորման բաց, որի հաղթահարման փորձ է սույն ատենախոսական աշխատանքը:

**Թեմայի հետազոտման տեսական հիմքերը:** Ատենախոսության թեմայով որոշված հիմնախնդիրների շրջանակը ներառված է մի շարք գիտական ոլորտների հետազոտության առարկաների տիրույթներում: Ռազմական կառավարման մակարդակների, դրանց սկզբունքների ու պահանջների հիմնահարցերը ուսումնասիրում են ռազմական արվեստի մաս կազմող ստրատեգիան, օպերատիվ արվեստը և մարտավարությունը (տակտիկան), ռազմական իրավունքի տեսությունը, որոնց տեսական հետազոտությունների արդյունքները հիմք են հանդիսացել հետազոտության թեմայի համար առանցքային նշանակություն ունեցող հարցերի վերլուծության, պարզաբանման, որոշակիացման համար: Խոսքը գնում է պատերազմի տեսության մեջ քննարկվող սկզբունքների, օրինաչափությունների մի կողմից և արդի ժողովրդավարական պետության կառավարման սկզբունքների մյուս կողմից, հարաբերակ-

---

<sup>11</sup> Տե՛ս Բարսեղյան Լ., «Երկրի պաշտպանության խնդրի (նպատակի) լուծման կառուցակարգի հնարավոր սահմանադրական ուղիները. Պաշտպանության գործառույթ, թե պաշտպանունակության սկզբունք», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N 105, 2018, էջ 23-31; Բարսեղյան Լ., «Երկրի պաշտպանության հարաբերությունների օրենսդրական կարգավորումը անկանալուց հետո. Կարգավորման օբյեկտիվ խնդիրները և իրական միտումները 1991-1995 թթ.», «Ֆինանսներ և էկոնոմիկա», # 5-6, (213-214), 2018, էջ 187-191; Բարսեղյան Լ., «Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական առանձնահատկությունները և պետության սահմանադրական կառուցմանը ներկայացվող պահանջները», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N 99, 2017, էջ 46-52; Բարսեղյան Լ., «Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը և դրա արդիականացման ու ժողովրդավարացման հիմնական ուղղությունը. սոցիալ-իրավական պետության ձևաչափի մեխանիզակական ընթացիկակում (ռեցեսյցիա), թե ազգային

ցության հիմնահարցի մասին: Այդ հեղինակներից են Հենրի Լլոյդը (1720-83 թթ.), Ադամ Բյուլով Հենրիխ Դիտրիխը (1757-1807 թթ.): Վերջինը հիմնավորեց ստրատեգիայի և քաղաքականության սերտ կապը<sup>12</sup>: Ռազմավարության տեսության հեղինակների մեջ աչքի է ընկնում Կառլ Կլաուզեվիցը (1780-1831 թթ.), որը մշակեց պատերազմի համընդհանուր տեսությունը<sup>13</sup>:

Որոշակի հիմնահարցերի ընդհանուր հետազոտությունն իրականացվել է կառավարման տեսության, պետության և իրավունքի տեսության մեթոդաբանական կողմնորոշիչ հիմնադրույթների, հատկապես կառավարման սկզբունքների, պետության ֆունկցիաների հայեցակարգի, գործառույթների (հասկացության, օբյեկտի, բովանդակության, իրականացման ձևերի և մեթոդների) հիման վրա<sup>14</sup>:

Բուն սահմանադրական-իրավական կարգավորման տեսության ոլորտից հետազոտական աշխատանքի իրականացման համար հիմք են ծառայել արտասահմանյան և հայաստանյան սահմանադրագետների աշխատանքները (Գ. Հարությունյան, Վ. Նազարյան, Հ. Խաչատրյան, Գ. Դանիելյան, Ն. Այվազյան, Ա. Վաղարշյան, Վ. Պողոսյան և այլն)<sup>15</sup>:

**Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության հանվող դրույթները:** Աշխատանքում փորձել է արվել ռազմական արվեստի և սահմանադրագիտության կողմնորոշիչ գիտական հիմնադրույթների օգնությամբ համակարգված հետազոտել և ամփոփել Հայաստանում պաշտպանության ոլորտի հարա-

---

առանձնահատկություններով տեղայնացում», «Հանրային կառավարում», ՀՀ ՊԿՍ-ի գիտական հանդես, N 21, 2017, էջ 61-78:

<sup>12</sup> Տե՛ս **Бюлов А.Г.Д.** Дух новейшей военной системы в кн.: Стратегия в трудах военных классиков. Том II. /Под редакцией А. Свечина — М.: Государственное Военное Издательство, 1926. — С 21 чертежом и 1 схемой в тексте. **Bülow A.** Geist des neuern Kriegssystems, hergeleitet aus dem Grundsatz einer Basis der Operationen. — Hamburg, 1805, հղումն ըստ <http://militera.lib.ru/science/bulow/index.html>;

<sup>13</sup> Տե՛ս **Клаузевиц К.**, О войне. — М.: Госвоениздат, 1934, էջ 34; **Clausewitz K.** Vom Krieg. 1832/34. Հղումն ըստ <http://militera.lib.ru/science/clausewitz/index.html> կայքէջի:

<sup>14</sup> **Елинек Г.** Общее учение о государстве.- СПб.: из-во Юридический центр пресс, 2004; **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997; **Протасов В.Н.** Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд., перераб. и доп., М., Юрайт-М, 2001; **Խրոպանյուկ Վ.Ն.** Պետության և իրավունքի տեսություն, Եր., ԳՈՇ, 1997:

<sup>15</sup> Տե՛ս **Խաչատրյան Հ.Մ.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը /ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ.- Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 1997, 398 էջ, **Նազարյան Վ.** «Լայն ժողովրդավարության և ուժեղ պետականության Հիմնական օրենքը», /117 հարց և պատասխան ՀՀ - նոր Սահմանադրության մասին, Եր., 1995, էջ 9-10, **Հարությունյան Գ.Գ.**, Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները.- վերահրատարակություն՝ վերամշակումներով.- Եր., - Նժար, 2016, 672 էջ; Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Եր., ԵՊՀ հրատ., 2003, 608 էջ:

բերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնական հարցերը՝ ատենախոսության նպատակով նախորոշված հետազոտական խնդիրների շրջանակում, վերհանել պաշտպանական սահմանադրական մի շարք ինստիտուտների խնդրահարույց կողմերը, առաջարկել դրանց լուծման ավելի արդյունավետ, երկրի պաշտպանության շահերից բխող լուծումներ, որոնք համահունչ են սահմանադրական արդի տեսության ու սահմանադրական սկզբունքների պահանջներին:

Ատենախոսական աշխատանքը թեմայի առարկայի մասով լրացնում է սահմանադրագիտության մեջ նկատվող հետազոտությունների պակասը, իսկ որոշ հիմնահարցերում նաև տեսական-իրավական իմաստավորման բացերը: Ատենախոսական հետազոտության իրականացման արդյունքում **գիտական շրջանառության մեջ են դրվում և պաշտպանության ներկայացվում հետևյալ հիմնադրույթները և եզրակացությունները.**

1. Պետության գործառույթների տեսության բոլոր վարկածների (արևմտյան, սոցիալիստական, հետխորհրդային) և հայեցակարգերի (ավանդական և ազատական-իրավաբանական) վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկրի պաշտպանության գործառույթն ունի ազգային-հասարակական պահանջմունքներով պայմանավորված հիմքեր: Դրա կենսագործման միջազգային իրավական հիմքը պետության անհատական ինքնապաշտպանության իրավունքն է: Երկրի պաշտպանության գործառույթը մշտական-հարատև, համապետական, համասոցիալական գործառույթ է: Պաշտպանությունը օբյեկտիվորեն լինելով հասարակական խնդիր, ի տարբերություն այլ գործառույթների, վերապահված է կամ պատվիրակված է միայն հասարակության լիիշխան հատուկ քաղաքական կազմակերպությանը՝ պետությանը, նրա մենաշնորհն է, ինչը գործառույթին հաղորդում է կայունություն, մշտականություն, կազմակերպվածություն: Պաշտպանական գործառույթի բնույթը պահանջում է գործողությունների մշտական ու միասնական, համակարգված ու կենտրոնացված իրականացում, կենսագործման նպատակային կառուցակարգ, ինչը կարող է ապահովել միայն պետությունը, զերծ պահելով իրականացումը տատանումներից ու վայրիվերումներից:

2. Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգին հատուկ են էական առանձնահատկություններ: Առաջին, գործառույթի օբյեկտը երկրի ռազմական պաշտպանության հարաբերություններն են, հետևաբար, դրա բո-

վանդակությունը, իրականացման ձևերը, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի որպես գլխավոր դերակատարի կազմակերպման ու զինված պայքարի (պատերազմի) վարման սոցիալ-պատմական օրինաչափություններով: Երկրորդ, պաշտպանության գործառույթի կենսագործման հիմնական, մենաշնորհային սուբյեկտը պետությունն է, որն այն կատարում է հանրային իշխանական ապարատի և հատուկ ստեղծված կառույցի՝ զինված ուժերի միջոցով: Երրորդ, պաշտպանության կառավարումը բազմամակարդակ է, իսկ պաշտպանության գործառույթն իրականացնելիս կիրառում են օրենքով ամրագրված և՛ համընդհանուր, և՛ ներգործության օբյեկտով պայմանավորված հատուկ ռազմական բնույթի ձևեր ու մեթոդներ:

3. Պաշտպանության ոլորտի կառավարման մակարդակների, պատերազմի օրենքների վրա խարսխված ռազմական կառավարման սկզբունքների վերլուծությունը դրանց համադրումը պետական կառավարման ընդհանուր սկզբունքների հետ, հիմնավորում են, որ պաշտպանության գործառույթի նորմատիվ կարգավորման հիմքերը ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի նստել ոլորտի առանձնահատկությունների հետ: Ելնելով կառավարման տեսության պահանջներից, վերին մակարդակի կառավարման (ընդհանուր) սկզբունքները պետք է հարմարեցվեն ստորին մակարդակի (ռազմական կառավարման ու պատերազմի վարման) սկզբունքներին, այլ ոչ թե հակառակը: Այս շատ կարևոր խնդիրը նրբորեն պետք է կենսագործել սահմանադրական կարգավորման մեջ՝ նպատակ ունենալով չառաջացնել կոլիզիաներ տարբեր մակարդակների կառավարման սկզբունքների միջև, հարմարացնել վերին մակարդակի սկզբունքները ռազմական և զինված պայքարի օրենքների վրա խարսխված ստրատեգիական ու տակտիկական սկզբունքներին, դրանք ներդաշնակորեն ինտեգրել պետական կառավարման սահմանադրական ընդհանուր սկզբունքների համակարգում:

4. Ազատական երկրներում պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման մոդելներն ըստ իրավատեխնիկական չափանիշի հնարավոր է դասակարգել երեք իրավատեխնիկական խմբի՝ տարալուծված, կենտրոնացված, խառը: Պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման համաշխարհային պրակտիկայում հատուկ խումբ են կազմում ոչ տիպիկ հիմնակարգավորումներով երկրները (Ճապոնիա, սոցիալիստական երկրներ, Իրա-

նի Իսլամական Հանրապետություն): Ատիպիկ խմբի երկրների հիմնական մասի սահմանադրություններում պետական կառավարումը կառուցված է կենտրոնացման սկզբունքով, իսկ պաշտպանության կարգավորումն աչքի է ընկնում սահմանադրության մեջ դրան էական տեղի հատկացմամբ, մանրամասն կարգավորմամբ, կառուցվածքային առանձնացման ու տարրալուծման եղանակների զուգատեղմամբ, բովանդակային էական տարբերությամբ:

5. Կոնկրետ երկրի պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները պայմանավորող գործոններից է նաև սոցիալ-պատմական ու քաղաքական փորձը, ներառյալ պատերազմի: Հարուստ փորձ ունեցող երկրներում, որպես կանոն, պաշտպանական հարաբերությունների կարգավորումը, հատկապես դրա բարձրագույն ռազմավարական կառավարումը աչքի է ընկնում իր ճկունությամբ, փորձում է ներդաշնակել իշխանությունների բաժանմամբ գործող պետական կենտրոնական մարմինների գործունեությունը բուն ռազմական կառավարման մարմինների հետ:

6. Պաշտպանական գործառույթի սահմանադրական կարգավորման հայեցակարգը և նորմատիվ մոդելը պետք է հաշվի նստեն ռազմական ստրատեգիայի ու կառավարման տեսության կողմից պետական կառավարումը սովորական և արտակարգ ռեժիմների (տեսակների)՝ դասակարգման մեթոդաբանության հետ և նախատեսեն երկտարբերակ կառավարում՝ խաղաղ ժամանակի և պատերազմական իրավիճակի: Դասակարգման հիմքը ռազմական կառավարման առանձնահատկություններն ու սկզբունքներն են: Քաղաքական համակարգն ու պետական ապարատը կառուցված կազմակերպման ու գործունեության ժողովրդավարական սկզբունքների, հատկապես հակակշիռների ու զսպիչների համակարգով իշխանությունների բաժանման, քաղաքական այլակարծիքության վրա, ունակ չեն անարգելք, արագ ու արդյունավետ իրացնել ռազմական ստրատեգիայի պահանջներն ու սկզբունքները:

7. ՀՀ-ում խաղաղ ժամանակի ռազմաստրատեգիական կառավարման համակարգի ակնհայտ գիծը դրա կառավարակենտրոն և դրանով պայմանավորված վարչապետակենտրոն բնույթն է, որն ապահովում է գերկենտրոնացվածությունը: Սակայն կառավարությունը և վարչապետն, ի վերջո, քաղաքականացված սուբյեկտներ են: Պաշտպանական ոլորտի կառավարման գերկենտրոնացվածությունն օրինաչափորեն նկատվում է նաև այլ երկրներում: Սակայն դասական համարվող խորհրդա-

րանական հանրապետություններից ոչ մեկում ռազմաստրատեգիական կառավարման օրինաչափ կենտրոնացումը ուղղորդված չէ դեպի կառավարություն և վարչապետ: Բացառություն է կազմում Գերմանիան, սակայն դրա և ՀՀ Սահմանադրություններով ամրագրված լուծումների միջև նմանությունները արտաքուստ և խաբուսիկ են: ՀՀ վարչապետի որպես քաղաքականացված ֆիզուրայի շուրջ ռազմական լիազորությունների կենտրոնացումն իրենում պարունակում է ազգային անվտանգության հնարավոր սպառնալիք: Այս սպառնալիքի ձևավորմանը նպաստող սահմանադրական գործոններ են ոլորտում խորհրդարանի ոչ էական մասնակցությունը, նախագահի անիշխանությունը, Անվտանգության խորհրդի կազմակերպական ու գործառութային առանձնահատկությունները: Նման օրենսդրական լուծումն անհավասարակշիռ է, հատկապես, որ պատերազմի ժամանակ վարչապետը գլխավոր հրամանատարն է: Հետևաբար, պաշտպանական ոլորտի խաղաղ կառավարման համակարգը կարիք ունի վերանայման, որի ընթացքում պահպանելով կենտրոնացվածությունը՝ պետք է փորձել գտնել լուծումներ, որոնք կապահովեն պետության գլխի, օրենսդիր մարմնի մասնակցությունը ռազմաստրատեգիական խնդիրների լուծմանը, չվնասելով երկրի պաշտպանության շահերը:

8. Որպես կանոն պատերազմի ժամանակ նախատեսվում են պետական մարմինների վերակազմավորումներ: Ամեն մի երկիր որդեգրել է ընդհանուր պետական համակարգի վերակառուցման, պատերազմի պայմաններում կառավարման իր յուրահատուկ կառուցակարգը: 2015 թ. ՀՀ Սահմանադրության և դրա հիմքով ընդունված օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմական վերակառուցման ինստիտուտները բավարար չեն, իսկ եղածների մի մասի արդյունավետությունը կասկածելի է: Պետական կառավարման վերակառուցումներ նախատեսված չեն ո՛չ օրենսդիր մարմնի, ո՛չ Անվտանգության խորհրդի, ո՛չ նախագահի, ո՛չ դատական համակարգի ինստիտուտներում: Պատերազմական գործողությունների ռազմավարական պլանավորման հարցում անհասկանալի է Անվտանգության խորհրդի լիազորությունների հարցը. օրենքով թվարկվածները միայն խաղաղ ժամանակի համար են: Հստակ չէ պատերազմի ժամանակ ռազմաստրատեգիական կառավարման ոլորտի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների գործողության հարցը: Այս հարցում ՀՀ Սահմանադրությունն ունի միայն կառավարության վստահության հարցին վերաբերող իրավակարգավորում, որը ևս իր լուծումներ



րի արդյունավետությամբ կասկածանքների տեղիք է տալիս: Այսպիսով, ռազմական դրության ժամանակ կառավարման պետական համակարգում նախատեսված վերակառուցումներն ու լիազորությունների վերաբաշխումը նախատեսված են սակավ ձևերով, հետևաբար, անընդունակ են պատերազմական իրավիճակում պետական կառավարման ընդհանուր համակարգը վերածել ռազմական կառավարման սկզբունքներին ու պահանջներին համահունչ կառույցի:

9. Երկրի պաշտպանության գործառույթի իրականացման իրավական միջոցներից է օրենսդրումը, որը բարդ, ձևականացված, անշրջանցելի փուլերից կազմված ընթացակարգ է: Պատերազմի ժամանակ նման ժամանակատար ընթացակարգը, որ խաղաղ ժամանակ որակյալ և արդյունավետ օրենսդրման երաշխիք է, կարող է վերածվել պաշտպանության խնդիրների լուծման խոչընդոտի: ՀՀ սահմանդրաիրավական քաղաքականության հրատապ խնդիր է պատերազմի ժամանակ արագացված օրենսդրման հարցերի խորքային իմաստավորումը, որպեսզի ընտրի ու ամրագրի համաշխարհային փորձին համահունչ պատերազմական իրավիճակի համար նախատեսված օրենսդրման պարզեցված ընթացակարգ, ինչը հնարավոր պատերազմական իրադրության մեջ իրավիճակին ադեկվատ գործող կդարձնի նաև օրենսդրումը, հնարավորություն կտա ունենալ հակաժողովրդավարական ռեժիմի կամ տարատեսակ չարաշահումների սպառնալիքներ ու վտանգներ չպարունակող օրենսդրման կառուցակարգ:

10. Պաշտպանության նպատակով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորման հիմնախնդրի հետազոտությունը ՄԻԵԿ-ի, մի շարք երկրների սահմանադրական պրակտիկայի համատեքստում հիմք է տալիս եզրակացնել. սահմանադրական կարգավորումը պետք է խարսխվի երկրի ու ժողովրդի, նրա պետության առանձնահատկությունների վրա, լինի դրանց համահունչ: Դրանք և անկախության շրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում են, որ երկրի պաշտպանությունը պետք է դիտարկվի պետության կարևորագույն սահմանադրական խնդիրը: Հետևաբար, անհրաժեշտ է մարդու իրավունքների սահմանափակման օրինաչափ շահ կամ նպատակ ճանաչել «պաշտպանությունը», հատկապես, որ «պետական անվտանգություն» հասկացությունը բանավեճային ու շատ կողմերով անորոշ է: Պաշտպանության նպատակները

հաստատապես ու անկասկած գերակա են Սահմանադրության մեջ թվարկվող այլ նպատակներից:

**Հետազոտության նորմատիվ իրավական հիմքեր են** ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, ազատական իրավական սահմանադրական կարգավորման տիպի մի շարք երկրների սահմանադրությունները, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի վերջին սերնդի օրենսդրական ակտերը, ՀՀ ռազմական դոկտրինը և նորմատիվ այլ աղբյուրներ: Պաշտպանական ոլորտի հարաբերությունների կարգավորման, այլ երկրների սահմանադրական փորձի հետազոտությունը թույլ են տվել ձևավորել ավել լայն գիտագործնական հայացք ՀՀ-ում համանման հարաբերությունների սահմանադրական կարգավորման տեսլականին:

**Ատենախոսության առարկայի հետազոտման մեթոդական հիմքերը:** Դրված հետազոտական խնդիրները լուծելու համար կիրառվել են՝ դիալեկտիկայի մեթոդն իր եղանակներով ու հնարքներով (համակարգակառուցվածքային վերլուծություն, պատմական մոտեցում, կառուցվածքային-գործառության վերլուծության, կոնկրետ և վերացարկված մոտեցումների զուգակցում և այլն), ձևական-իրավական և համեմատական-իրավական վերլուծությունների, տեսաիրավական մոդելավորման մեթոդները, ինչպես նաև ճանաչողության տրամաբանական հնարքներ ու եղանակները (վերլուծություն, սինթեզ, հասկացություն և այլն), առանձին գիտական ոլորտների տեսական մոտեցումների միավորումը:

**Ատենախոսության տեսական նշանակությունը** հանգում է նրան, որ երկրի պաշտպանության կառավարման ու ապահովման համակարգի սահմանադրական հիմնահարցերի հետևողական վերլուծությունը կարող է ազդել ոլորտի իրավական կարգավորման հայեցակարգերի տեսական և տեխնիկաիրավական կողմերի վրա, նպաստել պաշտպանական համակարգի ռազմաքաղաքական կառավարման ավելի ճկուն, արդյունավետ կառավարման տեսլականի կայացմանը:

Ատենախոսական հետազոտության միջոլորտային բնույթը պայմանավորում է դրա արդյունքների նշանակությունը ոչ միայն սահմանադրական ու վարչական իրավունքի տեսության, այլև պետության և իրավունքի տեսության, ռազմական իրավունքի տեսության և այլ գիտական ոլորտների համար:

**Ատենախոսական աշխատանքի գործնական-կիրառական նշանակությունը** դրա հետազոտական արդյունքների օգտագործման հնարավոր ուղղություններն են, մասնավորապես՝ սահմանադրական բարեփոխումների և պաշտպանական ոլորտում իրավաստեղծագործության ընթացքում, ինչպես նաև դասավանդման ընթացքում այն իրավական դասընթացների շրջանակում, որոնք շոշափում են պաշտպանության համակարգի վերին մակարդակի կառավարման սահմանադրական կարգավորման հարցերը, հատկապես սահմանադրական և վարչական, ռազմական իրավունքի, պետության և իրավունքի տեսության, կառավարման գիտության դասավանդման ընթացքում:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը քննարկվել և հաստատվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնում: Հետազոտական արդյունքներն օգտագործվել են գիտական վեց հոդվածում՝ հրատարակված ԲՈԿ-ի կողմից հաստատված զանազան գիտական հանդեսներում:

**Ատենախոսությունը կառուցված է** ներածությունից, երեք գլխից, տասնմեկ ենթագլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:

**ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴ-  
ՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**§ 1. Երկրի պաշտպանության խնդիրը պետության սահմանադրական գործառույթ-  
ների համակարգում**

Մարդկության պատմության ընթացքում պետության ծագման հիմնական գործոններից է արտաքին պաշտպանական օրինաչափությունը: Բացի այդ պետության առաջացման հատուկ ձև է նվաճողականը, երբ ինչ-որ ցեղախումբ գրավում է մեկ ուրիշի տարածքը, արագացված ձևավորում հանրային-իշխանական ապարատ: Պատմական այդ փաստերը հիմք դարձան պետության առաջացման նվաճողական (բռնության) տեսության համար<sup>16</sup>, իսկ մարքսիզմն ի դեմս Ֆ. Էնգելսի առաջ քաշեց պետության առաջացման գերմանական, այսինքն՝ նվաճողական ձևը<sup>17</sup>: Այսպիսով պաշտպանական օրինաչափությունն այլ պատճառների հետ միասին կարևոր դեր է խաղացել պետության առաջացման գործընթացում<sup>18</sup>: Նեոլիթյան հեղաշրջումից հետո երկրագնդի լոկալ հասարակություններից յուրաքանչյուրի համար առաջացավ սեփական հողատարածքների պաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը: Այդ անհրաժեշտությունը պայմանավորված էր նվաճողական կամ պաշտպանական պատերազմների ի հայտ գալով, ինչն էլ դրդեց աշխարհագրային կամ մշտական բանակի կազմավորմանը<sup>19</sup>: Այսպիսով երկրագնդի վրա պետությունների

<sup>16</sup> Տե՛ս **Дюринг Е.**, Ценность жизни. М.: Красанд. 2010.-320 с; **Гумплович Л.**, Общее учение о государстве / соч. Людвиг Гумпловича; пер. со 2-го нем. пзд. со вступ. очерком и доп. ст. И.Н. Неровецкого.- Санкт-Петербург: типография Т-ва “Общественная воля”, 1910. - 516 с.; **Каутский К.**, Материалистическое понимание истории, Т. 2, М., 1931, էջ 77:

<sup>17</sup> Էնգելսի կարծիքով պետության առաջացման մյուս երկու ձևերն են հունականը և հռոմեականը (տե՛ս **Энгельс Ф.**, Происхождение семьи, частной собственности и государства // Маркс К., Энгельс Ф. Сочинения, изд. 2-е. — М.: Государственное изд.-во политической литературы, 1961. - 50 т.- Т. 21, с. 24-175):

<sup>18</sup> Պետության առաջացման այլ օրինաչափություններն են տնտեսականը, սոցիալ-դասակարգայինը, մարդկայինը կամ հումանիտարը: Այս օրինաչափությունները պետության առաջացման ընդհանուր պատճառներն են (տե՛ս **Վաղարշյան Ա.** Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 49-50):

<sup>19</sup> Գրականության մեջ պետության առաջացման ընդհանուր պատճառներ են դիտում տարբեր գործոններ, օրինակ՝ արտադրող տնտեսությունը, բնակչության աճը և միգրացիան, հավելյալ արդյունքի աճը, պայքարը դրա համար, ուրբանիզացիան, առևտրի աճը, հանրությունների միջև հաղորդակցության աճը, գիտելիքի աճը և որոշումների ընդունման բարդացումը, համաշխարհային կրոնների ձևավորումը (տե՛ս **Гринин Л.Е.**,

առաջացմամբ օբյեկտիվ իրողություն և պատմության մշտական ուղեկից դարձան միջպետական ռազմական բախումները, պատերազմները, իսկ ռազմական անվտանգությունն ու քաղաքականությունը վերածվեցին պետության քաղաքականության, ազգային անվտանգության հիմնական բաղադրատարրերի:

Պատմականորեն ձևավորված օբյեկտիվ իրողությունների հետևանքով պետության որպես «լեզու, իրավասուբյեկտ, ինքնիշխան, հրապարակային, համընդհանուր տարածքային կազմակերպության»<sup>20</sup> գլխավոր հասարակական խնդիրներից մեկը դարձավ ռազմական անվտանգության ապահովումը և երկրի պաշտպանությունը<sup>21</sup>: Արդի աշխարհում ռազմական անվտանգության ապահովման քաղաքական կողմը կամ քաղաքականությունն ուղղված է այն հակասությունների լուծմանը, որոնք «անհրաժեշտ է լուծել ռազմական միջոցների զանազան ձևերով և դրանով իսկ նորմատիվ ամրագրել երկրի ռազմական ուժերի օգտագործման չափանիշները, դրանց պատրաստվածության աստիճանը, կառուցվածքը, տեղակայումը, ինֆրակառուցվածքը, ապահովումը, պատրաստման տեսակները և ձևերը, պատրաստվածության վիճակը և այլն»<sup>22</sup>:

Այսպիսով ռազմական քաղաքականության իրականացման շրջանակները և չափորոշիչները ժամանակի ընթացքում բանավոր սովորույթից վերածվեցին ներպետական իրավական ամրագրում ունեցող կանոնների, իսկ արդի շրջանում այդ կարգավորումն առաջին հերթին կատարվում է սահմանադրական մակարդակով: Սահմանադրական իրավական նորմերի շրջանակում և չափանիշներին համապատասխան իրականացվող ռազմական քաղաքականության գլխավոր «իմաստը և նպատակը ռազմական անվտանգության ապահովումն է, խաղաղության պաշտպանությունը և պատերազմի կանխումը»<sup>23</sup>: Այդ քաղաքականության անբաժան ու պարտա-

---

Государство и исторический процесс: Эпоха формирования государства: Общий контекст социальной эволюции при образовании государства. Изд. 2-ое, прераб. и доп.-М.: изд. ЛКИ, 2011, էջ 41):

<sup>20</sup> Տե՛ս **Гомеров И.Н.**, Государство и государственная власть: предпосылки, особенности, структура.- М.: 2002, էջ 487:

<sup>21</sup> Պետության որպես օբյեկտիվ իրողության (նաև՝ բացարձակ գաղափարի, սոցիալական փաստի, հասարակական ինստիտուտի), նրա խնդիրների մասին տե՛ս **Zippelius Reinhold**, Geschichte der Staatsideen /Reinhold Zippelius.- Orig.- Ausg., 9, verb. Aufl.- Munchen: Beck, 1994, 213 s.; **Новгородцев П.И.**, Политические идеалы Древнего и Нового мыра. Изд. 2-е. М.: КРАСАНД, 2011.- 216 с.:

<sup>22</sup> Տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 110:

<sup>23</sup> Տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 110:

դիր մասն է պետության ռազմական գործունեությունը, որը պետութենագիտությունը բանաձևել է որպես երկրի պաշտպանության գործառույթ:

Պաշտպանության գործառույթի իրականացման իրավական հիմքերն ամրագրված են ոչ միայն ներպետական սահմանադրական, վարչաիրավական մակարդակներում, այլև միջազգային իրավունքով: ՄԱԿ-ի կանոնադրության 51 հոդ. ուժով պետությունն ունի անհատական ինքնապաշտպանության իրավունք, կարող է ձեռնարկել անհատական ինքնապաշտպանություն, եթե տեղի ունենա զինված հարձակում կազմակերպության անդամի վրա, քանի դեռ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը չի ընդունել անհրաժեշտ միջոցներ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանության համար: Այդ հոդ. համաձայն պետություններն ունեն նաև կոլեկտիվ պաշտպանության իրավունք, այսինքն՝ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ուրիշ պետությունների օգնությամբ պայքարել իր նկատմամբ կատարված զինված հարձակման դեմ<sup>24</sup>:

Այսպիսով, միջազգային իրավունքով ամրագրված պետության անհատական ինքնապաշտպանության իրավունքի կենսագործման ներպետական ձևը երկրի պաշտպանության պետական գործառույթի իրականացումն է: Այստեղից առաջանում են հետազոտական մի շարք միջանկյալ խնդիրներ, մասնավորապես՝

- ա) ի՞նչ են պետության գործառույթները, որո՞նք են դրա տեսակները,
- բ) ի՞նչ տեղ է գրավում երկրի պաշտպանությունը արդի պետության գործառույթների համակարգում,
- գ) ո՞րն է պաշտպանության գործառույթի հիմքում ընկած օբյեկտիվ խնդիրը, իրականացման նպատակը, բովանդակությունը:

Մինչ այս հարցերի տեսաիրավական հետազոտությանն անցնելն անհրաժեշտ ենք համարում կանգ առնել «պաշտպանություն» հասկացության վրա: Իրավաբանական բառարաններում «պաշտպանությունը» կամ «երկրի պաշտպանությունը» դիտարկում են որպես քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ամբողջություն՝ ուղղված ներքին և արտաքին ոտնձգութ-

---

<sup>24</sup> Պետությունների անհատական և կոլեկտիվ ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս **Жданов Ю.Н.**, *Международно-правовые основы самообороны государств: Дисс. ... канд. юрид. наук. М., 1990.*

յուններից զինված պաշտպանության նախապատրաստմանը և բուն զինված պաշտպանությունը<sup>25</sup>:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (2017 թ. նոյեմբերի 15-ի) հոդված 3-ի 1-ին մասն ամրագրում է «պաշտպանություն» հասկացության հետևյալ բնորոշումը. «ՀՀ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրությունը»<sup>26</sup>: Օրենսդրական այս հասկացությունը որոշակիորեն տարբերվում է նախորդ օրենքով ամրագրված բնորոշումից<sup>27</sup>:

«Պետության գործառույթ» հասկացությունն արդեն վաղուց է հայտնի գիտական և հրապարակախոսական գրականությանը: Այդ հիմնահարցի հետազոտողները (օրինակ՝ Յ. Ա. Տիխոմիրովը) փաստում են, որ «XVIII-XIX դարերի մտածողների աշխատություններում այն հանդիպում է և՛ տնտեսագետների, և՛ քաղաքագետների, և՛ իրավաբանների մոտ: Իսկ արդեն վերջին հարյուրամյակում այն արմատավորվել է գիտական շրջանառության մեջ»<sup>28</sup>: Յ. Ա. Տիխոմիրովը, որպես արևմտյան տեսաբանի օրինակ, մատնանշում է Գ. Հելինեկին՝ համարելով, որ նա շարունակելով իր նախորդների՝ Արիստոտելի, Ժ. Բոդենի, Թ. Հոբսի, Ս. Պուֆենդորֆի ավանդույթները, մանրագնի քննարկել է պետության գործառույթների հարցը:

<sup>25</sup> St' u Краткий юридический словарь /под. ред. А.Н. Азрилияна. М.: Институт новой экономики, 2005, էջ 414:

<sup>26</sup> St' u «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-196-Ն) ընդունված 2017 թ. նոյ. 15-ին //ՀՀՊՏ 2017.12.06/73(1348), Հոդ.1210 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627> 1/18):

<sup>27</sup> «Պաշտպանության մասին» 2008 թ. նոյ. 27-ի ՀՀ օրենքի հոդված 3-ի 1-ին մասի 1-ին կետը «պաշտպանություն» հասկացության բնորոշման մեջ ներառում էր նաև ռազմական անվտանգության համակարգը. «պաշտպանություն՝ ռազմական անվտանգության համակարգը, ՀՀ տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և ՀՀ անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիության անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ»: Այս բնորոշման մեջ օգտագործված «ռազմական անվտանգության համակարգ» հասկացությունը նույն օրենքի հոդված 3-ի 4-րդ կետը մեկնաբանում է որպես ՀՀ պետական լիազոր մարմինների ու պաշտոնատար անձանց, զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի և ռազմաարդյունաբերական համալիրի, ինչպես նաև ռազմական անվտանգության խնդիրների լուծման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների ամբողջություն (տե՛ս «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-198-Ն) ընդունված 2008 թ. նոյ. 27-ին //ՀՀ ՊՏ 2008.12,24/73 (663), հոդված 1319):

<sup>28</sup> St' u **Тихомиров Ю.А.** Государство: монография / Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 170:

Ճիշտ է Յ. Ա. Տիխոմիրովը Հելինեկի ժառանգությունը քննարկելիս օգտագործում է «պետության գործառույթներ» ձևակերպումը, սակայն պետք է նկատի ունենալ, որ Գ. Հելինեկը դատողություններ էր անում «պետության նպատակներ» ձևակերպմամբ: Ըստ նրա՝ պետության նպատակներն են՝ բավարարել անհատական, ազգային և համամարդկային համերաշխ շահերին: Այդ նպատակին հասնելու համար պետությունն իրականացնում է ներքին գործունեության կառավարում հինգ հիմնական ոլորտներում՝ արտաքին, ռազմական, ներքին, ֆինանսական և արդարադատության<sup>29</sup>: Այս հարցում պետք է համաձայնվել Վ. Ս. Աֆանասևի այն մտքի հետ, որ «արևմտյան գիտության մեջ պետության գործառույթների հարցը գործնականում չի քննարկվում, այլ խոսքը գնում է պետության նպատակների ու խնդիրների մասին»<sup>30</sup>: Հետևաբար արևմտյան քաղաքական-իրավական գրականության մեջ ավելի շատ տարածված է «պետության խնդիր կամ նպատակ» ձևակերպումը, իսկ խորհրդային և հետխորհրդային գրականության մեջ դրան հոմանիշ է «պետության գործառույթ» պետաիրավական հասկացությունը<sup>31</sup>: Օրինակ՝ Գերմանիայիում և՛ պետության ընդհանուր տեսության մեջ, և՛ գերմանական պետության տեսության մեջ, և՛ պետական իրավունքի (սահմանադրական իրավունքի) տեսության մեջ «պետության հասկացությունը և ձևերը» թեմատիկայի շրջանակներում իր տեղն ունի պետության նպատակների ու խնդիրների հիմնահարցը<sup>32</sup>: Անկախ եզրութաբանական տարբերություններից, ակնհայտ է, որ պետության պաշտպանության խնդիրը, նպատակը կամ գործառույթն արևմտյան պետութենագիտության մեջ դիտարկվում է առաջնակարգային գործոն, ինչը երևում է հենց Գ. Հելինեկի թվարկումից:

Իրավաբանական գրականության մեջ պետության գործառույթների տեսական հարցերի քննարկման հիմնական գիտական տիրույթը պետության և իրավունքի տեսությունն է: Այստեղ պետության գործառույթները բնորոշում են որպես պետության գործունեության հիմնական ուղղություններ, որոնք արտահայտում են պետութ-

<sup>29</sup> Տե՛ս **Еллинек Г.** Общее учение о государстве, СПб., 2004, էջ 567-595:

<sup>30</sup> Տե՛ս **Афанасев В.С.,** Государство, новые подходы к сущности, функциям, типологии // В кн. Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп.-М.: Юристъ, 1996, էջ 281: Այս հարցում եվրոպական և հետխորհրդային իրավագիտության տերմինաբանական տարբերությունների մասին տե՛ս նաև *Общая теория права и государства /под ред. В.В. Лозарева.- М.: Юрист, 1994, էջ 239-240:*

<sup>31</sup> Տե՛ս **Функции государства в условиях современного мира.** Аилаты, 2006:

<sup>32</sup> Տե՛ս **Katz Alfred** Staatsrecht: Grundkurs im ofentlichen Recht /von Alfred Katz.- 11, uberarb. Aufl.- Heidelberg: Muller. Jur. verl., 1992, s. 19-21.



յան էությունը և սոցիալական նշանակությունը, ուղղված են հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը<sup>33</sup>:

Պետության գործառույթները մեթոդաբանական և տրամաբանական նույն չափանիշների հիման վրա են բնորոշում նաև այլ տեսաբանները, մասնավորապես՝ Վ. Ն. Դմիտրուկը, Վ. Ս. Կորելսկին, Վ. Ս. Ներսեսյանցը և այլոք<sup>34</sup>: Այսպես Վ. Ս. Ներսեսյանցը գտնում է, որ պետության էությունը, որ դրսևորվում է դրա գործառույթներում (դրա ֆունկցիոնալ գործունեության մեջ), կայանում է հենց այն բանում, որ պետությունը դա ազատ մարդկանց հանրային իշխանության իրավական ինքնիշխան կազմակերպությունն է, ինչով և պայմանավորված են պետության գործառույթների ու գործառութավորման (գործունեության) բնորոշ գծերը և բնութագրերը<sup>35</sup>:

Պետության գործառույթ հասկացության քննարկումն ավարտենք Վ. Ս. Ներսեսյանցի հետևյալ մտքով. «իրավաբանական հարմարեցված տեսքով «ֆունկցիա» (ֆունկցիավորում) և այլ հասկացություններն իրավունքի և պետության նկատմամբ նշանակում են դրանց (իրավունքի և պետության) գործողություն, գործունեություն, մարդկանց և նրանց հարաբերությունների վրա կարգավորիչ-կանոնակարգող ներգործության ձևեր»<sup>36</sup>:

Ինչպես տեսնում ենք պետության նպատակ-գործառույթների բնորոշման հարցում իրավագետների մոտ չկան արմատական տարբերություններ: Սակայն դա չի նշանակում, որ նրանք միակարծիք են պետության գործառույթների դասակարգման, համակարգային նկարագրի հարցում: Գրականության մեջ առանձնանում են պետության գործառույթների տեսակների երկու հիմնական, ընդ որում էականորեն տարբերվող, հայեցակարգեր: Դրանցից մեկի ներկայացուցիչն է Վ. Ս. Ներսեսյանցը, ըստ որի «պետության ողջ ֆունկցիոնալ գործունեության, դրա բոլոր գործառույթների յուրահատկությունը, էությունն ազատ մարդկանց կյանքի սոցիալ-պատմականորեն պայմանավորված որոշակի պետաիրավական կարգի կազմակերպումը, կենսա-

<sup>33</sup> Տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права.- М., Юрайт, 1997, էջ 84; Теория государства и права. Под ред. В. Корельского и В. Перевалова. М., 1997. С. 142-152; **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), Արթուր Վաղարշյան, ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 115; **Խրոպանյուկ Վ.Ն.** Պետության և իրավունքի տեսություն: Եր., 1997, էջ 186-205:

<sup>34</sup> Տե՛ս **Дмитрук В.Н.**, Теория государства и право. М., Новое знание, 2002.- էջ 28 /184/; Теория государства и права /Отв. ред. д.ю.н., проф. В.Д. Перевалов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Норма, 2006. -69; **Нерсисянц В.С.**, Общая теория права и государства. – М., 1999, էջ 257:

<sup>35</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Нерсисянц В.С.**, Общая теория права и государства. – М., 1999, էջ 257-258:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը:

գործումը և պաշտպանությունն է: Պետության առանձին գործառույթները համապատասխան պետաիրավական կարգի ստեղծման, պահպանության ու գործնական իրականացման, պետության ֆունկցիոնալ գործունեության ամբողջական ու ըստ էության միասնական գործունեության հարաբերականորեն ինքնուրույն առումներն են: Այդպիսի առանձին հիմնական գործառույթներ են՝ իրավասահմանումը, իրավակենսագործումը, իրավապաշտպանությունը, արտաքին քաղաքականը: Առաջին երեքը ներքին գործառույթներ են և կապված են պետության ներքին ինքնիշխանության իրականացման հետ: Չորրորդ գործառույթը համարվում է արտաքին և բնութագրում է պետության արտաքին ինքնիշխանության իրականացումը<sup>37</sup>: Պետության արտաքին գործառույթը պետության գործունեությունն է՝ որպես միջազգային հարաբերությունների ինքնիշխան սուբյեկտ, որը ներառում է պետության տարաբնույթ գործունեությունն ուղղված երկրի պաշտպանունակության ապահովմանը, արտաքին ազդեցիկից բնակչության պաշտպանությանը, այլ պետությունների հետ զանազան ոլորտներում համագործակցության կազմակերպմանն ու իրականացմանը, երկրի սահմաններից դուրս իր քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությանը, պետությունների միջազգային ընկերակցության ամրապնդմանն ու զարգացմանը, պատերազմների կանխմանը և ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդմանը<sup>38</sup>: «Պետության ներքին և արտաքին գործառույթները սերտորեն փոխկապված են, լրացնում և փոխապահովում են միմյանց»<sup>39</sup>: Վ. Ս. Ներսեսյանցի այս յուրահատուկ մոտեցումն աչքի է ընկնում այն հիմնավորմամբ, որ պետությանը չի վերագրում տնտեսական, մշակութային, էկոլոգիական կամ ոլորտային այլ գործառույթներ: Պետությունը զբաղվում է դրանցով, սակայն դա չի նշանակում, որ պետությանը բնորոշ են նման գործառույթներ: Պետաիրավական տեսանկյունից կարևոր և որոշիչ նշանակություն ունեն ոչ թե հասարակական կյանքի այդ ոլորտները և դրանցում առաջացած խնդիրներն, այլ «հենց դրանց լուծման պատշաճ պետաիրավական կարգերը»:

Պետության գործառույթների վերաբերյալ վերը բերված հայեցակարգը հակասության մեջ է մտնում շատ ավելի տարածված երկրորդ մոտեցման հետ, սակայն

<sup>37</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.**, Общая теория права и государства. – М., 1999, էջ 260:

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>39</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.**, Общая теория права и государства. – М., 1999, էջ 258-259:

մեր խնդիրն այդ հակասության տեսական լուծումը չէ: Մեզ այստեղ հետաքրքրում է պաշտպանության գործառույթը, որն ազատական-իրավաբանական տեսությունը չի մերժում, այլ ընդհակառակը՝ էլ ավելի է բարձրացնում դրա տեսական կարգավիճակը՝ դրան տալով առաջնակարգ նշանակություն, վերագրելով ներքին գործառույթները լրացնող ու փոխապահովող դերակատարություն:

Վ. Ս. Ներսեսյանցի պետության գործառույթների հայեցակարգը գրականության մեջ մեծ տարածում չի գտել: Նույնիսկ այն հեղինակները, ովքեր համաձայն են այդ մոտեցման հետ, այնուամենայնիվ, գործառույթների իրականացման ձևերը և մեթոդները ուսումնական նյութերում ներկայացնում են ավանդական հայեցակարգի դիրքերից<sup>40</sup>: Իրավաբանական գրականության մեջ ավելի շատ տարածված է պետության գործառույթների այն տեսությունը, որի հիմնական կատեգորիաներն են գործառույթ, օբյեկտ, ոլորտ, խնդիր, բովանդակություն, գործառույթների իրականացման ձևեր և մեթոդներ<sup>41</sup>: Գործառույթների մեկնաբանման ձևական իմաստը նույն տրամաբանական կատեգորիաների վրա էին կառուցում նաև սոցիալիստական պետականագետները, սակայն դասակարգային հայեցակարգի հիմքերով: Այս մոտեցման համաձայն սոցիալիստական պետության գործառույթային ոլորտներն ընդլայնվում ու խորանում են պայմանավորված պետության որպես սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գլխավոր գործիքի դերով<sup>42</sup>:

Պետության գործառույթների ավանդական դարձած հայեցակարգը կատարում է պետության գործառույթների դասակարգում զանազան հիմքերով, մասնավորապես ըստ ուղղվածության կամ ոլորտների (ներքին և արտաքին), ըստ շարունակականության (մշտական և ժամանակավոր), ըստ պետության տարածքի ընդգրկման

<sup>40</sup> Տե՛ս օրինակ **Афанасев В.С.** Государство, новые подходы к сущности, функциям, типологии // В кн. Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп.-М.: Юристъ, 1996, с. 281-285:

<sup>41</sup> Այս հայեցակարգային մոտեցման վրա են կանգնած բազմաթիվ տեսաբաններ, օրինակ՝ **Ս. Աղասյան**, Պետության և իրավունքի տեսություն: Դասախոսություններ /Եր.,: Տիգրան Մեծ, 2011, 120-128 էջեր, **Ս.Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 20-128; Теория государства и права /Отв. ред. д.ю.н., проф.В.Д. Перевалов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Норма, 2006, էջ 69-84, **Поляков А.В., Тимошина Е.В.**, Общая теория права.- СПб.: Издательский Дом С.-Петербур. Гос. Университета, 2005, էջ 215-220; **Дмитрук В.Н.**, Теория государства и право. М., Новое знание, 2002.- էջ 28-33, Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп. - М.: Юристъ, 1996, с. 281-285; **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции. - М. Юрид. лит., 1997, էջ 50-53 և այլն:

<sup>42</sup> Սոցիալիստական պետության գործառույթների և դրանց էվոլյուցիայի մասին տե՛ս **Чесноков Д.И.**, Советское социалистическое государство, М., 1952; Теория государства и права /под ред. С.С. Алексеева. – М., Юрид. лит., 1985 և այլն:

(համապետական կամ տարածքային), ըստ պետության էության հետ կապի (համասոցիալական կամ դասակարգային), ըստ սոցիալական նշանակության (հիմնական և ոչ հիմնական)<sup>43</sup>:

Չխորանալով պետության գործառույթների ավանդական տեսության բովանդակային մանրամասների մեջ, փորձենք վեր հանել երկրի պաշտպանության գործառույթի տեղը և դերը պետության գործառույթների համակարգում: Պետության գործառույթների տեսության ավանդական մոտեցումը երկրի պաշտպանության գործառույթն իր հիմնական դասակարգման սխեմայում (ներքին և արտաքին) համարում է արտաքին գործառույթ, որն ուղղված է «երկրի ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, արտաքին անվտանգության ապահովմանը»<sup>44</sup>:

Այսպիսով, պետությունն իր օբյեկտիվ բնույթի ուժով իրականացնում է երկրի պաշտպանության արտաքին գործառույթ, որն ուղղված է երկրի անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության պաշտպանությանն ու ապահովմանը՝ դիվանագիտական, տնտեսական, հատկապես ռազմական միջոցներով: Վ.Ն. Խրոպանյուկի տեսակետով երկրի պաշտպանությունը «խաղաղ ժամանակներում երկրի բազմակողմանի պատրաստվելն է դրսի հնարավոր հարձակումներին դիմագրավելու համար: Պատերազմի ժամանակ այդ ֆունկցիան ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև, որի ընթացքում տեղի է ունենում երկրի բոլոր ուժերի միավորում՝ հաղթանակի հասնելու համար»<sup>45</sup>: Պետության պաշտպանական գործունեությունը հիմնվում է ռազմական դոկտրինի (ուսմունքի) վրա և ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները<sup>46</sup>.

---

<sup>43</sup> Այս դասակարգումների մասին տե՛ս **Протасов В.М.**, Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-ое издание, перераб. и доп., М., Юрайт-М, 2007, էջ 87, **Ա.Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), Արթուր Վաղարշյան, ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 117-118, Теория государства и права /Отв. ред. д.ю.н., проф. В.Д. Перевеалов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Норма, 2006, էջ 72-74 և այլն:

<sup>44</sup> Տե՛ս Теория государства и права /Отв. ред. д.ю.н., проф. В.Д. Перевеалов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Норма, 2006, էջ 78:

<sup>45</sup> Տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.**, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, «Գոշ» հրատ.-ն, էջ 199-200:

<sup>46</sup> Տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.**, Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, «Գոշ» հրատարակչություն, էջ 200-202, **И.В. Дойников**, Теория государства и права. ЮНИТА 2. Государственный аппарат. Типы и формы государства. Государство в политической системе общества. Правовое государство. Гипертекст, Современный гуманитарный университет, М., 1999, էջ 34-35:

1) երկրի պաշտպանական հզորության ամրապնդում, որի երաշխիքը զարգացած, արդյունավետ, գիտահենք տնտեսությունն է: Սա էլ իր հերթին նախադրյալ է ռազմական արդյունաբերության զարգացման ապահովման համար,

2) զինված ուժերի կատարելագործում, նրանց մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացում,

3) պետական սահմանների պաշտպանություն, որը որպես կանոն իրականացնում են մասնագիտացված ստորաբաժանումները և սահմանապահ զորքերը,

4) քաղաքացիական պաշտպանության կազմակերպում,

5) զինված ուժերի պահեստայինների հաշվառում, ռազմական ուսուցում (ներառյալ՝ հանրակրթական, մասնագիտական և բուհական ուսումնական կառույցներում)<sup>47</sup>:

Եթե փորձենք գնահատել պաշտպանության գործառույթի տեղը գործառույթների դասակարգման մնացած չափանիշներով, ապա կստացվի, որ երկրի պաշտպանության գործառույթը մշտական (ոչ թե ժամանակավոր), համապետական (ոչ թե վարչատարածքային), համասոցիալական (ոչ թե դասակարգային) հիմնական գործառույթ է: Այս գնահատականը շատ կարևոր և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն ունի: Խնդիրն այն է, որ տեսաբանները պետության գործառույթները դիտարկում են շարժման և փոփոխությունների մեջ, որոնք պայմանավորված են բազմաթիվ գործոններով՝ պետության պատմական տիպը, դարաշրջանը, աշխարհաքաղաքական կացությունը, հասարակության ու պետության առջև կանգնած խնդիրները և նպատակները: Այդ և բազմաթիվ այլ գործոնների ուժով էվոլուցիոն և հեղափոխական ուղիներով պետության գործառույթների շրջանակը փոխվում է, որոշ գործառույթներ անհետանում են, առաջ են գալիս նորերը, գործառույթների մի մասն էլ ապրում է արմատական բովանդակային փոփոխություններ: Սակայն էվոլուցիոն ու հեղափոխական այդ դիալեկտիկ շարժումը, կարծես թե, չի շոշափում երկրի պաշտպանության գործառույթը, որն, այսպես ասած, եղել է, կա և կմնա: Դա, իհարկե, չի

---

<sup>47</sup> Պաշտպանության գործառույթի բովանդակային տարրերի մասին ավելի մանրամասն տե՛ս Военное право. Под ред засл. деятеля науки РФ, академика Кузнецова Н.И.- М.: издательство Военный университет МО РФ – Всеармейский издательский центр гуманитарной учебной литературы, 1996, էջ 14-27; **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” - М., “За права военнослужащих”, 2004, էջ 30-39; **Мигачев Ю.И., Тихомиров С.В.**, Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, էջ 26-35; **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 83-84, 95-96, 114-116:

նշանակում, որ այն քարացած է: Այն ևս փոփոխվում է, սակայն դրանք վերաբերում են գործառույթի իրականացման բովանդակային տարրերին, ձևերին ու մեթոդներին, բայց ոչ բուն գործառույթին:

Պաշտպանության գործառույթի այս հատկությունը պայմանավորված է դրա իրականացման բովանդակային տարրերով: Եթե պետության առաջացման վաղնջական ու զարգացման միջին փուլերում հնարավոր էր ինչ-ինչ պատճառներով կասկածներ առաջ քաշել պաշտպանական գործառույթի վերը նշված առանձնահատուկ գծերի վերաբերյալ, ապա արդի շրջանում՝ ոչ: Պաշտպանական գործառույթի այդ առանձնահատկության մեծ մասը պայմանավորված է հասարակություն-պետություն կապերի բնույթով: Տեսական գրականության մեջ ընդունված է պետության գործառույթները գնահատել նաև հասարակական ընդհանուր համակարգում, ինչի արդյունքում ստացվում է, որ ամեն մի գործառույթի հիմքում ընկած լուծվելիք խնդիրը ոչ միայն պետական, այլև հենց հասարակական է: Այսպես, Յ. Ա. Տիխոմիրովը գնահատելով պետության գործառույթների (պետական գործերի) բնույթը՝ գտնում է, որ այս դեպքում խոսքը գնում է «քաղաքացիական հասարակության հանրային գործառույթների այն ծավալի մասին, որը նա վստահում է կատարելու պետությանը», պետությունն այս դեպքում դառնում է դրանց կենսագործման, նպատակների նվաճման պատասխանատու: Ըստ նրա պետական և քաղաքացիական հասարակության անմիջական հաստատությունների իրականացրած բուն հասարակական գործերի սահմաններն ունեն երկակի բնույթ: Այդ սահմանները կայուն են և փոփոխական: Պատմականորեն միշտ տեղի է ունենում սահմանների փոփոխություն, քանի որ փոխվում են սոցիալական գործերի բնույթը և ծավալը: Արդյունքում, ըստ Յ. Ա. Տիխոմիրովի, միշտ տեղի է ունենում պետական և հասարակական սեկտորների միջև գործառույթների վերաբաշխում, այսպես ասած, պետականացում կամ ապապետականացում<sup>48</sup>: Այս օրինաչափությունը հնարավոր է վերագրել պետության բազմաթիվ ներքին և արտաքին գործառույթներին: Օրինակ՝ տնտեսական գործառույթի իրականացման պատմական էվոլյուցիան: Տնտեսության ոլորտում ազատական պետությունը հիմնականում ստանձնում է կարգավորիչի դերակատարությունը, իսկ բուն տնտեսական գործունեությունն իրականացնում է քաղաքացիական հասարա-

<sup>48</sup> См. у Тихомиров Ю.А. Государство: монография / Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 169:

կությունը: Տնտեսական ոլորտում իսկապես գործում են հասարակական ու պետական սահմանների փոփոխականության միտումները: Սակայն այդ օրինաչափությունն արդի դարաշրջանում չի գործում երկրի պաշտպանության ոլորտում, քանզի դա որպես հասարակական խնդիր՝ վերապահված կամ պատվիրակված է միայն պետությանը, նրա մենաշնորհն է, որովհետև գործառույթին բնորոշ հատկություններից են կայունությունը և մշտականությունը: Մի գուցե հին և միջին դարերում, երբ գերիշխում էին աշխարհագրային բանակաները, հնարավոր էր հասարակական ջանքերով պաշտպանական գործառույթի իրականացում, սակայն արդի դարաշրջանում՝ ոչ: Պաշտպանական գործառույթի բնույթը պահանջում է գործողությունների մշտական ու միասնական, համակարգված ու կենտրոնացված իրականացում, դրա կենսագործման նպատակային, երաշխավորված կառուցակարգ: Պաշտպանության գործառույթի իրականացման այս գիծը կարող է ապահովել միայն պետությունը, որպես հասարակության լիիշխան քաղաքական կազմակերպություն:

Պաշտպանական գործառույթի իրականացման այս կարգը նրան հաղորդում է կայունություն և մշտականություն՝ զերծ պահելով տատանումներից ու վայրիվերումներից<sup>49</sup>: Պաշտպանական գործառույթի հասարակական-ազգային բնույթն իմաստավորելիս, անհրաժեշտ ենք համարում հիմք ընդունել Վ. Ս. Ներսեսյանցի պետության գործառույթների ու գործունեության բնութագրերից մեկը. «պետության ֆունկցիոնալ գործունեության մեջ դրսևորվում է պետության ներկայացուցչական բնույթը. պետությունը ոչ թե բնական օրգանիզմ է, այլ յուրահատուկ սոցիալական կազմակերպություն, որը ներկայացնում է ազատ մարդկանց՝ պետության անդամների (քաղաքացիների) ընդհանուր կամքը և ընդհանուր շահերը»:<sup>50</sup> Այսպիսով, երկրի պաշտպանության գործառույթն ունի ազգային-հասարակական պահանջմունքներով պայմանավորված հիմքեր: Այդ հասարակական գործառույթի իրականացումը պատվիրակված է պետությանը, որը դրան հաղորդում է կայունություն, մշտականություն, կազմակերպվածություն:

---

<sup>49</sup> Այս գնահատականի հիմքում ընկած է պետության գործառույթների և հատկապես պաշտպանական գործառույթի օբյեկտիվ ու յուրահատուկ բնույթը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ պետության գործառույթների օբյեկտիվ բնույթը շեշտելով պետք է նկատի ունենալ, որ դրանց իրականացման գործընթացում շատ մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը, որը կարող է հանգեցնել պետության գործառութավորման սխալների ու թերությունների, ինչը սակայն չի կարող վերացնել պաշտպանական գործառույթին բնութագրական օբյեկտիվ հատկությունները:

<sup>50</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.**, *Общая теория права и государства*. – М., 1999, էջ 257:

Պետության ներքին և արտաքին գործառնությունների համակարգում պաշտպանության գործառնության դերն իմաստավորելիս պետք է նկատի ունենալ նաև ներքին և արտաքին գործառնությունների փոխկապվածությունը: Այս տեսանկյունից միանշանակ պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, ովքեր առաջնային նշանակություն են տալիս արտաքին գործառնություններին, հատկապես երկրի պաշտպանությանը, որպես երաշխիք ու պայման ներքին գործառնությունների հաջող ու արդյունավետ իրականացման համար: Այս եզրակացությունն հաստատվում է մի շարք հեղինակների տեսական հիմնավորումներով: Մասնավորապես Գ. Վ. Ատամանչուկի կարծիքով պետության արտաքին գործառնության իրականացման բովանդակությունից ու արդյունքներից են կախված հաջողությունները ներքին գործառնությունները կենսագործելիս<sup>51</sup>: Անուղղակիորեն այս կապը ճանաչում է նաև պետության և իրավունքի ազատական-իրավաբանական ուսմունքը, որը երեք ներքին գործառնությունների կողքին դնում է մեկ և շատ կարևոր՝ արտաքին (հավաքական իմաստով) գործառնությունը<sup>52</sup>: Ա. Վ. Պոլյակովը նույնիսկ պետության գործառնությունները չի դասակարգում ներքինի և արտաքինի: Նա ընդհանրապես տարբերակում է պետության քաղաքական, գաղափարական, մշակութային դաստիարակչական, տնտեսական, հարկման, սոցիալական, էկոլոգիական, տեղեկութային-կոմունիկատիվ, իրավական կարգավորման գործառնությունները՝ չհամարելով դրանք զուտ ներքին գործառնություններ<sup>53</sup>: Նրա կարծիքով այս նույն գործառնությունները պետությունն իրականացնում է արտաքին ոլորտում: Այս մոտեցման դեպքում երկրի պաշտպանության գործառնությունը (ագրեսիայից պաշտպանությունը և համաշխարհային իրավակարգի պահպանությունը) դիտարկում է ներքին իրավապահպան գործառնության շրջանակում, դրա շարունակությունն արտաքին աշխարհում կամ միջպետական հարաբերություններում<sup>54</sup>: Գրեթե նման մոտեցում ունի Դ. Ն. Հոմերովը, բայց նա ևս արտաքին գործառնությունների մեջ հիմնականներից է համարում երկրի պաշտպանության ապահովումը<sup>55</sup>:

<sup>51</sup> Տե՛ս **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 52:

<sup>52</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.**, Общая теория права и государства. – М., 1999, էջ 260:

<sup>53</sup> Տե՛ս **Поляков А.В., Тимошина Е.В.**, Общая теория права.- СПб.: Издательский Дом С.-Петербур. Гос. Университета, 2005, էջ 216-218:

<sup>54</sup> Տե՛ս **Поляков А.В., Тимошина Е.В.**, Общая теория права.- СПб.: Издательский Дом С.-Петербур. Гос. Университета, 2005, էջ 219:



## § 2. Երկրի պաշտպանության սահմանադրական գործառույթի կենսագործման կառուցակարգի առանձնահատկությունները

Երկրի պաշտպանության գործառույթը պետության սահմանադրական գործառույթների համակարգում դիտարկելիս՝ անհրաժեշտ է վեր հանել նաև այդ գործառույթի կենսագործման կառուցակարգի առանձնահատկությունները՝ օգտագործելով միջճյուղային-համալիր գիտական մոտեցման հնարավորությունները: Հետազոտական այս խնդրի իրականացումը կարևոր հիմք է երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման մի շարք հիմնահարցերի հետազոտման և պարզաբանման, դրանց սահմանադրական կարգավորման առարկայի (հարաբերությունների շրջանակի), կարգավորման այլ յուրահատկությունների տեսական իմաստավորման համար:

Ավանդաբար երկրի պաշտպանության տեսական և իրավական հիմնահարցերի ուսումնասիրությունն առնչվում է մի շարք գիտական ճյուղերի հետ: Մասնավորապես՝ պետության և իրավունքի տեսության մաս կազմող «պետության ֆունկցիաների տեսությունը, սահմանադրական իրավունքի տեսությունը, ռազմական (կամ ռազմավարչական) իրավունքի տեսությունը<sup>56</sup>, երբեմն կառավարման տեսությունը, ռազմագիտությունը, հատկապես դրա «ռազմական ստրատեգիան կոչված ոլորտը<sup>57</sup>: Փորձենք երկրի պաշտպանության գործառույթը և դրա կենսագործման կառուցա-

<sup>55</sup> Տե՛ս **Гомеров И.Н.**, Государство и государственная власть: предпосылки, особенности, структура.-М.: 2002, էջ 578-582:

<sup>56</sup> Տե՛ս Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, 640 с.; **Мигачев Ю.И., Тихомиров С.В.**, Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, 456 с.; Военное право. Под ред засл. деятеля науки РФ, академика Кузнецова Н.И.- М.: издательство Военный университет МО РФ – Всеармейский издательский центр гуманитарной учебной литературы, 1996, 318 с. և այլն:

<sup>57</sup> **Коньшев В. Н., Сергунин А.А.**, Военная стратегия современного государства: - СПб: Изд-во Родные просторы, 2012. - 158 с.; **Эдвард Н. Люттвак**, Стратегия: Логика войны и мира. /пер. с англ. яз. Ковалева А. Н. и Платошкина Н.Н.. – 3-е изд.: Университет Дмитрия Пожарского; М., 2017, 63 с.; ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=10412053&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=10412053&lfrom=204420127)); Военная стратегия / Под редакцией Маршала Советского Союза Соколовского В. Д. - Издание второе, исправленное и дополненное. - М.: Воениздат, 1963. 504 с.; **Брюно Жароссон**, От Сунь-цзы до Стива Джобса: искусство стратегии: Dunod, Paris, 2016, пер. на рус. язык Троицкая М., «Издательская Группа «Азбука-Аттикус», М., 2017, 39 с., ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=29629406&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=29629406&lfrom=204420127)); **Михалев С. Н.**, Военная стратегия: Подготовка и ведение войн Нового и Новейшего времени /Вступ. ст. и ред. В. А. Золотарева. - М.: Жуковский: Кучково поле, 2003. - 952 с.; **Бэзил Лиддел Гарт**, Стратегия непрямы действий: История в одном томе. АСТ; М., 2017, 60 с. ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=26110964&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=26110964&lfrom=204420127)): **Свечин А. А.**, Стратегия. - М.-Л.: Государственное военное издательство, 1926. - 400 с.;

կարգը քննարկել այս գիտական ոլորտների տեսանկյուններից, այնուհետև միավորել ստացված արդյունքները:

Պետության և իրավունքի տեսության, որպես հիմնարար և համատեսական իրավաբանական գիտության, մասն է «պետության գործառույթների տեսությունը»: Տեսաբան իրավագետները պաշտպանության գործառույթը համարում են պետության առաջնային կարևորության արտաքին գործառույթ<sup>58</sup>: Պետության գործառույթների վերաբերյալ տեսական գիտելիքների շրջանակը ներառում է մի շարք հիմնահարցեր, մասնավորապես՝ պետության գործառույթների հասկացությունը, առանձնահատուկ գծերը կամ հատկանիշները, գործառույթների դասակարգումը, կապն այլ պետաիրավական երևույթների և դրանք արտացոլող կատեգորիաների հետ (պետության էություն և սոցիալական առաքելություն, պետական կառավարման ձև, իրավունք և այլն): Բացի այս տեսական հիմնահարցերից, պետության և իրավունքի տեսությունը պետության գործառույթները դիտարկում է դրանց կենսագործման տեսանկյունից և տրամաբանական օպերացիաներ է անում պետության գործառույթների տեսության մի շարք այլ հասկացություններով, մասնավորապես՝ գործառույթների իրականացման ձևերը (հասկացությունը և տեսակները), գործառույթների իրականացման մեթոդները<sup>59</sup>, գործառույթների սոցիալ-պատմական փոփոխման օրինաչափությունները և միտումները<sup>60</sup>: Պետք է նկատի ունենալ, որ պետության և իրավունքի տեսությունն այդ հիմնահարցերն իմաստավորում է ընդհանրապես, բոլոր գործառույթների տեսանկյունից, իսկ գործառույթներից յուրաքանչյուրի մանրագին բովանդակային կողմերի հետազոտման մեջ չի խորանում:

Փորձենք ամփոփ կերպով ներկայացնել պետության գործառույթների իրականացման (կենսագործման) ընդհանուր համայնապատկերը՝ պետութենագիտության

---

<sup>58</sup> Տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.**, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, էջ 145, **Дабровольский А.М.**, Военно-административное право (лекции, прочитанные в 1914-1918 учебных годах). СПб., 1914. – с. 2; Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, с. 30-39:

<sup>59</sup> Տե՛ս **Марченко М.Н.** Проблемы теории государства и права, М.: ТК Велби, Изд-во Проспект, 2005.- էջ 170-175; Проблемы теории государства и права, / Под ред М.Н. Марченко, - М.: Юристь, 2001.- էջ 169-178; **Морозова Л.А.** Теория государства и права. Курс лекции / Л.А. Морозова.- М.: Эксмо, 2008.- էջ 100-110; **Վաղարշյան Ս.** Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016:

<sup>60</sup> Տե՛ս **Венгеров А.Б.**, Теория государства и права. М., 2000, с. 141-142; **Морозова Л.А.** “Функции российского государства на современном этапе // Государство и право. 1993, ном. 6, с. 100.

տեսանկյունից, իսկ այնուհետև այդ կառուցակարգը կոնկրետացնել երկրի պաշտպանության գործառույթի նկատմամբ:

Պետության ֆունկցիաների տեսությունը գործառույթները դիտարկում է հետևյալ կառուցակարգային շղթայի միջոցով՝ լուծում պահանջող հասարակական-պետական խնդիր, խնդրի լուծմանն ուղղված գործառույթ, այսինքն՝ պետական գործունեության տեսակ, որն ունի իր ներգործության օբյեկտը, գործառույթի իրականացման ձևեր և մեթոդներ<sup>61</sup>: Գործառույթի իրականացմամբ պետությունը լուծում է հասարակական գործերի կառավարման խնդիրները, այսինքն՝ պետության յուրաքանչյուր գործառույթ կառավարչական հասկացություն է, որում կոնկրետացվում են գործառույթի օբյեկտի նկատմամբ՝ պետական կառավարման խնդիրներն ու նպատակները, դրանց իրականացման համապատասխան ձևերն ու մեթոդները<sup>62</sup>: Ցանկացած պետություն խնդիրն ունի ապահովելու իր ինքնիշխանությունը, պետական սահմանների անձեռնմխելիությունը, արտաքին անվտանգությունը: Այդ խնդրի լուծման համար պետությունն իրականացնում է երկրի պաշտպանության արտաքին գործառույթ: Այդ գործառույթի պետութենագիտության կողմից վերը բերված տարրերն աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով:

**1. Պաշտպանության գործառույթի օբյեկտը երկրի ռազմական պաշտպանության հետ կապված հասարակական հարաբերություններն են, որոնք իրենց բնույթով էականորեն տարբերվում են հասարակական այլ հարաբերություններից:** Այդ տարբերության հիմնական չափանիշը գործառույթի իրականացման արդյունքում հիմնադրված կառույցը՝ բանակը կամ զինված ուժերն են: Դրանց կիրառման ու գործունեության ձևերն էականորեն տարբերվում են այլ ոլորտների օբյեկտներից: Իսկ կառավարման օբյեկտի և կառավարման առանձնահատկությունների միջև գոյություն ունի սերտ կապ: Այդ կապը շեշտադրում է նաև կառավարման գիտությունը, ըստ ո-

---

<sup>61</sup> Ст' у Теория государства и права /Отв. ред. д.ю.н., проф.В.Д. Перевалов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Норма, 2006, էջ 69-71, **Վաղարշյան Ս.** Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 115-127, **Дмитрук В.Н.**, Теория государства и право. М., Новое знание, 2002.- էջ 28-32; **Марченко М.Н.** Проблемы теории государства и права, М.: ТК Велби, Изд-во Проспект, 2005.- էջ 170-175; Проблемы теории государства и права, / Под ред М.Н. Марченко, - М.: Юристъ, 2001.- էջ 169-178; **Морозова Л.А.** Теория государства и права. Курс лекции / Л.А. Морозова.- М.: Эксмо, 2008.- էջ 100-110 և այլն:

<sup>62</sup> Գործառույթի օբյեկտը հասարակական այն ոլորտն է, որին ուղղված է պետական ներգործությունը, կառավարչական գործունեությունը:

րի հասարակական համակարգը պետական կառավարման օբյեկտ դիտարկելիս, անհրաժեշտ է ելնել հետևյալ հիմնարար դրույթներից.

ա) կառավարվող օբյեկտների բովանդակությունը և ձևերը, գործառույթներն ու կառուցվածքն անմիջականորեն պայմանավորված են օբյեկտիվ բնական ու սոցիալ-պատմական պայմաններով ու օրինաչափություններով,

բ) յուրաքանչյուր կառավարվող օբյեկտի յուրահատկությունը (չափորոշիչները) և դրա տեղը հասարակական կենսագործունեության մեջ որոշվում են օբյեկտի բովանդակությամբ, տեխնոլոգիայով, դրա կողմից կամ դրանում իրականացվող աշխատանքի այլ դրսևորումներով,

գ) արդի կառավարչական աշխատանքի մասնագիտացված, կոպերացված և - կոլեկտիվ բնույթը բարդ կառույցի է վերածում կառավարվող օբյեկտներին, որոնք հասարակական համակարգում ունեն որոշակի (և զարգացող) կազմակերպական ձևեր,

դ) կառավարվող օբյեկտներն իրենց մարդկային բնույթի ուժով ընդունակ են իրենց ակտիվության նպատակադրման, դրա հարմարեցման և տարրերային ինքնակարգավորման, գիտակցական ինքնակառավարման,

ե) պետական կառավարման համակարգում (սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միասնության տեսանկյունից) կառավարման օբյեկտները կատարում են հասարակական կյանքի վերարտադրության գլխավոր գործառույթը և, այդ իսկ պատճառով, համարվում են որոշիչ (օբյեկտիվորեն պատճառավորված) պետական մարմինների նկատմամբ<sup>63</sup>:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ կառավարման սուբյեկտի և օբյեկտի հարաբերակցության հարցի հետազոտության մեր պրպտումների արդյունքում միայն Դ. Ա. Կովաչևի մոտ կարողացանք հայտնաբերել այդ համատեքստում տեղավորվող դատողություններ: Նա սահմանադրական սկզբունքների հիմքում դնում է երեք տեսակի օրինաչափություններ՝

ա) պետական ապարատի կառուցվածքը, որին համապատասխանում են կարգավորման երեք սկզբունք՝ իշխանությունների բաժանումը, բյուրոկրատական կենտրոնացումը, դեմոկրատական կենտրոնացումը,

---

<sup>63</sup> Տե՛ս **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 91:

բ) կառավարման համակարգը, որի զարգացման ընդհանուր օրինաչափության արդյունք են դրա սկզբունքները՝ կառավարման օբյեկտի և սուբյեկտի համապատասխանություն, համակարգի օղակների միջև ենթակայություն, ուղիղ և հակադարձ կապ, տեղեկատվության չափի և կառավարման արդյունավետության համապատասխանություն,

գ) երրորդ օրինաչափությունը վերաբերում է իրավական նյութին և դրսևորվում է եռատարր կառուցվածք ունեցող իրավական նորմի տեսքով<sup>64</sup>:

Դ. Կովաչևի այս մտքերը գալիս են հաստատելու, որ կառավարման օղակների (նաև վերին) և օբյեկտների բնույթի համապատասխանության ապահովումը սահմանադրական-իրավական կարգավորման շատ կարևոր խնդիրն է:

Եթե կառավարման և սահմանադրական իրավունքի գիտությունների կողմից հիմնավորված այս ընդհանուր և հիմնարար դրույթները փոխադրենք պաշտպանության գործառույթի տիրույթ, ապա կստանանք հետևյալ եզրակացությունները. երկրի պաշտպանության պետական կառավարման կամ պաշտպանության գործառույթի բովանդակությունը, իրականացման ձևերը, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի կազմակերպման ու զինված պայքարի (պատերազմի) վարման սոցիալ-պատմական պայմաններով ու օրինաչափություններով: Պաշտպանության գործառույթի ներգործության օբյեկտում գլխավոր դերակատարը զինված ուժերն են՝ իրենց բնորոշ կազմակերպական ու գործառութային առանձնահատկություններով հանդերձ, ինչն էլ հենց պաշտպանական գործառույթի գլխավոր առանձնահատկությունն է: Այդ գործառույթի իրականացման հիմնական կազմակերպական (արդի շրջանում նաև իրավականացված) ձևը բանակն է, իր ներքին կառուցվածքային ստորաբաժանումներով: Այն առաջնային նշանակություն ունի գործառույթի իրականացման կառուցակարգում: Պաշտպանության պետական կառավարումը (պետական մարմինները), առանց մարտունակ բանակի անխմաստ կառույցներ են, հետևաբար, գործառույթի իրականացման արդյունավետության հիմնական ցուցիչը մարտունակ բանակն է, այլ ոչ թե դրա իմիտացիան կամ քաղաքական-իրավական կառավարումն ու կարգավորումը:

<sup>64</sup> Ст' у Ковачев Д. А. Конституционный принцип: Понятие, реальность и фиктивность /В кн.: Очерки конституционного права иностранных государств. М., 1999, էջ 28-29 (հղումն ըստ Այվազյան Ն. Ա., Այվազյան

Վերը բերված ինքնակառավարման և ինքնակարգավորման ընդունակությունը ևս բնութագրական է երկրի պաշտպանությանը: Անշուշտ, արդի շրջանում երկրի պաշտպանության հիմնական սուբյեկտը պետությունն է ի դեմս նրա զինված ուժերի ու դրանց կառավարման մարմինների, սակայն պատմականորեն եղել են շատ դեպքեր, երբ ռազմական առումով նվաճված երկրներն ու ժողովուրդներն ինքնակազմակերպման ճանապարհով (սկսած ընդհատակյա գործունեությունից մինչև պարտիզանական պատերազմներն ու ապստամբությունները) կարողացել են ազատվել և արդյունավետ կազմակերպել ազատագրված տարածքների պաշտպանությունը:

**2. Պետության այլ գործառույթների հետ համեմատած պաշտպանության գործառույթն աչքի է ընկնում նաև իր իրականացման սուբյեկտային կազմով:** Ընդհանրապես պետության գործառույթները և դրանք իրականացնող սուբյեկտները կոնկրետացված են ի դեմս իշխանական մարմինների, հիմնարկների, պետական կազմակերպությունների: Արդի պետություններում դրանց կազմավորման ու գործունեության կարգը, կառուցվածքը, իրավունքներն ու պարտականությունները սահմանված, ամրագրված են սահմանադրությամբ կամ օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով: Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման հիմնական և գրեթե մենաշնորհային սուբյեկտը պետությունն է, որն այն կատարում է հանրային իշխանական ապարատի և հատուկ ստեղծված կառույցի՝ զինված ուժերի միջոցով: Ե. Ն. Տրիկոզի կատարած վերլուծությունները ցույց են տալիս, որ պաշտպանությունը և զինված ուժերը եվրոպական սահմանադրությունները համարում են պետության բացառիկ իրավասություն: Նման սահմանադրական լուծման առաջնեկն Իռլանդիան է, որը դեռ 1937 թ. «ռազմական և զինված ուժերի ստեղծելը և պահելը հայտարարեց խորհրդարանի մենաշնորհ»<sup>65</sup>:

Եթե պետության մի շարք գործառույթների իրականացմանը մասնակցում են նաև քաղաքացիական հասարակության տարաբնույթ կազմակերպությունները, ինչպես նաև անհատներն՝ իրենց գործունեությամբ, ապա պաշտպանական գործառույ-

---

Ա. Ն., Սահմանադրության էությունը և բովանդակությունը (Համեմատական սահմանադրական վերլուծություն). – Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 134, 204 էջ):

<sup>65</sup> Տե՛ս **Трикоз Е.Н.** «Конституционное регулирование вопросов обороны и использования вооруженных сил в зарубежных государствах Европы». //«Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջ 283: Եթե հետևենք այս հեղինակի մոտեցմանը, ապա ՀՀ Սահմանադրությամբ այդպիսի արգելքի անալոգը համարվում է զինված միավորումների ստեղծման արգելքը:

թի իրականացման կառուցակարգում, դրա կազմակերպման և կառավարման բոլոր մակարդակներում՝ բարձրագույն քաղաքական ղեկավարումից մինչև ագրեսորի կամ սահմանախախտի դեմ տարվող մարտն իրականացնում են հանրային իշխանական կառույցները: Քաղաքացիները և կազմակերպություններն այստեղ գործում են հայրենիքի պաշտպանության պարտականություն կրող սուբյեկտներ, որի բովանդակությունն ամրագրված է սահմանադրությամբ ու օրենքներով: Պաշտպանության գործառույթի իրականացման ողջ պատասխանատվությունը և գործառույթային կենսագործման հանրային իրավական պարտականությունը կրում են պետությունը, դրա մարմիններն ու հատուկ կառույցները:

Այսպիսով, երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման հիմնական ընդհանուր սուբյեկտը պետությունն է՝ ի դեմս նրա մարմինների, կազմակերպությունների և կառույցների: Ռազմագիտության ու ռազմական անվտանգության տեսության մեջ երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտները դիտարկվում են որպես պաշտպանության ու ռազմական անվտանգության համակարգի բաղադրատարր՝ համապատասխան սուբյեկտիվ իրավունքներով ու պարտականություններով<sup>66</sup>:

ՀՀ Սահմանադրության և «Պաշտպանության մասին 2017 թ. նոյեմբերի 15-ի ՀՀ օրենքի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշել պաշտպանության գործառույթի ձևավորման ու իրականացման սուբյեկտների հետևյալ շրջանակը՝ օրենսդիր մարմինը, կառավարությունը, նախագահը, դատարանները, անվտանգության խորհուրդը, գործադիր իշխանության մարմինները, պետության զինված կազմակերպությունը, որը ներառում է իրենում զինված ուժերը և այլ զորքերը<sup>67</sup>:

<sup>66</sup> Տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 129-130: Ս.Ա. Ֆոմինն այդ սուբյեկտների հասկացությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Հասարակական հարաբերությունների այն մասնակիցը, որին իրավական նորմերն օժտել են իրավունքներով ու պարտականություններով» (տ՛ես նույն տեղը):

<sup>67</sup> Գրականության մեջ օգտագործվում են մի շարք եզրույթներ կապված զինված կազմավորումների հետ: Դրանցից են «պետության ռազմական կազմակերպությունը», «ռազմական ուժեր», «բանակ», «զորք», «ուժային կառույցներ», «զինված ուժեր»: «Պետության ռազմական կազմակերպությունը» ներառում է իրենում զինված ուժերը, այլ զորքերը, զինված կազմավորումները և մարմինները, որոնք իրենց առջև դրված խնդիրներն իրագործում են ռազմական մեթոդներով, ռազմական կառավարման մարմինները, ինչպես նաև արդյունաբերական ու գիտական համալիրները» (տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право; под. ред. В.Г. Стрекозовца, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.- М.: За права военнослужащих, 2004, էջ 92-93): «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն «զինված ուժերը» պետական ռազմական կառույց է, որն ապահովում է ՀՀ պաշտպանության ռազմական բաղադրիչը, իսկ «այլ զորքերը» ներառում է ոստիկանության զորքերը, սահմանապահ զորքերը, պետական պահպա-

Ըստ էության զինված ուժերն ընդունված է համարել պետության ռազմական կազմակերպության միջուկը և երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման հիմքը<sup>68</sup>: Պետության ռազմական կազմակերպությունը կոչված է ապահովել երկրի պաշտպանությունը ռազմական մեթոդներով:

Այսպիսով, երկրի պաշտպանության գործառույթն իրականացնող սուբյեկտների շարքում հատուկ գործառույթային-նպատակային կառույց է բանակը կամ պետության ռազմական կազմակերպությունը, որն ի տարբերություն այլ գործառույթային-նպատակային պետական ինստիտուտների, ի սկզբանե, պետության առաջացմամբ գոյություն ունեցող կառույց է: Եթե պետության կառուցակարգի մնացած գործառույթային-նպատակային ինստիտուտների հիմնական ու գերակշռող մասի պատմությունը սկսվում է նոր դարաշրջանից, ապա բանակի պատմությունը հաշվում է պետության պատմությանը զուգընթաց:

Պետական ինստիտուտների պատմական զարգացման ուսումնասիրությունը հաստատում է կայուն միտում՝ պետական կառավարման մասնագիտացում և ճյուղավորում: «Պետության գործառույթների, նպատակների որոշման կառուցակարգերի, որոշումների մշակման ու ընդունման ընթացակարգերի բարդացումն անխուսափելիորեն հանգեցնում է «իշխանության ծառե-ի ճյուղավորման: Հիմնական «ճյուղերը ծնում են ենթաճյուղեր, որոնք կոչված են ամրացնել «ծառի արմատներն ու բունը՝ պետական որոշումների ու գործողությունների որակի բարձրացման ճանա-

---

նության ծառայությունը և ազգային անվտանգության հատուկ ստորաբաժանումները» (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348): Ըստ ռազմագիտության բանակը պետության ռազմական մարմինը (կառույցը) է, որը նախատեսված է զինված բռնության միջոցներով նրա քաղաքականության իրականացման համար: «Բանակ» բառը «զինված ուժերի» հոմանիշներից մեկն է: Բանակն ունի մի շարք հատկանիշներ, այն պետական կառույց է, այն զինված մարդկանց կազմակերպություն է, իր գործառույթները կատարում է զինված միջոցներով, կոչված է պատերազմ վարելու և դրա համար ունի բավարար մարտական հզորություն (տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право; под. ред. В.Г. Стрекозовва, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.- М.: За права военнослужащих, 2004, էջ 92):

<sup>68</sup> Տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 133: Ռազմական գիտության մեջ ընդունված է երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության համակարգի հիմք համարել դրանց ապահովման մարմինները, ուժերը և միջոցները (տես նույն տեղը, էջ 131): «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ ՁՈՒ գլխավոր շտաբից, զինվորական կառավարման այլ մարմիններից, զորամիավորումներից, միավորումներից, զորատեսակներից և զորամասերից, զինվորական հաստատություններից և զինվորական այլ կազմավորումներից: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348)):



պարհովե<sup>69</sup>: Յ. Ա. Տիխոմիրովի առաջ քաշած այս օրինաչափությունն անհերքելի է: Իսկապես նոր դարաշրջանի պատմությունը ցույց է տալիս, որ պետական կառավարման բարդացումն առաջ է բերում նոր նպատակային ինստիտուտների ձևավորում, որոնք նախատեսված են «պետության այս կամ այն գործառույթի շրջանակում և համապատասխան պետական մարմինների պատասխանատվության գոտում գործելու համար»: Սակայն Յ. Ա. Տիխոմիրովի առաջ քաշած այս միտումը չի վերաբերում բանակին, չնայած նա բանակը ևս ներառում է նման գործառութային-նպատակային հատուկ ինստիտուտների շարքում:

Բանակը պետության մշտական գործառութային-նպատակային ուղեկիցն է: Հետևաբար, արդի շրջանում կարող է խոսք գնալ միայն բանակի վերակառուցման, ձևափոխման մասին, այլ ոչ թե նոր ձևավորված ինստիտուտի: Սակայն պետք է համաձայնվել այդ հեղինակի այն մտքի հետ, որ բանակը, զինված ուժերը, որպես հատուկ կերպով կազմակերպված ներգործության ուժ, իրենից ներկայացնում է գործառութային-նպատակային կառույց: «Բանակն ունի խիստ ստորակարգային կառուցվածք, զինվորական ծառայության անձանց կազմ, զենքի զանազան տեսակներ և լրիվ նյութական բազա<sup>70</sup>: Սրան պետք է ավելացնել նաև բանակի հատուկ առանձնացվածությունն այլ պետական կառույցներից, նրա կազմի բազմաթվությունը և դրա արդյունքում բանակի քաղաքական դերակատարությունը: Այս պայմաններում կարևոր նշանակություն է ձեռք բերում բանակի իրավական կարգավիճակի սահմանադրական ամրագրումը, դրա քաղաքական չեզոքության ապահովման կառուցակարգերի հիմնադրումը<sup>71</sup>:

**3. Երկրի պաշտպանության գործառույթն աչքի է ընկնում նաև իր իրականացման ձևերով ու մեթոդներով:** Տեսաբանները պետության գործունեության մեջ առանձնացնում են դրա իրավական և կազմակերպական ձևերը: Ըստ Մ. Ի. Բայտինի իրավական ձևերն են իրավաստեղծը, իրավակիրառը: Իրավակիրառ ձևի տեսակ-

<sup>69</sup> Տե՛ս **Тихомиров Ю.А.** Государство: монография /Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 143:

<sup>70</sup> Տե՛ս **Тихомиров Ю.А.** Государство: монография /Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 144:

<sup>71</sup> Բանակն ահրաժեշտաբար պետք է օգտագործվի միայն արտաքին պաշտպանության համար և եզակի դեպքերում պետության մեջ սահմանադրական կարգերի պաշտպանության, իրավակարգի վերականգնման համար: 21-րդ դարում հայտնի են դեպքեր, երբ բանակը Հունաստանում (1960-ական թթ.), Չիլիում (1970-ական թթ.), Արգենտինայում և այլ երկրներում դրամատիկ իրավիճակներում իր ձեռքն է վերցրել պետական իշխանությունը (տե՛ս **Тихомиров Ю.А.** Государство: монография /Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 144):

ներն են օպերատիվ-գործադիր գործունեությունը՝ ամենօրյա գործադիր կարգադրիչ աշխատանքը՝ իրավունքի կիրառման ակտերի ընդունման միջոցով, և իրավունքի նորմերը խախտումներից պահպանելու իրավապահպան օպերատիվ գործունեությունը<sup>72</sup>: Հանրային իշխանական գործունեության կազմակերպման ձևերի մեջ Մ.Ն. Բայտինն առանձնացնում է՝ ա) կազմակերպական-կարգավորիչ ձևը՝ ընթացիկ օպերատիվ աշխատանքը կոնկրետ կառավարչական խնդիրը լուծելու համար, բ) կազմակերպական-տնտեսական ձևը՝ տնտեսական հիմնավորումները, վերահսկիչ-ստուգիչ գործունեությունը, վիճակագրությունը, մատակարարման և իրացման կազմակերպումը, գ) կազմակերպական-գաղափարական ձևը՝ ուղղված իրավագիտակցության բարձրացմանը և հասարակական կարծիքի ձևավորմանը<sup>73</sup>: Երկրի պաշտպանության գործառույթի արդյունավետ իրականացումը ենթադրում է բոլոր նշված ձևերի հավասարակշռված իրականացում:

Ընդունված է պետության գործառույթների իրականացման մեթոդները բնորոշել որպես եղանակների, հնարքների և միջոցների ամբողջություն, որոնք կիրառվում են գործառույթներն իրականացնելիս<sup>74</sup>: Տեսական գրականության մեջ ընդունված է մեթոդները կապել գործառույթի և այն իրականացնող հանրային իշխանական մարմինների հետ: Վ. Աֆանասևի կարծիքով պետության գործառույթների իրականացման մեթոդները բազմազան են, և դրանք կախված են գործառույթի տեսակից, ինչպես նաև դրանք իրականացնող պետական մարմիններից: Որպես օրինակ այս հեղինակը մատնանշում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման, իրավակարգի պահպանության գործառույթները, որոնցում օգտագործվում են թույլատրական, արգելող, պահանջող, համոզման ու հարկադրանքի մեթոդները, իսկ տնտեսական գործառույթն իրականացնելիս, բացի վարչաիրավական մեթոդներից, կիրառվում են տնտեսական մեթոդների ամբողջական համալիր՝ բարոյական և նյութական խրախուսում, կանխատեսում, պլանավորում, արտոնյալ վարկավորում և ներդրումներ, պետական սուբսիդավորում, սպառողների պաշտ-

<sup>72</sup> Տե՛ս Теория государства и права, курс лекций /под ред. Н.И. Матузова и А.В. Малько.- М., 2012, էջ 33:

<sup>73</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>74</sup> Տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 125:

պանություն և այլն<sup>75</sup>: Այս հեղինակի մոտեցման վերլուծությունը ցույց է տալիս, որ պետության ամեն մի գործառույթ իրականացնելիս կիրառվում են **ընդհանուր և հատուկ մեթոդներ**: Ընդհանուր մեթոդները բնութագրական են բոլոր գործառույթներին, իսկ հատուկ մեթոդները բխում են տվյալ գործառույթի ներգործության օբյեկտի առանձնահատկություններից: Դրանք հիմնականում չեն կիրառվում այլ գործառույթներ իրականացնելիս: Անկախ այն բանից, թե որքանով է ճիշտ գործառույթների իրականացման մեթոդների դասակարգման այս մոտեցումը, պետք է նկատի ունենալ, որ երկրի պաշտպանության գործառույթի հատուկ մեթոդներն իրապես ինքնատիպ են, կառավարման այլ ոլորտներում կիրառվող մեթոդներից էականորեն տարբերվող, ինչը պայմանավորված է այդ մեթոդների ռազմականացված բնույթով:

Ա. Վաղարշյանը պետության գործառույթների իրականացման մեթոդները կապում է գործառույթի իրականացման ձևերի (իրավական և ոչ իրավական) հետ, կարծելով, որ գործառույթների իրականացման յուրաքանչյուր ձևին համապատասխանում են իրեն բնորոշ մեթոդները<sup>76</sup>: Պետության գործառույթների իրականացման իրավական (իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան, մեկնաբանողական-իրավական, հսկիչ-վերահսկիչ, հիմնադիրե ձևերն ընդհանուր են պետության բոլոր գործառույթների համար: Հետևաբար, ընդհանուր են նաև դրանցից ամեն մեկում կիրառվող մեթոդները՝ օրինականությունը, օրինական հարկադրանքը, իրավական տեղեկութավորումը, համոզումը, խթանումը և խրախուսումը, խորհրդատվությունը, անմիջական կառավարումը, արգելումը, պարտադրումը և այլն: Նույն մոտեցմամբ կարող ենք պնդել, որ պետության գործառույթների կազմակերպական ձևերից յուրաքանչյուրին (կազմակերպական կանոնակարգող, կազմակերպական-տնտեսական, կազմակերպական-գաղափարական) բնորոշ են իրականացման իրենց մեթոդները, և, քանի որ այդ ձևերն օգտագործվում են գրեթե բոլոր գործառույթներն իրականացնելիս, հետևաբար այդ մեթոդները կիրառելի են բոլոր գործառույթների իրականացման գործընթացում: Այս հարցում միանշանակ պետք է համաձայնվել Յ. Ա. Տիխոմիրովի հետ, ըստ որի պետության կարևոր գործառույթներն ունեն ենթագործառույթներ, և ինչպես գործառույթները, այնպես էլ ենթագործառույթներն անհրա-

<sup>75</sup> См. у **Афанасев В.С.**, Государство, новые подходы к сущности, функциям, типологии // В кн. Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп.-М.: Юристъ, 1996, էջ 283:

Ժեշտ է մասնատել պետական ինստիտուտների և մարմինների իրավական կերպով սահմանված խնդիրների և իրավասության՝ հետևյալ շղթայով. ա) զարգացման ծրագրային նպատակադրումը, բ) նորմատիվ իրավական կարգավորումը, գ) պետական կառավարումը, դ) կազմակերպական գործունեությունը, ե) նյութական գործողությունները, զ) վերահսկողության իրականացումը և հարկադրանքի միջոցների կիրառումը, է) հասարակության տեղեկատվական սպասարկումը<sup>76</sup>:

Պետության գործառույթների իրականացման Յ. Ա. Տիխոմիրովի առաջադրած այս կառուցակարգն ընդունելի է պետության բոլոր գործառույթների համար: Ե՛վ պաշտպանության և՛ իրավակարգի ապահովման գործառույթներն իրականացնելիս պետությունը և նրա մարմինները գործում են կառուցակարգային նույն շղթայով: Տարբերվում են միայն այդ կառուցակարգի որոշ տարրերի դրսևորումները. մասնավորապես պետության պաշտպանության գործառույթի ծրագրային նպատակադրման ձևը, որպես կանոն, ռազմական դոկտրինն է: Կան տարբերություններ պետական կառավարման և դրա ընթացքում օգտագործվող կազմակերպական ձևերի ու մեթոդների միջև, ինչպես նաև նյութական գործողություններում: Մասնավորապես պաշտպանական հարաբերությունների կառավարումը բազմամակարդակ է<sup>78</sup>, իսկ դրա սկզբունքները յուրահատուկ են՝ մյուսներից էականորեն տարբերվող<sup>79</sup>: Պաշտպանական ոլորտում կիրառվում են այնպիսի կազմակերպական ձևեր ու մեթոդներ, որոնք այլ գործառույթներն իրականացնելիս օբյեկտիվորեն անընդունելի են: Օրինակ՝ «ՀՀ ռազմական դոկտրինը ամրագրում է Զինված ուժերի օգտագործման հիմնական ձևերը՝ ա) ռազմավարական, օպերատիվ, մարտավարական և հատուկ գործողությունները, բ) սահմանադրական կարգին սպառնացող վտանգների վերացման գործողությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, գ) դաշնակցային պարտավորություններից բխող գործողությունները, դ) միջազգային խաղաղապահ

<sup>76</sup> Տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 125:

<sup>77</sup> Տե՛ս **Тихомиров Ю.А.** Государство: монография /Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 172:

<sup>78</sup> Երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության համակարգն ընդունված է տրոհել մի քանի ենթահամակարգի՝ պետական կառավարման, տարածքային, գործառութային, բուն ռազմական կազմակերպության (տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 128): Թվարկված ենթահամակարգերից յուրաքանչյուրը ենթադրում է իր կառավարման մարմինները, իհարկե, ստորակարգային կապերի պահպանման միջոցով:

<sup>79</sup> Պաշտպանության կառավարման մակարդակների ու դրանցից ամեն մեկին բնորոշ սկզբունքների մասին մանրամասն տե՛ս ստորև:

գործողությունները, ե) տարրերային աղետների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ գործողություններ<sup>80</sup>:

Պաշտպանության գործառույթի իրականացման թվարկված ձևերն ունեն հատուկ կազմակերպական-իրավական բնույթ: Հիմք ընդունելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «պաշտպանություն» հասկացությունը<sup>81</sup>, կարող ենք առանձնացնել պաշտպանության իրականացման քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցները: Այդ միջոցները պետք է հասկանալ գործառույթի իրականացման ձևերի իմաստով:

Ինչ վերաբերում է պաշտպանության գործառույթի իրականացման մեթոդներին, ապա ո՛չ «ՀՀ ռազմական դոկտրինը», ո՛չ էլ «Պաշտպանության մասին» ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի օրենքը չեն ամրագրում դրանց շրջանակը<sup>82</sup>: Ռազմական իրավագիտության մեջ ընդունված է, որ պաշտպանության գործառույթի իրականացման ռազմական մեթոդները նախորոշում են զորքերի գործունեության հատուկ բովանդակությունը, դրանք ենթադրում են զենքի և զինամթերքի օգտագործում՝ պաշտպա-

---

<sup>80</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», կետ 41, հաստատված է ՀՀ նախագահի 25.12.2007 ՆՀ-308-Ն հրամանագրով: Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2008.01.07/1 (591), հոդված 14 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41116>): ՌԴ ռազմական դոկտրինը զորքերի կիրառման հիմնական ձևեր է համարում օպերացիաները (ռազմավարական, համատեղ, հակատեռորիստական) և մարտական գործողությունները (տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право; под. ред. В.Г. Стрекозовца, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук. - М.: За права военнослужащих, 2004, էջ 93:

<sup>81</sup> «Պաշտպանությունը ՀՀ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն» է (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ օրենք // ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348)):

<sup>82</sup> Ընդ որում դրանք իրավաբանորեն ամրագրված չեն նաև ՌԴ-ում: Ռազմական իրավունքի տեսաբանները գտնում են, որ ռազմական մեթոդների հարցը սկզբունքային է, և, եթե մարտական գործողությունների ժամանակ (պատերազմի վիճակում կամ ռազմական բախումների ընթացքում) այդ մեթոդներն ակնհայտ են, ապա խաղաղ ժամանակ՝ անորոշ: Անհրաժեշտ է հստակ սահմանել, թե խաղաղ ժամանակ, որ մեթոդներն են համարվում ռազմական, այսինքն՝ կարող են օգտագործվել պետության ռազմական կազմակերպության մեջ մտնող կառույցների կողմից և, հետևաբար, չեն կարող օգտագործվել այլ պետական մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից (տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право; под. ред. В.Г. Стрекозовца, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.- М.: За права военнослужащих, 2004, էջ 93): Այս տեսաբանների եզրակացությունը միանշանակ է. ռազմական մեթոդները ենթակա են իրավական կարգավորման, ընդ որում բացառապես իմպերատիվ, այլ ոչ թե դիսպոզիտիվ ձևով:

նության խնդիրների լուծման համար<sup>83</sup>: Ռազմական անվտանգության տեսաբան Ս. Ա. Ֆոմինը երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության կառուցվածքում՝ օբյեկտ, սուբյեկտ, առարկա, առանձնացնում է նաև դրա մեկ այլ կարևոր տարր՝ մեթոդները և միջոցները<sup>84</sup>:

Այս հարցը կարիք ունի հատուկ հետազոտության ու ամփոփման, որովհետև նախնական տպավորությունն այն է, որ երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման մեթոդների խնդրում առկա է որոշակի տեսական անհստակություն: Նշանակում է անհրաժեշտ է միավորել պետության գործառույթների տեսության, ռազմագիտության ու ռազմական իրավունքի տեսամեթոդաբանական մոտեցումները, և ամբողջական պատկերացում կազմել նշված գործառույթի իրականացման ձևերի, մեթոդների ու միջոցների համակարգի մասին:

Պետության և իրավունքի տեսության մեջ պետության գործառույթների իրականացման ձևեր են համարվում իրավականը և կազմակերպականը (կազմակերպական-կանոնակարգող, տնտեսական, գաղափարախոսական): Այս ձևերը համընդհանուր են ու կիրառելի բոլոր գործառույթների իրականացման ընթացքում: Սակայն, բացի այս ընդհանուր ձևերից ամեն մի գործառույթին բնորոշ են իր իրականացման հատուկ ձևերը, մասնավորապես՝ մեզ հետաքրքրող գործառույթի համար օրենքն ամրագրում է դրա իրականացման վերը նշված ձևերը: Սակայն այս ձևերը կիրառելի են պաշտպանական գործառույթի իրականացման պետական կառավարման վերջին մակարդակում՝ զինված ուժերում, երբ որ նրանք ձեռնարկում են կազմակերպական գործունեություն ու նյութական գործողություններ: Բայց մինչ այդ, գործառույթի իրավական կարգավորման ու պաշտպանական համակարգի հիմնադրման ու պետական կառավարման գործընթացում պետական օրենսդիր և - գործադիր մարմինները կիրառում են իրավական ու կազմակերպական բոլոր վերը նշված, ինչպես նաև այլ հնարավոր ձևերը: Այսպիսով, երկրի պաշտպանության գործառույթի իրականացման ընդհանուր ձևերից բացի, գործառույթի իրականացման ընթացքում կիրառում են նաև հատուկ ձևեր, որոնք ամրագրված են օրենքով:

<sup>83</sup> Ст' у Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозозва, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.- М.: За права военнослужащих, 2004, էջ 93:

<sup>84</sup> Ст' у Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 83, 103:

Գործառույթների իրականացման մեթոդների հարցում պետության և իրավունքի տեսությունը որպես ընդհանուր և հիմնական օրինաչափություններն ուսումնասիրող գիտություն, անդրադառնում է ընդհանուր կերպով, այսինքն՝ վեր է հանում և հետազոտում այն բոլոր մեթոդները, որոնք ունեն իրավական բնույթ ու կիրառվում են բոլոր գործառույթներն իրականացնելիս: Ռազմական իրավունքի տեսաբանները ևս այս հարցին անդրադառնում են ընդհանուր տեսանկյունից (տե՛ս վերևում)՝ առաջ քաշելով միայն ռազմական հատուկ մեթոդների գաղափարը՝ մատնանշելով դրանց առանձնահատուկ գծերը՝ զենքի և զինատեսակի, ինչպես նաև զորքերի կիրառումը<sup>85</sup>:

Ս. Ա. Ֆոմինն այդ մեթոդները բնութագրում է որպես երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտների վրա դրված նպատակների, խնդիրների ու գործառույթների իրականացման եղանակներ<sup>86</sup>: Նա դրանց բազմազանությունը դասակարգում է երկու համընդհանուր խմբում՝ համոզման և հարկադրանքի: Համոզման մեթոդի դրսևորում է՝ պետությունների ռազմական դոկտրինների համաձայնեցումը, դրանց միջև հարաբերությունների ապառազմականացումը, դոկտրինի դրույթների հռչակումը, ռազմական զսպման քաղաքականության տեխնիկական կենսագործման ցուցադրումը՝ վարժանքներ, զորաշարժեր, զենքի և ռազմական տեխնիկայի փորձարկումներ՝ դրանք ՁԼՄ-ներով լայն լուսաբանելով: Հարկադրանքի մեթոդները ռազմական (կամ ուժային) են. դրանք ենթադրում են զենքի և զինամթերքի օգտագործում:

Այս մոտեցումը, լինելով սկզբունքորեն ճիշտ, որոշակի հստակեցման կարիք ունի, մասնավորապես՝ պետության և իրավունքի տեսության դիրքերից: Պետության գործառույթների իրականացման կառուցակարգում մեթոդները սերտորեն կապված են գործառույթի իրականացման ձևերի հետ: Հետևաբար, գործառույթի իրականացման համընդհանուր ձևերին համապատասխանում են դրանցից ամեն մեկին բնորոշ համընդհանուր մեթոդները, մասնավորապես իրավական ձևերին՝ դրանց համապատասխանող իրավական ընդհանուր մեթոդները, կազմակերպական ամեն մի ձևին իրեն բնորոշ մեթոդները: Հետևաբար, պաշտպանության գործառույթի իրականացման մեթոդները կարող են լինել ընդհանուր՝ իրավական ու կազմակերպական, ինչ-

<sup>85</sup> Տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право; под. ред. В.Г. Стрекозовца, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.- М.: За права военнослужащих, 2004, էջ 93:

<sup>86</sup> Տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 101-102:

պէս նաև զուտ պաշտպանությանը բնորոշ հատուկ կամ զինված ուժերի գործունեությանը բնորոշ մեթոդներ, որոնք Ս. Ա. Ֆոմինն անվանում է ռազմական և ռազմական հարկադրանքի մեթոդներ:

**§ 3. Պաշտպանության ոլորտի կառավարման և իրավական կարգավորման սկզբունքները պետության կառուցակարգի սահմանադրական հիմունքների համակարգում**

Պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց եզրակացնելու, որ այդ գործառույթը պետության սահմանադրական այլ գործառույթների համակարգում աչքի է ընկնում մի շարք յուրահատկություններով, իսկ դրա իրականացման կամ ապահովման համակարգի միջուկը կազմում են զինված ուժերը (բանակը): Սակայն այդ առանձնահատկություններից բացի պաշտպանության գործառույթը, որպես կառավարչական գործունեություն, աչքի է ընկնում իր իրականացման սկզբունքներով: Այդ սկզբունքների առանձնահատկությունները վեր հանելու համար, փորձենք նախ տարանջատել պաշտպանության ոլորտի կառավարման մակարդակները և կառավարման ամեն մի մակարդակին բնորոշ սկզբունքները՝ դիմելով հարցին առնչվող մի շարք գիտական ոլորտների մեթոդաբանական օգնությանը: Խնդիրը նրանում է, որ ոչ բոլոր գիտական ոլորտներն են, որ զբաղվում են պետական կառավարման սկզբունքների հետազոտմամբ, անդրադառնում պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ու կառավարման սկզբունքներին: Որպեսզի տեսական պատկերացումն այդ սկզբունքների ու դրանց խմբերի միջև հարաբերակցության վերաբերյալ լինի ամբողջական ու համալիր, նորից դիմենք գիտական մի շարք ոլորտների օգնությանը:

Պետության և իրավունքի տեսության մեջ պետության կառուցակարգի սկզբունքները բնորոշվում են որպես իրավունքի նորմերում ամրագրված (կամ դրանց իմաստից բխեցվող) դրույթներ, որոնք որոշում են պետական ապարատի սոցիալական էությունը, դրա կազմակերպման և գործունեության ելակետային, հիմ-



նական հարցերը (գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները և այլն)<sup>87</sup>: Այդ սկզբունքները, որպես համակարգ դասակարգվում են հիմնարար, ընդհանուր, ճյուղային (իշխանության երեք ճյուղերի) և կոնկրետ սկզբունքների<sup>88</sup>:

Հիմնարար և ընդհանուր, այսինքն՝ պետական ապարատի բոլոր կառուցվածքային մասերին վերաբերող սկզբունքներին հաջորդում են իշխանության ամեն մի ճյուղին բնորոշ սկզբունքները, իսկ սրանց՝ կոնկրետ պետական մարմնի (կառույցի) կազմակերպման ու գործունեության սկզբունքները: Այս բաժանումն ընդունելի է մեզ հետաքրքրող հիմնահարցի հետազոտման տեսանկյունից, որովհետև պաշտպանության համակարգը կառավարման բազմամակարդակ կառուցվածք ունի: Մասնավորապես՝ զինված ուժերի կազմակերպման ու գործունեության սկզբունքները տեղավորվում են վերը նշված կոնկրետ սկզբունքների շարքում: Սակայն բաց է մնում երկու հարց. առաջին, սկզբունքների ենթահամակարգային խմբերի հարաբերակցությունը, այսինքն՝ ո՞րն է սկզբունքների բովանդակային փոխադասարկման աստիճանի ուղղությունը, ստորինից դեպի վեր, թե հակառակը, երկրորդ՝ առանձին մակարդակի սկզբունքների միջև հակասությունների, միմյանց փոխբացառման հարցը: Այսպես՝ պետական ապարատի կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքներն են՝ մարդասիրությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը, իրավական օրինականությունը, իշխանությունների բաժանումը, պետական ծառայության մատչելիությունը և արհեստավարժությունը, կոլեգիալության և միանձնյա կառավարման գույակցումը և այլն<sup>89</sup>: Առաջին իսկ հայացքից ակնհայտ է հակասությունը զինված ուժերի կազմակերպման ու գործունեության որոշ սկզբունքների հետ, օրինակ՝ հակասում են իշխանությունների բաժանումը և կենտրոնացվածությունը, հրապարակայնությունն ու գաղտնիությունը, ժողովրդավարությունը և միանձնյա կառավարումը: Նշանակում է խնդիրն ունի տեսական հատուկ հետազոտության կարիք, որի արդյունքում կմշակվեն դրա լուծման տեսաբանական ճիշտ հիմքերը:

<sup>87</sup> Տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 191:

<sup>88</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 192:

<sup>89</sup>Տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 193-212:

Պետության և իրավունքի տեսության այլ հեղինակների տեսական մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց հիմնական մասը մատնանշում է պետության ապարատի ընդհանուր սկզբունքների գրեթե նույն շրջանակը, իսկ որոշ հեղինակներ նույնիսկ անտեսում են այդ սկզբունքները, ինչի հետևանքով դրանք չեն ներառվում նույնիսկ ուսումնական դասընթացների ծրագրերում ու դասագրքերում<sup>90</sup>: Գրականության մեջ արժարժվող պետական կառուցակարգի կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքների մեջ չենք նկատում պետության ռազմական կառույցին վերաբերող որևէ սկզբունք: Հեղինակներից միայն Ա. Վաղարշյանն է անդրադառնում դրան՝ գտնելով, որ պետական կառուցակարգի կազմակերպական ու գործառնության սկզբունքներից է պաշտպանունակության սկզբունքը<sup>91</sup>:

Բացի այդ հանգամանքը, պետության և իրավունքի տեսության դիրքերից ակնհայտ է դառնում, որ պետական ապարատի կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքները որոշակի հակասության մեջ են մտնում զինված ուժերի կազմակերպման ու գործունեության սկզբունքների հետ: Պետության և իրավունքի տեսության դիրքերից ստացվում է, որ զինված ուժերի կազմակերպման ու գործունեության հարաբերությունների հիմնական մասը ներառված է գործադիր իշխանության համակարգում, իսկ դրա սկզբունքները ո՛չ ընդհանուր են, ո՛չ հիմնական, հետևաբար անտեսում է դրանց հետազոտությունը: Սակայն նույնիսկ այս պարագայում բաց է մնում զանազան մակարդակի սկզբունքների հարաբերակցության

---

<sup>90</sup> Տե՛ս օրինակ *Общая теория права и государства* /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп.-М.: Юристъ, 1996; *Теория государства и права* /Отв. ред. д.ю.н., проф. В.Д. Перевалов.- 3-е изд., перераб. и доп.-М.: Норма, 2006; , **Поляков А.В., Тимошина Е.В.**, *Общая теория права.*- СПб.: Издательский Дом С.-Петербур. Гос. Университета, 2005, էջ 216-218: Վ.Ս. Ներսեսյանցը դրանում չի ներառել նույնիսկ պետական կառուցակարգ թեման (տե՛ս **Нерсисянц В.С.**, *Общая теория права и государства.* – М.: исд. група НОРМА-ИНФРА. М., 1999):

<sup>91</sup> Ա. Վաղարշյանն այդ սկզբունքը մեկնաբանում է որպես էլակետային դրույթ, որի կենսագործումը կապահովի պետական համակարգի ինքնապահպանումը, ինքնավերարտադրումը, ինքնակատարելագործումը՝ արտակարգ, ռազմական իրավիճակներում (տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան**, *Պետության և իրավունքի տեսություն-1* (Դասախոսություններ), ԵՊՀ.– Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 203-206): **Ա.Գ. Վաղարշյան** «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 2 (88). 2016, էջ 45-53; Այս սկզբունքի բովանդակային տարրերը զարգացրել է նաև Լ. Բարսեղյանը (տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան, Լ.Վ. Բարսեղյան**, «Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. Նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 1-2(95-96). 2018, էջ 232-245):

հարցը: Նշանակում է այստեղ առկա է որոշակի տեսական անորոշություն, որը պետք է հատուկ հետազոտվի:

Սահմանադրական իրավունքի գիտությունը ուսումնասիրում է պետության կառուցման ու գործառնության վերաբերյալ սահմանադրական սկզբունքները: Սակայն գիտական այս ոլորտը, ՀՀ 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ, քննարկման առարկա է դարձրել պետության այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են՝ ինքնիշխանությունը, ժողովրդավարությունը, սոցիալական և իրավական պետությունը, աշխարհիկ պետությունը, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման երկու հիմունք՝ ժողովրդաիշխանություն, իշխանությունների բաժանում<sup>92</sup>: Խնդրին նույն կերպ են մոտենում նաև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության ընդունումից հետո<sup>93</sup>: Այստեղ ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների շրջանակում տեղ են գտել տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային, քաղաքական հարաբերությունների սահմանադրական հիմունքների վերլուծությունը, սակայն չկան հայրենիքի կամ երկրի պաշտպանության սահմանադրական հիմունքները՝ չնայած այն հանգամանքին, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պաշտպանական ոլորտի նորմատիվ կարգավորման մեջ կատարել է մի շարք էական նորամուծություններ: Նման թեմայով հետազոտություններ չեն իրականացվել նաև ատենախոսական աշխատանքների մակարդակով<sup>94</sup>: Այս փաստը հաստատում է, որ սահմանադրական իրավունքի գիտական ոլորտում պաշտպանական հարաբերությունների և դրանց կարգավորման նորմատիվ հիմքերի հետազոտությունները չունեն տարածվածություն և, կարծես թե, հրատապ չեն: Այդ հաստատում է 2014 թ. հրատարակված «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը»<sup>95</sup>, որում ընդհանրապես տեղ չի հատկացվել պաշտպանական ոլորտի հարաբերությունների կարգավորման սահմանադրական տեսլականին: Այսպիսով, նշված ոլորտային գիտությունները չեն կարող հիմք հանդիսանալ մեզ հետաքրքրող հիմնահարցի՝ սահմանադրական ընդհանուր սկզբունքների համակարգում պաշտ-

<sup>92</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք.- Երևանի պետ. Համալսարան.- Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, էջեր 91-144:

<sup>93</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք առաջին.- Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջեր 123-167 (416 էջ):

<sup>94</sup> ՀՀ ԲՈԿ-ի, ինչպես նաև զանազան մասնագիտական խորհուրդների կաթեժերում մեզ չհաջողվեց հանդիպել նման բովանդակությամբ որևէ ատենախոսության:

պանության ոլորտի իրավական կարգավորման ու կառավարման սկզբունքների տեղը որոշելու համար:

Փորձենք մեզ հետաքրքրող գլխավոր հիմնահարցը պարզել վարչական իրավունքի տեսության միջոցով, քանի որ ռազմական իրավունքը որոշ մոտեցումներով դիտարկվում է վարչական իրավունքի ինստիտուտ<sup>96</sup>: Իհարկե, կան հեղինակներ, ովքեր ռազմական իրավունքը համարում են իրավունքի համալիր ճյուղ<sup>97</sup>, իսկ դրավերաբերյալ գիտությունը՝ պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ու կենսագործման հարցերը հետազոտող տեսություն<sup>98</sup>: Վարչական իրավունքի գիտության մեջ, հիմնվելով «Պաշտպանության մասին» 18.12.2008 թ. ՀՀ օրենքի 12 հոդվածի վրա, առանձնացնում են զինված ուժերի ղեկավարման երեք մակարդակ՝ ընդհանուր ղեկավարում, անմիջական ղեկավարում և կառավարում, որոնք համապատասխանաբար իրականացվում էին՝ ՀՀ նախագահի, որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի, պաշտպանության նախարարի և գլխավոր շտաբի պետի կողմից<sup>99</sup>: Այս մոտեցման հիմքը 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունն է: Բացի կառավարման երեք մակարդակներից և պետական մարմինների լիազորությունների թվարկումից, այս աշխատության մեջ այլ հարցեր չեն շոշափվում: Նույն կերպ են շարադրված պաշտպանության հարցերի շրջանակը ՌԴ վարչական իրավունքի տեսությունում<sup>100</sup>:

<sup>95</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Եր., Տիգրան Մեծ, 2014, էջ 23-27:

<sup>96</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի.- Երևանի պետ. Համալսարան- ԵՊՀ. Հրատ., 2012, էջ 594: **Габричидзе Б.Н., Елиссеев Б.П.**, Российское административное право. Изд. группа НОРМА-ИНФРА.М.: 1998, с. 443-452; **Тихомиров Ю.А.** Курс административного права и процесса.- М.: 1998, с. 667-682:

<sup>97</sup> Իրավունքի համակարգի կառուցվածքի, կառուցվածքային առանձին տարրերի (իրավունքի ճյուղ, ինստիտուտ, օրենսդրության ճյուղ և ինստիտուտ) վերաբերյալ գիտական բանավեճերի մասին մանրամասն տե՛ս **Азмиш Д.М.**, Система права и ее строение: методологические подходы и решения. – М., Юстицинформ, 2014 – 392 с.: Այս հարցում բանավեճերը հանգեցրել են գիտական ենթադրությունների, որ իրավունքի ճյուղերի և ինստիտուտների բաժանումը գիտականություն չունի, արդի շրջանում նման բաժանման հիմքերի բացակայությունը, միայն օրենսդրության և դրա ճյուղերի առկայության փաստի շեշտադրումը:

<sup>98</sup> Տե՛ս **Мигачев Ю.И., Тихомиров С.В.**, Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, с. 14-25; **Военное право. Под ред засл. деятеля науки РФ, академика Кузнецова Н.И.**- М.: издательство Военный университет МО РФ – Всеармейский издательский центр гуманитарной учебной литературы, 1996, с. 7-11; **Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина.** Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, էջ 16-19 և այլն:

<sup>99</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի.- Երևանի պետ. Համալսարան- ԵՊՀ. Հրատ., 2012, էջ 594:

<sup>100</sup> Տե՛ս **Габричидзе Б.Н., Елиссеев Б.П.**, Российское административное право. Изд. группа НОРМА-ИНФРА.М.: 1998, с. 443-452, **Тихомиров Ю.А.** Курс административного права и процесса.- М.: 1998, с. 667-682:

Կառավարման գիտությունը, ինչպես և պետության և իրավունքի տեսությունը, զբաղվում են կառավարման ընդհանուր հիմնահարցերի հետազոտմամբ<sup>101</sup>, հետևաբար դրանում ևս չենք կարող գտնել պաշտպանության ոլորտի կառավարման սկզբունքների համակարգի ու դրա տարրերի վերաբերյալ հարցի տեսական պատասխանը: Սակայն կառավարման գիտությունն ունի երկու շատ կարևոր մեթոդաբանական ցուցումներ մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ: Դրանք են՝

1) կառավարվող օբյեկտների բովանդակությունն ու ձևերը, գործառույթներն ու կառուցվածքն անմիջականորեն (գենետիկորեն) պայմանավորված են բնական և սոցիալ-պատմական պայմաններով ու օրինաչափություններով<sup>102</sup>: Դա նշանակում է, որ որևէ օբյեկտի, ներառյալ պաշտպանական ոլորտի, կառավարման սկզբունքները չեն որոշվում կամ սահմանվում վերնից՝ կամայականորեն, այլ օբյեկտի կառավարման սկզբունքները բխում են դրան բնորոշ օբյեկտիվ-պատմական օրինաչափություններից, մեր հետազոտության դեպքում՝ պաշտպանության կազմակերպման ու պատերազմի,

2) պետական կառավարման համակարգում օբյեկտ-սուբյեկտ միասնության ու փոխհարաբերության մեջ գլխավոր գործառույթը կատարում են կառավարվող օբյեկտները, այդ պատճառով դրանք որոշիչ են պետական կառավարման մարմինների նկատմամբ<sup>103</sup>: Պետական կառավարման այս օրինաչափությունը պաշտպանության ոլորտի նկատմամբ կիրառելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական մարմինները (բարձրագույն, միջին և այլ մակարդակի) պետք է հետևեն գլխավոր գործառույթը կատարող օբյեկտի, տվյալ դեպքում զինված ուժերին, կամայականորեն չվերաձևեն կամ վերասահմանեն նրանց հատուկ կազմակերպագործառութային սկզբունքների շրջանակը և դրանց բովանդակությունը:

Կառավարման տեսության այս դրույթներից բխում է ևս մեկ կարևոր մեթոդաբանական ուղենիշ. պաշտպանության ոլորտի հարաբերությունների կարգավորման ու կառավարման սկզբունքների համակարգի հետազոտությունը պետք է սկսել ոչ թե վերին մակարդակից, այլ ներքևից, պաշտպանության ամենավերջին օղակից, այն է

<sup>101</sup> Տե՛ս **Самойлов В.Д.**, Государственного управление. Теория, механизмы, правовые основы.- М: ЮНИТИ\_ДАНА: Закон и право, 2015. 311 с.; **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, և այլն:

<sup>102</sup> Տե՛ս **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 91:

<sup>103</sup> Տե՛ս **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 91:

զինված ուժերի գործունեության տակտիկական մակարդակից, օրինակ՝ մարտի վարման սկզբունքներից ու մեթոդներից, որոնք բնորոշ են զինված կազմավորմանն իր օբյեկտիվ խնդիրների բնույթով: Այս հետազոտական ուղղությամբ շարժվելու համար անհրաժեշտ է պարզել պաշտպանական ոլորտի կառավարման մակարդակները, իսկ այնուհետև՝ վերլուծել ամեն մի մակարդակի կառուցվածքային տարրերին բնորոշ սկզբունքները, արդյունքում դրանք համադրել իրար հետ:

Ռազմական անվտանգության տեսության մեջ ընդունված է ռազմական անվտանգության կառավարման համակարգը բաժանել մի քանի մակարդակների՝ ա) պետական կառավարման համակարգ (օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ), բ) տարածքային կառավարման համակարգ, գ) գործառույթային ապահովման համակարգ, դ) պետության ռազմական կազմակերպություն<sup>104</sup>:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթներից բխում է, որ պաշտպանության ոլորտում կառավարման մակարդակներն են՝ ա) ընդհանուր իրավասության պետական մարմինների կառավարումը (օրենսդիր մարմին, կառավարություն, անվտանգության խորհուրդ, ՀՀ վարչապետ), բ) պաշտպանության ոլորտի հատուկ իրավասության մարմնի կառավարումը (պաշտպանության նախարարություն), գ) պաշտպանության ոլորտի լիազորություններ ունեցող պետական ու տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող կառավարումը, դ) պաշտպանական ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը, ե) զինված ուժերի անմիջական կառավարումը (գլխավոր շտաբ՝ շտաբի պետի ղեկավարությամբ), ինչպես նաև զինվորական կառավարման այլ մարմիններ<sup>105</sup>:

Այսպիսով, ինչպես տեսության մեջ, այնպես էլ օրենսդրական մակարդակում պաշտպանական ոլորտի կառավարման վերջին մակարդակը զինված կամ դրա կառուցվածքային տարրերի անմիջական կառավարումն է՝ խաղաղ պայմաններում կամ ռազմական ժամանակ: Հենց զինված ուժերն են համարվում պաշտպանական ոլորտի կառավարման գլխավոր օբյեկտը: Հետևաբար, պաշտպանության ոլորտի

<sup>104</sup> Տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 128: Ընդ որում ամբողջական համակարգին, հատկապես դրա ստորին ու վերջին օղակներին բնութագրական է կազմակերպական (կառուցվածքային) առանձնացում՝ պետական կառավարման ամբողջ համակարգից, ինչպես նաև միմյանցից:

<sup>105</sup> Տե՛ս «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ընդունված 2017 թ. դեկ. 15-ին //ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348):

մնացած մակարդակների սկզբունքները պետք է համապատասխանեն գլխավոր օբյեկտի կամ համակարգի միջուկի գործառութավորման սկզբունքներին:

Ռազմական արվեստը կամ գիտությունն ընդունված է բաժանել երեք ոլորտների (բաղկացուցիչ մասերի)՝ ստրատեգիա, օպերատիվ արվեստ և տակտիկա: Դրանցից յուրաքանչյուրը զբաղվում է զանազան մասշտաբներով զինված պայքարի վարման առանձնահատկությունների ուսումնասիրմամբ<sup>106</sup>: Մարտավարությունը (տակտիկան) ուսումնասիրում է զինված ուժերի զանազան տեսակների՝ զորամասերի, միավորումների, զորքերի տեսակների և հատուկ զորքերի կողմից մարտի նախապատրաստման ու վարման տեսությունը և պրակտիկան<sup>107</sup>: Մարտը համարվում է զորքերի և դրա տեսակների տակտիկական գործողության հիմնական ձևը: Մարտավարության տեսությունն ընդհանուր զորատեսակների մարտի վարման սկզբունքները, բնորոշելով որպես մարտի կազմակերպման և վարման հիմնական և ղեկավար դրույթներ, գտնում է, որ դրանց հիմքում ընկած են զինված պայքարի օբյեկտիվորեն գործող օրենքները, որոնք չի ընտրում մարդը, այլ նա պետք է հաշվի նստի դրանց հետ<sup>108</sup>: Համագորային մարտի սկզբունքներ են համարվում մշտական բարձր մարտական պատրաստվածությունը, բարձր ակտիվությունը, մարտի վարման վճռականությունը և անընդհատությունը, գործողությունների հանկարծակիությունը, զորամասերի և կրակի արագ տեղաշարժը (մանևրը), մարտի համակողմանի ապահովումը, զորքերի մարտունակության մշտական պահպանումը և ժամանակին վերականգնումը, անընդհատ ու անշեղ կառավարումը, նպատակների ու դրված խնդիրների նվաճման անշեղ ձգտումը և այլն<sup>109</sup>: Մարտի վարման այս սկզբունքներին համապատասխանում են զորքերի մարտական կառավարմանը ներկայացվող պահանջները՝ կայունություն, անընդհատություն, օպերատիվություն և գաղտնիություն: Այդ պահանջներին համապատասխանող մարտական գործողություններում զորքերի կառավարման սկզբունքներ են միանձնությունը, հրամա-

<sup>106</sup> Ст' у Военная стратегия / Под редакцией Маршала Советского Союза Соколовского В. Д. - Издание второе, исправленное и дополненное. - М.: Воениздат, 1963. էջ 14; Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 8 (496):

<sup>107</sup> Մարտավարությունն իր հերթին լինում է ընդհանուր, զինված ուժերի տեսակների, զորքերի տեսակների և հատուկ զորքերի (տե'ս Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 8):

<sup>108</sup> Ст' у Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 67:

<sup>109</sup> Ст' у նույն տեղը, էջ 68:

նատարի անհատական պատասխանատվությունը, կառավարման կենտրոնացումը, իրադրության իմացությունը, խորը վերլուծությունը, կանխատեսումը, համառոտությունը, բարձր կազմակերպվածությունը և այլն<sup>110</sup>:

Այսպիսով, մարտավարության տեսության այս հիմնադրույթների իմաստավորումը բերում է շատ կարևոր եզրակացությունների. **նախ**, որ համագորային մարտի սկզբունքների, գորքերի մարտական գործողությունների կառավարմանը ներկայացվող պահանջների հիմքում ընկած են պատերազմի և զինված պայքարի օբյեկտիվ օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ունեն բնապատմական բնույթ: Մարտում հաջողության հասնելու համար պետք է անպայման հաշվի նստել այդ օբյեկտիվ օրենքների հետ, հակառակ դեպքում՝ հաջողությունները կադառնան կասկածելի: Այս հանգամանքը հաստատվում է սոցիալ-պատմական փորձով:

Ռազմական արվեստի մեկ այլ բնագավառը՝ ստրատեգիան ընդունված է համարել ռազմական արվեստի բարձրագույն ոլորտ, որը ներառում է երկիրը և զինված ուժերը պատերազմի նախապատրաստելու տեսությունը և պրակտիկան, պատերազմի և ռազմավարական օպերացիաների պլանավորումը և վարումը<sup>111</sup>: Ստրատեգիան որպես ռազմագիտության ոլորտ ևս հիմնավորում է, որ ստրատեգիական կառավարման հիմքում ընկած են որոշակի սկզբունքներ, որոնք պետական, բարձրագույն զինվորական ղեկավարության գործունեության ընդհանուր կանոններ են՝ ուղղված ռազմավարական խնդիրների լուծմանը<sup>112</sup>: Այդ սկզբունքներն ընդգրկում են պատերազմի կանխման, երկիրը պաշտպանության նախապատրաստելու, ստրատեգիական մասշտաբով ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման, խաղաղ և պատերազմի ժամանակ զինված ուժերի ղեկավարման, ինչպես նաև պետության ռազմական գործունեության այլ հարցերը<sup>113</sup>: Ռազմական ստրատեգիայի տեսությունը, տակտիկայի տեսության պես, գտնում է, որ ռազմական ստրատեգիայի սկզբունքները ձևակերպվում են ռազմատեսական հետազոտությունների

<sup>110</sup> Ст'у Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 91-98:

<sup>111</sup> Ст'у Военная стратегия /Под редакцией Маршала Советского Союза Соколовского В. Д. - Издание второе, исправленное и дополненное. - М.: Воениздат, 1963. էջ 19, Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 8.

<sup>112</sup> Ст'у «Категории, закономерности и принципы военной стратегии» // в кн. Военная стратегия, с. 32-39; հղումն ըստ <http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>.

<sup>113</sup> Ст'у «Категории, закономерности и принципы военной стратегии» //в кн. Военная стратегия, с. 35-36; հղումն ըստ <http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>:



ճանապարհով՝ պատերազմի օրենքների, օրինաչափությունների, զինված պայքարի օրենքների, ինչպես նաև ռազմական գործունեության փորձի ամփոփման հիման վրա:

Այսպիսով, ինչպես մարտավարության տեսությունը, այնպես էլ ռազմական ստրատեգիայի տեսությունը համարում են, որ ռազմական ստրատեգիայի և՛ խաղաղ ժամանակվա սկզբունքների, և՛ ռազմական գործողությունների վարման սկզբունքների հիմքում ընկած են պատերազմի ու զինված պայքարի օրենքներն ու օրինաչափությունները, արտացոլում են վերջինների էությունը, պարունակում են նպատակահարմար ռազմաստրատեգիական գործունեության ընդհանուր կանոնները: Այստեղից բխում է շատ կարևոր պահանջ. և՛ ռազմական ստրատեգիայի, և՛ տակտիկայի սկզբունքներն ու պահանջները պետք է ունենան իրավական ամրագրում:

Ռազմական ստրատեգիայի տեսությունը պատերազմի և զինված պայքարի օրենքների ու օրինաչափությունների առանձնահատկություն է համարում այն, որ «դրանց գործնական կենսագործումը պահանջում է մի շարք պարտադիր միջանկյալ փուլեր: Դրանցից ամեն մեկում նախատեսվում է որոշակի դրույթների մշակում, որոնցով սահմանվում են նշված օրենքների ու օրինաչափությունների հաշվառմամբ մշակված ռազմական գործունեության նպատակները, սկզբունքները, ուղղությունները և խնդիրները»<sup>114</sup>: Մշակված դրույթներն արտացոլվում են ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերում՝ կանոնագիրք, կանոնադրություն, պատվիրան, հրաման, կարգադրագիր, հրահանգ:

Ռազմական արվեստի այս մոտեցումն, ինչպես տեսնում ենք, դուրս չի գալիս զինված ուժերի ենթաօրենսդրական կառավարման մակարդակից: Բայց կառավարման համակարգը շարունակվում է վերադասության կարգով բարձրանալ և դրա հանգրվանը երկրի բարձրագույն մարմիններն են՝ պետության գլուխը, օրենսդիրը, գործադիրը՝ կառուցված իշխանությունների բաժանման, պետական մեխանիզմի ընդհանուր այլ սկզբունքներով: Այս հանգամանքն առաջ է բերում խնդիր, այն է՝ ի՞նչ հարաբերակցության մեջ են մի կողմից ռազմական ստրատեգիայի ու մարտավարության, մյուս կողմից՝ պետական ապարատի կազմակերպման ու գործունեության

---

<sup>114</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 35:

ընդհանուր, որոշակիորեն նաև ճյուղային (հատկապես գործադիր իշխանության) սկզբունքները:

Կարծում ենք, որ պաշտպանության գործառույթի իրականացման արդյունավետության շահերը պահանջում են հաշվի նստել ռազմական արվեստի այն հիմնադրույթի հետ, որ պաշտպանության կազմակերպման ու կառավարման հիմքում, ինչպես մարտավարական, այնպես էլ բարձրագույն պետական կառավարման մակարդակում պետք է ընկած լինեն պատերազմի և զինված պայքարի օրենքներն ու օրինաչափությունները: Միայն այս դեպքում է երաշխավորված պաշտպանության գործառույթի արդյունավետ իրականացումը: Այս պահանջը բխում է ոչ միայն ռազմագիտության վերը քննարկված հիմնադրույթներից, այլ պետական կառավարման տեսության առաջ քաշած կառավարման օբյեկտի առաջնայնության ու դրան բնորոշ օբյեկտիվ բնապատմական պայմանների ու օրինաչափությունների գաղափարներով:

Հետևաբար, պետական կառավարման համակարգում պաշտպանության գործառույթի նորմատիվ կարգավորման հիմքերը ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի նստել պաշտպանական ոլորտի առանձնահատկությունների հետ, ոչ թե ստորին մակարդակի սկզբունքները պետք համապատասխանեցվեն վերին մակարդակի սկզբունքներին, այլ վերին մակարդակի կառավարման սկզբունքները պետք է հարմարեցվեն ստորին մակարդակի սկզբունքներին: Մա շատ կարևոր նշանակության սահմանադրական խնդիր է, որը նրբորեն պետք է կենսագործվի սահմանադրական կարգավորման համակարգում՝ խնդիր ունենալով չառաջացնել կոլիզիաներ տարբեր մակարդակի կառավարման սկզբունքների միջև, հարմարացնել վերին մակարդակի սկզբունքները ռազմական և զինված պայքարի օրենքների վրա խարսխված ստրատեգիական ու տակտիկական սկզբունքներին, ներդաշնակորեն ինտեգրել սրանց պետական կառավարման կազմակերպագործառութային ընդհանուր սկզբունքների համակարգում: Հենց միայն այս խնդիրը պահանջում է պաշտպանության հարաբերությունների, հատկապես դրա կառավարման վերին մակարդակների հիմնադրույթների սահմանադրական հավասարակշռված կարգավորում, որում կամայականորեն չեն անտեսվի պաշտպանության կամ ռազմական ստրատե-

գիայի ու մարտավարության սկզբունքները, մյուս կողմից էլ ընդհանուր սկզբունքները կհարմարեցվեն դրանց:

**ԳԼՈՒԽ 2. ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԻՐԱՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**§ 1. Պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հետազոտման առարկան, հիմնական հասկացությունները և հետազոտման մեթոդը**

Երկրի պաշտպանության հարաբերությունների կարևորության դրսևորումներից կամ ցուցանիշներից մեկն էլ դրա սահմանադրական կարգավորումը, համապատասխան դրույթներին բարձրագույն իրավական ուժ տալն է: Փորձենք այս խնդիրը վեր հանել սահմանադրական կարգավորման համաշխարհային փորձի տեսանկյունից, այսինքն՝ հետազոտել պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորումը երկու չափանիշով՝

ա) իրավատեխնիկական, այսինքն՝ ինչ տեղ են գրավում պաշտպանական հարաբերությունների վերաբերյալ սահմանադրական դրույթները կոնկրետ երկրի սահմանադրության կառուցվածքում, ինչպիսի իրավատեխնիկական լուծումներ կան աշխարհի մի շարք երկրների սահմանադրական կարգավորման պրակտիկայում,

բ) ինստիտուցիոնալ, այսինքն՝ որոնք են պետության պաշտպանության գործառույթի իրավական բովանդակությունը կազմող այն հիմնական ինստիտուտները, որոնք համաշխարհային պրակտիկայում ձեռք են բերել սահմանադրական ամրագրում:

Հետազոտման այս առարկայի համար հիմնական հասկացություններ են հանդիսանում սահմանադրական տեխնիկական և սահմանադրական ինստիտուտները՝ կոնկրետացված պաշտպանական հարաբերությունները կարգավորող նորմերի նկատմամբ: Հետազոտման օբյեկտի, այսինքն՝ երկրների և նրանց սահմանադրությունների բազմազանությունը պայմանավորում է նաև հետազոտման մեթոդը, այն է՝ հետազոտության տիրույթում ներառված երկրների սահմանադրությունների դասակարգումը հետազոտության առարկայի, առաջին հերթին պաշտպանական հարաբե-

րությունների սահմանադրական կարգավորման համար կիրառված իրավական տեխնիկայի չափանիշով:

Այս խնդրի լուծումը հնարավորություն կտա գնահատելու ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանական հարաբերությունների կարգավորման տեսլականը իրավատեխնիկական և բովանդակային տեսանկյուններից: Վերջինիս դեպքում նկատի ունենք այն հիմնական ինստիտուտները, որոնք կան մի շարք կամ շատ երկրների սահմանադրություններում, սակայն Հայաստանում չունեն սահմանադրական ամրագրման մակարդակ, և, հետևաբար, չեն նախատեսված նաև օրենսդրությամբ: Այսպիսի վերլուծությունը հնարավորություն կտա նաև հասկանալու այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորել են սահմանադրական կարգավորման և՛ տեխնիկական, և՛ բովանդակային կողմերը որևէ երկրում, ինչպես նաև ՀՀ-ում:

Որպես հետազոտության օբյեկտ ընտրել ենք մի քանի խումբ երկրների սահմանադրությունները. եվրոպական՝ և՛ միապետական, և՛ հանրապետական կառավարման ձև ունեցող պետություններ, ԱՄՆ, խորհրդային միության փլուզումից հետո ստեղծված անկախ հանրապետություններ, արևելյան երկրներից՝ Հնդկաստան, Ճապոնիա, ինչպես նաև ոչ տիպիկ կառավարման ձև ու հասարակական կարգեր ունեցող Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Իրանի Իսլամական Հանրապետություն:

Այս խմբերի առանձնացումը պայմանավորված է համաշխարհային մասշտաբով սահմանադրական կարգավորման տիպերի ու, հետևաբար, հասարակական կառավարման մոդելների մեթոդաբանությամբ: Հասարակական կառավարման առանձնահատկություններից ելնելով աշխարհի երկրները և դրանց սահմանադրությունները դասակարգվում են ազատական, սոցիալիստական և մահմեդական կառավարման տեսլականների<sup>115</sup>: ՀՀ հանրային ընդհանուր կառավարման համակարգն ազատականի նպատակաուղղված անցումային համակարգ է: Այս պատճառով հատուկ կանգ չենք առնի սոցիալիստական և մահմեդական երկրներում պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման վերլուծության վրա: Այդ հարցերին կանդրադառնանք աշխատանքի այս մասում, շատ ընդհանուր:

---

<sup>115</sup> Ст'ю Чиркин В.Е., Опыт зарубежного управления: государственное и муниципальное управление: М.: Юристъ, 2006, 27-30:

Մատնանշված հիմնահարցերի հետազոտման սկզբում նախ փորձեցինք որոնել տեսական աղբյուրներ՝ մենագրական ուսումնասիրություններ, որոնք կատարվել են նշված թեմատիկայով: Տարօրինակ է, բայց այդ հետազոտությունները շատ քիչ են: Մեզ հաջողվեց հայտնաբերել ընդամենը մեկ աշխատություն, որի մի մասը նվիրված է պաշտպանական սահմանադրական իրավական ինստիտուտների համեմատական վերլուծությանը<sup>116</sup> և մեկ հոդված՝ նվիրված այդ խնդրի ուսումնասիրությանը Սերբիայի Սահմանադրության մեջ<sup>117</sup>: Իրավագետների մոտ ավելի շատ հանդիպում են ռազմական կամ արտակարգ դրությունների սահմանադրական ինստիտուտների համեմատական կամ որևէ երկրի օրինակով վերլուծությունները, քան պաշտպանության գործառույթի սահմանադրական կարգավորման ողջ բովանդակության հետազոտությունները<sup>118</sup>:

Վերը նշված չափանիշով ընտրված երկրների սահմանադրությունների նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Եվրոմիության հին ու նոր անդամներ համարվող երկրներում պաշտպանական հարաբերությունների կարգավորումն աչքի չի ընկնում միասնականությամբ՝ ո՛չ իրավատեխնիկական, ո՛չ էլ բովանդակային առումներով: Պատճառն այդ երկրների կառավարման ձևերի խայտաբղետությունն է՝ միապետություններ, խորհրդարանական, նախագահական, կիսանախագահական և այլ հանրապետություններ: Ակնհայտ է, որ կառավարման ձևերի զանազան լինելու հետևանքով պաշտպանական հարաբերությունների, հատկապես կառավարման և համապատասխան մարմինների, դրանց լիազորությունների ինստիտուտները չէին կարող լինել միասնական: Նշանակում է անհրաժեշտ է հիմնավորել և ընտրել այդ սահմանադրությունների դասակարգման չափանիշ<sup>119</sup>: Որպես այդպիսին մեր կողմից առաջադրվում է

---

<sup>116</sup> St´u Конституционное право государств Европы /Отв. ред. **Д.А. Ковачев**. - М.: Волтерс Клувер, 2005, էջեր 278-292: Այս գրքի 2-րդ գլխի 17-րդ պարագրաֆը՝ «Конституционное регламентирование вопросов обороны и использования вооруженных сил в зарубежных государствах Европы» նվիրված է պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորմանը եվրոպական մի շարք, բայց ոչ բոլոր երկրների Սահմանադրություններում:

<sup>117</sup> St´u **Половченко К.А.**, Конституционное регулирование вопросов обороны в Республике Сербия, Социально-политические науки, 2018, N 2, с. 114-118.

<sup>118</sup> St´u օրինակ՝ Институты конституционного права иностранных государств. М., 2002, 378-492.

<sup>119</sup> Դասակարգումը տրամաբանական միջոց է, որը հնարավորություն է տալիս առավել լրիվ ճանաչել երկուսից, ավելի խորը բացահայտել նրա հատկանշները, հասկանալ դրա օրինաչափությունները, ինչպես նաև կանխագուշակել ապագան: Այդ մասին մանրամասն տե՛ս **Վաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 227-230:

սահմանադրության կառուցվածքում պաշտպանական հարաբերությունների գետեղման ու շարադրման իրավատեխնիկական չափանիշը, այն է՝ պաշտպանական հարաբերությունների կարգավորումը՝ դրան վերաբերող իրավադրույթները տարալուծված են սահմանադրության կառուցվածքային տարբեր մասերում, թե կենտրոնացված են սահմանադրության առանձին կառուցվածքային մասում, որի կարգավորման առարկան միայն պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերություններն են: Այս չափանիշով մեր կողմից ընտրված երկրների սահմանադրությունները կարելի է բաժանել երեք իրավատեխնիկական խմբի, որոնք պայմանականորեն անվանում ենք տարալուծված, կենտրոնացված, խառը կարգավորմամբ:

1) Երկրների մի մասում պաշտպանական հարաբերությունների կարգավորումը տարալուծված է սահմանադրության կառուցվածքային զանազան մասերում, որպես առանձին պետական ինստիտուտների լիազորություններ (կամ իրավասության մաս) կամ էլ որպես մարդու իրավունքների ենթաինստիտուտներ, օրինակ՝ հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու կամ զինվորական ծառայության պարտականության:

2) Պաշտպանական հարաբերությունների կենտրոնացված կարգավորմամբ սահմանադրությունների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ սրանցում առանձնացված են սահմանադրության հատուկ կառուցվածքային մասեր, երբեմն նաև մի քանի, որոնցում կոմպակտ կերպով ամրագրված են պաշտպանական հասարակական հարաբերությունների սահմանադրական իրավադրույթները:

3) Երկրների մի մասի սահմանադրություններն իրավական տեխնիկայի տեսանկյունից աչքի են ընկնում պաշտպանական հարաբերությունների կարգավորման խառը մոտեցմամբ: Այս սահմանադրություններում կան ինչպես պաշտպանական հարաբերությունների կարգավորմանը նվիրված սահմանադրության կառուցվածքային հատուկ բաժիններ (գլուխներ), այնպես էլ պետական մարմինների լիազորություններում տարրալուծված պաշտպանությանը վերաբերող բավականին մանրամասն հոդվածներ:

Սահմանադրությունների դասակարգման բոլոր խմբերում էլ կան որոշակիորեն աչքի ընկնող առանձնահատկություններով տարբերակներ: Օրինակ՝ պաշտպանական հարաբերությունների տարրալուծված սահմանադրական կարգավոր-

ման տեխնիկան որդեգրած երկրների սահմանադրություններն իրենց հերթին կարող ենք բաժանել երկու ենթախմբերի՝ ա) տարրալուծված կարգավորում՝ շատ ընդհանուր հիմնադրույթների միջոցով, որի դեպքում այդ հարաբերությունների հիմնական և մանրամասն իրավական կարգավորումը մնացել է օրենքների վրա (ԱՄՆ, Ֆրանսիա, Հնդկաստան, ՌԴ), բ) տարրալուծված սահմանադրական կարգավորում՝ որոշակիորեն մանրամասնեցված իրավադրույթներով (օրինակ՝ Իտալիա):

Պետք է նկատի ունենալ, որ ամեն մի դասակարգում, նույնիսկ գիտական, միշտ ենթադրում է «տեսակների միջև իրական սահմանների արդյունքների որոշակի կլորացում, քանի որ դրանք միշտ պայմանական ու հարաբերական են: Գիտելիքի զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում դասակարգման ճշգրտում և փոփոխում»<sup>120</sup>: Բացի այդ դասակարգման բոլոր դեպքերում համարյա միշտ լինում են երևույթի դրսևորումներ, որոնք չեն տեղավորվում դասակարգման արդյունքում առանձնացված խմբերում:

Դասակարգման վերաբերյալ վերը բերված դատողությունների համատեքստում մինչ այժմ քննարկված երկրների սահմանադրական կարգավորումների ընդհանուր իրավական առանձնահատկությունն այն էր, որ այս երկրների պետական կառավարման համակարգերը կառուցված են իշխանությունների բաժանման սկզբունքի հիմքով: Դրանցում ռազմական կառավարման ստորին սկզբունքների պահանջները հաշվառված են զինված ուժերի կազմավորման ու կառավարման հարաբերությունները կարգավորելիս՝ փորձելով ինչքան հնարավոր է ապահովել այդ հարաբերությունների կարգավորման ու կառավարման ընթացակարգերը, հատկապես նախապատերազմական և պատերազմական իրավիճակներում: Իշխանությունների բաժանման և դրանից բխող հակակշիռների, զսպիչների ու ռազմական կառավարման կենտրոնացվածության ու օպերատիվության և այլ սկզբունքների հակադրության մեղման կամ թուլացման համար տարբեր երկրներ օգտագործել են ռազմական կառավարման պահանջներին բավարարող զանազան ինստիտուտներ: Այդ ինստիտուտներն ունեն պատմական և սոցիալ-քաղաքական ակունքներ, պայմանավորված են տվյալ երկրի պատմաքաղաքական ճակատագրով, պատերազմա-

<sup>120</sup> Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 228-229:



կան փորձով, աշխարհաքաղաքական գործոններով: Այս առումով հատկանշական է հատկապես Գերմանիայի, Բրազիլիայի սահմանադրական փորձը:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ պատմական ճակատագիրը որոշ երկրների բերել է սահմանադրական կարգավորման լրիվ հակառակ առանձնահատկության, որը հիմք է տալիս այդ երկրների պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորումը համաշխարհային պրակտիկայում համարել ոչ տիպիկ, այսինքն՝ դասակարգման ընդհանուր խմբերից (տիպերից) շեղվող: Այդպիսի յուրահատկություններ ունեն Ճապոնիան, սոցիալիստական երկրները, Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման ոչ տիպիկ տարբերակներն առանձին և մանրամասն հետազոտության առարկա չեն դարձնի, որովհետև սահմանադրական կարգավորման այդ մոդելը ընդօրինակելի չէ ազատականության հիմունքներով կառուցված ՀՀ պետական կառավարման համակարգի համար, որին բնորոշ առանձնահատկություն է, ինչպես և աշխարհի երկրների մեծ մասին, պաշտպանական հարաբերությունների սահմանադրական համակարգի կառուցումը իշխանությունների բաժանման սկզբունքի հիմքով: Այսպիսով, պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման տեսլականը՝ կառուցված իշխանությունների բաժանման սկզբունքով, կարելի է համարել արդի աշխարհին բնութագրական տիպիկ եղանակ:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ աշխարհում կան նաև ատիպիկ կառավարման ձևի պետություններ, որպես օրինակ ՉԺՀ-ն և ԻԻՀ, որոնք շեղվում են արևմտյան սոցիալ-իրավական պետության մոդելից: Չինաստանի կառավարման ձևը ժողովրդադեմոկրատական սոցիալիստական հանրապետությունն է, որի կազմակերպման հիմնական սկզբունքներից է կենտրոնացումը (ցենտրալիզմը): Չինաստանի, ինչպես նաև նախկին ու ներկա սոցիալիստական երկրների սահմանադրական նորմերի հիմքում ընկած են արևմտյան ազատականության հետ հակասության մեջ մտնող պետական իշխանության սկզբունքները: Դրանցից են դեմոկրատական

ցենտրալիզմը, կուսակցականությունը, պլանավորվածությունը, օրինականությունը և այլն<sup>121</sup>:

ԻԻՀ-ն թեոկրատական հանրապետություն է, որի կառավարման համակարգում իշխանությունների բաժանումը շնորհիվ գաղափարական ու կազմակերպական առանձնահատկությունների, ձևական նշանակություն ունի<sup>122</sup>: Երկուսում էլ պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորումն աչքի է ընկնում յուրահատկություններով, որոնցից կարելի է նշել պաշտպանությանը սահմանադրական ինստիտուտների շարքում էական տեղ հատկացնելը, կարգավորման կառուցվածքային առանձնացման և տարրալուծված եղանակների զուգատեղումը, կարգավորման մանրամասնեցումը, բովանդակային առումով էական տարբերությունն արևմտյան աշխարհի սահմանադրական ինստիտուտներից:

Բովանդակային (ինստիտուցիոնալ), այլ ոչ թե իրավական տեխնիկայի տեսանկյունից լրիվ յուրահատուկ է պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորումը Ճապոնիայում, որի 1947 թ. Սահմանադրությունն ամրագրեց «պացիֆիզմի» սկզբունքը: Համաձայն Ճապոնիայի Սահմանադրության 9 հոդվածի «ժողովուրդը հայտարարում է, որ հավերժ հրաժարվում է պատերազմից որպես ազգի ինքնիշխան իրավունքից, ինչպես նաև սպառնալիքից կամ զինված ուժերի կիրառումից որպես միջազգային վեճերի լուծման միջոցից»: Այդ նպատակին հասնելու համար Սահմանադրությունը հռչակում է, որ «երբեք չեն ստեղծվի ցամաքային, ծովային և ռազմաօդային ուժեր, հավասարապես նաև պատերազմի այլ միջոցներ: Պետության կողմից պատերազմ վարելու իրավունքը չի ճանաչվում»<sup>123</sup>: Ընդ որում, պացիֆիստական բովանդակությամբ այդ հոդվածի նախաձեռնողները եղել են ոչ թե ամերիկացիները՝ Գ. Մակարթուրը կամ սահմանադրական բարեփոխումների վրա վերահսկող Հեռավորարևելյան հանձնաժողովը (ԽՍՀՄ, Ֆիլիպիններ, Ավստրալիա), այլ հենց ճապոնացիները, մասնավորապես այն ժամանակվա վար-

<sup>121</sup> Ю.М. Козлов, Е.С. Фралов, Научная организация управления и право, изд. Московского университета, 1986, էջ 82-89; Չինաստանի սահմանադրության հիմքում դրված սկզբունքների մասին տե՛ս **Խաչատրյան Հ.Ս.**, Չինաստանի ժողովրդավական Հանրապետության Սահմանադրությունը. Տեսական-իրավական վերլուծություն /ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.-Եր.: 2012, էջեր 174-221:

<sup>122</sup> Տե՛ս Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), թարգմանեց Գառնիկ Բաղայանը (ոչ պաշտոնական թարգմանություն), «Նաիրի» հրատարակչություն, Թեհրան, 2005, 129 էջ:

<sup>123</sup> Տե՛ս Конституция Японии 1947 г. //Конституция зарубежных государств; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2006, էջ 395, հոդ. 9:

չապետ Ն. Միդեհարան<sup>124</sup>: Տարիների ընթացքում ճապոնական քաղաքականության մեջ նկատվում է հրաժարում հակառակակազմակերպության սկզբունքից: Մկսած 1952 թ. ճապոնիան քայլ առ քայլ ձեռնարկել է միջազգային իրավական քայլեր, ինչպես նաև ստեղծել է ինքնապաշտպանական ուժեր, որոնց քանակն անցնում է 200 հազարից<sup>125</sup>, սակայն ճապոնիայի Սահմանադրության 9-րդ հոդվածը մնացել է անփոփոխ: Այսպիսով, ճապոնիայի Սահմանադրությունը չի նախատեսում ռազմական կառավարման դրույթներ, նույնիսկ պետական մարմինների լիազորությունների ձևով, չունի զինվորական ծառայության պարտականության վերաբերյալ դրույթներ:

## **§ 2. Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման տարալուծված իրավական տեխնիկական և դրա հիմնական ինստիտուտները**

Եվրոպական երկրների սահմանադրությունների տեքստերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում իրավատեխնիկական չափանիշով հիմնական խումբը կազմում են սահմանադրությունները, որոնցում պաշտպանական հարաբերությունների կարգավորումը տարալուծված է սահմանադրության կառուցվածքային մասերում, որպես առանձին պետական ինստիտուտների լիազորություններ (կամ իրավասության մաս) կամ էլ որպես մարդու իրավունքների ենթահիմնստիտուտներ, օրինակ՝ հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու (կամ զինվորական ծառայության) պարտականության, ռազմական դրության ինստիտուտները: Այդպիսին են Ֆրանսիայի, Իսպանիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների սահմանադրությունները:

**Իտալիայի Սահմանադրության** կառուցվածքում չկա որևէ հատուկ առանձնացված մաս կամ գլուխ, որը նվիրված կլինի պաշտպանական հարաբերությունների կարգավորմանը: Դրա «հիմնական սկզբունքներ» 1-12 հոդվածներում չկան պաշտպանական հարաբերությունների կարգավորմանը վերաբերող իրավադրույթ-

---

<sup>124</sup> Ամերիկացիներն ավելի շատ տարակուսում էին հաստատելու այդպիսի սահմանադրական լուծումը (այդ մասին տե՛ս **Auer J.E.** Article nine of Japan's Constitution, from Renunciation of Armed Force «forever» to the third largest defense Budget in the World // Law and Contemporary Problems. Vol. 53, Spring 1990, № 2. P. 173):

ներ<sup>126</sup>: Սահմանադրության մնացած գլուխներում պաշտպանական հարաբերությունները կարգավորող դրույթները գետեղված են համապատասխան պետական մարմիններին հատկացված բաժիններում ու գլուխներում՝ որպես խորհրդարանի, հանրապետության նախագահի լիազորություններ<sup>127</sup>:

Համաձայն Իտալիայի Սահմանադրության 87 հոդ. Հանրապետության նախագահը, լինելով պետության գլուխը և ներկայացնելով ազգային միասնությունը, համարվում է զինված ուժերի հրամանատարը, նախագահում է օրենքին համաձայն ստեղծվող Պաշտպանության գերագույն խորհրդում, խորհրդարանի պալատների որոշմամբ հայտարարում է պատերազմական կացություն:

Իտալիայի Սահմանադրության մեջ կան, մեր կարծիքով, կարևոր երկու ինստիտուտ: Առաջինը վերաբերում է մահապատժին, երկրորդը՝ պատվիրակված օրենսդրմանը: Համաձայն Սահմանադրության 27 հոդ. 4-րդ մասի «մահապատիժ չի թույլատրվում, բացառությամբ ռազմական ժամանակի օրենքներով նախատեսված դեպքերի և պատերազմի ժամանակ»: Իտալիան, այսպիսով, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ արձանագրությամբ մահապատժի արգելումն ընդունում է միայն խաղաղ ժամանակաշրջանում՝ պատերազմի ժամանակ իրեն իրավունք վերապահելով դրա կիրառումը: Կարծում ենք Իտալիայի Սահմանադրության 76 և 77 հոդվածներով ամրագրված պատվիրակված օրենսդրության ինստիտուտը ճգնաժամային կամ ռազմական դրության պայմաններում կառավարման կենտրոնացման ու օպերատիվացման արդյունավետ ինստիտուտ է:

**Ֆրանսիայի Հանրապետության** կառավարման ձևը կիսանախագահական է: Դրա 1958 թ. հոկ. 4-ի Սահմանադրությունը պաշտպանական հարաբերությունները կարգավորում է տարալուծված կերպով, որպես պետական մարմինների լիազորություններ: Համաձայն այդ Սահմանադրության 15 հոդ. «Հանրապետության նախագահը համարվում է Չինված ուժերի գլուխը, նա նախագահում է ազգային պաշտ-

<sup>125</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Маклаков В.В.**, Вступительная статья к Конституция Японии //Конституция зарубежных государств; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2006, էջ 381-394:

<sup>126</sup> Տե՛ս Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1974 г. //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 69-92.

<sup>127</sup> Տե՛ս Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1974 г. /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, հոդվ. 78, 87:

պանության բարձրագույն խորհուրդներում ու կոմիտեներում»<sup>128</sup>: Սահմանադրության 16 հոդ. նախատեսում է նախագահի արտակարգ լիազորությունները՝ իրականացնել արտակարգ իրավիճակին համահունչ միջոցառումներ, որի հիմքերն են ազգի անկախությունը, նրա տարածքի ամբողջականությունը, Հանրապետության ինստիտուտին սպառնացող վտանգները:

Ֆրանսիայում նախագահի դերն արտաքին հարաբերություններում և պաշտպանության ապահովման գործում հիմք են տալիս որոշ վերլուծաբանների դրանք անվանել «նախագահի լիազորությունների սիրտ», առանցք, քանի որ նա ազգի անկախության, տարածքային ամբողջականության և միջազգային պայմանագրերի հարգման երաշխավորն է<sup>129</sup>: Նախագահը, որպես զինված ուժերի գլուխ, հետևում է, որ բանակն ունենա անհրաժեշտ միջոցներ իր առաքելության կատարման համար և տալիս է համապատասխան ցուցումներ: Նա է որոշում արտաքին գործողություններում բանակի մասնակցության հարցը: Պատերազմ հայտարարելու իրավունքը, սակայն, Ֆրանսիայի խորհրդարանին է: Նախագահը, բացի այդ, նշանակում է բարձրագույն սպայական կազմին և նախագահում է Ազգային անվտանգության խորհրդում: Պաշտպանական քաղաքականության հիմնական դրույթները սահմանվում են Ազգային անվտանգության խորհրդում<sup>130</sup>:

Այսպիսով, ֆրանսիական Սահմանադրությունը և՛ պատերազմի, և՛ ներքին արտակարգ իրավիճակների համար նախատեսում է մեկ արձագանքման ձև՝ հատուկ (արտակարգ) դրություն: Հոդված 20-ի համաձայն կառավարությունը, որպես «Ազգի քաղաքականություն սահմանող և իրականացնող», տնօրինում է զինված ուժերը: Պրեմիեր-մինիստրը պատասխանատու է ազգային պաշտպանության համար, նշանակում է զինվորական պաշտոնյաներին: Խորհրդարանը համաձայն Սահմանադրության 34-36 հոդվածների իրականացնում է «ազգային պաշտպանության ընդհանուր կազմակերպման հիմնական սկզբունքների օրենսդրական սահմանումը»,

<sup>128</sup> St' u Конституция Французской Республики /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 52:

<sup>129</sup> St' u **Ардан Филипп**, Франция: государственная система: пер. с франц. - М.: Юрид. лит., 1994, с. 67:

<sup>130</sup> XX դարի 2-րդ կեսին Ֆրանսիայի նախագահը մի քանի անգամ կայացրել է որոշում արտաքին օպերացիաներում բանակի մասնակցության վերաբերյալ, օրինակ՝ Կատանգա, Զագ, Լիբանան, Քուվեյթ (1990-1991 թթ.), 1991 թ.՝ Կոնգոյում (տե՛ս **Ардан Филипп**, Франция: государственная система: пер. с франц. - М.: Юрид. лит., 1994, с. 67):

հայտարարում է պատերազմ: Հատուկ դրությունը հայտարարում է Մինիստրների խորհուրդը<sup>131</sup>:

**Իսպանիայի 1978 թ. Սահմանադրությամբ** պաշտպանական հարաբերությունների կարգավորումն իրականացված է տարալուծված կերպով<sup>132</sup>: Քանի որ Իսպանիայի կառավարման ձևը խորհրդարանական միապետությունն է, ապա Սահմանադրության 62 հոդվ. H կետի համաձայն թագավորն «իրականացնում է Ջինված ուժերի գերագույն հրամանատարությունը»<sup>133</sup>: Կառավարությունն իրականացնում է ներքին և արտաքին քաղաքականության, քաղաքացիական ու ռազմական վարչության (ադմինիստրացիայի) ու պետության պաշտպանության ղեկավարությունը: Թագավորը կարող է նախագահել Մինիստրների խորհրդի նիստում, երբ դա համարի նպատակահարմար կամ կառավարության նախագահի խնդրանքով: Իսպանիայի Սահմանադրության 1-ին բաժնի՝ «Հիմնական իրավունքները և պարտականությունները» 30 և 55 հոդվածները սահմանում են հայրենիքի պաշտպանությանը վերաբերող դրույթներ: 30 հոդվածի 1-ին մասն Իսպանիայի պաշտպանությունը հռչակում է «իսպանացիների իրավունք և պարտականություն»: Իսպանիայի Սահմանադրության 5-րդ գլխի 55 հոդվածն ամրագրում է հոդվածում թվարկված մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների կասեցման հնարավորությունն արտակարգ կամ պաշարված դրություն հայտարարելիս՝ օրգանական օրենքին համապատասխան:

Այսպիսով, Իսպանիայի Սահմանադրությունը պաշտպանական հարաբերությունները կարգավորում է տարալուծված ձևով, սակայն ի տարբերություն այս մոդելով սահմանադրական կարգավորմամբ վերը քննարկված երկրների, դրա ներածական բաժնում (մեր սահմանադրագիտական եզրութաբանությամբ՝ «սահմանադրական կարգի հիմունքներում») տեղ է գտել Ջինված ուժերի խնդիրների ու կարգավիճակի իրավական կարգավորմանը նվիրված 8 հոդվածը, որի դրույթներն հռչակում են, որ զինված ուժերի, ներառյալ ցամաքային զորքերի, ռազմածովային ուժերի և -

<sup>131</sup> St' u Конституция Французской Республики /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 54-55:

<sup>132</sup> St' u Конституция Испании /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 202-239:

<sup>133</sup> Համաձայն նույն հոդվածի f կետի թագավորը նշանակում է քաղաքացիական և զինվորական պաշտոնյաներին, օրենքին համապատասխան պարգևատրում է պատվավոր կոչումներով և տարբերանշաններով:

ռազմաօդային ուժերի խնդիրն Իսպանիայի ինքնիշխանության և անկախության ապահովումն է, ինչպես նաև նրա տարածքային ամբողջականության և սահմանադրական կարգերի պաշտպանությունը: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Զինված ուժերի հիմնական կառուցվածքը որոշվում է օրգանական օրենքով Սահմանադրության սկզբունքներին համապատասխան:

Պաշտպանական հարաբերությունների տարալուծված կարգավորում են իրականացնում **ԱՄՆ-ի և Հնդկաստանի Սահմանադրությունները**: ԱՄՆ-ի Սահմանադրությամբ պաշտպանության կառավարման ու կազմակերպման իրավական հիմքերը սահմանված են որպես կոնգրեսի ռազմական իրավագործություններ, ինչպես նաև նախագահի համապատասխան լիազորություններ<sup>134</sup>: Ամերիկյան կոնգրեսը, համաձայն Սահմանադրության 1-ին հոդվ. 8-րդ բաժնի, ունի մի շարք էական և բացառիկ լիազորություններ պաշտպանության ոլորտում, այն է պատերազմ հայտարարելը, բանակի և նավատորմի ձևավորումը և ապահովումը, ցամաքային և ծովային ուժերի կազմակերպման ու դրանց կառավարման կանոնների սահմանումը, միլիցիայի գորակոչի սահմանումը՝ ապստամբությունների ճնշման ու ներխուժումներին հակահարվածի ապահովման համար, դրա օրենսդրական կազմակերպումը: Միացյալ Նահանգների նախագահը համարվում է բանակի, նավատորմի և առանձին նահանգների միլիցիայի գլխավոր հրամանատարը<sup>135</sup>: Այդ սահմանադրական ինստիտուտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի Սահմանադրությունը պաշտպանական հարաբերությունները կարգավորում է շատ ընդհանուր, առանց մանրամասնեցման, տարալուծված կերպով՝ որպես օրենսդրի և նախագահի լիազորություններ:

**Հնդկաստանի Սահմանադրությունը** պաշտպանական հարաբերությունները կարգավորում է տարալուծված կերպով՝ որպես պետական մարմինների լիազորություններ: Այդ լիազորությունները սահմանող իրավադրույթները շատ ընդհանուր են և չմանրամասնեցված: Տարալուծված տեխնիկայից բացառություն է կազմում այն, որ այդ ընդարձակ Սահմանադրության 18-րդ մասի (Արտակարգ դրության մասին որոշումները) 352-358 հոդվածներն ամրագրում են արտակարգ դրության

---

<sup>134</sup> St' u Конституция Соединенных Штатов Америки /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин. - М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 240-257, հոդված 1, բաժին 8:

հայտարարման կարգը: Այդ դրությունը հայտարարում է նախագահը՝ պատերազմի, արտաքին ագրեսիայի կա՛մ զինված ապստամբության դեպքերում Հնդկաստանի ամբողջ տարածքում, կա՛մ դրա մի մասում<sup>136</sup>: Այդ Սահմանադրության 18-րդ մասի բոլոր հոդվածների դրույթները բավականին մանրամասն կարգավորում են ընդհանուր արտակարգ ռեժիմն իր բոլոր տարրերով<sup>137</sup>:

Վերը քննարկված երկրներին իրենց սահմանադրական կարգավորման տեսլականով հարում են նաև հետխորհրդային անկախ հանրապետությունները, բացի Լիտվայի Հանրապետությունից: Այս երկրների սահմանադրություններում ևս պաշտպանական հարաբերությունների կարգավորումը իրավատեխնիկական առումով տարբալուծված է Սահմանադրության ողջ տեքստում, մասամբ որպես մարդու և քաղաքացու կարգավիճակին առնչվող դրույթներ, մասամբ էլ պետական մարմինների լիազորություններ: Այս երկրների հիմնական մասի, բացառությամբ Ադրբեջանի և Հայաստանի, Սահմանադրությունների սահմանադրական կարգի հիմունքներում տեղ չեն գտել դրույթներ երկրի պաշտպանության հիմնարար սկզբունքների կամ հիմունքների վերաբերյալ<sup>138</sup>:

**Ադրբեջանի Հանրապետության** 1995 թ. նոյեմբերի 12-ի Սահմանադրության «Ընդհանուր դրույթներ» բաժնի 2-րդ գլխի «Պետության հիմունքները» 9 հոդվածը «Զինված ուժեր» վերտառությամբ սահմանում է, որ հանրապետությունն իր անվտանգությունն ապահովելու և պաշտպանության նպատակով ստեղծում է Զինված ուժեր և այլ զինված կառավարումներ, իսկ զինված ուժերի գլխավոր հրամանատարն Ադրբեջանի Հանրապետության նախագահն է<sup>139</sup>:

ՀՀ 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլուխը Զինված ուժերի կարգավիճակի վերաբերյալ դրույթ չէր պարու-

<sup>135</sup> Տե՛ս Конституция Соединенных Штатов Америки /Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 246, հոդված 2, բաժին 2:

<sup>136</sup> Տե՛ս Конституция Индии 1949 г. /Конституция зарубежных государств; Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, Соедин. Штаты Америки, Япония, Индия; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2006, с. 423-574:

<sup>137</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 545-552:

<sup>138</sup> Տե՛ս Конституция Туркменистана //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристь, 1999, 640 с.; Конституции участников СНГ. – М.: Издательская группа НОРМА-ИНФРА. М., 1999, - 736 с.

<sup>139</sup> Տե՛ս Конституция Азербайджана, Армении и Грузии. Constitution of Armenia, Azerbaijan and Georgia. Verfassungen von Armenien, Azerbaidshan und Georgien. Реформы Права и юстиции на южном Кавказе. Сборник материалов, № 27, gtz, Ереван 2007, էջ 9-10:



նակում<sup>140</sup>: Նման հոդված 1-ին գլխում հայտնվեց միայն 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո: Այդ բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 2005 թ. խմբագրության 1-ին գլխի կառուցվածքում հայտնվեց 8.2 հոդվածը, որը սահմանում էր. «ՀՀ Ձինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության տակ»<sup>141</sup>:

**Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը** պաշտպանական հարաբերությունները կարգավորում է տարալուծված կերպով: Սահմանադրական կարգի հիմունքներում Ձինված ուժերին կամ երկրի պաշտպանությանը նվիրված դրույթ նախատեսված չէ: Դրա 59 հոդվ. հայրենիքի պաշտպանությունը հայտարարում է քաղաքացու պարտք և պարտականություն, նախատեսում՝ այլընտրանքային ծառայության իրավունք: Երկրի պաշտպանությունը և անվտանգությունը, պաշտպանական արդյունավետությունը համարվում են դաշնային տնօրինության ոլորտ<sup>142</sup>: ՌԴ - նախագահը ձևավորում և գլխավորում է Անվտանգության խորհուրդը<sup>143</sup>, հաստատում է ՌԴ ռազմական դոկտրինը, նշանակում և ազատում է Ձինված ուժերի բարձրագույն հրամանատարությանը (հոդ. 83): Սահմանադրության 87 հոդ. նախագահին համարում է զինված ուժերի գերագույն հրամանատար, որը ազրեսիայի կամ դրա անմիջական վտանգի դեպքում ՌԴ տարածքում կամ դրա առանձին մասերում հայտարարում է ռազմական դրություն՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով Դաշնային խորհրդին և Պետական Դումային<sup>144</sup>:

ՌԴ Սահմանադրությամբ պաշտպանական հարաբերությունների կարգավորման մոդելն աչքի է ընկնում բարձր աստիճանի կենտրոնացվածությամբ, այն է՝ այդ

<sup>140</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանի ծանոթագրություններով և մեկնաբանություններով, օրենսդրության զարգացմանն աջակցող իրավագիտական կենտրոն, Երևան, 1995, էջ 8-22:

<sup>141</sup> Տե՛ս Конституция Азербайджана, Армении и Грузии. Constitution of Armenia, Azerbaijan and Georgia. Verfassungen von Armenien, Azerbaidshan und Georgien. Реформы Права и юстиции на южном Кавказе. Сборник материалов, № 27, гtz, Ереван, 2007, էջ 60:

<sup>142</sup> Տե՛ս Конституция Российской Федерации. – М.: Издательство «Ось – 89», М.: 2001, стр. 22, ст. 71:

<sup>143</sup> ՌԴ անվտանգության խորհրդի կազմի, իրավասության, կառուցվածքի մասին տե՛ս **Росси́нский Б.В.**, Административное право. – М.: Право и закон, 2001, էջ 590-595:

<sup>144</sup> ՌԴ նախագահը դաշնային սահմանադրական օրենքին համապատասխան կարող է հայտարարել արտակարգ դրություն (տե՛ս Конституция Российской Федерации: Проблемный комментарии. Отв. ред. В.А. Четвернин. - М., 1997, с. 186-195):

ուրրտի բոլոր մարմինների ուղղակի ենթակայությունը ՌԴ նախագահին, ինչն ապահովում է պետության գլխի բավականին բարձր կշիռը պետական կառավարման համակարգում, ինչպես նաև պաշտպանական մարմինների փոխադարձ նշանակությունը: Անշուշտ, այս ոլորտում լիազորություններ ունեն նաև Դաշնային ժողովը և կառավարությունը<sup>145</sup>, սակայն դրանք երկրորդական կամ սպասարկող-ապահովող նշանակություն ունեն: Այս հարցում հետաքրքիր դիտարկում ունի Ե. Ն. Տրիկոզը, ըստ որի «Չնայած այն բանին, որ ՌԴ գործող գերնախագահական կառավարման ձև սահմանող Սահմանադրությունը իր ծավալով գերազանցում է եվրոպական պետությունների հիմնական օրենքներին, բայց պաշտպանության և զինված ուժերի օգտագործման հարցերի կարգավորման գործում դրան բնութագրական է համառոտությունը»<sup>146</sup>:

Այսպիսով, պաշտպանական և հարաբերությունների սահմանադրական կարգավորման տարալուծված մոդելին բնորոշ են համապատասխան նորմերի տեղակայումը սահմանադրության հիմնականում պետական իշխանության ինստիտուտներին վերաբերող լիազորությունների շարքում՝ շատ ընդհանուր կերպով, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության կամ զինվորական ծառայության պարտականությունը (երբեմն նաև իրավունքը)՝ մարդու և քաղաքացու իրավունքներին նվիրված կառուցվածքային մասերում: Այս տեսլականով կարգավորման դեպքում պաշտպանական հարաբերությունների իրավական ամրագրման ողջ ծանրությունն ընկնում է օրենսդրական կարգավորման մակարդակի վրա: Այս տեսլականին բնորոշ հիմնական սահմանադրական իրավական ինստիտուտներն են՝ հայրենիքի պաշտպանության և զինվորական ծառայության պարտականությունը, զինված ուժերի հրամանատարի (կամ գերագույն գլխավոր հրամանատարի), պաշտպանական (կամ անվտանգության) խորհրդի հատուկ ինստիտուտը, պատերազմ հայտարարելը, ռազմական (կամ արտակարգ) դրության հայտարարումը, պատվիրակված օրենսդրումը:

<sup>145</sup> Այդ լիազորությունների մասին մանրամասն տե՛ս u **Габричидзе Б.Н., Елиссеев Б.П.**, Российское административное право. Изд. группа НОРМА-ИНФРА.М.: 1998, с. 446-448, **Тихомиров Ю.А.** Курс административного права и процесса.- М.: 1998, с. 667-682; **Росси́нский Б.В.**, Административное право. – М.: Право и закон, 2001, с. 587-590:

<sup>146</sup> Տե՛ս u **Трикоз Е.Н.** «Конституционное регулирование вопросов обороны и использования вооруженных сил в зарубежных государствах Европы». //«Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջ 292:

Հետագոտված սահմանադրություններից միայն Իսպանիայի, Հայաստանի և Ադրբեջանի Սահմանադրություններն են, որ սահմանադրական կարգի հիմունքներում նախատեսել են հատուկ հոդված, որով կարգավորվում են զինված ուժերի ստեղծման նպատակները (սոցիալական առաքելությունը), նրանց կարգավիճակի որոշ տարրեր՝ չեզոքություն, քաղաքացիական վերահսկողություն:

Տարալուծված կարգավորմամբ սահմանադրությամբ երկրների առանձնահատկություններից է նաև ռազմական կառավարման բարձրագույն մարմնի՝ պաշտպանական (անվտանգության, պաշտպանության) խորհրդի (երբեմն նաև բարձրագույն խորհրդի) հիմնադրումը, որը, շնորհիվ իր կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունների ապահովում է ռազմական ոլորտի կառավարման կենտրոնացվածությունը և՛ խաղաղ, և՛ պատերազմական ժամանակաշրջանում:

Պաշտպանական հարաբերությունների տարրալուծված սահմանադրական կարգավորման տեխնիկան որդեգրած երկրների սահմանադրություններն իրենց հերթին կարող ենք բաժանել երկու ենթախմբերի՝ ա) տարրալուծված կարգավորում՝ շատ ընդհանուր հիմնադրությունների միջոցով՝ հիմնական և մանրամասն իրավական կարգավորումը թողնելով օրենքների վրա (ԱՄՆ, Ֆրանսիա, Հնդկաստան, ՌԴ), բ) տարրալուծված սահմանադրական կարգավորում՝ որոշակիորեն մանրամասնեցված իրավադրություններով (օրինակ՝ Իտալիա, ԱՊՀ որոշ երկրներ):

Որպես առանձնահատկություն կարող ենք նշել, որ կախված պետության կառավարման ձևից պաշտպանական հարաբերությունների տարալուծված սահմանադրական կարգավորմամբ երկրների մի մասում պաշտպանական ոլորտի կառավարումը կենտրոնացված է խորհրդարանում, իսկ մյուսներում՝ գործադիր իշխանության համակարգում՝ գլխավոր հրամանատարի ձեռքին: Համենայն դեպս վարչապետին գլխավոր հրամանատարի գործառույթ չեն վերապահում նույնիսկ դասական խորհրդարանական հանրապետություններում, օրինակ՝ Իտալիայում, Հունգարիայում:

**§ 3. Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանձնացված և խառն իրավական տեխնիկան և դրա հիմնական ինստիտուտները**

Աշխարհի մի շարք երկրների Սահմանադրություններն իրավատեխնիկական առումով աչքի են ընկնում նրանով, որ հիմնական օրենքի կառուցվածքում առանձնացված են հատուկ բաժիններ (մասեր կամ գլուխներ)՝ նվիրված պաշտպանական հարաբերությունների կարգավորմանը: Այս առումով աչքի է ընկնում **Լիտվայի Հանրապետության Սահմանադրությունը**, որը, որպես բացառություն հետխորհրդային տարածքում, պաշտպանության հետ կապված բոլոր սահմանադրական դրույթները զետեղել է առանձին գլխում՝ «Արտաքին քաղաքականությունը և պետության պաշտպանությունը»: Լիտվայի Հանրապետության 1992 թ. Սահմանադրության այլ կառուցվածքային մասերում այդ ոլորտին նվիրված դրույթներ գրեթե չկան: Այդ գլուխը սահմանում է հանրապետության արտաքին քաղաքականության սկզբունքները, պատերազմի քարոզի արգելքը, հայրենիքի պաշտպանության պարտականությունը և իրավունքը, պաշտպանության պետական խորհրդի կազմը և կարգավիճակը, Ջինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը (Հանրապետության նախագահը), զինվորական և արտակարգ դրության ռեժիմների հիմունքները, վետերանների մասին պետական հոգածության պարտականությունը<sup>147</sup>:

Համաշխարհային սահմանադրական մշակույթում մեզ հետաքրքրող տեսանկյունից առանձնահատուկ է **Բրազիլիայի Սահմանադրությունը**, որը պաշտպանական հարաբերությունները կարգավորում է լրիվ առանձնացված կառուցվածքային մասերում՝ չտարրալուծելով այդ կարգավորումը սահմանադրական տարբեր ինստիտուտներում՝ պետական մարմինների լիազորությունների ձևով: Նախ Բրազիլիայում երկրի պաշտպանությունը համարվում է դաշնության իրավասություն: Սահմանադրության VII գլխի (պետական ադմինիստրացիայի մասին) III բաժինը (զինվորական պետական ծառայողների մասին) սահմանում է զինծառայողների

<sup>147</sup> St' u Конституция Литовской Республики (принят 25 октября 1992 г., с изменениями от 20 июня 1996 г. и 12 декабря 1996 г.) //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристь, 1999, էջ 550-595, հոդվածներ 135-146:

կարգավիճակի էական տարրեր, արտոնություններն ու իրավունքների սահմանափակումները<sup>148</sup>:

Զինված ուժերի գլխավոր հրամանատարությունն իրականացնում է նախագահը, ով նաև իրականացնում է սպայական կազմի և գեներալների ծառայողական առաջխաղացումը, նրանց պաշտոններում նշանակվելը, պաշտպանության վիճակի և պաշարման (осадное) դրության ներմուծումը, դաշնային միջամտության ներմուծումը և իրականացումը, Հանրապետության խորհրդի և պաշտպանության խորհրդի գումարումը և դրանցում նախագահելը, պատերազմ հայտարարելը՝ ստանալով Ազգային կոնգրեսի լիազորությունը կամ դրա հաստատումը, դրա հետ կապված համընդհանուր կամ մասնակի ազգային զորակոչի հայտարարումը:

Բրազիլիայի Սահմանադրության V բաժնի I և II ենթաբաժինները կարգավորում են Հանրապետության խորհրդի և Ազգային Պաշտպանության խորհրդի որպես նախագահին կից խորհրդակցական մարմինների կարգավիճակը, կազմը, լիազորությունները, իսկ III գլխի VII բաժինը նվիրված է ռազմական տրիբունալներին և դատավորներին<sup>149</sup>: Այդ Սահմանադրության կառուցվածքում կարևոր տեղ է զբաղվում «Պետության և ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանության մասին» ենթամասը, որը կառուցված է երեք գլուխներից («Պաշտպանության վիճակի և պաշարման դրության մասին», «Զինված ուժերի մասին», «Հասարակական անվտանգության մասին»)<sup>150</sup>:

Իրավատեխնիկական տեսանկյունից պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման երրորդ տեսլականը կարելի է անվանել **է խառը մոտեցման վրա կառուցված սահմանադրական կարգավորում**: Այս տեսլականով կարգավորման դեպքում պաշտպանական բովանդակությամբ սահմանադրական դրույթները սահմանադրության մեջ զետեղված են նախ տարրալուծված կերպով, մարդու իրավունքների ինստիտուտում, պետական մարմինների լիազորություններում, իսկ այնուհետև առանձնացված կառուցվածքային մասերում: Օրինակ՝ Հուն-

<sup>148</sup> Ст' u Конституция Федеративной Республики Бразилии //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 315-316, հոդված 42, 1-11 §;

<sup>149</sup> Այդ մասին տե՛ս Конституция Федеративной Республики Бразилии //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 349, հոդ. 122-124:

<sup>150</sup> Բրազիլիայի Սահմանադրությունը նախատեսում է արտակարգ կառավարման երկու ձև՝ «պաշտպանության վիճակ» և «պաշարված դրություն»: Մեր սահմանադրական տերմինալոգիային համապատասխան, առաջինը «հատուկ դրությունն» է, իսկ երկրորդը՝ «ռազմական դրությունը»:

գարիայի Սահմանադրությունը, որը իրավադրույթների շարադրման երկու ձևերում էլ աչքի է ընկնում պաշտպանական հարաբերությունների բավականին մանրամասն կարգավորմամբ: Այս առումով աչքի է ընկնում Գերմանիայի Սահմանադրությունը, որը սկզբնական շրջանում կարելի էր համարել տարրալուծված կարգավորմամբ, սակայն հետագայում կատարված փոփոխությունների արդյունքում այն դարձավ խառը, այսինքն՝ առանձնացված և տարրալուծված կարգավորումների գուցորդմամբ սահմանադրական կարգավորում: Կան Սահմանադրություններ, որոնք կառուցված են խառը սկզբունքով, սակայն պաշտպանության վերաբերող դրույթների գերակշռող մասը գտնվում է պաշտպանական ոլորտին հատկացված կառուցվածքային մասում: Դրա վառ օրինակն է Շվեյցարիայի Սահմանադրությունը, որի 2-րդ բաժինը «Անվտանգության ապահովումը, ազգային պաշտպանություն, քաղաքացիական պաշտպանություն» վերտառությամբ (57-61 հոդվածներ) նվիրված է մեզ հետաքրքրող հարաբերությունների կարգավորմանը: Սահմանադրության այլ մասերում և պետական մարմինների լիազորությունների շարքում պաշտպանական հարաբերություններին նվիրված դրույթները սակավ և չմանրամասնեցված են<sup>151</sup>:

Փորձենք վեր հանել այս խմբի երկրներից մի քանիսին բնութագրական պաշտպանական սահմանադրական ինստիտուտները: **Գերմանիայի 1949 թ. Սահմանադրությունն** ընդունման պահին իրենից ներկայացնում էր պաշտպանական հարաբերությունների թույլ, ընդհանուր, տարրալուծված կարգավորման նմուշ: Սակայն հետագայում կատարված փոփոխությունների և, հատկապես, լրացումների միջոցով այդ Սահմանադրությունը դարձավ պաշտպանական հարաբերությունները բավականին ծավալուն, մանրամասն, բազմազան ինստիտուտներով կարգավորող<sup>152</sup>: Պաշտպանությանը վերաբերող դրույթները զետեղված են ինչպես Սահմանադրության առանձին կառուցվածքային մասերում՝ գլուխներում, այնպես էլ դրանցից դուրս առանձին ընդարձակ հոդվածներում: Գերմանիայի Սահմանադրության 12-ա հոդվածը սահմանում է՝

<sup>151</sup> St u Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г. //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: изд. «Юрлитинформ», 2008, էջ 93-127, հոդվածներ 57-61, 185 և այլն:

<sup>152</sup> Գերմանիայի Սահմանադրությունը տե՛ս Կоституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М., 2008:

1) 18 տարին լրացած տղամարդիկ կարող են պարտադրվել ծառայության զինված ուժերում, դաշնային սահմանապահությունում, քաղաքացիական պաշտպանության կորպուսում: Նրանք ունեն այլընտրանքային ծառայության իրավունք,

2) չգորակոչված զինապարտները կարող են պատերազմի ժամանակ պարտավորեցվել անցնելու քաղաքացիական աշխատանքի, ծառայության պաշտպանական կառույցներում,

3) պատերազմի ժամանակ 18-55 տարեկան կանայք կարող են ներգրավվել ծառայության բուժական հաստատություններում,

4) պատերազմական իրավիճակում կարող են սահմանափակվել մասնագիտական աշխատանքը դադարեցնելու կամ աշխատանքից հեռանալու ազատությունը,

5) օրենքը կարող է սահմանափակվել զինծառայողի կամ փոխարինող ծառայության անցնողի Սահմանադրությամբ թվարկված իրավունքները, իսկ ընդհանրապես ազատ տեղաշարժման, բնակարանի անձեռնմխելիության իրավունքները (հոդ. 17-a),

6) Բունդեսբազը հիմնադրում է պաշտպանության կոմիտե, որն ունի նաև քննչական կոմիտեի իրավունքներ (հոդվ. 45-a),

7) հիմնական իրավունքների ապահովման համար Բունդեսբազը նշանակում է պաշտպանության գծով լիազորին՝ որպես խարհրդարանական վերահսկողության իրականացման օժանդակ մարմին (հոդ. 45-b),

8) խորհրդարանի երկու պալատները ստեղծում են Միավորված կոմիտե: Դաշնային կառավարությունը պետք է համատեղ կոմիտեին տեղեկացնի երկրի պաշտպանության կացությանը վերաբերող իր պլանների մասին (հոդ. 53-a),

9) պաշտպանության դաշնային մինիստրն օգտվում է հրամանների արձակման և զինված ուժերի հրամանատարության իրավունքով (հոդված 65-a ),

10) դաշնային բացառիկ իրավասությունը ներառում է պաշտպանությունը՝ ներառյալ քաղաքացիական բնակչության պաշտպանությունը (հոդ. 73, կետ 1),

11) դաշնության և հողերի համատեղ իրավասության ոլորտների մեջ է մտնում նաև պատերազմի վետերանների, զոհվածների ազգականների ապահովությունը,

նախկին ռազմագերիների հոգացությունը, զոհված զինվորների, պատերազմի այլ զոհերի և բռնապետության զոհերի գերեզմանները (հոդ. 74, կետ 10 a):

Գերմանիայում 1968 թ. օրենքով Սահմանադրության մեջ ներմուծվեց X-a «Պաշտպանության դրությունը» գլուխը՝ կազմված 15 հոդվածներից (115-a, 115-L): Պաշտպանության դրությունը հայտարարվում է, եթե դաշնությունը ենթարկվել է զինված ագրեսիայի կամ նրան անմիջականորեն սպառնում է այդպիսի ագրեսիա: Պաշտպանության դրությունը հաստատում է Բունդեսթագը՝ կառավարության ներկայացմամբ, Բունդեսռաթի հավանությամբ: Այս ընթացակարգից բացի նախատեսվում են պետական կառավարման օպերատիվությունն ու անընդհատությունն ապահովող մի շարք այլ ընթացակարգեր՝ նախագահի, համատեղ կոմիտեի արձանագրմամբ կամ հայտարարությամբ (հոդ. 115-a, 1-5 մասեր): Պաշտպանության դրություն հայտարարելու պահից զինված ուժերի հրամանների արձակման և հրամանատարության իրավունքն անցնում է դաշնային կանցլերին: Գերմանիայի Սահմանադրության 115-c հոդվածը սահմանում է, որ հողերի օրենսդրական իրավասության հարցերով դաշնությունը պաշտպանության դրության ժամանակ ձեռք է բերում համատեղ օրենսդրման իրավունք:

Գերմանիայի Սահմանադրությունը կարգավորում է դաշնային օրենքներով հիմնական իրավունքների հնարավոր սահմանափակումները և կասեցումները (հոդված 115-c), ինչպես նաև օրենսդրման ընթացակարգի արագացման միջոցառումները: Եթե պաշտպանության դրության ժամանակ համատեղ կոմիտեն արձանագրի, որ խորհրդարանական գործունեության և նիստերի գումարման համար կան անհաղթահարելի արգելքներ, ապա նա կարող է փոխարինել Բունդեսթագին և - Բունդեսռաթին, որպես միասնական մարմին: Պետական մարմինների անընդհատության ապահովման համար Սահմանադրությունը նախատեսում է խորհրդարանի պալատների, նախագահի, սահմանադրական դատարանի անդամի, դաշնային կանցլերի լիազորությունների շարունակման ընթացակարգեր, Բունդեսթագի արձակման արգելք:

Սահմանադրությունը նախատեսում է ներքին արտակարգ դրության մի քանի տարբերակներ (հոդվածներ 80-a, 81, 91): Գերմանիայի Սահմանադրության 87-a և 87-b հոդվածներով Սահմանադրության մեջ ներմուծվեցին լրացումներ, որոնցով սահմանվում էին զինված ուժերի ստեղծման, քանակի, կազմակերպման ընդհանուր



հիմունքները, դրանց ներքին և արտաքին օգտագործման դեպքերը ռազմական գերատեսչության ներքին կառավարման մի շարք հարցեր:

Այսպիսով, ԳԴՀ Սահմանադրությունն՝ իր փոփոխված և լրացված տարբերակով բավականին մանրամասն ու համակողմանի կարգավորում է պաշտպանական հարաբերությունները: Այդ կարգավորումը հետաքրքիր է իր ճկունության տեսանկյունից, որովհետև այն փորձում է ներդաշնակել դաշնային մարմինների իշխանությունների բաժանման սկզբունքը ռազմական կառավարման ստորին մակարդակի սկզբունքների հետ<sup>153</sup>: Նախատեսված են կառավարման մարմինների կենտրոնացման, արագացման, անընդհատության բավականին հետաքրքիր ընթացակարգեր՝ ներառյալ օրենսդրման և խորհրդարանական վերահսկողության ոլորտներում: Հետաքրքիր են նաև զինվորական ծառայության պարտականության տարբերակված հնարավորությունները: Այս տեսանկյունից ԳԴՀ սահմանադրական կարգավորման մոդելն ունի ընդօրինակման արժանի մի շարք ինստիտուտներ: Կարգավորման սահմանադրական մոդելի արդյունավետության հիմքերը պայմանավորված են Գերմանիայի սոցիալ-պատմական փորձով՝ սկսած պրուսական շրջանից մինչև երկրորդ աշխարհամարտը:

**Շվեյցարիայի 1999 թ. Սահմանադրությունը** պաշտպանական հարաբերությունները կարգավորում է բավականին ծավալուն, մանրամասն, բազմազան ինստիտուտներով<sup>154</sup>: Պաշտպանությանը վերաբերող դրույթները գետեղված են ինչպես Սահմանադրության առանձին կառուցվածքային մասերում՝ գլուխներում, այնպես էլ դրանցից դուրս առանձին ընդարձակ հոդվածներում: Շվեյցարիայի Սահմանադրությանը բնութագրական պաշտպանական նորմերից ու սահմանադրական ինստիտուտներից են.

- 1) բանակը կազմակերպվում է աշխարհագրային սկզբունքով,
- 2) բանակը նպաստում է պատերազմի կանխմանը, խաղաղության պահպանմանը, ապահովում է երկրի և բնակչության պաշտպանությունը, օգնում է քաղաքա-

<sup>153</sup> Այդ սկզբունքների և դրանց ու պետական ապարատի ընդհանուր սկզբունքների հարաբերակցության մասին տե՛ս սույն ատենախոսության 1-ին գլխի 3-րդ ենթագլխում:

<sup>154</sup> St´u Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г. //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 93-127, հոդվածներ 57-61, 183 և այլն:

ցիական իշխանություններին ներքին արտակարգ ու բացառիկ իրավիճակներում:  
Օրենքը կարող է նախատեսել բանակի այլ գործառույթներ,

3) բանակի ստեղծումը ֆեդերացիայի տնօրինության խնդիր է,

4) տղամարդ քաղաքացիները զինապարտներ են: Օրենքը նախատեսում է այլընտրանքային ծառայություն: Կանանց ծառայությունը բանակում կամավոր է,

5) կոնֆեդերացիան սահմանում է զինծառայողներին արդարացի փոխհատուցման օրենքներ՝ բանակում ծառայության ժամանակ եկամտի կորստի համար,

6) զինվորական կամ այլընտրանքային ծառայության ժամանակ առողջությունը կորցրած անձինք, ինչպես նաև նրանց մերձավոր ազգականներն ունեն օգնության իրավունք, իսկ զոհվելու դեպքում՝ այդպիսի իրավունք ունեն մերձավոր ազգականները,

7) բանակի կազմակերպման, ուսուցման, մատակարարման օրենսդրության հիմունքները,

8) քաղաքացիական պաշտպանության կարգավորման իրավագործությունը, նպատակները (ոչ միայն պատերազմի, այլև արտակարգ դրության ու աղետների ժամանակ), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ծառայության ժամանակ բաց թողած օգուտների հատուցման, առողջությունը կորցրածներին ու զոհվածների ազգականներին օգնության հարցերը<sup>155</sup>:

Շվեյցարիայի պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանձնահատկություններից է նաև այն, որ Դաշնային ժողովում է կենտրոնացված ռազմական կառավարման հիմնական լիազորությունները: Այդ ժողովը՝

ա) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ ներքին և արտաքին անվտանգության, Շվեյցարիայի անկախության ու չեզոքության ապահովման համար,

բ) այդ նպատակով հրապարակում է կարգադրություններ կամ հասարակ դաշնային որոշումներ,

գ) իրականացնում է բանակի ղեկավարությունը և այդ նպատակով այն կամ դրա մի մասը բերում է մարտական պատրաստության<sup>156</sup>:

<sup>155</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>156</sup> Տե՛ս Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г. //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 123, հոդ. 173, կետեր ա, բ, գ, դ:

**Հունգարիայի Հանրապետության Սահմանադրությունը** ևս բավականին հետաքրքիր է պաշտպանական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից: Այդ կարգավորումը կրել է Գերմանիայի և Ավստրիայի ազդեցությունը, որովհետև այն աչքի է ընկնում դրանց բնորոշ մի շարք առանձնահատկություններով: Նախ, Հունգարիայի Սահմանադրությունը պաշտպանական հարաբերությունների կարգավորման իրավական տեխնիկայի տեսանկյունից կարելի է համարել խառը մոդել, քանի որ դրանում կա ինչպես պաշտպանական հարաբերությունների կարգավորմանը նվիրված Սահմանադրության կառուցվածքային բաժին, օրինակ՝ «Բաժին 8. Զինված ուժերը և ոստիկանությունը» (40/A, 40/B, 40/C հոդվածներ), այնպես էլ պետական մարմինների լիազորություններում տարրալուծված պաշտպանությանը վերաբերող բավականին մանրամասն հոդվածներ: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ պատերազմական իրավիճակի համար Սահմանադրությունը նախատեսել է օրենսդիր և գործադիր իշխանության կենտրոնացման, օպերատիվացման, դրանց անընդհատության ապահովման կառուցակարգեր: Հունգարիայի Սահմանադրությունը թույլ է տալիս Զինված ուժերն օգտագործել ներքին հարցերում, երբ վտանգված են սահմանադրական կարգերը կամ պետական իշխանության յուրացնելու, նվաճելու փորձի և մի շարք այլ հիմքերի առկայության դեպքում (հոդված 40/B, մաս 2-րդ):

Հունգարիայի Սահմանադրությունը Պետական ժողովը համարում է պետական իշխանության և ժողովրդական ներկայացուցչության բարձրագույն մարմին: Այս կարգավիճակին համապատասխան զինված ուժերի օգտագործման բոլոր լիազորությունները (պատերազմական դրության հայտարարման և խաղաղության կնքման որոշման ընդունումը, արտակարգ դրության հայտարարումը և պաշտպանության պետական խորհրդի հիմնադրումը, հատուկ դրության հայտարարումը, զինված ուժերն արտասահմանում կամ երկրի ներսում օգտագործելու որոշումը) կենտրոնացված են Պետական ժողովում (հոդված 19, g, h, i, j կետեր): Եթե կան հանգամանքներ, որ խանգարում են Պետական ժողովին իրականացնել այդ լիազորությունները, ապա դրանք կարող է ձեռնարկել հանրապետության նախագահը:

Հունգարիայի Սահմանադրության 19/A հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերը սահմանում են մի շարք երաշխիքներ այս հարցում չարաշահումները և խախտումները կանխելու համար: Պաշտպանության պետական խորհուրդը հատուկ մարմին է, որն ընդունում է որոշում զինված ուժերը երկրի ներսում և արտասահմանում օգ-

տագործելու մասին, օրենքով նախատեսված արտակարգ միջոցառումների ներմուծման մասին: Խորհուրդը գլխավորում է նախագահը: Նրա կազմի մեջ են մտնում Պետական ժողովի նախագահը, պետական ժողովում ներկայացված կուսակցությունների խմբակցությունների ղեկավարները, պրեմիեր-մինիստրը, մինիստրները, Հունգարական բանակի հրամանատարը և գլխավոր շտաբի պետը: Պաշտպանության պետական խորհուրդն իրավունք ունի իրականացնել Պետական ժողովի կողմից իրեն փոխանցված լիազորություններ, Հանրապետության նախագահի և կառավարության լիազորություններ: Այն կարող է հրապարակել որոշումներ, որոնք կասեցնում են որոշ օրենքների կիրառումը, շեղվում են օրենքների նորմերից: Այն կարող է ներմուծել այլ արտակարգ միջոցներ, սակայն չի կարող կասեցնել Սահմանադրության գործողությունը: Արտակարգ դրության ժամանակ սահմանադրական դատարանի գործունեությունը չի կարող սահմանափակվել:

Կարող ենք եզրակացնել, որ կոնկրետ երկրի պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները պայմանավորող գործոններից է նաև սոցիալ-պատմական ու քաղաքական փորձը: Այս տեսանկյունից հետաքրքիր է **Ավստրիայի փորձը, որի Սահմանադրությունը** տեսության մեջ ստացել է հետևյալ գնահատականը. «Ավստրիայի 1920 թ. գործող Սահմանադրության հեղինակները չեն սահմանափակվել միայն «երկրի պաշտպանություն» տերմինի օգտագործմամբ, այլ «գերմանաավստրիական իրավաբանական ավանդույթներին բնութագրական պեղանտիզմով» ամրագրել են դրա բնորոշումը՝ «Երկրի բազմակողմանի պաշտպանություն» ձևակերպմամբ: Ավստրիայի Սահմանադրության հեղինակների կարծիքով երկրի բազմակողմանի պաշտպանությունը ներառում է իրենում երկրի ռազմական, գաղափարախոսական, քաղաքացիական և տնտեսական պաշտպանությունը<sup>157</sup>:

#### **§ 4. Երկրի պաշտպանության հարաբերությունների կառավարման տարատեսակ կարգերի հիմնահարցը**

<sup>157</sup> Այդ ձևակերպումը ներմուծվել է 9-ա հոդվածով, ըստ 1981 թ. № 350 օրենքի (տե՛ս Конституционное право государств Европы /Отв. ред. Д.А. Ковачев.- М.: Волтерс Клувер, 2005, էջ 278):

Ավանդաբար սահմանադրական կարգավորման առարկայի մեջ ներառված հասարակական հարաբերություններից են զինված ուժերի բարձրագույն կառավարման համակարգի սկզբունքային, հիմնական հարցերը, դրա հետ կապված զինված ուժերի գլխավոր հրամանատարի ինստիտուտը: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ՝ կապված կառավարման ձևի փոփոխության հետ, այս հարաբերությունների կարգավորման և՛ հայեցակարգը, և՛ ինստիտուտի կոնկրետ բովանդակությունն արմատապես ենթարկվեց վերակառուցման:

Զինված ուժերի բարձրագույն կառավարման ինստիտուտի սահմանադրական իրավական հայեցակարգը, իրավական լուծումների արդյունավետությունը հասկանալու համար, փորձենք, առաջին, պարզել պաշտպանական հարաբերությունների կառավարման մակարդակները և դրանց իրավական ձևերը, երկրորդ, վեր հանել այլ երկրներում այդ հարաբերությունների սահմանադրական կարգավորման պրակտիկան, վերը նշված ինստիտուտին բնորոշ սկզբունքները:

Հիմնական տեսական և գործնական հիմնահարցը կայանում է նրանում, որ պաշտպանական հարաբերությունների կառավարումն, ի տարբերություն պետական կառավարման այլ ոլորտների, բազմամակարդակ է, և, միաժամանակ, կառավարման ամեն մի մակարդակին բնորոշ են իրեն հատուկ օբյեկտից բխող յուրահատուկ սկզբունքները: Այս հարցն արդեն քննարկել ենք սույն ատենախոսական հետազոտության 1-ին գլխի 3-րդ ենթագլխում: Այդ ենթագլխի գլխավոր եզրակացությունն այն էր, որ պաշտպանության կառավարման ամբողջական համակարգին, հատկապես դրա ստորին ու վերջին օղակներին բնութագրական է կազմակերպական (կառուցվածքային) առանձնացում՝ պետական կառավարման ամբողջ համակարգից, ինչպես նաև միմյանցից, այն դրսևորվում է հետևյալ ենթահամակարգերով՝

- ա) պետական բարձրագույն կառավարում (հիմնականում օրենսդիր, գործադիր մարմիններ),
- բ) տարածքային կառավարում,
- գ) պետության ռազմական կազմակերպության կառավարում,
- դ) գործառույթային ապահովման համակարգ<sup>158</sup>:

<sup>158</sup> Տե՛ս Փомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 128: Ընդ որում ամբողջական համակարգին, հատկապես դրա ստորին ու վերջին օղակներին բնութագրական է

Ռազմական ստրատեգիայի տեսության այս դրույթներին համապատասխան «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը պաշտպանության ոլորտում կառավարման մակարդակներ է համարում՝

ա) ընդհանուր իրավասության պետական մարմինների կառավարումը (օրենսդիր մարմին, կառավարություն, անվտանգության խորհուրդ, ՀՀ վարչապետ),

բ) պաշտպանության ոլորտի հատուկ իրավասության մարմնի կառավարումը (պաշտպանության նախարարություն),

գ) պաշտպանության ոլորտի լիազորություններ ունեցող պետական ու տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող կառավարումը,

դ) պաշտպանական ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը,

ե) զինված ուժերի անմիջական կառավարումը (գլխավոր շտաբ՝ շտաբի պետի ղեկավարությամբ), ինչպես նաև զինվորական կառավարման այլ մարմիններ<sup>159</sup>:

Մեզ հետաքրքրող ինստիտուտը՝ զինված ուժերի բարձրագույն կառավարման համակարգը և գլխավոր հրամանատարի ինստիտուտը հենց սահմանադրական կարգավորման մակարդակի հարաբերություններ են, որովհետև վերաբերում են օրենսդիրին և բարձրագույն գործադիր մարմիններին (կամ մարմնին):

Սակայն պաշտպանական ոլորտին բնորոշ է առանձնահատկություն. այդ հարաբերությունների կառավարման հիմքում վարից վեր ընկած են հիմքային օղակի՝ զինված կազմակերպության (բանակի, զինված ուժերի) կառավարման սկզբունքները, հետևաբար սահմանադրական կարգավորումը պետք է հաշվի նստի կառավարման այդ օբյեկտիվ առանձնահատկության հետ, այսինքն՝ կառավարման վերին մակարդակի սկզբունքները պետք է համապատասխանեն կառավարման գլխավոր օբյեկտի կամ համակարգի միջուկը կազմող բաղադրատարրի գործառութավորման սկզբունքներին<sup>160</sup>:

Այս առանձնահատկությունը նկատի ունենալով՝ պետք է ելնել նաև այն հանգամանքից, որ ընդհանարապես պետության և նրա պաշտպանության համակարգի

---

կազմակերպական (կառուցվածքային) առանձնացում՝ պետական կառավարման ամբողջ համակարգից, ինչպես նաև միմյանցից:

<sup>159</sup> Տե՛ս «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ընդունված 2017 թ. դեկ. 15-ին //ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348):

<sup>160</sup> Պաշտպանական ոլորտի տարամակարդակ սկզբունքների և դրանց հարաբերակցության մասին մանրամասն տե՛ս սույն ատենախոսության 1-ին գլխի 3-րդ ենթագլխում:

գործառութավորումը կարող է ընթանալ երկու իրարից էականորեն տարբերվող պայմաններում՝ խաղաղ և պատերազմական: Ավանդաբար այս խնդիրը զարգացրել է հիմնականում ռազմական ստրատեգիան՝ որպես ռազմական արվեստի բարձրագույն ոլորտ: Այդ գիտական ոլորտի մեջ ներառված են երկիրը և զինված ուժերը պատերազմի նախապատրաստելու տեսությունը և պրակտիկան, պատերազմի և ռազմավարական օպերացիաների պլանավորումը և վարումը<sup>161</sup>:

Պետականագիտության ընդհանուր ոլորտներում մատնանշված հիմնահարցը առանձնահատուկ ուշադրության չի արժանանում: Որպես կանոն, բոլոր հետազոտությունները, ինչպես նաև իրավագիտական կրթության ոլորտում դասավանդվող դասընթացները կառուցված են խաղաղ ժամանակի սահմանադրական և օրենսդրական նյութի վրա<sup>162</sup>: Այս առումով սահմանադրական իրավունքի գիտության ոլորտում աչքի է ընկնում «Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, 496 էջ» աշխատությունը, որում հեղինակները հատուկ հետազոտության են ենթարկել պետական իշխանության իրականացման երկու ռեժիմները՝ սովորական-նորմալ և արտակարգ՝ հիմք ընդունելով աշխարհի սահմանադրական փորձը (տե՛ս 378-493): Այս կապակցությամբ առաջանում է հետազոտական խնդիր, պարզել, թե ո՞րն է արտակարգ կառավարման հիմքում ընկած կառավարման օրինաչափությունը, դրա իրավական կարգավորման անհրաժեշտությունը, արտակարգ կառավարման ի՞նչ տեսակներ են սահմանված արդի աշխարհում:

Որպես կանոն, արտակարգ կառավարման անհրաժեշտությունը կապում են այնպիսի իրադրությունների հետ, «երբ հասարակության և պետության նորմալ գործառութավորումը դառնում է անհնարին»<sup>163</sup>: Սակայն ավելի խորքային մոտեցում-

<sup>161</sup> Տե՛ս Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 8.

<sup>162</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Երևանի պետ. Համալսարան. – Եր., Երևանի համալսարանի հրատ., 2003 և հետագա հրատարակությունները, **Խաչատրյան Հ.Մ.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը /ՀՀ ԳԱԱ Փրիլսոփայության և իրավունքի ինստիտուտ.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997; **Баглай М.Б., Габричидзе Б.Н.**, Конституционное право Российской Федераций. М., Издател. группа ИНФРА-М-КОДЕКС, 1996; **А.А. Безуглов, С.А. Солдатов** Конституционное право России. В трех томах, Том 1.: М.: 2001; Конституционное право зарубежных стран /Под общей ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо и Л.М. Энтина.- 2-е изд., перераб.- М.: Норма, 2005:

<sup>163</sup> Տե՛ս **Ковачев Д. А.**, «О правовых институтах чрезвычайного режима в иностранных государствах». /в. кн. «Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջ 380:

ներն արտակարգ կառավարումը դիտարկում են որպես անհրաժեշտություն, այլ ոչ թե վտանգ: Այսպես, Վ. Վ. Սորոկինի տեսանկյունից շատ երկներում կառավարման տեսությունները սովորական կառավարման կարգերից ետ կանգնելու քայլերը դիտարկում են որպես պետական կառուցակարգի առավելագույն ճկունությունը և օպերատիվությունն ապահովելու միջոց<sup>164</sup>: Կարծում ենք, որ հենց կառավարման ճկունությունը և օպերատիվությունն են այն անհրաժեշտ օրինաչափությունները, որոնք պահանջում են անցնելու արտակարգ կառավարման, քանի որ սովորական միջոցներով կառավարչական որոշումները չեն կարող լուծել իրենց առջև դրված խնդիրները, կդառնան ժամանակավրեպ: Այս կապակցությամբ արտակարգ կառավարման իրավական կարգավորումը ոչ միայն իրավական երաշխիք է չարաշահումները կանխելու համար, ինչը համընդհանուր ճանաչում ունի տեսության մեջ<sup>165</sup>, այլև անհրաժեշտություն է, այն իմաստով, որ երկրում ստեղծված ներքին կամ արտաքին ճգնաժամային իրավիճակում, այսինքն՝ արտակարգ պայմաններում դրա սահմանադրական կարգավորման համակարգն ունենա իրավաբանորեն ամրագրված հնարավորություն անցնելու կառավարման արտակարգ ձևերին ու մեթոդներին:

Դ. Ա. Կովաչևը, հատուկ ուսումնասիրելով այլ պետություններում արտակարգ ռեժիմի ինստիտուտները, դրանք իր հերթին բաժանում է տեսակների՝ ըստ երկրների<sup>166</sup>: Այսպես, Հնդկաստանի Սահմանադրությամբ նախատեսված է արտակարգ կառավարման երեք տեսակ՝

ա) արտակարգ դրություն, որն հայտարարվում է ամբողջ դաշնությունում պատերազմի, արտաքին ագրեսիայի կամ զինված ապստամբության պատճառով,

բ) արտակարգ դրություն, որ հայտարարվում է առանձին նահանգում «սահմանադրական կառուցակարգի անգործության» պատճառով,

գ) արտակարգ ֆինանսական դրություն:

<sup>164</sup> St' u **Сарокин В. В.**, *Общее учение о государства и права переходного периода: монография.* – М.: Издат.-во «Юрлитинфарм», 2010, էջ 53:

<sup>165</sup> Այսպես և՛ Վ. Վ. Սորոկինը, և՛ Դ. Ա. Կովաչևը հենց դա են համարում արտակարգ կառավարման ռեժիմի իրավական կարգավորման անհրաժեշտությունը (տե՛ս **Сарокин В. В.**, *Общее учение о государства и права переходного периода: монография.* – М.: Издат.-во «Юрлитинфарм», 2010, էջ 53; **Ковачев Д. А.**, «О правовых институтах чрезвычайного режима в иностранных государствах». /в. кн. «Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջ 378-493):

<sup>166</sup> **Ковачев Д. А.**, «О правовых институтах чрезвычайного режима в иностранных государствах». /в. кн. «Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջ 378-480:



Գերմանիայում բացի արտակարգ դրության մի քանի տեսակներից սահմանված են ռազմական դրության մի քանի տեսակներ՝ ա) ռազմական դրություն ռազմական հարձակման պատճառով, բ) ռազմական դրություն արտաքին լարվածության պատճառով, գ) ռազմական դրություն դաշնակցային պարտավորության կատարման պատճառով: Բացի դրանից, Գերմանիայում կա «օրենսդրական անհրաժեշտության կացություն» արտակարգ ռեժիմը, որը պետք է ապահովի խորհրդարանի մասնակցությամբ արագացված օրենսդրումը և կանխում է օրենքները գործադիր ակտերով փոխարինելու գործընթացը:

Թվում է թե կառավարման գիտությունը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեք կառավարման արտակարգ և սովորական կարգերի հարցերին, սակայն այստեղ ևս ինչ-որ թեմատիկ առանձնացվածություն չենք նկատում<sup>167</sup>: Կառավարման տեսաբանները ևս կատարելով կառավարման տեսակների դասակարգում՝ ուշադրություն չեն դարձնում այս հիմնահարցին<sup>168</sup>:

Կարծում ենք, որ ընդհանրապես կառավարման և հատկապես պետական կառավարման տեսակներն առանձնացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանց տեսակներից են նաև կառավարումը սովորական (ներառյալ խաղաղ) պայմաններում, երբ սահմանադրական իրավական նորմերը գործում են առանց վերապահումների ու բացառությունների և, կառավարումը լայն իմաստով արտակարգ պայմաններում, երբ գործողության մեջ են մտնում կառավարման ընդհանուր կարգերից ու սկզբունքներից սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վերապահումները և բացառությունները, իրավական ինստիտուտների գործողության կասեցումը կամ սահմանափակումը:

Լայն իմաստով արտակարգ կառավարումը, հիմք ընդունելով արդի շրջանի սահմանադրական կարգավորումները, կարող ենք բաժանել երկու տեսակի՝ կառավարումը պատերազմական իրավիճակում և կառավարումը ներքին հատուկ դրությո-

<sup>167</sup> Տե՛ս **Атаманчук Г.В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997; Самойлов В.Д. Государственное управление. Теория, механизмы, правовые основы.- М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2015. 311 с.; **Ю.М. Козлов, Е.С. Фралов**, Научная организация управления и право. Изд. московского университета, 1986; **Тихомиров Ю.А.**, Государство: монография / Ю.А. Тихомиров.-М.: Норма: ИНФРА-М, 2013; **Тихомиров Ю.А.**, Управление на основе права.- М.: «Формула права», 2007.- 485 с.

<sup>168</sup> Բացառություն է կազմում միայն Վ.Ե. Չիրկինը, որի «Публичная власть.- М.: Юристъ, 2005. 175 с.» աշխատության 52-րդ էջում կա ընդամենը մեկ պարբերություն այն մասին, որ պետական կառավարումը կարող է ընթանալ սովորական կամ արտակարգ պայմաններում:

յան պայմաններում: Գրականության մեջ կառավարման այս տեսակը երբեմն անվանում են արտակարգ կառավարում կամ արտակարգ դրություն, արտակարգ դրության ռեժիմ, ինչը տրամաբանորեն ճիշտ չէ, որովհետև պատերազմական դրությունը ևս արտակարգ է, այսինքն՝ ընդհանուր կարգից ու սկզբունքներից շեղվող:

Այսպիսով, ընդհանուր պետական կառավարումն իրականացվում է մի քանի իրավական ռեժիմներով (տեսակներով)՝

ա) **սովորական, ընթացիկ կառավարում** (ներառում է նաև պաշտպանական հարաբերությունների կառավարումը խաղաղ ժամանակ),

բ) **արտակարգ կառավարում**, այսինքն՝ ընդհանուր կառավարման կարգերի սկզբունքներից շեղվող, կարգից դուրս իրականացվող կառավարում: Սա էլ իր հերթին լինում է՝ կառավարումը պատերազմական իրավիճակում և կառավարումը հատուկ ներքին դրության իրավիճակում:

Այս դասակարգման մեթոդաբանությունից ելնելով հնարավոր է առանձնացնել պաշտպանական հարաբերությունների կառավարման կարգի երկու տեսակ՝ ա) պաշտպանական ոլորտի կառավարում խաղաղ (սովորական) ժամանակաշրջանում, բ) պաշտպանական ոլորտի կառավարում պատերազմական կամ դրա վտանգի ժամանակաշրջանում:

Հենց այս հանգամանքի հիմքով է ռազմական ստրատեգիան ռազմական կառավարման ոլորտի սկզբունքները բաժանում խաղաղ և պատերազմական ժամանակների կառավարման սկզբունքների<sup>169</sup>:

Ռազմական ստրատեգիայի տեսությունը պատերազմական (կամ մարտական) գործողությունների ընթացքում կիրառվող սկզբունքներ է համարում հանկարծակիությունը, վճռականությունը, անընդհատությունը, գործողությունների համաձայնեցվածությունը, զինված ուժերի անշեղ ու անընդհատ ղեկավարումը, բազմակողմանի նախապատրաստությունը, ստրատեգիական նախաձեռնությունը, զորքերի, ուժերի ու հարվածների անսպասելի տեղաշարժը (մանևրը)<sup>170</sup>: Ռազմական ստրատեգիայի այս սկզբունքները ընկած են ռազմական մարտավարության սկզբունքների հիմքում: Ռազմական մարտավարության տեսության համաձայն մարտական գոր-

<sup>169</sup> Տե՛ս «Категории, закономерности и принципы военной стратегии» // в кн. Военная стратегия, с. 32-39; հղումն ըստ <http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>.

ծողությունների վարման սկզբունքներին համապատասխանում են զորքերի մարտական գործողությունների կառավարմանը ներկայացվող պահանջները՝ կայունություն, անընդհատություն, օպերատիվություն և գաղտնիություն: Այդ պահանջներին համապատասխանող մարտական գործողություններում զորքերի կառավարման սկզբունքներ են՝ միանձնությունը, հրամանատարի անձնական պատասխանատվությունը, կառավարման կենտրոնացումը, իրադրության մշտական իմացությունը, խորը վերլուծությունը և կանխատեսումը, համառությունը, բարձր կազմակերպվածությունը և այլն<sup>171</sup>:

Պաշտպանական գործառույթի սահմանադրական կարգավորման հայեցակարգը և նորմատիվ մոդելը պետք է հաշվի նստեն այս իրողության հետ և կարգավորիչ մոդելում նախատեսեն երկտարբերակ ռազմական կառավարում, առաջին, խաղաղ ժամանակվա համար, երկրորդ, պատերազմական իրավիճակի համար: Այս տարբերակման անհրաժեշտության հիմքում ընկած են ռազմական կառավարման առանձնահատկությունները և սկզբունքները:

Կարող է արդյո՞ք պետության սահմանադրական կառուցակարգը՝ կառուցված քաղաքական համակարգի ու պետական ապարատի կազմակերպման ու գործունեության ժողովրդավարական սկզբունքների, հատկապես հակակշիռների ու զսպիչների համակարգով իշխանությունների բաժանման, քաղաքական այլակարծիքության վրա, անխոչընդոտ ու անարգելք, արագ ու արդյունավետ իրացնել ռազմական ստրատեգիայի վերը նշված սկզբունքները: Պատասխանն ակնհայտորեն բացասական է՝ ոչ: Հենց այս պատճառով էլ սահմանադրական կարգավորումը, որպես կանոն, նախատեսում է ռազմական բարձրագույն կառավարման սովորական

---

<sup>170</sup> Տե՛ս նույն տեղը, ինչպես նաև **В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко**, Тактика.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 67-68:

<sup>171</sup> Տե՛ս **В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко**, Тактика.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, с. 91-98: Պատերազմի և մարտերի վարման այլ սկզբունքների մասին տե՛ս **Бэзил Лиддел Гарг**, Стратегия непрямых действий: История в одном томе. АСТ; М., 2017, 60 с.; հղումն ըստ [http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=26110964&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=26110964&lfrom=204420127); **Коньшев В. Н., Сергунин А.А.**, Военная стратегия современного государства: - СПб: Изд-во Родные просторы, 2012. - 158 с.; **Эдвард Н. Люттвак**, Стратегия: Логика войны и мира. /пер. с англ. яз. Коваля А. Н. и Платошкина Н.Н.. - 3-е изд.: Университет Дмитрия Пожарского; М., 2017, 63 с.; ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=10412053&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=10412053&lfrom=204420127)); **Брюно Жароссон**, От Сунь-цзы до Стива Джобса: искусство стратегии: Dunod, Paris, 2016, пер. на рус. язык Троицкая М., М., 2017, 39 с. ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=29629406&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=29629406&lfrom=204420127)); **Михалев С. Н.**, Военная

հիմունքները (խաղաղ ժամանակի կարգը), միաժամանակ՝ ամրագրելով պատերազմական ժամանակի ռազմական կառավարման հիմունքները, որպես շեղում սովորական կարգից ու հիմունքներից: Այսպիսով, հետազոտության առարկան պաշտպանական ոլորտի կառավարման հարցում տրոհվում է երկու առանձին քննարկման ու պարզաբանման ենթակա խնդիրների՝ նախ, ռազմաստրատեգիական պետական կառավարման սահմանադրական կարգերը սովորական կամ խաղաղ պայմաններում, այնուհետև՝ կառավարման հարցերը պատերազմական շրջանում:

**ԳԼՈՒԽ 3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՆՍՏԻ-  
ՏՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**§ 1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության (զինված ուժերի) բարձ-  
րագույն կառավարման սովորական (խաղաղ) համակարգը և  
գլխավոր հրամանատարի ինստիտուտը**

Նախորդ ենթագլխի եզրակացություններին համապատասխան պաշտպանա-  
կան հարաբերությունների բարձրագույն պետական կառավարման տեսակներից է  
կառավարումը պատերազմական ժամանակաշրջանում կամ ռազմական դրության  
պայմաններում: Աշխատանքի այս ենթագլխում հետազոտման առարկան հենց կա-  
ռավարման այդ տեսակի սահմանադրական կարգավորման հիմնահարցերն են, ո-  
րոնց խորքային վերլուծության համար դիմել ենք իրար հաջորդող վերլուծական  
քայլերի՝ ա) տալ ՀՀ ռազմաստրատեգիական պետական բարձրագույն կառավար-  
ման համակարգի ընդհանուր նկարագիրը՝ ըստ ՀՀ 2015 թ. Սահմանադրության, ինչ-  
պես նաև պարզաբանել սահմանադրական որոշ հասկացությունների իրավական ի-  
մաստը, բ) վեր հանել ռազմական արվեստի տեսական կողմնորոշիչ հիմնադրույթ-  
ները ռազմաստրատեգիական բարձրագույն կառավարման վերաբերյալ, գ) վերլու-  
ծել և համեմատել հատկապես խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկր-  
ների մեզ հետաքրքրող հարցերով սահմանադրական կարգավորման փորձը: Այս  
ուղղություններով հետազոտության իրականացումը և դրանց արդյունքների հա-  
մադրումը հնարավորություն կտա վեր հանելու բարձրագույն ռազմաստրատեգիա-  
կան սահմանադրական կառավարման համակարգի թերություններն ու բացթողում-  
ները ՀՀ-ում, մշակել դրանց կատարելագործման և արդյունավետության բարձրաց-  
ման առաջարկներ:

Բարձրագույն պետական ռազմական կառավարումը խաղաղ ժամանակ նույն-  
պես պետք է հարմարեցված լինի ռազմական ստրատեգիայի ու տակտիկայի  
սկզբունքներին: Որպես կանոն այդ կառավարումը մոդելավորվում է իշխանություն-  
ների բաժանման սկզբունքի շրջանակներում՝ պաշտպանական լիազորությունները

բաշխելով օրենսդիր ու գործադիր մարմինների միջև: Ռազմական կառավարման տեսության պահանջների ու սկզբունքների դրսևորման ինստիտուցիոնալ ձևը զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնն է, ով լինելով միանձնյա և բարձրագույն պաշտոնյա՝ իր կարգավիճակով մարմնավորում է ստրատեգիայի ու տակտիկայի սկզբունքների հիմնական մասի կենսագործման կառուցակարգը:

Սահմանադրական իրավունքի բառարանը գլխավոր հրամանատար հասկացությունը բնութագրում է որպես զինված ուժերի բարձրագույն ղեկավար: Այդ գործառույթը, որպես կանոն, կատարում է պետության գլուխը: Շատ դեպքերում գլխավոր հրամանատարի պաշտոնը անվանական է, քանի որ բանակի և նավատորմի իրական կառավարմամբ զբաղվում են պաշտպանության նախարարությունները և գլխավոր շտաբները<sup>172</sup>:

Մինչև ՀՀ զինված ուժերի բարձրագույն կառավարման սովորական (խաղաղ) համակարգի վերլուծությանն անցնելը՝ կանգ առնենք ՀՀ Սահմանադրության օգտագործած որոշ եզրույթների (ձևակերպումների) և դրանց առնչվող հասկացությունների պարզաբանման վրա: Սահմանադրությունը մի շարք հոդվածներում օգտագործում է «քաղաքականություն» հասկացությունը, իհարկե, դրա պետական իմաստով: Այսինքն՝ խոսքը գնում է պետական ընդհանուր քաղաքականության կամ դրա առանձին ոլորտների մասին: Քաղաքագետների բնորոշմամբ «Պետական քաղաքականությունը պետության կողմից մշակվող ու կենսագործվող կուրսն է, գործունեության հիմնական ուղղությունները և բուն գործունեությունը երկրի ներսում և արտաքին ոլորտներում»<sup>173</sup>: Քաղաքականությունն ունի ինչպես ընդհանուր խնդիրներ և նպատակներ, այնպես էլ պետության գործունեությանը համապատասխան առանձին ուղղություններ և տեղամասեր:

Շատ կարևոր է հաշվի առնել, որ պետական քաղաքականությունը չի կարող լինել կամայական: Այս հարցում տեղին է Վ. Խալիպովի այն դիտողությունը, որ պետական քաղաքականության համակարգը և կոնկրետ բովանդակությունը գլխավորապես սահմանվում են Սահմանադրությամբ՝ բարձրագույն պետական մարմինների կողմից: Այդ քաղաքականությունը մշակվում է ելնելով պետության բնույթից և բ-

<sup>172</sup> Տե՛ս **Арутюнян Г.Г., Габричидзе М.Б.**, Конституционное право: энциклопедический словарь. – М., НОРМА, 2006, էջ 63:

<sup>173</sup> Տե՛ս **Халипов В.Ф.**, Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005. էջ 248:

նութագրից, երկրի գոյության ներքին ու արտաքին օբյեկտիվ պայմաններից, տվյալ հասարակության մեջ սոցիալ-քաղաքական ուժերի դիրքորոշումներից ու հարաբերակցությունից<sup>174</sup>:

Պետական քաղաքականության մասեր են պաշտպանականը և ռազմականը: Ըստ Վ. Խալիպովի պաշտպանական քաղաքականությունը պետության գործունեությունն է՝ ուղղված երկրի արտաքին հարձակումներից հուսալի պաշտպանությանը: Այն ներառում է ժողովրդին և զինված ուժերին ագրեսիային հակահարված տալուն պատրաստելը, ինչպես նաև տնտեսությունը, առողջապահությունը, տեղեկույթը, կրթությունը և դաստիարակությունը նման փորձությանը նախապատրաստելը: Իսկ ռազմական քաղաքականությունն անմիջականորեն ուղղված է զինված կազմակերպության ստեղծմանը և զարգացմանը, դրա պատրաստմանը, մարտունակության ապահովմանը:

Որպես կանոն ռազմական քաղաքականությունը կոնկրետացվում է ռազմական դոկտրինում<sup>175</sup>: Ռազմական քաղաքականության իրականացումը երբեմն անվանում են ռազմական շինարարություն, բանակաշինություն<sup>176</sup>: Այսպիսով, պաշտպանական քաղաքականությունն ավելի լայն հասկացություն է, քան ռազմականը: Ռազմականը դրա այն մասն է, որը վերաբերում է զինված ուժերին, պետության զինված կազմակերպությանը:

ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պետական ապարատը կառուցելով խորհրդարանական կառավարման ձևով, սահմանել է զինված ուժերի բարձրագույն կառավարման սովորական կամ խաղաղ պայմանների հետևյալ կարգը:

**ՀՀ-ում պաշտպանության քաղաքականությունն իրականացնում է կառավարությունը:** Օրենքով ամրագրված բնորոշման համաձայն «պաշտպանական քաղաքականությունը՝ ՀՀ պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանումն ու իրականացումն է, այդ թվում պաշտպանության ռազմավարական պլանավորման և պաշտպանության ռազմավարական վերանայման, ռազմավարական ա-

<sup>174</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 248:

<sup>175</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 250:

<sup>176</sup> Այդ մասին տե՛ս Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, էջ 23-25:

ռաջնորդող փաստաթղթերի ընդունման միջոցով»<sup>177</sup>: Պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը (ՀՀ Սահմանադրություն, 155 հոդ.): Հետևաբար, պաշտպանական ոլորտում կառավարությունը տվյալ քաղաքականության կենսագործողն է:

Սահմանադրությունը կառավարությանն օժտել է ոլորտի քաղաքականության մաս կազմող մի շարք էական լիազորություններով, մասնավորապես՝

ա) հայտարարում է ռազմական դրություն, ընդհանուր կամ մասնակի գորահավաք,

ա) ընդունում է որոշում զինված ուժերի կիրառման մասին,

գ) Ազգային Ժողովին առաջարկություն է ներկայացնում պատերազմ հայտարարելու մասին, իսկ Ազգային Ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում լուծում է պատերազմ հայտարարելու հարցը,

դ) իրականացնում է պաշտպանության ոլորտում այլ լիազորություններ՝ սահմանված Սահմանադրությամբ, «Պաշտպանության մասին» և այլ օրենքներով:

Սահմանադրական կարգավորման նման տեսլականը բերում է եզրակացության, որ պաշտպանական հարաբերությունների կառավարման հարցում ՀՀ-ն որդեգրել է, այսպես ասած, կառավարակենտրոն մոտեցումը, որովհետև բոլոր հիմնական լիազորությունները կենտրոնացված են կառավարությունում: Այս պատճառով ՀՀ վարչապետը սովորական կամ խաղաղ ժամանակ պաշտպանության ոլորտում էական լիազորություններ ունեցող պաշտոնյա է, որովհետև նա պաշտպանական քաղաքականության մեջ համակարգող, առաջարկող, ներկայացնող էական լիազորություններ ունի, մասնավորապես, նա է գլխավորում Անվտանգության խորհուրդը, իսկ ՀՀ-ին սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում ունի մի շարք էական, այսպես ասած, պաշտպանական համակարգը գործի դնող լիազորություններ: ՀՀ-նը սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում ՀՀ վարչապետը՝ Սահմանադրությամբ և օրենքներով լիազորված է իրականացնելու հետևյալ լիազորությունները.

ա) հրավիրում է Անվտանգության խորհրդի նիստ,

<sup>177</sup> Տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը // ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348):



բ) քննարկում է պետությունն անհրաժեշտ պատրաստականության աստիճանների բերելու, ռազմական դրություն կամ պատերազմ հայտարարելու, զինված ուժերի կիրառման պլանը գործողության դնելու, ընդհանուր կամ մասնակի գորահավաք հայտարարելու նպատակահարմարության հետ կապված հարցերը,

գ) կառավարության կողմից զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնելու անհնարինության դեպքում ՀՀ պաշտպանության նախարարի առաջարկությամբ կայացնում է որոշում զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու մասին՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով ՀՀ կառավարության անդամներին,

դ) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով իրավիճակի մասին իրազեկում է դաշնակից և գործընկեր պետություններին,

ե) իրականացնում է սպառնալից իրավիճակից բխող այլ անհրաժեշտ գործողություններ:

**ՀՀ-ում պաշտպանության ոլորտի ռազմաստրատեգիական կառավարման հաջորդ կարևոր մարմինն Անվտանգության խորհուրդն է (ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 155 հոդ. 2-րդ մաս), որը գլխավորում է վարչապետը<sup>178</sup>: Անվտանգության խորհուրդը պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ իր իրավասության մեջ մտնող այլ հարցերով խորհրդատվական որոշումներ: Անվտանգության խորհրդի անդամներ են՝ վարչապետը. առաջին փոխվարչապետը. փոխվարչապետները. Անվտանգության խորհրդի քարտուղարը. պաշտպանության նախարարը. արտաքին գործերի նախարարը. ազգային անվտանգության ծառայության տնօրենը. ոստիկանության պետը. զինված ուժերի գլխավոր շտաբի պետը:**

**Գլխավոր շտաբը և նրա պետը** բարձրագույն ռազմաստրատեգիական մարմիններից հետո կառավարման հաջորդ կարևոր մարմիններն են: «Գլխավոր շտաբ» հասկացությունը զիտական բառարաններում ներկայացվում է որպես պետության զինված ուժերի կառավարման գլխավոր (բարձրագույն) մարմին<sup>179</sup>: Գլխավոր շտաբը, որպես կանոն, համարվում է զինված ուժերի օպերատիվ կառավարման հիմնա-

<sup>178</sup> Անվտանգության խորհրդի կազմակերպման և գործունեության կարգը սահմանվում է 2018 թ. մարտի 1-ի «Անվտանգության խորհրդի կազմակերպման և գործունեության մասին» ՀՀ օրենքով (տե՛ս ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), հոդված 311, ՀՕ-145-ն):

կան մարմինը, որի կառուցվածքը և գործառույթները սահմանվում են օրենքով<sup>180</sup>: Սահմանադրության 155 հոդ. 3-րդ մասի համաձայն գլխավոր շտաբի պետը զինված ուժերի ամենաբարձր պաշտոնատար անձն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով:

**Ազգային Ժողովը** ռազմաստրատեգիական կառավարման մակարդակում ունի առաջին հերթին պաշտպանական ոլորտի օրենսդրական կարգավորման, ինչպես նաև ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության լիազորություն: Այս լիազորությունն իրականացվում է «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին համապատասխան: Սակայն պաշտպանական ոլորտում խորհրդարանն օժտված է նաև հատուկ լիազորություններով, այն է՝

ա) ՀՀ կառավարության առաջարկությամբ ընդունել պատերազմ հայտարարելու (կամ) խաղաղություն հաստատելու մասին որոշում (հոդ. 118, մաս 1-ին),

բ) օրենքով սահմանված կարգով վավերացնել, կասեցնել կամ չեղյալ հայտարարել ռազմական բնույթի միջազգային պայմանագրերը (Սահմանադրության 116 հոդ. մաս 1-ին, 2-րդ կետ):

**Հանրապետության նախագահի** լիազորությունները պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման առկա կառուցակարգում ամրագրված են ՀՀ Սահմանադրության 133 հոդվածում: Այս լիազորությունների կենսագործման կառուցակարգերը և դրանց բնույթն այնպիսին են, որ նախագահին պաշտպանության ոլորտում դարձրել են դերակատարություն չունեցող մարմին, հատկապես, որ նա, նույնիսկ, Անվտանգության խորհրդի անդամ չէ:

Պաշտպանական ոլորտի ռազմաստրատեգիական կառավարման խաղաղ ժամանակվա այս նկարագիրը ընդհանուր գծերով վեր հանելուց հետո, փորձենք այն համադրել ռազմաստրատեգիական կառավարման հիմնարար սկզբունքների և նույնաբնույթ հարաբերությունները կարգավորող մի շարք երկրների (հատկապես խորհրդարանական հանրապետության կառավարման ձև ունեցող) սահմանադրական կառուցակարգերի հետ:

ՀՀ սովորական կամ խաղաղ ժամանակի ռազմաստրատեգիական կառավարման համակարգի ակնհայտ առանձնահատկությունը դրա կառավարակենտրոն և դ-

<sup>179</sup> См. у **Халипов В.Ф.**, Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005. С. 468:

րանով պայմանավորված վարչապետակենտրոն բնույթն է: Այս համակարգում իր սահմանադրական և օրենքով ամրագրված լիազորությունների տեսակարար կշռով վարչապետը գերակայում է մնացած բոլոր մասնակից սուբյեկտների նկատմամբ: Կառավարման այս համակարգը համապատասխանում է և՛ ռազմաստրատեգիական, և՛ օպերատիվ, և՛ տակտիկական կառավարման սկզբունքներին, ապահովում է կենտրոնացվածություն, հետևաբար նաև օպերատիվություն, արագություն: Սակայն կառավարությունը և, հատկապես, վարչապետն, ի վերջո, քաղաքականացված սուբյեկտներ են պետական կառավարման ոլորտում, հետևաբար ենթակա քաղաքական իրավիճակից կախված վայրիվերումներին: Այս պարագայում պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի ստորին սկզբունքները կարող են չիրացվել, որովհետև կառավարական ճգնաժամերը տարբեր դրսևորումներով ի չիք են դարձնելու դրանք, առաջանալու է հակասություն կառավարման ընդհանուր սահմանադրական սկզբունքների և ռազմաստրատեգիական կառավարման պահանջների ու սկզբունքների միջև, վտանգվելու են երկրի պաշտպանության շահերը, ինչն անթույլատրելի է:

Պաշտպանական ոլորտի կառավարման գերկենտրոնացվածությունն, անշուշտ, օրինաչափ է և բխում է ոլորտի կառավարման ստորին մակարդակների սկզբունքներից: Այդպիսի կենտրոնացման օրինաչափություն նկատվում է նաև այլ երկրներում, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Իսպանիայում և այլուր: Սակայն ՌԴ-ում ռազմաստրատեգիական կառավարման սուբյեկտը, որի շուրջ կառուցված է կենտրոնացումը, առաջնային մանդատ ունեցող և բավականին երկար ժամկետով ընտրվող նախագահն է<sup>181</sup>:

Կիսանախագահական և նախագահական կառավարման ձևում, պաշտպանական (կամ ռազմական) լիազորությունների հիմնական մասը կենտրոնացված է ա-

<sup>180</sup> Տե՛ս **Мигачев Ю.И., Тихомиров С.В.**, Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, с. 60:

<sup>181</sup> Տե՛ս Конституция Российской Федерации. –М.: Издательство «Ось – 89», М.: 2001, ст. 71; Конституция Российской Федерации: Проблемный комментарии. Отв. ред. В.А. Четвернин.- М., 1997, с. 186-195; ՌԴ նախագահի ռազմական ոլորտի լիազորությունների մասին տե՛ս **Россинский Б.В.**, Административное право. – М.: Право и закон, 2001, էջ 587-595.

ռաջնային մանդատ ունեցող նախագահների ձեռքում և, նրանք, որպես կանոն, համարվում են զինված ուժերի գլխավոր (կամ գերագույն գլխավոր) հրամանատարը<sup>182</sup>:

Եվրոպական խորհրդարանական միապետություններում գլխավոր հրամանատարի գործառույթը սահմանադրությունները վերապահում են քաղաքական ցնցումներից ու ճգնաժամներից հեռու գտնվող միապետներին, օրինակ՝ Իսպանիայում<sup>183</sup>:

ՀՀ ռազմաստրատեգիական կառավարման առանձնահատկությունը՝ կառավարման կենտրոնացումը վարչապետի ու կառավարության ձեռքին, համադրելով նույնիսկ խորհրդարանական հանրապետություններում ռազմաստրատեգիական կառավարման կառուցակարգերի հետ, նկատում ենք, որ այն արտառոց է: Նման կառավարման ձև ունեցող երկրներից՝ (Իտալիա, Գերմանիա, Շվեյցարիա, Հունգարիա, Լիտվա) ոչ մեկում օրինաչափ կենտրոնացումը ուղղորդված չէ դեպի կառավարություն և վարչապետ:

Կարծում ենք, որ նման սահմանադրական օրինաչափության հիմքում ընկած հիմնական պատճառը խորհրդարանական հանրապետությունում կառավարության չափից դուրս քաղաքականացվածությունն է, ինչի հետևանքով այն ունակ է ազդվելու քաղաքական գործոններով պայմանավորված վայրիվերումներից: **Իտալիայում** կառավարման ձևը խորհրդարանական հանրապետությունն է<sup>184</sup>, ընդ որում Իտալիայի Հանրապետության խորհրդարանական կառավարման ձևը սահմանադրագիտության մեջ համարում են դասական<sup>185</sup>: Իտալիայում զինված ուժերի գլխավոր հրամանատարը նախագահն է, որը նախագահում է օրենքին համապատասխան ստեղծվող Պաշտպանության գերագույն խորհրդում, խորհրդարանի պալատների որոշմամբ հայտարարում է պատերազմական դրություն<sup>186</sup>:

---

<sup>182</sup> Օրինակ՝ Ֆրանսիայի Սահմանադրության 15 հոդվածի համաձայն նախագահը համարվում է զինված ուժերի գլուխը և դրան համապատասխան տիրապետում է յուրաքանչյուր շարք էական լիազորություններին: Այդ մասին տե՛ս **Արդան Փիլիպ**, *Франция: государственная система: пер. с франц.* - М.: Юрид. лит., 1994, с. 67:

<sup>183</sup> St´u Конституция Испании /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 202-239, ինչպես նաև **Արտունյան Գ.Գ., Գաբրիչիձե Մ.Բ.**, *Конституционное право: энциклопедический словарь.* – М., НОРМА, 2006, էջ 63:

<sup>184</sup> Իտալիայի խորհրդարանական կառավարման ձևն ամրագրվել է 1947 թ. Սահմանադրությամբ, հակաֆաշիստական տրամադրությունների պայմաններում և գործում է առաջուր (տե՛ս Конституционное (государственное/ право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 260-264); :

<sup>185</sup> St´u Конституционное право государств Европы /Отв. ред. Д.А. Ковачев.- М.: Волтерс Клувер, 2005, էջ 184:

<sup>186</sup> St´u Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1947 г., статья 87 /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 81:

Խորհրդարանականին հարող կառավարման ձև ունի **Շվեյցարիական Միությունը**: Գրականության մեջ կա տեսակետ, որ Շվեյցարիայի Միության կառավարման ձևը յուրահատուկ հանրապետությունն է՝ դուալիստական պետական ռեժիմով: Դաշնային խորհուրդը, որպես կոլեգիալ մարմին, միավորում է կառավարության և շատ դեպքերում պետության գլխի գործառույթները, քաղաքական պատասխանատվություն է կրում Դաշնային ժողովի (խորհրդարանի) առջև, ընտրվում է նրա կողմից<sup>187</sup>: Դաշնային խորհուրդը՝ կառավարությունը լիազորված է ձեռնարկելու անհրաժեշտ միջոցառումներ Շվեյցարիայի արտաքին անվտանգության, անկախության և չեզոքության ապահովման համար: Նա իրավունք ունի արտակարգ դեպքերում օգտագործել զորքերը, եթե դրանց քանակը չի անցնում 4000-ը, իսկ տևողությունը՝ 3 շաբաթը: Հակառակ դեպքում գումարվում է Դաշնային ժողովի նիստ: Դաշնային ժողովը պաշտպանության ոլորտում կրում է նույն գործառութային պարտականությունը, սակայն միայն նա է ձեռնարկում ռազմական իշխանական միջոցառումները, դեկլարում բանակը, այն կամ դրա մի մասը բերում մարտական պատրաստության<sup>188</sup>: Այսպիսով, Շվեյցարիայի Սահմանադրությունը և՛ ռազմական, և՛ սովորական իրադրությունում սահմանում է խորհրդարանակենտրոն կառավարում, ռազմական լիազորությունների կենտրոնացում խորհրդարանում, այլ ոչ թե կառավարությունում:

**Հունգարիայի** Սահմանադրությամբ ամրագրված կառավարման ձևն ընդունված է անվանել դասական խորհրդարանական հանրապետություն՝ միապալատ խորհրդարանով<sup>189</sup>: Հունգարիայում ռազմական կառավարման բարձրագույն համակարգը կարելի է բնութագրել որպես դուալիստական, այն իմաստով, որ ռազմական լիազորությունների հիմնական մասը կենտրոնացված է խորհրդարանում, մասամբ՝ հանրապետության նախագահի մոտ, որը պատերազմի ժամանակ գլխավորում է ռազմաստրատեգիական կառավարման բարձրագույն մարմինը՝ Պաշտպանության պետական խորհուրդը: Կառավարությունն այստեղ կատարում է միայն գործադիր

<sup>187</sup> St' u Конституционное (государственное) право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 421:

<sup>188</sup> St' u Федеральная Конституция Швейцарской Конфедрации 1999 г., статьи 173, 185 /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 122, 125:

<sup>189</sup> St' u Конституционное (государственное/ право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 557:

ապահովող գործառույթներ, իսկ սահմանադրական մարմիններից գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակը՝ վերապահված է նախագահին<sup>190</sup>:

**Գերմանիայի Դաշնությունը** ևս իր կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է<sup>191</sup>: Հաշվի առնելով կառավարության ուժեղ դիրքերը, դրան երբեմն անվանում են վարչապետական (կանցլերական) հանրապետություն<sup>192</sup>: Համաձայն Գերմանիայի Սահմանադրության պաշտպանության դաշնային նախարարն ունի զինված ուժերի հրամանատարության իրավունք: Երկրի վրա հարձակման մասին հայտարարության պահից զինված ուժերի հրամանատարությունն անցնում է դաշնային կանցլերին<sup>193</sup>: Մակայն ԳԴՀ-ի Սահմանադրությունը պաշտպանական հարաբերությունները կարգավորում է մանրամասն, համակողմանի ու շատ ճկուն կերպով, ներդաշնակելով դաշնային մակարդակով իշխանությունների բաժանման համակարգը՝ ռազմական կառավարման ստորին մակարդակի սկզբունքների հետ: Այն ունի պատերազմական իրավիճակում կառավարման կենտրոնացման, դրա արագացման, անընդհատության ապահովման բավականին հետաքրքիր ընթացակարգեր՝ ներառյալ օրենսդրման և գործադիրի վրա խորհրդարանական վերահսկողության ոլորտներում: Այդ ինստիտուտներից են՝ Բունդեսթագի պաշտպանության կոմիտեն, որն ունի նաև քննչական իրավունքներ (հոդվ. 45-а), Բունդեսթագի կողմից նշանակվող պաշտպանության գծով լիազոր, որը խորհրդարանական վերահսկողության իրականացման օժանդակ մարմին է (հոդ. 45-б), խորհրդարանի երկու պալատներն ստեղծում են Միավորված կոմիտե, որին կառավարությունը պետք է տեղեկացնի պաշտպանության վերաբերող իր պլանների մասին (հոդ. 53-а): Այս ինստիտուտներից բացի նախատեսվում են պետական կառավարման արագությունն ու անընդհատությունն ապահովող մի շարք այլ ընթացակարգեր, որոնք կիրառվում են

---

<sup>190</sup> Այսպիսի եզրակացությունը հիմնված է Հունգարիայի Հանրապետության Սահմանադրության 19, 19/А, 19/В, 29 հոդվածների վերլուծության վրա (տե՛ս Конституция Венгерской Республики /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 387-391):

<sup>191</sup> St' u Конституционное право государств Европы /Отв. ред. Д.А. Ковачев.- М.: Волтерс Клувер, 2005, էջ 101-114; Конституционное право зарубежных стран: под общей ред. М.Б. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. – 2-е изд., перераб. – М.: НОРМА, 2005, էջ 600-6001:

<sup>192</sup> St' u Конституционное (государственное) право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 347:

<sup>193</sup> St' u Конституция Федеративной Республики Германия. Статьи 65-а, 115-б, //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 146, 162:

նախագահի, Միավորված կոմիտեի արձանագրմամբ կամ հայտարարությամբ (հոդ. 115-a, 1-5 մասեր):

Գերմանիայի Սահմանադրությունը նախատեսում է խորհրդարանի պալատների, նախագահի, սահմանադրական դատարանի անդամի, դաշնային կանցլերի լիազորությունների շարունակման ընթացակարգեր, Բունդեսթագի արձակման արգելք:

Հետխորհրդային պետություններից Լիտվայի կառավարման ձևը սահմանադրագիտության մեջ դիտարկում են որպես խառը կառավարման հանրապետություն՝ խիստ արտահայտված պառլամենտական գծերով<sup>194</sup>: Լիտվայի Սահմանադրությամբ, որն առանձին գլխում բավականին մանրամասն կարգավորում է երկրի պաշտպանության հետ կապված հարաբերությունները, նախատեսված են պաշտպանության պետական խորհրդի ստեղծումը, դրա կազմը և կարգավիճակը, իսկ զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը վերապահված է Հանրապետության նախագահին<sup>195</sup>:

**Բրազիլիայի Սահմանադրությունը** զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը վերապահում է նախագահին, որն իրականացնում է պաշտպանության վիճակի և պաշարման (осадное) դրության ներմուծումը<sup>196</sup>: Սակայն նա այդ իրավասությունն իրականացնում է Հանրապետության, ինչպես նաև Ազգային պաշտպանության խորհուրդների որպես սահմանադրական խորհրդակցական մարմինների հետ համատեղ: Բրազիլիայի Սահմանադրությունը կարգավորում է Հանրապետության խորհրդի և Ազգային պաշտպանության խորհրդի որպես նախագահին կից խորհրդակցական մարմինների կարգավիճակը, կազմը, լիազորությունները<sup>197</sup>:

<sup>194</sup> St' u Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристь, 1999, էջ 552:

<sup>195</sup> St' u Конституция Литовской Республики (принят 25 октября 1992 г., с изменениями от 20 июня 1996 г. и 12 декабря 1996 г.) //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристь, 1999, էջ 550-595, հոդվածներ 135-146:

<sup>196</sup> Լատինաամերիկյան պետությունների նախագահական կառավարման ձևերի մասին տե՛ս Конституционное право зарубежных стран: под общей ред. М.Б. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. – 2-е изд., перераб. – М.: НОРМА, 2005, էջ 889-895:

<sup>197</sup> Այդ մարմինների գումարումը և դրանցում նախագահելը, պատերազմ հայտարարելը՝ ստանալով Ազգային կոնգրեսի լիազորությունը կամ դրա հաստատումը, դրա հետ կապված համընդհանուր կամ մասնակի ազգային զորակոչի հայտարարումը նախագահի լիազորություններ են (տե՛ս Конституция Федеративной Республики Бразилии //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 315-316, հոդված 42, 1-11 §):

Տարածված կարգը եվրոպական երկրների սահմանադրություններում այն է, որ պետության գլուխը համարվում է նաև գերագույն գլխավոր հրամանատարը: Սակայն եվրոպական որոշ երկրներում գոյություն ունեն նաև բացառություններ: Այսպես, Լեհաստանի Սահմանադրությամբ նախագահը «գերագույն գլխավոր հրամանատարն» է, սակայն պատերազմ հայտարարելու պահից նախագահը նախարարների խորհրդի ներկայացմամբ նշանակում է «բարձրագույն հրամանատար», որի իրավասությունը, ենթակայությունը սահմանադրական մարմիններին որոշվում է հատուկ օրենքով<sup>198</sup>: Լատվիայի Սահմանադրությունը ևս տարբերակում է պետության զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը՝ այդ կարգավիճակով օժտելով նախագահին և Գերագույն գլխավոր հրամանատարին, որին նշանակում է նախագահը պատերազմի ժամանակ<sup>199</sup>:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, մեզ հետաքրքրող հարցի սահմանադրական կարգավորման տեսանկյունից ոչ միայն նախագահական, կիսանախագահական, այլև խորհրդարանական կառավարման ձևի գրեթե բոլոր երկրներում գործում է նախագահակենտրոն մոդելը կամ խառը՝ խորհրդարանանախագահական կենտրոնացումը, երբ ռազմական կառավարման հարցերը կենտրոնացված են և՛ խորհրդարանում, և՛ խորհրդարանում ընտրվող նախագահի ձեռքին: Շվեյցարիայում այս հարցի կարգավորման տեսլականը կարելի է անվանել խորհրդարանական, բայց Շվեյցարիան այս հարցերում առանձնահատուկ է. նրա Սահմանադրությունը, բացի երկրի պաշտպանությունից, խնդիր է դնում ապահովել նաև երկրի չեզոքությունը, իսկ բանակն այստեղ աշխարհագրային է: Ընդհանուր այս սխեմայից շեղվում է Գերմանիան, խաղաղ ժամանակ հրամանատարը պաշտպանության նախարարն է, իսկ պատերազմի ժամանակ՝ կանցլերը: Այս տեսանկյունից ՀՀ և Գերմանիայի Սահմանադրություններով ամրագրված լուծումների միջև կան նմանություններ, բայց դա միայն արտաքուստ և խաբուսիկ նմանություն է, որովհետև Գերմանիայի պաշտպանական ոլորտի կառավարումն ունի բավականին բարդ նկարագիր: Դրան էական մասնակցություն ունի խորհրդարանը, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված են ռազմական կառավարման մի քանի ռեժիմներ, որոնք վերաբերում են պա-

<sup>198</sup> Տե՛ս Конституция Республики Польша 1997 г., հոդված 134(1), 134, մաս 2-րդ, 134, մաս 4-րդ //հղումն ըստ <https://worldconstitutions.ru/?p=112>

<sup>199</sup> Տե՛ս նույն տեղը, հոդված 43:



տերազմի ժամանակ և՛ օրենսդիր իշխանության, և՛ գործադիր իշխանության վերակառուցմանը, ինչը նախատեսված չէ ո՛չ ՀՀ Սահմանադրությամբ, ո՛չ էլ ընթացիկ օրենքներով:

Հետևաբար վարչապետի՝ որպես ավելի «քաղաքականացված» ֆիզուրայի շուրջ ռազմական լիազորությունների կենտրոնացումն իրենում պարունակում է ազգային անվտանգության հնարավոր սպառնալիք, որը որոշակի պայմաններում կարող է վերածվել իրական վտանգի: Այս սպառնալիքի ձևավորմանը նպաստող սահմանադրական գործոններ են խորհրդարանի ոչ էական մասնակցությունը, ՀՀ նախագահի անիշխանությունը պաշտպանական ոլորտի հիմնահարցերի կառավարման ոլորտում, ինչպես նաև ՀՀ Անվտանգության խորհրդի կազմակերպական ու գործառույթային առանձնահատկությունները:

**ՀՀ ռազմաստրատեգիական կառավարման համակարգում հիմնախնդիրային է Անվտանգության խորհրդի կազմի հարցը:** Իր ներկա օրենսդրական լուծմամբ այն, ըստ էության, իրենից ներկայացնում է «փոքր կառավարություն»: Վարչապետի և կառավարության շուրջ պաշտպանական ոլորտի բոլոր հիմնական սահմանադրական լիազորությունների կենտրոնացմանը որոշակիորեն կարող էր հակակշռել Անվտանգության խորհուրդը, իհարկե ոչ թե լիազորությունների առումով, այլ կազմում ընդգրկված հանրային-իրավական սուբյեկտների տեսանկյունից: Մեր կարծիքով խնդիրն այն է, որ Անվտանգության խորհրդում գերակշռում են, անմիջականորեն կառավարության անդամները կամ կառավարության ու վարչապետի «արբանյակներ» հանդիսացող հանրային-իրավական սուբյեկտները, որոնք հիմնականում և օրինաչափորեն չեն կարող լինել այլակարծիք: Այս խնդրի էությունը հասկանալու համար դիմենք Անվտանգության խորհուրդների կարգավիճակի և կազմի սահմանադրական կարգավորման համաշխարհային փորձին:

Իտալիայի 1947 թ. Սահմանադրությունը (87 հոդված) սահմանում է, որ օրենքով սահմանված կարգով ստեղծվում է Պաշտպանության գերագույն խորհուրդ, առանց մանրամասնելու կազմը և իրավասությունը<sup>200</sup>, սակայն այդ մարմնի ղեկավար

<sup>200</sup> St' u Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1947 г., статья 87 /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 81:

ըը հանրապետության նախագահին է, ով համարվում է զինված ուժերի գլխավոր հրամանատարը<sup>201</sup>:

Բրազիլիայի Սահմանադրությունն ունի հատուկ ենթաբաժին՝ հատկացված Ազգային պաշտպանության խորհրդի կազմին, իրավասությանը: Համաձայն 91 հոդվածի այդ խորհուրդն ունի Հանրապետության նախագահին կից խորհրդակցական մարմնի կարգավիճակ: Նրա կազմի մեջ մտնում են փոխնախագահը, Պատգամավորների պալատի նախագահը, Դաշնային խորհրդի նախագահը, արդարադատության, ռազմական, արտաքին գործերի և պլանավորման նախարարները<sup>202</sup>: Ինչպես նկատում ենք այստեղ ներկայացված են բոլոր հիմնական սահմանադրական մարմինները, իշխանության ճյուղերը, այն էլ այն դեպքում, երբ այն խորհրդատվական մարմին է, ի տարբերություն ՀՀ Անվտանգության խորհրդի:

Հետաքրքիր սահմանադրական կարգավորում այս հարցում ունի Հունգարիան, որտեղ Համաձայն Սահմանադրության 19/A հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերի պաշտպանության պետական խորհուրդը ստեղծվում է պատերազմի կամ ռազմական հարձակման անմիջական վտանգի դեպքում: Այդ խորհուրդը հատուկ մարմին է, որն ընդունում է որոշում զինված ուժերը երկրի ներսում և արտասահմանում օգտագործելու մասին, օրենքով նախատեսված արտակարգ միջոցառումների ներմուծման մասին: Խորհուրդը գլխավորում է նախագահը: Բայց, ի տարբերություն ՀՀ-ի Անվտանգության խորհրդի, նրա կազմի մեջ են մտնում Պետական ժողովի նախագահը, պետական ժողովում ներկայացված կուսակցությունների խմբակցությունների ղեկավարները, պրեմիեր-մինիստրը, մինիստրները, հունգարական բանակի հրամանատարը և գլխավոր շտաբի պետը:

## **§ 2. Պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման առանձնահատկությունները պատերազմական իրավիճակում**

<sup>201</sup> Իտալիայի խորհրդարանական կառավարման ձևի մասին մանրամասն տե՛ս Конституционное право зарубежных стран: под общей ред. М.Б. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. – 2-е изд., перераб. – М.: НОРМА, 2005, էջ 655-656:

<sup>202</sup> Ст' u Конституция Федеративной Республики Бразилии. Статья 91 /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, с. 235:

Ռազմաստրատեգիական պետական կառավարումն իրականացվում է երկու տարբեր պայմաններում՝ սովորական-խաղաղ և արտակարգ-պատերազմական: Այս կառավարման այդ առանձնահատկության հետ հաշվի են նստում ռազմական արվեստի տեսության գրեթե բոլոր ոլորտները՝ ստրատեգիան, օպերատիվ արվեստի տեսությունը<sup>203</sup>, պետության պաշտպանության ֆունկցիաների տեսությունը<sup>204</sup>, պաշտպանության ոլորտին առնչվող այլ գիտական ուղղությունները:

Ռազմական իրավունքի տեսությունն անխուսափելիորեն հետևում է ռազմական ստրատեգիայի հիմնադրույթներին: Հետևաբար, գիտական այս ոլորտը ևս երկրի պաշտպանության խնդիրն իմաստավորում է երկու փուլերով՝ մինչպատերազմական-նախապատրաստական և պատերազմական: Պաշտպանական հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ տարբերակված կարգավորումը ակնհայտ երևացող փաստ է: Դրա իրավական հիմքերը ցանկացած երկրում ամրագրված են Սահմանադրությամբ: Այդ կարգավորման ուժով պետական կառավարումը տրոհվում է երկու մասի կամ կարգով իրականացվող գործընթացի՝ առօրեական, սովորական, ընթացիկ և դրանից շեղվող պատերազմական կամ արտակարգ կառավարման ձևեր, ինստիտուտներ, ընթացակարգեր:

Կարելի է եզրակացնել, որ ռազմական կառավարման խաղաղ շրջանում կառավարման ռազմական սկզբունքներն առանց էական փոխակերպման հարմարեցվում են պետական կառավարման արդի ժողովրդավարական սկզբունքներին: Սակայն պատերազմի ազդարարման պահից ազդեցության, գերակայության վեկտորը փոխվում է հակառակ ուղղությամբ, այսինքն՝ պետական կառավարման ընդհանուր համակարգը փոխակերպվում է, վերակառուցվում է ռազմական կառավարման սկզբունքներին: Պետական կառուցակարգի նման փոխակերպումը խիստ անհրաժեշտ է, հակառակ դեպքում հաջողությունները պատերազմական գործողություններ-

<sup>203</sup> Ռազմական ստրատեգիան, օպերատիվ արվեստը և տակտիկան միասնական ամբողջության՝ ռազմական արվեստի մասեր են, որոնց միջև կա գիտակատեսական ենթակայություն: Բարձրագույն մակարդակը ստրատեգիան է, իսկ միջանկյալ օպերատիվ արվեստին հետևում է տակտիկան: Վերջին երկուսի դերն աճում է հատկապես պատերազմական շրջանում, սակայն օպերատիվ կառավարումը և տակտիկական նախապատրաստումն իրականացվում է նաև խաղաղ ժամանակ (այդ մասին տե՛ս սույն աշխատանքի 1-ին գլխի 3-րդ ենթագլուխը):

<sup>204</sup> Երկրի պաշտպանության գործառույթի բովանդակության, իրականացման միջոցների, խաղաղ և պատերազմի ժամանակի միջոցառումների մասին մանրամասն տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.**, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, «Գոշ» հրատ.-ն, էջ 199-202, ինչպես նաև **Дойников И.В.**, Теория государства и права.

րում երաշխավորված չեն: Համաշխարհային սահմանադրական պրակտիկայում նման փոխակերպման կարգի և սկզբունքների հարցում չկա միասնություն: Ամեն մի երկիր որդեգրել է ընդհանուր պետական համակարգի փոխակերպման, պատերազմական ժամանակաշրջանի կառավարման իր կառուցակարգը, որի առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ պետության կառավարման ձևով, սահմանադրական կարգավորիչ ինստիտուտներով, պետության պատմական զարգացման օրինաչափություններով, պետության ռազմաստրատեգիական կառավարման ու պատերազմելու պատմական փորձով, աշխարհաքաղաքական առանձնահատկություններով: Պատերազմական շրջանի կառավարման սահմանադրական առանձնահատկությունների հիմքում կարող է ընկած լինել ռազմաքաղաքական յուրահատուկ գաղափարախոսությունը: Օրինակ՝ Չինաստանը և Իրանն ունենալով պետական կառավարման յուրահատուկ ձև, չունեն ռազմական փոխակերպումների հատուկ ընթացակարգեր, որովհետև պայմանավորված նրանց հասարակությունների գաղափարական առանձնահատկություններով (մարքսիզմ, իսլամիզմ), ստրատեգիական-քաղաքական գաղափարախոսությունը, որ դրված է դրանց Սահմանադրությունների հիմքում, պետությունն ի սկզբանե կառուցել է կենտրոնացվածության սկզբունքով, ինչն ավելի հարմարեցված է ռազմաստրատեգիական կառավարման խնդիրների լուծմանը, քան իշխանությունների բաժանմամբ գործող պետությունների կառուցակարգը: Որպես օրինաչափություն նախագահական հանրապետություններում, ինչպես նաև սահմանադրական միապետություններում պատերազմական շրջանում ռազմաստրատեգիական կառավարման լիազորությունները Սահմանադրությունները կենտրոնացնում են նախագահի (կամ միապետի) ձեռքին, խորհրդարանի վերահսկողության տակ: Սակայն խորհրդարանական հանրապետություններում այս հարցում առաջանում են որոշակի խնդիրներ՝ կապված պատասխանատու կառավարման, վարչապետի ժամանակավոր պաշտոնավարման, կառավարության կուսակցականացվածության և մի շարք այլ պատճառներով:

Հետևաբար, փոխակերպման սահմանադրական ընթացակարգերը կամ ռազմական կառավարման արտակարգ համակարգը պատերազմի ժամանակաշրջանում ամեն մի երկրում յուրահատուկ է, մյուսներից տարբերվող: Համաշխարհային

պրակտիկայում այս հարցում միասնական է միայն այն, որ գրեթե բոլոր երկրների Սահմանադրությունները սահմանում են փոխակերպման ինչ-ինչ ձևեր: ՀՀ-ն համար այս խնդիրը շատ կարևոր է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ անկախության առաջին շրջանում Հանրապետությունը գտնվել է չհայտարարված իրական պատերազմի մեջ, մինչ հիմա առկա է Արցախի Հանրապետության պաշտպանության խնդիրը, նոր պատերազմն անհավանական չէ, իսկ մեր աշխարհաքաղաքական կացությունը բավականին բարդ, խճճված ու ծանր է: Հետևաբար, պետական համակարգը կերտելիս անխուսափելիորեն պետք է սահմանադրական կարգավորման կառուցակարգում նախատեսվեն արտակարգ-ռազմական կառավարման արդյունավետ ընթացակարգեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում պետությունն արագորեն վերակառուցվի, հարմարվի պատերազմական կառավարման սկզբունքներին:

Այժմ փորձենք վերը նշված տեսանկյունից վերլուծել ՀՀ Սահմանադրությունը, վեր հանել արտակարգ-ռազմական կառավարման ինստիտուտները, պարզել դրանց բավարարության և արդյունավետության հարցերը՝ հիմք ընդունելով մի շարք երկրների այս հարաբերությունների կարգավորման մոտեցումներն ու լուծումները:

Թվում է, թե վերը բերված գործոնների ու ՀՀ առանձնահատկությունների ազդեցությամբ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը պետք է նախատեսեր ռազմական փոխակերպման բավարար ինստիտուտներ: Սակայն Սահմանադրության տեքստի ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք այնքան էլ շատ չեն, իսկ եղածների, ինչպես կտեսնենք ստորև, մի մասի արդյունավետությունը կասկածելի է:

Պատերազմական շրջանի ռազմական-արտակարգ կառավարման որևէ դրույթ չկա ՀՀ Սահմանադրության ոչ առաջին, ոչ էլ 2-րդ գլխում: 2-րդ գլխի 76 հոդվածը (հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ) առաջին հայացքից ստեղծում է նման տպավորություն, սակայն հոդվածում խոսքը գնում է ոչ թե ռազմավարական կառավարման սուբյեկտների կարգավիճակի փոփոխության մասին, այլ ընդամենը ռազմական դրության ժամանակ Սահմանադրությամբ սահմանված մարդու և քաղաքացու որոշ հիմնական իրավունքների ու ազատությունների՝ օրենքով սահմանված

կարգով ժամանակավորապես կասեցման կամ լրացուցիչ սահմանափակումների մասին<sup>205</sup>:

Ազգային ժողովի սահմանադրական իրավական ինստիտուտում նկատում ենք որոշ դրույթներ, որոնք բխում են ռազմական կառավարման օրինաչափություններից: Դրանցից մեկը նախատեսված է Սահմանադրության 91 հոդ. 2-րդ մասով և արգելում է անցկացնել Ազգային ժողովի ընտրություն ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ հետաձգելով այդ ընտրությունները ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո<sup>206</sup>: Այս նորմի նպատակն է ապահովել խորհրդարանի որպես օրենսդիր մարմնի բոլոր տեսակի լիազորությունների իրականացման անընդհատությունը, իսկ կառավարման անընդհատությունը ռազմական կառավարման բոլոր ոլորտների հիմնարար սկզբունք է<sup>207</sup>:

Կառավարման անընդհատության ապահովմանն է ուղղված ՀՀ Սահմանադրության մեկ այլ դրույթ, որը վերաբերում է պատերազմ հայտարարելուն: Համաձայն

---

<sup>205</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս 2005 թ. Սահմանադրության 43 և 44 հոդվածների մեկնաբանությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի – Եր.: Իրավունք, 2010, աշխատության 508-526 էջերը: 2015 թ. Սահմանադրության 76 հոդվածի մեկնաբանությունը և մարդու իրավունքների սահմանափակման չափանիշների սահմանադրական նորամուծությունների մասին տե՛ս **Վաղարշյան Ա.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավական վերլուծություն), Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն, Եր., 2017, № 3 (24), էջ 3-16, ինչպես նաև «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկավիճակը և հետագա բարելավման խնդիրը. – Եր.: Տիգրան Մեծ, 2017» աշխատության 283-300 էջերը: (304 էջ):

<sup>206</sup> 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն արգելելով ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրությունները, սահմանում է, որ այդ դեպքում Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան հիստուն, և ոչ ուշ, քան վաթսուներեք օր հետո (տե՛ս Սահմանադրության 91 հոդ. 2-րդ մասը): 90 հոդվածը կարգավորելով Ազգային ժողովի լիազորությունների ու ընտրությունների ժամկետները, 4-րդ մասում սահմանում է, որ եթե ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ապա գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:

<sup>207</sup> Օրինակ՝ մարտի վարման անընդհատությունը, անընդհատ ու անշեղ կառավարումը համարվում են ռազմական մարտավարության հիմնական սկզբունքներից (տե՛ս Тактика /**В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.** - 2-е изд., перераб. и доп. - М.: Воениздат, 1988, с. 68): Անընդհատությունը նաև գորքերի մարտական գործողությունների կառավարմանը ներկայացվող պահանջներից մեկն է (տե՛ս նույն տեղը, էջ 667-682): Ստրատեգիան որպես ռազմական արվեստի բարձրագույն բնագավառ ևս հիմնավորում է, որ անընդհատությունը, զինված ուժերի անշեղ և անընդհատ ղեկավարումը պետական և բարձրագույն զինվորական ղեկավարության գործունեության ընդհանուր կանոններ, ստրատեգիական կառավարման հիմքում ընկած սկզբունքներ են, որոնց կիրառումը կարևոր է մարտական գործողությունների ընթացքում (տե՛ս «Категории, закономерности и принципы военной стратегии» // в кн. Военная стратегия, с. 32-39; հղումն րստ <http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>):

118 հոդ. 1-ին մասի Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Կառավարությունը: Կառավարությունը կարող է իր կազմով, կամ իր գործունեության կարգով օպերատիվ ու արագ գործելուն ունակ մարմին է: Եթե իրավիճակը հնարավորություն չի տալիս գումարել խորհրդարանի նիստ, ապա պատերազմ հայտարարելու իրավագործությունն իրականացնում է կառավարությունը:

Այսպիսով, Ազգային ժողովի սահմանադրական գործող ինստիտուտում պատերազմով կամ ռազմական դրությամբ պայմանավորված որևէ այլ լուծում նախատեսված չէ: Վերը բերված երկու լուծումներից մեկը նպատակ ունի ապահովելու օրենսդրման անընդհատությունը, իսկ երկրորդը՝ պատերազմ հայտարարելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու կամ անընդհատությունը, կամ օպերատիվությունը: Սակայն չեն իրացվել ռազմական արվեստի առաջադրած մնացած սկզբունքները, օրինակ՝ ստրատեգիական (համաձայնեցվածությունը, նախաձեռնության նվաճումը), տակտիկական (հանկարծակիությունը, արագությունը, խնդիրների նվաճման անշեղ ձգտումը, գաղտնիությունը, կենտրոնացումը, բարձր կազմակերպվածությունը)<sup>208</sup>: Դրանց մեջ հատկապես կարևոր է օրենսդրման արագությունը, օպերատիվությունը և արդյունավետությունը ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում: Չէ որ պաշտպանության գործառույթի իրականացման կարևոր տարրերից է դրա ընդհանուր իրավական ու նաև օրենսդրական ապահովումը<sup>209</sup>:

Կառավարության և վարչապետի սահմանադրական ինստիտուտների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ևս հարուստ չեն ռազմական դրության պայմաններին համապատասխանող փոխակերպումներով: Սահմանադրության 155 հոդ. 3-րդ և 4-րդ մասերը նախատեսում են պաշտպանական համակարգի կառավարման մարմինների լիազորությունների վերադասավորման երկու, մեր կարծիքով ոչ էական լուծում: **Առաջին**, ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը են-

<sup>208</sup> Այդ սկզբունքների մասին տե՛ս սույն ատենախոսության առաջին գլխում, ինչպես նաև Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, էջ 68, 667-682:

թակա է պաշտպանության նախարարին (հոդված 155, 3-րդ մաս): Սահմանադրական դրույթից բխում է, որ պատերազմի ժամանակ գլխավոր շտաբի պետը չի ենթարկվում պաշտպանության նախարարին: Սահմանադրական լուծումը, կարծես թե, կիսատ է, որովհետև ուղղակի նշված չէ, թե պատերազմական ժամանակ ո՞ւմ է ենթակա գլխավոր շտաբի պետի պետը, որպես «Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձ»:

Երկրորդ վերադասավորումն ամրագրված է նույն հոդվածի 4-րդ մասում, ըստ որի պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է: Այս ձևակերպումը ևս իրավական հստակությամբ աչքի չի ընկնում: Ձևակերպման տրամաբանական մեկնաբանությունից և վերլուծությունից բխում են մի շարք հարցեր, որոնց պատասխանը չկա Սահմանադրության մեջ. ա) ի՞նչ է նշանակում «զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձ», բ) ո՞վ է Զինված ուժերի հրամանատարը կամ գերագույն հրամանատարը խաղաղ կամ սովորական ժամանակաշրջանում, գ) ու՞մ է ենթակա գլխավոր շտաբի պետը պատերազմական ժամանակ:

Լայն առումով պետական կառավարման փոխակերպումներ նախատեսված չեն ո՛չ Անվտանգության խորհրդի, ո՛չ ՀՀ նախագահի, ո՛չ էլ դատական համակարգի ինստիտուտներում<sup>210</sup>: Միակ սահմանափակումը, որ սահմանված է, դա ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե անցկացնելու արգելքն է (հոդված 208)<sup>211</sup>:

<sup>209</sup> Այս մասին մանրամասն տե՛ս սույնատեմայային աշխատանքի հաջորդ ենթագլխում:

<sup>210</sup> Տե՛ս 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 90, 91, 115, 118, 133, 157, 208 հոդվածները: Այդ հարցերի պատասխանը չկա նաև նշված հոդվածների վերաբերյալ մեկնաբանություններում (տե՛ս օրինակ՝ **Պոդոսյան Վ., Մարգարյան Ն.**, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Եր., Տիգրան Մեծ, 2016, 84-130 էջերը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք երկրորդ.- Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2016, 416 էջ» դասագրքի վերը նշված մարմիններին հատկացված թեմաներում):

<sup>211</sup> Դրան համապատասխան «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 6 հոդ. սահմանում է, որ հանրաքվե չի կարող անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ անկախ ռազմական կամ արտակարգ դրությունն ընդգրկող տարածքի չափից: Հանրաքվե չի կարող անցկացվել նաև Ազգային ժողովի ընտրությունների օրը: Այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է օրենքով նախատեսված հանրաքվեի գործընթացն սկսելուց հետո, սակայն մինչև Հանրապետության նախագահի կողմից հանրաքվե նշանակելը, ապա մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցվում են և վերսկսվում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո (տե՛ս «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը՝ ընդունված 2018 թ. մարտի 23-ին, ՀՕ-155-Ն //ՀՀՊՏ 2018.03.28/23(1381), Հոդ. 348; <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120709>): «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքը տեղական հանրաքվեի քաղաքացիական հանգամանքներ էր համարում արտակարգ և ռազմական դրությունը,



Այսպիսով, ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության դրույթների հետազոտությունն արտակարգ-ռազմական կառավարմանը բնորոշ վերակառուցումների տեսանկյունից, գալիս է հաստատելու, որ այն ունի միայն երեք նման ինստիտուտ.

1) օրենսդիր իշխանության համակարգում՝ պատերազմական դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրությունների արգելքը, Ազգային ժողովի նիստի գումարման անհնարինության դեպքում կառավարության կողմից պատերազմ հայտարարելը,

2) գործադիր իշխանության համակարգում՝ վարչապետը Ջինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, իսկ շտաբի պետը չի ենթարկվում պաշտպանության նախարարին, առանց նշելու թե ում (ենթադրվում է վարչապետին),

3) պատերազմի ժամանակ հանրաքվե անցկացնելու արգելքը:

Ընդ որում, նշվածների մի մասն էլ տարակուսանքի ու անորոշության հիմքեր ստեղծող լուծումներ են: Փորձենք հետազոտել ընթացիկ օրենքները և հատկապես «Պաշտպանության մասին» 2017թ. նոյեմբերի 15-ի օրենքը՝ փորձելով դրանում գտնել մեզ հետաքրքրող ինստիտուտներ կամ արդեն Սահմանադրությամբ սահմանված պատերազմական շրջանի ինստիտուտների կոնկրետացումներ:

ՀՀ Ազգային ժողովի հարցում այդ օրենքը գրեթե բառացիորեն կրկնում է Սահմանադրության դրույթները (հոդված 6): ՀՀ Կառավարության լիազորություններն ամրագրված են «Պաշտպանության մասին» օրենքի 7 հոդվածում, իսկ վարչապետին՝ 9 հոդվածում: Վարչապետի՝ պատերազմ հայտարարելու պահից զինված ուժերի գլխավոր հրամանատարի վերածվելու կապակցությամբ 9 հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ պատերազմ հայտարարվելու դեպքում, նա ընդունում է պատերազմական ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ<sup>212</sup>:

Օրենքում որոշակի կոնկրետացումներ կան Ջինված ուժերի անմիջական ղեկավարման ու կառավարման ոլորտում: «Պաշտպանության մասին» օրենքի 16 հոդվածը կրկնելով Սահմանադրության դրույթները՝ մասամբ բացում է դրանց իրավաբանական բովանդակությունը: Ջինված ուժերի ղեկավարումն իրականացնում է

---

դրանց վերացվելուց հետո՝ երկամսյա ժամկետը (տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 94-95, հոդված 5):

<sup>212</sup> Ընդ որում օրենքի պաշտոնապես հրապարակված տեքստում 9 հոդվածն ունի 1-ին մաս, ինչը ենթադրում է, որ այն պետք է ունենար նաև 2-րդ մաս: Մակայն տեքստում դա չկա (տե՛ս «Պաշտպանության մասին»

պաշտպանության նախարարը: Գլխավոր շտաբի պետը զինված ուժերի անմիջական հրամանատարն է: Խաղաղ ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին, իսկ պատերազմի ժամանակ՝ Գերագույն հրամանատարին (վարչապետին)<sup>213</sup>:

Այսպիսով, ինչպես տեսանք, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ևս չի պարունակում ինչ-որ փոխակերպումներ, հավանաբար այն պատճառով, որ չկան դրա սահմանադրական հիմքերը: Միակ օրենսդրական իրավադրույթը Գերագույն հրամանատարի հասկացության շատ ընդհանուր բնորոշումն է. «Գերագույն հրամանատարն ընդունում է պատերազմական ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ»<sup>214</sup>:

Ակնհայտ է, որ ռազմական կառավարման համակարգը պատերազմական շրջանում վերադասավորվում է մասնակի, շատ թույլ կենտրոնացման ուղղությամբ, և ըստ էության. Կառավարման կենտրոնը դառնում է վարչապետը:

Պատերազմական գործողությունների ռազմաստրատեգիական պլանավորման հարցում անհասկանալի է մնում Անվտանգության խորհրդի լիազորությունների հարցը: Այն լիազորությունները, որոնք թվարկված են «Պաշտպանության մասին» օրենքի 8 հոդվածում, ըստ էության, խաղաղ ժամանակի լիազորություններ են<sup>215</sup>:

Անհասկանալի են պատերազմի ժամանակ ռազմաստրատեգիական կառավարման ոլորտի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների հարցը: Օրինակ՝ դրանք գործում են ամբողջովին, թե մասամբ, եթե ամբողջովին, ապա դա չի՞ կարող խոչընդոտել ստրատեգիական, օպերատիվ և տակտիկական

---

2017 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը //ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627>):

<sup>213</sup> Տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի 16 հոդվածը: //ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627>):

<sup>214</sup> Տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի 9 հոդվածի 5-րդ կետը: //ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627>):

<sup>215</sup> Օրենքի այդ հոդվածի համաձայն Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ 1) իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորում և վերանայում. 2) հաստատում է՝ զինված ուժերի և այլ զորքերի զարգացման պլանը, զինված ուժերի ծավալման պլանը, զինված ուժերի գորահավաքային պլանը, զինված ուժերի կիրառման պլանը, ՀՀ տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը, զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը, իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկ. 15-ի օրենքը: //ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627>):

կառավարմանը: Իսկ, եթե չեն գործում, ապա դա չի՞ կարող հանգեցնել գործադիր ռազմականացված իշխանության չարաշահումների, ինչպե՞ս ապահովել արագացված օրենսդրումը: Նման բնույթի հարցադրումները կարելի է շարունակել:

Բարձրացված հարցադրումների հետ կապված ՀՀ Սահմանադրությունն ունի միայն կառավարության վստահության հարցին վերաբերող կարգավորում, մասնավորապես՝ կառավարությունը չի կարող դնել իր վստահության հարցը ռազմական դրության ժամանակ (հոդված 157, 5-րդ մաս) և համապատասխանաբար ռազմական դրության ժամանակ Ազգային ժողովում վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել (հոդված 115, 4-րդ մաս): Այս իրավակարգավորումը ևս իր լուծումների արդյունավետությամբ կասկածանքների տեղիք է տալիս:

Պատերազմական վիճակում պետական մարմինների համակարգում փոխակերպումներ սահմանված չեն նաև «Ռազմական դրության մասին» օրենքով, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ ևս ավելի շատ շեշտադրված են լիազորությունները, այսինքն՝ «ինչ պետք է անել», սակայն այդ լիազորությունների իրականացման արագ, օպերատիվ, արդյունավետ կառուցակարգերը, այսինքն՝ «ինչպես անել», նախատեսված չեն<sup>216</sup>:

Այսպիսով, ՀՀ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության ու պաշտպանության ոլորտը կարգավորող երկու կարևոր օրենքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը պատերազմական իրավիճակում կառավարման տեսության պահանջների ու սկզբունքների դիրքերից բերում է այն եզրակացության, որ ռազմական դրության ժամանակ կառավարման պետական համակարգում նախատեսված փոխակերպումներն ու լիազորությունների վերաբաշխումը նախատեսված են շատ սակավ ձևերով և, հետևաբար, անընդունակ են պատերազմական իրավիճակում պետական կառավարման ընդհանուր համակարգը, հատկապես օրենսդիր ու գործադիր, վերածել կուռ, պաշտպանունակ, ռազմական կառավարման սկզբունքներին ու պահանջներին համահունչ կառույցի: Այս եզրակացությունն հաստատելու համար լրացուցիչ հիմք կարող է հանդիսանալ մեզ հետաքրքրող հիմնահարցի հատուկ հե-

<sup>216</sup> Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» 2006 թ. դեկտեմբերի 5-ի օրենքը՝ ՀՕ-258-Ն //ՀՀ ՊՏ 2007.01.17/4(528), Հոդ. 27; <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105235>:

տագոտությունը աշխարհի մի շարք, ընդ որում ժողովրդավարական ու իրավական պետության համբավ ունեցող երկրների սահմանադրություններում:

Աշխարհի ժողովրդավարական համբավ ունեցող շատ երկրների սահմանադրությունները նախատեսում են այդպիսի փոխակերպումներ<sup>217</sup>: Օրինակ՝ Իտալիան ՄԻԵԿ-ի 6-րդ արձանագրությամբ սահմանված մահապատժի արգելումն ընդունում է միայն խաղաղ ժամանակ, իսկ պատերազմի ժամանակ իրեն իրավունք վերապահում դրա կիրառումը (Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 27 հոդ. 4-րդ մաս): Ճգնաժամային կամ ռազմական դրության պայմաններում կառավարման կենտրոնացման ու օպերատիվացման արդյունավետ միջոց է Իտալիայի Սահմանադրությամբ ամրագրված պատվիրակված օրենսդրության ինստիտուտը<sup>218</sup>:

**Գերմանիայի 1949 թ.** Սահմանադրությունը սկզբում պաշտպանական հարաբերությունների թույլ, ընդհանուր, կարգավորիչ էր, բայց հետագայում կատարված լրացումների միջոցով այն վերածվեց պաշտպանական հարաբերությունները բավականին ծավալուն, մանրամասն, բազմազան ինստիտուտներով կարգավորող, որոնց մեջ շատ են պատերազմի շրջանում կատարվող ինստիտուցիոնալ փոխակերպումները: Այդպիսին է նաև Ավստրիայի Սահմանադրությունը: Օրինակ Գերմանիայում՝ եթե պաշտպանության դրության ժամանակ համատեղ խորհրդարանի երկու պալատների կոմիտեն արձանագրի, որ խորհրդարանական գործունեության և նիստերի գումարման համար կան անհաղթահարելի արգելքներ, ապա նա կարող է փոխարինել Բունդեսրախին և Բունդեստաթին, որպես միասնական մարմին<sup>219</sup>: Այս երկրների նման ճկուն կարգավորումը և ռազմական կառավարման տեսանկյունից արդյունավետությունը պայմանավորված են դրանց պատերազմելու պատմական փորձով՝ սկսած պրուսական շրջանից մինչև երկրորդ աշխարհամարտը:

**Հունգարիայի Հանրապետության** Սահմանադրությունը պատերազմական իրավիճակի համար նախատեսել է օրենսդիր և գործադիր իշխանության կենտրոնացման, օպերատիվացման, դրանց անընդհատության ապահովման մի շարք կա-

<sup>217</sup> ԱՄՆ-ի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ռազմական իրավունքի և ռազմական կառավարման ընդհանուր հիմունքների մասին տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” - М., “За права военнослужащих”, 2004, էջ 558-590;

<sup>218</sup> Տե՛ս և Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1974 г. /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, հոդվ. 76, 77:

<sup>219</sup> Այդ մասին տե՛ս սույն ատենախոսության 2-րդ գլխի 3-րդ և 4-րդ պարագրաֆներում:

ռուցակարգեր: Զինված ուժերի օգտագործման բոլոր լիազորությունները կենտրոնացված են Պետական ժողովում: Եթե կան հանգամանքներ, որ խանգարում են Պետական ժողովին իրականացնել այդ լիազորությունները, ապա դրանք կարող է ձեռնարկել հանրապետության նախագահը: Այստեղ հատուկ կարգավիճակ և արտակարգ լիազորություններ ունի նախագահի գլխավորած Պաշտպանության պետական խորհուրդը:

Ընդդիմախոսները կարող են պնդել, որ շատ երկրներում էլ չկան փոխակերպվող ինստիտուտներ: Այս հարաբերությունների սահմանադրական կարգավորման փորձի ամփոփումը հիմք տալիս պնդելու, որ եթե այդպիսի ինստիտուտներ չկան խորհրդարանական հանրապետություններում, ապա դրանցում, որպես կանոն, բավականին մանրամասն ու կենտրոնացվածության սկզբունքով կարգավորված են երկրի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Դրա դասական օրինակը Լիտվայի Հանրապետության Սահմանադրությունն է, որը առանձին գլուխում այլ հարաբերությունների հետ միասին սահմանում է հայրենիքի պաշտպանության պարտականությունը և իրավունքը, պաշտպանության պետական խորհրդի կազմը և կարգավիճակը, Զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը (Հանրապետության նախագահը), զինվորական և արտակարգ դրության ռեժիմների հիմունքները<sup>220</sup>: Զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը հանրապետության նախագահի ձեռքում կենտրոնացնելը և Պաշտպանության պետական խորհրդի ստեղծման սահմանադրական հնարավորությունն արդեն իսկ նախադրյալներ են ստեղծում պատերազմական շրջանի կառավարման սկզբունքների իրացման համար: Որպես կանոն, ռազմական կառավարման բարձրագույն մարմնի՝ պաշտպանական (անվտանգության, պաշտպանության, երբեմն նաև բարձրագույն) խորհրդի հիմնադրումը և դրա կազմակերպակառուցվածքային ու գործառութային առանձնահատկություններն ապահովում են ռազմական ոլորտի կառավարման կենտրոնացվածությունը և՛ խաղաղ, և՛ պատերազմական ժամանակաշրջանում:

Նախագահական կամ կիսանախագահական հանրապետություններում պաշտպանական հարաբերությունների կառավարմանը արդեն իսկ բնորոշ է կենտ-

<sup>220</sup> St' u Konstitucija Litovskoj Respubliki (prinjat 25 oktjabrja 1992 g., s izmenenijami ot 20 ijunja 1996 g. i 12 dekabrja 1996 g.) //Konstitucii stran СНГ i Baltii /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристь, 1999, էջ 550-595, հոդվածներ 135-146:

րոնացվածությունը: Օրինակ են ԱՄՆ-ն, Ֆրանսիան, ՌԴ-ն: Օրինակ՝ ՌԴ Սահմանադրությամբ պաշտպանական հարաբերությունների կարգավորման մոդելն աչքի է ընկնում բարձր աստիճանի կենտրոնացվածությամբ, այն է՝ այդ ոլորտի բոլոր մարմինների ուղղակի ենթակայությունը ՌԴ նախագահին, ինչն ապահովում է պետության գլխի բավականին բարձր օպերատիվությունը, արագությունը և այլ ռազմական կառավարման այլ սկզբունքների կենսագործումը<sup>221</sup>: Այս ոլորտում լիազորություններ ունեն նաև Դաշնային ժողովը և կառավարությունը, սակայն դրանք ավել շատ երկրորդական կամ սպասարկող-ապահովող նշանակություն ունեն:

### § 3. Պատերազմական իրավիճակում արագացված օրենսդրման կառուցակարգերի այլ երկրների սահմանադրական փորձը

Պաշտպանության գործառույթի իրականցումը ենթադրում է իրավական ապահովում: Պաշտպանության կազմակերպման հարցերով իրավական միջոցները կապված են ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենքների, գործադիր մարմինների նորմատիվ ակտերի, ինչպես նաև բուն ռազմական կառավարման մարմինների նորմատիվ ակտերի մշակման և ընդունման հետ<sup>222</sup>: Ընդ որում, արդի շրջանում բացի գուտ իրավական կարգավորման, այսինքն՝ իրավաստեղծագործության իրականցումից պաշտպանության գործառույթի կենսագործման իրավական ձևին վերագրում

<sup>221</sup> ՌԴ Սահմանադրության 87 հոդ. նախագահին համարում է զինված ուժերի գերագույն հրմանատար: Նա ազրեսիայի կամ դրա անմիջական վտանգի դեպքում ՌԴ տարածքում կամ դրա առանձին մասերում հայտարարում է ռազմական դրություն՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով Դաշնային խորհրդին և պետական Դումային: ՌԴ նախագահը դաշնային սահմանադրական օրենքին համապատասխան կարող է հայտարարել արտակարգ դրություն (տե՛ս Конституция Российской Федерации: Проблемный комментарий. Отв. ред. В.А. Четвернин.- М., 1997, с. 186-195): Նախագահը ձևավորում և գլխավորում է Անվտանգության խորհուրդը (ՌԴ անվտանգության խորհրդի կազմի, իրավասության, կառուցվածքի մասին տե՛ս **Росинский Б.В.**, Административное право. – М.: Право и закон, 2001, էջ 590-595): Նա հաստատում է ՌԴ ռազմական դրությունը, նշանակում և ազատում է ՌԴ ԶՈւ բարձրագույն հրամանատարությանը:

<sup>222</sup> Այսպես ռազմական անվտանգության տեսությունը համակարգված ձևով ներկայացնելով ոլորտի իրավական հարաբերությունները՝ առանձնացնում է դրա իրավական կարգավորման այնպիսի կողմեր, ինչպես ռազմական անվտանգության իրավական կարգավորումը, դրա մեթոդները, ռազմական անվտանգության ապահովման իրավական գործունեությունը ենթագործառույթի կառուցվածքում, ռազմական անվտանգության ապահովման սոցիալ-իրավական հարցերը և այլն (տե՛ս **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 83-84, 95-96, 114-116 և այլն, ինչպես նաև Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, էջ 27):

են նաև իրավապաշտպան տեսակը (ենթագործառույթը), որպես զինծառայողների իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական գործունեություն<sup>223</sup>:

Իրավական ապահովման հիմնական միջոցն օրինաստեղծագործությունն է, որովհետև արդի իրավական պետության մեջ պետական կառույցների գործունեության մեծագույն, գերակշռող մասը ենթարկված է օրենսդրական կարգավորման<sup>224</sup>: Հայաստանի Հանրապետության անկախության շրջանում օրենսդիր իշխանության մարմինները՝ սկզբում Գերագույն խորհուրդը, այնուհետև Ազգային ժողովն իրականացրել է բավական մեծ ծավալով օրենսդիր գործունեություն՝ ընդունելով օրենքներ, որոնք կարգավորում են պետության պաշտպանական գործունեությունը:

Անշուշտ, օրենսդրական գործունեությունը պաշտպանական ոլորտում ունի կարևոր դերակատարություն, բայց իրավական ապահովումն իրականացվում է նաև ենթաօրենսդրական իրավաստեղծագործության միջոցով: Սակայն պաշտպանական գործառույթի իրավական ապահովման ենթագործառույթի շրջանակներում հիմնախնդրային է ոչ թե ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը, այլ օրինաստեղծագործությունը: Պատճառն այն է, որ ի տարբերություն իրավաստեղծագործության այլ տեսակների, օրինաստեղծագործությունը բարդ, ձևականացված ընթացակարգ է՝ բաղկացած օրենքի ստեղծման փուլերից, որն սկսվում է օրենսդրական նախաձեռնությամբ և ավարտվում օրենքի պաշտոնական հրապարակմամբ: Օրենսդրական գործընթացն իրավաստեղծագործության տեսակներից մեկն է, որը ներառում է 4 հիմնական փուլ՝ 1) օրենսդրական նախաձեռնություն, 2) օրինագծի քննարկում, 3) օրենքի ընդունում, 4) օրենքի հրապարակում<sup>225</sup>: Օրինաստեղծագործությունն իրավաստեղծագործության տեսակներից մեկն է, որն առավել կարգավորված վարույթ է, ի տարբերություն այլ նորմաստեղծ գործընթացներից: Ընդ որում

---

<sup>223</sup> St' u Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, էջ 27; **Фомин С.А.**, Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 116:

<sup>224</sup> Ռազմական իրավունքի աղբյուրներ են համարվում Սահմանադրությունը, օրենքները, ռազմական կանոնադրությունները /օրենք կամ ենթաօրենսդրական ակտեր/, կառավարության որոշումները և ռազմական կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը: Ռազմական կառավարման ակտերի հատկանիշներն են՝ ենթաօրենսդրականությունը, ավտորատիրությունը, իմպերատիվությունը, իսկ դրանց հիմնական տեսակներն են՝ հրամանները, կանոնադրությունները, հրահանգները, ուղեցույցները, գլխավոր ցուցումները (տե՛ս **Мигачев Ю.И., Тихомиров С.В.**, Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, էջ 16-20):

<sup>225</sup> St' u Теория государства и права: курс лекции /под. ред. Н.И. Матузова и А.В. Малько. 2-е изд., перераб. и доп., М., 2005, էջ 415:

փուլերի շրջանցումն անհնար է, որովհետև ամեն մի նախորդ փուլ նախապատրաստում է հաջորդին, նախադրյալ է հաջորդի համար:

Օրենսդրական գործընթացը, որպես իրավաբանական վարույթ ունի երկու նշանակություն՝ գործունեության կարգ, այսինքն՝ օրենքի ստեղծման կարգ և բուն գործունեությունը<sup>226</sup>: Սովորական պայմաններում օրենսդիր մարմինը կիրառելով օրենսդրման ձևականացված ընթացակարգերը՝ կարողանում է հիմնականում ապահովել երկրի պաշտպանության օրենսդրական սպասարկումը: Սակայն պատերազմի ժամանակ ձևականացված և ժամանակատար ընթացակարգերը, որ խաղաղ ժամանակ որակյալ և արդյունավետ օրենսդրման երաշխիք էին, կարող են վերածվել ռազմական գործողությունների պլանավորման ու վարման, պաշտպանության խնդիրների լուծման խոչընդոտի, արգելքի, թուլացնել արագության, հանկարծակիության ու արդյունավետության պահանջները: Օրենսդրական գործընթացի բարդ ընթացակարգի արդյունավետությունը ոչ միայն պատերազմական ժամանակի, այլ նաև սովորական ժամանակաշրջանում խնդիրներ հարուցող գործոն է: Ընդ որում, այդ խնդիրները նոր չեն, այլ պառլամենտարիզմի պատմության սկզբնավորմանը զուգակցող երևույթ: Հետևաբար, բազմաթիվ երկրներ, այդ թվում առաջադեմ կոչված իրավական պետությունները, մշակել են խորհրդարանական օրենսդրման ընթացակարգերի արագացված տարբերակներ: Սահմանադրական պրակտիկայում նման իրավիճակը ոչ թե ուտոպիստական ենթադրություն է, այլ իրական կացություն, որը շատ հաճախ է հանդիպել պատմության ընթացքում: Դրա համար երկար սահմանադրական զարգացման պատմական փորձ ունեցող երկրների սահմանադրություններն օգտագործում են «Խորհրդարանի բացակայություն կամ դրա ժամանակին գումարման օբյեկտիվ անհնարինություն» հասկացությունը<sup>227</sup>:

Նման ընթացակարգեր գործել են նաև Հայաստանի առաջին հանրապետության օրինաստեղծագործության կառուցակարգում՝ տարբեր ձևերով՝ օրենքների ըն-

<sup>226</sup> St' u Konstitucionnoe (gosudarstvennoe) pravo zarubezhnykh stran: V. 4- t. / otv. red. prof. B.A. Strashun, M., BEK, 2000, T. 1-2, էջ 531:

<sup>227</sup> St' u օրինակ Конституция Греции, 1975 г., հոդված 48, մաս 2 // հղումն ըստ [http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/greece/greece-r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/greece/greece-r.htm):



դունում խորհրդարանական հանձնաժողովների միջոցով, կառավարությանը պատվիրակված օրենսդրման իրավագործությունը և այլն<sup>228</sup>:

Այսպիսով, ռազմական կառավարման սկզբունքները հատկապես պատերազմի ժամանակ պահանջում են ստրատեգիական գործողությունների հանկարծակիություն, արագություն, վճռականություն և անընդհատություն. զինված ուժերի տարբեր տեսակների համաձայնեցված կիրառում, զինված ուժերի անշեղ և անընդհատ դեկավարում, զինված ուժերի ստրատեգիական գործողությունների բազմակողմանի նախապատրաստում, ստրատեգիական նախաձեռնության նվաճում և պահպանում, զորքերի, ուժերի ու հարվածների մանևր: Դրան հակառակ խորհրդարանական օրինաստեղծագործությունն իր բնույթով դանդաղաշարժ է, հատկապես, եթե խորհրդարանում չկա քաղաքական անվերապահ մեծամասնություն: Մյուս կողմից պատերազմի ժամանակ հնարավոր են իրավիճակներ, երբ խորհրդարանի նստաշրջանների ու նիստերի գումարման պարբերականությունը խախտվի, կամ ընդհանրապես դրանք գումարելը դառնա անհնարին: Այս դեպքում առաջանում է հակասություն ռազմական նպատակահարմարության և օրինականության սկզբունքի միջև, որի լուծման խնդիրներից մեկն էլ օրենքների զանգվածային անտեսումն ու խախտումն է: Սակայն այս ուղին չի կարելի համարել պատշաճ, իրավաբանորեն ու քաղաքականապես ճիշտ, որովհետև այդ գործընթացում կամ նման գործելաոճի դեպքում հնարավոր են նաև չարաշահումներ, իրավական հիմնարար սկզբունքների ու նորմերի խախտումներ: Այս ամենը կանխելու և օրենսդրման կառուցակարգը պատերազմական կանոններին ու պահանջներին համապատասխանեցնելու համար շատ երկրներ, նաև իրենց պատմական փորձից ելնելով՝ նախատեսել են սահմանադրական ինստիտուտներ, որոնք գործողության մեջ են դրվում միայն պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ և կոչված են արագացնելու ու անընդհատ դարձնելու երկրի պաշտպանության օրենսդրական կառուցակարգը: Ինչպես վերը նշեցինք, այսպիսի լուծումներ եղել են նաև Հայաստանի առաջին հանրապետության օրինաստեղծագործության կառուցակարգում: Սակայն պատերազմի կամ ռազմական

---

<sup>228</sup> Տե՛ս **Ա.Գ. Վաղարշյան**, Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 30-33, 44-69, 143-166, նույնի Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 113-129, 267-272, նույնի Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.): Եր., Եր. համ. հրատ., 2006, 208 էջ

դրության ժամանակ օրենսդրման արագացված կառուցակարգեր մշակվել և ամրագրվել են նաև արդի պետությունների սահմանադրություններով: Որպես օրինակ կարող ենք մատնանշել եվրոպական մի քանի հենց խորհրդարանական հանրապետությունների՝ Իտալիայի, Գերմանիայի և Հունգարիայի Սահմանադրությունները<sup>229</sup>:

**Գերմանիայի Սահմանադրությունն** ամրագրում է պատերազմի դեպքում սովորական սահմանադրական կառավարման համակարգի զանազան տարրերի մի քանի իրավական փոխակերպումներ, որոնցով պաշտպանական ոլորտի իրավագործ մարմինների մի մասը ձեռք են բերում լրացուցիչ լիազորություններ, որոշ մարմինների լիազորությունները սահմանափակվում են, ինչպես նաև գործողության մեջ են մտնում օրենսդրման ընթացակարգի արագացման միջոցառումներ<sup>230</sup>: Այդ Սահմանադրությունը ամրագրում է, որ հողերի օրենսդրական իրավասության հարցերով դաշնությունը պաշտպանության դրության ժամանակ ձեռք է բերում համատեղ օրենսդրման իրավունք, ինչպես նաև՝ դաշնային օրենքներով հիմնական իրավունքների հնարավոր սահմանափակումները և կասեցումները (հոդված 115-с)<sup>231</sup>: Խորհրդարանի երկու պալատները ձևավորում են Միավորված կոմիտե, որի անդամների 2/3 կազմում են Բունդեսթագի պատգամավորները՝ նշանակված խորհրդարանի խմբակցությունների համամասնության հիման վրա, 1/3-ը՝ Բունդեսթագի անդամները՝ մեկ ներկայացուցիչ ամեն մի հողից: Կառավարությունը պարտավոր է միավորված կոմիտեին տեղեկութավորել «երկրի պաշտպանության վիճակին վերաբերող պլանների մասին»: Միավորված կոմիտեն ձայների բացարձակ, իսկ անհրաժեշտության դեպքում սովորական մեծամասնությամբ կարող է արձանագրել, որ անհաղթահարելի արգելքները խոչընդոտում են Բունդեսթագի գումարմանը կամ այն ընդունակ չէ որոշումներ կայացնելու: Այդ փաստի արձանագրման իրավական հետևանքով Բունդեսթագը և Բունդեսրաթը փոխարինվում են Միավորված կոմիտեյով, որն իր վրա է վերցնում խորհրդարանի պալատների իրավասության իրականացումը: Անհրաժեշտության դեպքում Միավորված կոմիտեն ձայների մեծամասնությամբ

<sup>229</sup> Այդ երկրներ սահմանադրությունները տե՛ս և Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 81, 122-125, 146, 162, 382-391,

<sup>230</sup> Գերմանիայի ռազմական իրավունքի մանրամասների մասին տե՛ս և **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” - М., “За права военнослужащих”, 2004, էջ 572-579;

<sup>231</sup> Գերմանիայի դաշնային Հանրապետության Սահմանադրությունը տե՛ս և Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 128-173:

կարող է ընտրել դաշնային կանցլեր կամ արտահայտել անվստահություն նրան<sup>232</sup>: Միավորված կոմիտեի լիազորությունները սահմանափակ են: Կոմիտեն չի կարող կատարել դաշնային տարածքների փոփոխություն, գերագույն իշխանությունը հանձնել միջպետական ինստիտուտների, փոխել կամ վերացնել օրենքը, կասեցնել Սահմանադրության գործողությունը: Միավորված կոմիտեի ընդունած օրենքները և որոշումները դադարում են գործել պաշտպանության դրությունը վերացնելուց 6 ամիս հետո, եթե մինչ այդ դրանք չեն վերացվել Բունդեսթագի և Բունդեսրաթի որոշումներով:

Գերմանիայի Սահմանադրությունը նախատեսում է պատերազմի ժամանակ պետական մարմինների անընդհատության ապահովման մի շարք այլ ինստիտուտներ: Դրանցի են օրինակ խորհրդարանի պալատների, նախագահի, սահմանադրական դատարանի անդամի<sup>233</sup>, դաշնային կանցլերի լիազորությունների շարունակման ընթացակարգերը, Բունդեսթագի արձակման արգելք:

**Իտալիայի Սահմանադրությամբ** ամրագրված է պատվիրակված օրենսդրության ինստիտուտը, այսինքն՝ խորհրդարանի օրենսդրական լիազորությունների փոխանցումը ճգնաժամային կամ ռազմական դրության պայմաններում, ինչը պաշտպանական հարաբերությունների իրավական կարգավորման կենտրոնացման ու օպերատիվացման միջոց է (76 և 77 հոդվածներ)<sup>234</sup>: Պատերազմական դրության համար նախատեսված այլ էական փոխակերպումներ Իտալիայի Սահմանադրությունը չի նախատեսում, որովհետև օրենքին համաձայն ստեղծվում է Պաշտպանության գերագույն խորհուրդ, որը գլխավորում է զինված ուժերի հրամանատարը՝ Հանրապետության նախագահը<sup>235</sup>:

**Հունգարիայի** խորհրդարանական հանրապետության Սահմանադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ պատերազմական իրավիճակի համար նախատեսված են օրենսդիր և գործադիր իշխանության կենտրոնացման, օպերատիվաց-

<sup>232</sup> Տե՛ս Գերմանիայի Սահմանադրության 53 a հոդվածը, 115 H հոդվածի 1-2 մասերը:

<sup>233</sup> Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքը Միավորված կոմիտեն կտորդ է փոխել, եթե Սահմանադրական դատարանի կարծիքով այդպիսի փոփոխությունն անհրաժեշտ է (տե՛ս հոդված 115g):

<sup>234</sup> Տե՛ս Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1974 г. /Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, հոդվ. 76, 78: Իտալիան Եվրոպական կոնվենցիայի 6-րդ արձանագրությամբ մահապատժի արգելումն ընդունում է միայն խաղաղ ժամանակաշրջանում՝ պատերազմի ժամանակ իրեն իրավունք վերապահելով դրա կիրառումը:

<sup>235</sup> Տե՛ս նույն տեղը:



դարան<sup>241</sup>: Ռազմական պատվիրակությունն ընտրվում է ամեն տարի, կազմված է 50 պատգամավորից, գործում է խորհրդարանի նախագահի (թալմանի) գլխավորությամբ: Այս մարմինը փոխարինում է խորհրդարանին (ռիկսդագին), երբ դա պահանջում է ստեղծված իրադրությունը: Ընդ որում իր գործունեության ձևերի մասին որոշումներն ընդունում է ռազմական պատվիրակությունը<sup>242</sup>:

Պատերազմի ժամանակ կառավարման սովորական կարգերի փոխակերպումներ են նախատեսում նույնիսկ կիսանախագահական կառավարման ձև ունեցող որոշ երկրներ, որոնք ունեն պաշտպանական հարաբերությունների կառավարման բավականին կենտրոնացված համակարգ նախագահի գլխավոր հրամանատար լինելու հետևանքով<sup>243</sup>: Օրինակ Ֆրանսիայի Սահմանադրության 38 հոդ, ամրագրում է պատվիրակված օրենսդրման օրդոնանսներ ընդունելու հնարավորությունը<sup>244</sup>:

Պատերազմական շրջանում պետական կառավարման այս խնդիրը հեղինակներից ոմանք բարձրացրել են դեռ այն ժամանակ, երբ ՀՀ կառավարման ձևը կիսանախագահական էր<sup>245</sup>: 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության 78 հոդվածը նախատեսում էր, որ կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող էր լիազորել կառավարությանն ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին: Այդ որոշումները ստո-

---

<sup>241</sup> St' u **Трикоз Е.Н.** «Конституционное регулирование вопросов обороны и использования вооруженных сил в зарубежных государствах Европы». /в. кн. «Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջ 288:

<sup>242</sup> St' u Конституция Швеции (Королевства Швеция) от 27 февраля 1974 г., «Կառավարման ձևը», գլուխ 13, § 2, § 3 //http://www.sweden4rus.nu/rus/info/juridisk/konstitucija\_shvecii

<sup>243</sup> Ֆրանսիայի ռազմական իրավունքի մանրամասների մասին տե՛ս **Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н.**, Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” - М., “За права военнослужащих”, 2004, էջ 585-586.

<sup>244</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Ардан Филипп**, Франция: государственная система: пер. с франц. - М.: Юрид. лит., 1994, էջ 87-89:

<sup>245</sup> St' u **Վաղարշյան Ա.**, «Հայրենիքի պաշտպանության խնդիրը և պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքների համակարգի վերաիմաստավորման անհրաժեշտությունը», ԼՂՀ դատական իշխանություն, §ԼՂՀ դատավորներ ՀԿ», Ստեփանակերտ, 2012, թիվ 1/5/, էջ 13-19, նույնի «Обороноспособность как принцип организации и деятельности государственного аппарата». Евразийский юридический журнал, № 12 (55), М., 2012, ст. 147-149, նույնի «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը», Հայկական բանակ, Եր., 2016, թիվ 2(88) էջ 45-53, նույնի Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 231-242, **Ա.Գ. Վաղարշյան, Լ.Վ. Բարսեղյան**, Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 1-2 (95-96). 2018, էջ 232-246:

րագրում է Հանրապետության Նախագահը<sup>246</sup>: Սակայն այդ հոդվածը չէր կարող ծառայել արտակարգ կամ պատերազմական իրավիճակում օրենսդրման օպերատիվության, արագության ապահովման միջոց, քանի որ նշված գործունեության ծրագիրը մշակվում էր նոր կառավարության կազմավորման ընթացքում: Հետևաբար, այդ ինստիտուտը պատերազմական վիճակում կարող էր կիրառվել, եթե ձևավորվեր նոր կառավարություն, որը կստանար իրավունք և կիրառեր «օրենքի ուժ ունեցող որոշումների» ինստիտուտը պատերազմական իրավիճակում:

Սահմանադրագետների մի մասի համար պատերազմի շրջանում օրենսդրումն արագացնելու առաջարկը կարող է անընդունելի լինել: Սակայն բարձրացված խնդրի լուծումը և օրենսդրման արագացված ընթացակարգի սահմանումը Սահմանադրության մեջ հրատապ խնդիր է: Որպեսզի ցույց տանք դրա անհրաժեշտությունը, բերենք կոնկրետ իրավիճակ և փորձենք գտնել դրա լուծումը: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» 2006 թ. դեկտեմբերի 5-ի ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի գ կետին համապատասխան՝ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում կարող են իրականացվել «ռազմական դրության իրավական ռեժիմին համապատասխանող ֆինանսական, վարկային, հարկային, մաքսային, սահմանային և բանկային պետական հատուկ քաղաքականություն, ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումներ»<sup>247</sup>: Հնարավոր է արդյո՞ք այս քաղաքականության մշակումն ու իրականացումն առանց օրենսդրական փոփոխությունների ու լրացումների փաթեթի: Ակնհայտ է, որ թվարկված ոլորտների հարաբերությունների մեծագույն մասը կարգավորվում է օրենքներով, հետևաբար քաղաքականության իրականացման միջոցներից հիմնականը վերածվում է օրենսդրումը: Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն ռազմական դրություն հայտարարվելուց հետո՝ ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում ՀՀ կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում ընթացիկ տարվա՝ ՀՀ պետական բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի

---

Թվարկված աշխատանքներում հիմնավորվում է պետական կառավարման նոր սկզբունքի, այն է՝ պաշտպանունակության ճանաչման ու կիրառման անհրաժեշտությունը:

<sup>246</sup> Այդ դրույթը 2005 թ. Սահմանադրության տեքստից հանվեց, իշխանությունների բաժանման սկզբունքին հակասելու պատրվակով:

նախագիծ, որին կցվում է ՀՀ կառավարության ծրագրերում փոփոխություններ կատարելու տեղեկանքը»: Այս իրավագործության կենսագործումն անպայմանորեն պահանջում է խորհրդարանական քննարկում և փոփոխությունների ու լրացումների կատարման վերաբերյալ օրինագծի ընդունում: Օրենսդիր մարմնին բնութագրական հատկանիշների շնորհիվ քննարկումը կարող է ձգձգվել, իսկ պատերազմի որոշակի իրավիճակներում հնարավոր վարկածներից է նաև խորհրդարանի աշխատանքի ձախողումը: Ի՞նչ պետք է անի կառավարությունը, շարունակի՞ պետական ֆինանսավորումը հին բյուջեի համամասնություններով, թե՞ շեղվելով դրանից՝ իր հայեցողությամբ փոփոխի ֆինանսական տարվա համամասնությունները: Բերված երկու օրինակներն արդեն իսկ համոզիչ փաստարկ են, որ պարզեցված օրենսդրման ընթացակարգը պատերազմական իրավիճակում անհրաժեշտ ինստիտուտ է:

Մարտունակությունը բանակի բնութագրական հատկանիշն է: Երկրի պաշտպանության կազմակերպման նպատակներից մեկն էլ դրա ապահովումն է և՛ ռազմաստրատեգիական, և՛ օպերատիվ տակտիկական ուղղություններով<sup>248</sup>: Այսպիսով, մարտունակությունը Զինված ուժերի կացությունն է, որը բնութագրում է նրա ընդունակությունը և պատրաստվածությունն՝ իր վրա դրված մարտական խնդիրների լուծմանը: Բայց այդ խնդիրների լուծումը կարող է զգալ արագացված օրենսդրական ապահովման պահանջ, որի չբավարարումը կարող է վնասել մարտունակությանը: Հետևաբար, պետական ապարատը պետք է այնպես կառուցվի, որ ընդհանուր պետական կառավարման կառուցակարգը, այդ թվում նաև օրենսդրումը չխոչընդոտի պաշտպանության խնդիրների կենսագործմանը:

Հետևաբար, իրավական ու սահմանադրական քաղաքականության հրատապ խնդիր է այդ հարցի խորքային իմաստավորումը և համաշխարհային առաջադեմ փորձին հետևելով ընտրել և ամրագրել պատերազմական իրավիճակի համար նախատեսված օրենսդրման պարզեցված և արագ ընթացակարգ, ինչը որպես պահեստային ինստիտուտ երաշխիք է հնարավոր պատերազմական իրադրության մեջ իրավիճակին ադեկվատ գործող դարձնել նաև օրենսդրման կառուցակարգը, ունենալ արագ արձագանքող, իրավիճակից բխող օրենսդրական լուծումներ: Որպես այդպի-

<sup>247</sup>Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունված է 2006 թ. դեկ. 5-ին, Համարը ՀՕ-258-Ն: Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.01.17/4(528), Հոդ. 27:

<sup>248</sup> Տե՛ս **Савенков А.Н.** Конституционная законность и военная безопасность России. М., 2002, էջ 41-42:

սի հնարավոր կառուցակարգ կարելի է նմանակել, փոխառել վերը քննարկված երկրներում պատերազմական դրության ժամանակաշրջանում գործող արագացված կառուցակարգերից մեկը, որը կապահովի ռազմաստրատեգիական, օպերատիվ և - տակտիկական կառավարման սկզբունքներին համապատասխանող երկրի պաշտպանության օրենսդրական կարգավորումը, չի առաջացնի հակաժողովրդավարական ռեժիմի կամ տարատեսակ չարաշահումների սպառնալիքներ ու վտանգներ:

#### **§ 4. Պաշտպանության նպատակով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորման հիմնախնդիրը**

Մարդու իրավունքների սահմանափակումը որպես հիմնախնդիր սահմանադրական կարգավորման պարբերական փոփոխությունների գործընթացում անընդհատ շոշափված ինստիտուտներից է<sup>249</sup>: Որպեսզի հասկանանք հարցի էությունը, փորձենք հարցը հետազոտել մի քանի ուղղություններով, այն է այդ ինստիտուտի իրավակարգավորումները 1995 թ., 2005 թ., 2015 թ. խմբագրություններով Սահմանադրություններում, այնուհետև Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայում, ինչպես նաև մի շարք երկրների սահմանադրական պրակտիկայում:

Հետազոտական այս ուղղությունների կենսագործման արդյունքում ստացված եզրակացությունները միավորելով հնարավոր կլինի ամբողջական պատկերացում կազմել խնդրի էության վերաբերյալ և առաջարկել հարցի լուծման իրավական տարբերակներ: Սակայն մինչ այդ ուղղություններով հետազոտությանն անցնելը, փորձենք ճշգրտել նախ խնդրի էությունը՝ մեր ատենախոսական հետազոտության ա-

---

<sup>249</sup> Իրավունքների սահմանափակման տեսության մասին տե՛ս **Арутюнян А.Ш.**, Грамматика свободы (проблемы постсоветского реализма).- Ереван, АРТ, 2007, с. 104-124: Արդի ընդհանուր մոտեցումներից մեկն էլ մարդու իրավունքների սահմանափակման խնդրին հանգում է նրան, որ «իրավունքի և ազատությունների սահմանափակման արգելքը» դիտարկվում է իրավական անվտանգության սկզբունքի բաղադրատարր, արդարության, հավասարության, մարդասիրության և իրավունքի այլ սկզբունքների խախտման անթույլատրելիության հետ միասին: Այս մոտեցումը առկա է վերջին տարիներին մշակված իրավական անվտանգության հայեցակարգի շրջանակներում (տե՛ս **Галузин А.Ф.** Правовая безопасность и ее принципы.- СПб., Издательство Р. Асланова. Юридический центр пресс, 2008. С. 236-262): Իրավունքների սահմանափակման տեսության մասին տե՛ս **Арутюнян А.Ш.**, Грамматика свободы (проблемы постсоветского реализма).- Ереван, АРТ, 2007, с. 104-124.



ռարկայի տեսանկյունից, ինչպես նաև «պաշտպանություն» կամ «պաշտպանության նպատակ» հասկացությունը:

Ներկա սահմանադրական իրավակարգավորումների խնդրահարույց լուծումն այն է, որ մի շարք իրավունքների օրենքով սահմանափակման նպատակների մեջ Սահմանադրությունը չի թվարկում «պաշտպանության նպատակը»: Վերջինիս ամենամոտ հասկացությունը, որ շրջանառվում է «օրենքով սահմանափակման ենթակա» կոնկրետ իրավունքի կամ ազատության սահմանափակման նպատակների թվարկման մեջ «պետական անվտանգության» նպատակն է: Սահմանադրության 2-րդ գլխում առկա առաջին հայացքից իրավատեխնիկական այս խնդիրը լուրջ իրավական հիմնահարց է, որն ունի գիտական մեկնաբանման կարիք: Այսպիսով, մարդու իրավունքների սահմանափակման ինստիտուտի իրավական հիմնահարցերի մեջ մեզ հետաքրքրում են միայն սահմանափակման նպատակները կամ շահերը:

ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ամրագրված էին 2-րդ գլխում (14-48 հոդվածներ): Մարդու իրավունքների սահմանափակման հարցում Սահմանադրության մեջ կիրառվել էր հետաքրքիր իրավատեխնիկական լուծում. բոլոր իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը Սահմանադրությունը կատարել էր ընդհանուր կարգավորման միջոցով, ի դեմս 44 և 45 հոդվածների: 45 հոդվածը կարգավորում էր մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակումը ռազմական կամ արտակարգ դրության դեպքերում: Այդ հոդվածը Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները բաժանում էր երկու խմբի, չսահմանափակվող (Սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածներով ամրագրված) և սահմանափակվող (Սահմանադրության 14-16, 18, 19, 21-38, 40-42 հոդվածներով ամրագրված):

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրավունքները որևէ կերպ ենթակա չէին սահմանափակման: Իսկ սահմանափակվող իրավունքներն այդ դրությունների ժամանակ կարող էին օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել: Ռազմական դրության հաստատումն ունի մեկ հիմնական նպատակ երկրի պաշտպանության շահերը: Այս դեպքում խնդրի, այսինքն՝ սահմանափակման բովանդակու-

յունը, իրավունքների և ազատությունների չափը, սահմանները տեղափոխվում էին ռազմական կամ արտակարգ դրության վերաբերյալ օրենքներ:

1995 թ. Սահմանադրության 44 հոդվածը սահմանում էր, որ 23-27 հոդվածներում թվարկված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով<sup>250</sup>, «եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Հոդվածի իմաստից բխում է, որ այս տեսակի սահմանափակման ձևը միայն օրենքն էր և թվարկվում էր սահմանափակման հիմքերը, այսինքն՝ այն շահերը, որոնք պաշտպանելու համար օրենսդիրը դիմում էր օրենքով սահմանափակման:

Ինչպես տեսնում ենք այդ հիմքերի և (կամ) շահերի շրջանակում չկա պաշտպանությունը: Դրան հարակից շահ կարող ենք համարել «պետական անվտանգությունը»: Այս հասկացությունների հարաբերակցության ճշգրտումը թողնենք ստորև և փորձենք ամփոփել:

Մարդու և քաղաքացու մի շարք իրավունքների և ազատությունների օրենքով սահմանափակման հիմքերի-շահերի-նպատակների շարքում 1995 թ. Սահմանադրությունը չէր նախատեսում «պաշտպանությունը»: Հետևաբար՝ այդ իրավունքների սահմանափակման իրավական ձևը բուն Սահմանադրության մեջ սահմանափակման նախատեսումն էր: Օրինակ՝ 25 հոդվածում ամրագրված միավորումներ կազմելու, արհեստակցական միություններ կամ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքները կարող էին սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ<sup>251</sup>, իսկ, օրինակ՝ ընտրելու և ընտրվելու իրավունքից Սահմանադրությունն ուղղակիորեն զրկում էր դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիներին<sup>252</sup>: Ակն-

<sup>250</sup> Խոսքը գնում էր մտքի, խղճի և դավանանքի ազատության, կարծիքը պնդելու, խոսքի ազատության, տեղեկատվության, միավորումներ ու կուսակցություններ կազմելու, ժողովների ու հանրահավքների անցկացնելու, պետական կառավարմանը մնասնակցելու իրավունքների մասին (տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեով 1995 թ. հուլիսի 5-ին: Եր.: Մխիթար Գոշ, 1997, 48 էջ):

<sup>251</sup> Տե՛ս 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրություն, հոդված 25-ի 3-րդ մասը:

<sup>252</sup> Տե՛ս 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրություն, հոդված 27-ի 2-րդ մասը:

հայտ է, որ առաջին սահմանափակման նպատակը երկրի պաշտպանության շահերն էին:

Սահմանադրության 2005 թ. խմբագրությունը պահպանեց 1995 թ.-ի իրավատեխնիկական կանոնները մարդու իրավունքների սահմանափակումները կարգավորելիս<sup>253</sup>: Սակայն Սահմանադրության 43 հոդվածի պաշտպանության ենթակա շահերի շրջանակում և իրավական եզրույթների (ձևակերպումների) մեջ կատարեց որոշակի խմբագրություն, մասնավորապես՝ մարդու և քաղաքացու իրավունքները «... կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»<sup>254</sup>:

1995 թ. և 2005 թ. խմբագրություններով Սահմանադրությունների այդ հոդվածների տեքստերի համեմատությունից երևում է, որ 2005 թ. Սահմանադրությունը շահերի շրջանակից հանել էր «հասարակական անվտանգությունը», ավելացրել էր «հանցագործությունների կանխումը» որպես սահմանափակման նպատակ (շահ), իսկ «հանրության բարքեր» ձևակերպումը փոխարինել էր «հանրության բարոյականություն» բանաձևով: Այսպիսով, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն մասնակիորեն խմբագրելով պահպանեց արդեն այդ խմբագրության 23-25, 27, 28-30, 30.1 հոդվածներով, 32 հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավունքների ու ազատությունների, օրենքով սահմանափակման հիմքերը, որոնցում «պաշտպանությունը» նախատեսված չէր<sup>255</sup>:

<sup>253</sup> Մարդու իրավունքների սահմանափակումների վերաբերյալ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության իրավակարգավորումների առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի – Եր.: Իրավունք, 2010, էջեր 508-527:

<sup>254</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2005 թ. նոյեմբերի 27-ին - Եր., «Բավիղ» ՍՊԸ տպարան, 2005, 64 էջ (ՀՀ ՊՏ 05.12.05, հատուկ թողարկում):

<sup>255</sup> Նախորդ՝ 1995 թ. խմբագրության 23-27 հոդվածներում ամրագրված իրավունքներին ավելացվում էին միավորումներ, արհմիություններ և կուսակցություններ կազմելու և անդամագրվելու, հավաքներ անցկացնելու, ընտրվելու, ընտրելու և հանրաքվեին մասնակցելու, քաղաքացիության, գործադուլի իրավունքները: Միաժամանակ դրանց շրջանակից հանվում էր 26 հոդվածով ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2005 թ. նոյեմբերի 27-ին - Եր., «Բավիղ» ՍՊԸ տպարան, 2005, 64 էջ (ՀՀ ՊՏ 05.12.05, հատուկ թողարկում):

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն արմատականորեն վերանայեց մարդու իրավունքների սահմանափակման ինստիտուտը և՛ իրավատեխնիկական, և՛ բովանդակային կողմերով<sup>256</sup>: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (76 հոդված) պահպանեց նախորդ խմբագրությամբ սահմանադրությունների հիմքում ընկած հայեցակարգը<sup>257</sup>: Սակայն նախկին երկու խմբագրություններում առկա սահմանափակման ընդհանուր հոդվածը (հոդված 43. Օրենքով սահմանափակվող իրավունքներ) անհետացավ սահմանադրության տեքստից: Սահմանադրության հեղինակները դրա փոխարեն Սահմանադրության 2-րդ գլխի կոնկրետ իրավունքը կամ ազատությունն ամրագրող հոդվածում սահմանել են դրանց սահմանափակման հիմքերը՝ «նպատակ» ձևակերպմամբ: Օրինակ՝ 42 հոդվածում ամրագրված կարծիքի արտահայտման ազատությունը, համաձայն այդ հոդվածի 3-րդ մասի, «կարելի է սահմանափակել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Այս բնույթի հոդվածի մաս ձևակերպումներ կան ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 2-րդ գլխի (23-81 հոդվածներ) 10-ից ավել հոդվածներում<sup>258</sup>: Ընդ որում, սահմանափակման հիմքերն այդ հոդվածներում հիմնականում կրկնվում են և դրանց թվում նորից չկա «պաշտպանության նպատակը»: Բացի այդ նշված ձևակերպումները շատ դեպքերում կրկնում են 2005 թ. Սահմանադրության 43 հոդվածի ընդհանուր ձևակերպումը, երբեմն դրսևորելով պաշտպանության ենթակա նպատակների շրջանակի ընդլայնման կամ նեղացման քայլեր: Օրինակ, ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման նպատակների մեջ թվարկված է «հանցա-

<sup>256</sup> 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ մարդու իրավունքների սահմանափակման չափանիշների ու սկզբունքների հարցում տեխնիկաիրավական ու բովանդակային նորամուծությունների մասին մանրամասն տե՛ս **Վաղարշյան Ա.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավական վերլուծություն), Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն, Եր., 2017, № 3 (24), էջ 3-16:

<sup>257</sup> Այդ մասին տե՛ս Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը և հետագա բարելավման խնդիրը. – Եր.: Տիգրան Մեծ, 2017, էջ 283-300:

<sup>258</sup> Այդ հոդվածներն են՝ 25 (ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիություն), 31 (մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիություն), 32 (բնակարանի անձեռնմխելիություն), 33 (հաղորդակցության ազատություն ու զաղտնիություն), 34 (անձնական տվյալների պաշտպանություն), 40 (ազատ տեղաշարժվելու), 41 (մտքի, խղճի և կրոնի ազատություն), 42 (կարծիքի արտահայտման ազատություն), 44 (հավաքների ազատություն), 45 (միավորումների ազատություն), 48 (քաղաքացիության իրավունք),

գործությունների կանխումը կամ բացահայտումը», իսկ կարծիքն արտահայտելու ազատության սահմանափակման նպատակների մեջ դա չկա:

Հասկանալու համար Սահմանադրության տեքստի այս վայրիվերումները փորձենք պարզել, թե սահմանադրական հանձնաժողովը որտեղից է ընդօրինակել իրավունքների ու ազատությունների սահմանափակման դրույթների շարադրման տեխնիկան և բովանադակությունը՝ հիմքերի (կամ նպատակների) առումով: Նորմատիվ դրույթների շարադրման նման տեխնիկա կիրառվել է Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում: Կոնվենցիայի 8 հոդվածի (մասնավոր և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք), 9 հոդվածի (մտքի, խղճի և կրոնի ազատություն), 10 հոդվածի (կարծիքի արտահայտման ազատություն), 11 հոդվածի (ժողովների ու միավորումների ազատություն) 2-րդ մասերում սահմանված են այդ իրավունքների սահմանափակման «շահերը», «նպատակները»<sup>259</sup>:

Սակայն տեխնիկական կողմի ընդօրինակումից բացի, ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը «հիմքերի», «նպատակների», «շահերի» շրջանակի հարցում չունի ոչ մի ընդհանրություն ՄԻԵԿ-ի հետ: Այս պնդման հիմքը նշված նպատակների համեմատությունն է: Այսպես, օրինակ՝ կարծիքն արտահայտելու ազատության սահմանափակման նպատակների շրջանակում ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 2-րդ մասը թվարկում է ա) պետական անվտանգությունը, բ) հասարակական կարգը, գ) առողջությունը և բարոյականությունը, դ) այլոց պատիվը ու բարի համբավը, ե) այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ մասը թվարկում է հետևյալ նպատակներն ու շահերը. ա) պետական անվտանգությունը, բ) տարածքային ամբողջությունը, գ) հասարակական անդորրը, դ) անկարգությունների և հանցագործությունների կանխումը, ե) առողջությունը և բարոյականությունը, զ) այլոց բարի համբավը, է) այլոց իրավունքները, ը) կոնֆիդենցիալ կարգով ստացած տեղեկույթի հրապարակման կանխումը, թ) արդարադատության հեղինակության ու անկողմնակալության ապահովումը:

51 (տեղեկություններ ստանալու իրավունք), 60 (սեփականության իրավունք):

<sup>259</sup> Այդ հիմքերի, շահերի, նպատակների վերլուծության մասին տե՛ս **К. Эжугтайн** Основные права и свободы. по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, էջ 60-70:

Հենց միայն պաշտպանվող նպատակների շրջանակի տարբերությունը (ՀՀ-ում դրանք հինգն են, իսկ ՄԻԵԿ-ում 9-ը) արդեն իսկ վկայում է, որ ՀՀ Սահմանադրության մեջ տեղի է ունեցել «նպատակների» այսպես ասած ստեղծագործական վերախմբագրում, նախ շրջանակի նվազեցում, ինչպես նաև բովանդակության փոփոխություն: Սահմանադրության 2-րդ գլխի օրենքով սահմանափակվող իրավունքների սահմանափակման նպատակների շրջանակի նման վերախմբագրում նկատում ենք նաև այլ հոդվածներում<sup>260</sup>:

Արված վերլուծությունների ու մեկնաբանությունների արդյունքում կարող ենք ձևակերպել հետևյալ միջանկյալ եզրակացությունները.

1. Միայն օրենքով սահմանափակվող մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման նպատակների շրջանակների սահմանման հարցում ՀՀ Սահմանադրությունը միայն տեխնիկական շարադրման տեսանկյունից է հետևել ՄԻԵԿ-ին:

2. Սահմանափակման նպատակների կամ դրանով պաշտպանվող շահերի շրջանակի հարցում չկա ուղղակի փոխառում, հետևաբար դրանք ի համեմատ ՄԻԵԿ-ի, ՀՀ Սահմանադրության մեջ ենթարկվել են որոշակի փոփոխությունների, և՛ դրանց շրջանակի տեսանկյունից (կատարվել է դրանց և՛ նեղացում, և՛ ընդլայնում), և՛ բովանդակային առումով<sup>261</sup>:

3. ՀՀ գործող Սահմանադրության օրենքով սահմանափակվող իրավունքների սահմանափակման «նպատակների» ու «շահերի» շրջանակի մեջ չկա «պաշտպանությունը»: Ընդդիմախոսները կարող են պնդել, որ ՄԻԵԿ-ում ի վերջո չկա «պաշտպանության» շահը կամ նպատակը որպես մարդու իրավունքների սահմանափակ-

<sup>260</sup> Դա ակնհայտ է դառնում ՄԻԵԿ-ի 9-10 հոդվածների, ինչպես նաև թիվ 1 Արձանագրության 1 հոդվածի (սեփականության իրավունքը), թիվ 4 Արձանագրության 2 հոդվածի (տեղաշարժման ազատությունը) և ՀՀ Սահմանադրության 25, 31-34, 40-42, 44-45, 60 հոդվածների համեմատական վերլուծությունից:

<sup>261</sup> Որպես բովանդակային փոփոխության օրինակ կարող ենք նշել սեփականության իրավունքի սահմանափակումը: ՄԻԵԿ-ի թիվ 1 Արձանագրություն 1 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «նախորդ դրույթը չի նսեմացնում պետության իրավունքներն ապահովելու այնպիսի օրենքների կատարումը, որոնք նրան պատկերացվում են անհրաժեշտ սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, ընդհանուր շահերին համապատասխան կամ հարկերի կամ այլ հոդվածների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար» (տե՛ս Протокол № 1 к Конвенции о защите прав человека и основных свобод (Париж, 20 марта 1952г.) с изменениями от 11 мая 1994 г. //К. Экштайн Основные права и свободы. по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, էջ 428-429): ՀՀ Սահմանադրության 60 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների

ման արդարացում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ՄԻԵԿ-ը պաշտպանական ոլորտի վերաբերյալ ունի մի քանի վերապահումներ, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանական ոլորտին ՄԻԵԿ-ն ունի հատուկ վերաբերմունք: Այսպես ՄԻԵԿ-ի հոդված 15-ը պետություններին իրավունք է տալիս հրաժարվել (հետ կանգնել) պարտավորությունների կատարումից արտակարգ իրադրություններում: Վերջինիս տակ ՄԻԵԿ-ի 15 հոդվածի 1-ին մասը հասկանում է պատերազմը կամ այլ արտակարգ դրությունը, որ սպառնում է ազգի գոյությանը: ՄԻԵԿ-ից նման հիմքով շեղումները չեն վերաբերում միայն կյանքի իրավունքին (հոդված 2), կտտանքների արգելքին (հոդված 3), ստրկության և անազատ կացության արգելքին (հոդված 4, 1-ին կետ), բացառապես օրենքով պատիժ կիրառելը (հոդված 7):

Պաշտպանության շահերին առանձնահատուկ վերաբերմունքը հաստատում է նաև 6-րդ արձանագրության 2 հոդվածը, որը պետությանն իրավունք է տալիս իր օրենսդրությամբ նախատեսել մահապատիժ պատերազմի կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի ժամանակ կատարված արարքների համար<sup>262</sup>:

4. «Երկրի պաշտպանության նպատակ» հասկացությանն ամենամոտ հասկացությունը, որ կա ՀՀ Սահմանադրությամբ թվարկված «շահերի» կամ «նպատակների» շրջանակում, «պետական անվտանգությունն» է: «Պետական անվտանգություն» և «պաշտպանություն» առնչության ոչ միայն տեսական, այլ կարևոր գործնական խնդիրը լուծելու համար փորձենք վեր հանել և համեմատել այդ հասկացությունների գիտական բնորոշումները:

Նախ, եթե համեմատում ենք ռազմական արվեստի տեսության և անվտանգաբանության մոտեցումները, ապա նկատում ենք էական տարբերություն «պաշտպանություն» և «անվտանգություն» (կամ «պետական անվտանգություն») հասկացությունների միջև: Օրինակ՝ Վ.Ն. Խրոպանյուկը համարում է, որ երկրի պաշտպանությունն ընդգրկում է պետության միջոցառումների ամբողջ համակարգը երկրի պաշտպանունակության ամրապնդման, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ զինված ուժերի ռազմական հզորության ապահովման գործում: Խաղաղ

---

պաշտպանությամբ նպատակով»: Ակնհայտորեն առկա է նպատակի բովանդակային տիրույթի էական ընդլայնում, ՄԻԵԿ-ի հետ համեմատած:

<sup>262</sup> Այդպիսի պատիժը կիրառվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում և դրա դրույթներին համապատասխան: Պետությունը պետք է ԵԽ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացնի այդ օրենսդրության համապատասխան դրույթների վերաբերյալ:

Ժամանակներում դա երկրի բազմակողմանի պատրաստվելն է դրսի հնարավոր հարձակումներին դիմագրավելուն: Պետության պաշտպանական գործունեությունը հիմնվում է նրա ռազմական դոկտրինի վրա և բաղկացած է մի քանի հիմնական ուղղություններից՝ 1) երկրի պաշտպանական հզորության ամրապնդումը, որի երաշխիքը զարգացած, արդյունավետ, գիտահենք տնտեսությունն է, 2) զինված ուժերի կատարելագործումը, նրանց մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացումը, 3) պետական սահմանների պաշտպանությունը, 4) քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, 5) զինված ուժերի պահեստայինների ռազմական ուսուցումը: Պատերազմի ժամանակ երկրի պաշտպանությունն ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև<sup>263</sup>:

«Ազգային անվտանգություն», «պետական անվտանգություն» հասկացությունները անվտանգաբանության ամենախճճված հարցերից են: ԱՄՆ-ում ընդունված «Ազգային անվտանգության մասին» 1947 թ. օրենքը հիմք դրեց ազգային անվտանգության տեսության ձևավորման համար, որի դասականներից է ամերիկացի Գ. Մորգենթաուի հայեցակարգն ազգային անվտանգության մասին որպես քաղաքացիների, հասարակության, պետության անվտանգություն<sup>264</sup>: Այդուհանդերձ տեսաբանների հիմնական մասը ընդունում է «ազգային անվտանգություն» հասկացության անորոշությունը: Օրինակ՝ Ա. Ուոլֆերսը հիմնավորեց, որ ազգային անվտանգությունը չունի ինչ-որ ճշգրիտ բնորոշում<sup>265</sup>: Իհարկե, կան հեղինակներ, որ ազգային անվտանգությունը կապում են ռազմական անվտանգության ու երկրի պաշտպանության հետ, սակայն նրանք հազվադեպ են<sup>266</sup>: Ռուս տեսաբանները ուսումնասիրելով «ազգային անվտանգություն» հասկացության տարաբնույթ իմաստները դրանք դասակարգում են յոթ խմբերում<sup>267</sup>: Այդպիսով, անվտանգաբանության երկու դպրոցներում (արևմտյան և ռուսական) ազգային անվտանգության բնորոշումը միասնական չէ:

<sup>263</sup>Տե՛ս **Խրոպանյուկ Վ. Ն.**, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, էջ 199-200:

<sup>264</sup> Տե՛ս **Morgenthau Hans J.** Politics Among Nations. 4-th edn., N.Y., 1967.

<sup>265</sup> Տե՛ս **Wolfers A.** Discord and Collaboration. Essays on International Politics. Baltimore: Johns Hopkins University Press, 1962. P. 6.

<sup>266</sup> Օրինակ՝ Լիպմանի կարծիքով պետությունն անվտանգ է, երբ նա չի զոհաբերում իր օրինական շահերը պատերազմից խուսափելու համար, կարող է անհրաժեշտ դեպքերում պաշտպանել դրանք ռազմական ուժի կիրառմամբ (տե՛ս **Lippman W.**, US Foreign Policy: Shield of the Republic. Boston, 1943. p. 5):

<sup>267</sup> Տե՛ս **Зеленков М.Ю.** Основы теории национальной безопасности / М.Ю. Зеленков.- М.: 2015, էջ 25-33:



ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը ևս չի սահմանում ազգային անվտանգության բնորոշումը: Դրանում կա ազգային անվտանգության ռազմավարության բնորոշումը. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է»<sup>268</sup>: Եթե այս հասկացությունը համեմատենք Վ.Ն. Խրոպանյուկի վերը բերված պաշտպանության հասկացության մեկնաբանման հետ, ապա դժվար է դրանց միջև եզրեր գտնելը:

Հայ հետազոտողներից մեկը հայաստանյան ազգային անվտանգությանը տալիս է հետևյալ սահմանումը. «ազգային անվտանգությունն անհատի, հասարակության (ազգի), պետության, սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի, ներառյալ սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությունն է իրական արտաքին ու ներքին, քաղաքական, իրավական, ռազմական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, տեղեկատվական և այլ բնույթի սպառնալիքներից՝ հասարակական ընդհանուր համակարգի բնականոն գործունեության, կայուն զարգացման ապահովման համար»<sup>269</sup>: Այս հասկացությունը ևս չունի ընդհանուր եզրեր պաշտպանություն հասկացության հետ, մյուս կողմից պետական անվտանգությունը համարվում է ազգային անվտանգության շատ փոքր, նեղ ոլորտ<sup>270</sup>:

ՀՀ գործող Սահմանադրության վերը կատարված վերլուծության համատեքստում փորձենք վեր հանել նաև այլ երկրների սահմանադրություններում տվյալ խնդրի սահմանադրական իրավակարգավորումները: **ՌԴ Սահմանադրությունը** մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման սկզբունքներն ամրագ-

<sup>268</sup> Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկումը, Եր., 2007, «Ամարաս» տպարան, էջ 13:

<sup>269</sup> Տե՛ս **Ա. Գևորգյան**, Պետությունն ազգային անվտանգության համակարգային կառուցվածքում (ազգային առանձնահատկությունների տեսաիրավական վերլուծություն), ԺԲ.00.01- Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2019, էջ 5:

<sup>270</sup> Անվտանգաբանության հիմունքների մասին տե՛ս **Արմեն Աղայան**, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., 2002, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 71 էջ, **Մհեր Շահգեղյան**, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., 2002, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 71 էջ, **Ստյոպա Սաֆարյան**, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները (թեմայի հաշվետվություն), Եր., 2002, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 130 էջ:

րում է 55 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում<sup>271</sup>: Սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կարող է սահմանափակել միայն դաշնային օրենսդիրը դաշնային օրենքով: Դաշնային օրենսդիրն ազատ չէ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման մեջ. նա կարող է դա անել միայն անհրաժեշտության դեպքում և այն չափով, ինչքան որ դա անհրաժեշտ է հետևյալ նպատակների համար. պետության սահմանադրական կարգերի հիմունքների պաշտպանությունը, բարոյականության պաշտպանությունը, այլ անձանց առողջության պաշտպանությունը, այլ անձանց օրինական շահերի պաշտպանությունը, երկրի պաշտպանության ապահովումը, պետության անվտանգությունը<sup>272</sup>:

Այսպիսով, ՌԴ Սահմանադրությունը նախատեսում է ն՛ «պետության անվտանգությունը», և՛ «երկրի պաշտպանության ապահովումը» որպես մարդու իրավունքների սահմանափակման նպատակ: Ընդ որում, այն օգտագործում է ոչ թե «պետական անվտանգություն», այլ «պետության անվտանգություն» հասկացությունը<sup>273</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ մարդու իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորումը բնութագրական է վերջին սերնդի, այսինքն՝ XX դարի վերջի և XXI դարի սկզբի սահմանադրություններին: Հետևաբար, օրինակ, Ֆրանսիայի Սահմանադրությունը չունի դրույթներ դրա վերաբերյալ, իսկ օրինակ՝ Շվեյցարիայի 1998 թ. Սահմանադրությունն ունի: Համաձայն **Շվեյցարիայի** Սահմանադրության 36 հոդ. հիմնական իրավունքների «ցանկացած սահմանափակում պետք է ունենա օրինական հիմքեր: Լուրջ սահմանափակումները նախատեսվում են օրենքով... Ինչ որ հիմնական իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է արդարացվի հանրային շահերով կամ մարդու հիմնական իրավունքների պաշտպանությամբ»:

---

<sup>271</sup> Տե՛ս Конституция Российской Федерации. – М.: Издательство «Ось–89», М.: 2001, ст. 55: ՌԴ-ում մարդու իրավունքների սահմանափակման հիմքերի և կարգի մասին ավելի մանրամասն տե՛ս **К. Экштайн** Основные права и свободы. по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, с. 60-70; Критерии законодательного установления пределов прав человека //в к. Конституция Российской Федерации: Проблемный комментарий. Отв. ред. В.А. Четвернин.- М., 1997, с. 30-36.

<sup>272</sup> Տե՛ս **К. Экштайн** Основные права и свободы. по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, с. 60:

<sup>273</sup> ՌԴ սահմանադրագետներն այս դեպքում երկրի պաշտպանության տակ հասկանում են բացառապես պատերազմական վիճակը կամ ռազմական դրությունը, իսկ պետության անվտանգությունը համարում են երկրի պաշտպանունակության ապահովման ձև (տե՛ս Конституция Российской Федерации: Проблемный комментарий. Отв. Ред. В. А. Четвернин – М., 1997, с. 35):

յամբ»<sup>274</sup>: Այս հոդվածը սահմանափակման նպատակ կամ «արդարացում» է դիտարկում «հասարակական շահերը կամ մարդու հիմնական իրավունքի պաշտպանությունը»: «Հասարակական շահեր» հասկացությունը շատ լայն իմաստ ունի: Պետք է համաձայնվել Կ. Էկշտայնի դիպուկ բնորոշման հետ. «Սկզբունքորեն բոլոր միջոցառումները, որոնք պետությունը համարում է օգտակար իր խնդիրները կատարելու համար, համարվում են հասարակական շահ»<sup>275</sup>: Ավելացնենք, որ դրանում անխուսափելիորեն ներառված են նաև երկրի պաշտպանության շահերը:

Որպեսզի հիմնական իրավունքներով ու ազատություններով պաշտպանվող բարիքների ոտնձգություններն արդարացվեն նպատակահարմար է դրանք օրինականացնել, կոնկրետացնել, ինչպես օրինակ ՄԻԵԿ-ը կամ արդեն վերլուծված ՀՀ, ՌԴ Սահմանադրությունները: Սակայն կոնկրետացման դեպքում պետք է այնպես շարադրել շահերի շրջանակը, որպեսզի ոչ մի կարևոր նշանակություն հասարակական շահ դուրս չմնա շրջանակից, ինչպես մեր դեպքում «պաշտպանության» շահերը:

**Գերմանիայի Սահմանադրության** 19 հոդ. սահմանելով հիմնական իրավունքների սահմանափակման չափանիշները (սահմանափակումները սահմանվում են օրենքով, հիմնական իրավունքի բովանդակության էության անխախտելիությունը) չի սահմանում սահմանափակման նպատակները<sup>276</sup>: Սակայն Գերմանիայի Սահմանադրության 2-րդ մասի բազմաթիվ հոդվածներում սահմանված են պաշտպանական կամ ռազմական կարիքների համար հիմնական իրավունքների սահմանափակումներ, քաղաքացիական պաշտպանության և հայրենիքի պաշտպանության՝ ներառյալ զինվորական և այլընտրանքային ծառայության սահմանադրական պարտականությունների բովանդակությունները բավականին մանրամասնեցված են, և, հետևաբար, երկրի պաշտպանության գործառույթի շահերի վնասում կամ անտեսում սահմանադրական կարգավորման մեջ չկա<sup>277</sup>:

<sup>274</sup> St' u Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г., статья 36 //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, с. 97:

<sup>275</sup> St' u **К. Экштайн** Основные права и свободы по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, с. 67:

<sup>276</sup> St' u Конституция Федеративной Республики Германия. Статья 19 //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, с. 134.

<sup>277</sup> Գերմանիայում մարդու իրավունքների սահմանափակումների, խաթարումների (էության աղճատումների), սահմանափակման սկզբունքների մասին տե՛ս **Զաքս Միխայիլ**, Սահմանադրական իրավունքներ, մաս 1. Հիմնական իրավունքների տեսություն: 2-րդ հրատարակություն /Մ. Զաքս. Թարգմանություն՝ Լևոն Սարգսյան:- Եր.: Տիգրան Մեծ, 2015. 185-288 էջեր:

Հունգարիայի Սահմանադրությունը 8 հոդվածում հիմնական իրավունքների սահմանափակումը կարգավորում է շատ ընդհանուր, առանց նպատակների կամ շահերի ամրագրման. «... Օրենքը չի կարող սահմանափակել հիմնական իրավունքների սկզբունքային նշանակությունը և բովանդակությունը»<sup>278</sup>:

Քանի որ արևմտաեվրոպական երկրների հիմնական մասի սահմանադրություններն, այսպես կոչված, միջին սերնդի են, ապա փորձենք հիմնահարցն ուսումնասիրել հետխորհրդային անկախ հանրապետությունների սահմանադրություններում: Ադրբեջանի Սահմանադրությունը 71 հոդվածում սահմանում է, որ ոչ ոք չի կարող սահմանափակել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը: «Միայն պատերազմ, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, ինչպես նաև զորահավաքի դեպքում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը կարող է մասնակիորեն և ժամանակավորապես սահմանափակվել Ադրբեջանի Հանրապետության միջազգային պարտավորությունների հաշվառմամբ»<sup>279</sup>:

Բելոռուսիայի Սահմանադրությունը (հոդված 23) սահմանում է անհատի իրավունքների և ազատությունների սահմանափակման հետևյալ շահերը. ազգային անվտանգություն, հասարակական կարգ, բարոյականության պաշտպանություն, բնակչության առողջություն, այլ անձանց իրավունքներ ու ազատություններ<sup>280</sup>:

Ղազախստանի Սահմանադրությունը (հոդված 39) սահմանում է մարդու իրավունքների սահմանափակման հետևյալ նպատակները՝ սահմանադրական կարգերը, պաշտպանությունը, հասարակական կարգը, մարդու իրավունքները և ազատությունները, բնակչության առողջությունը և բարոյականությունը<sup>281</sup>: Բացի այդ Ղազախստանի Սահմանադրության 1-ին բաժնի (Ընդհանուր դրույթներ) 2 հոդվածը որպես այդ հանրապետության գործունեության հիմնարար սկզբունք է սահմանել

<sup>278</sup> St' u Конституция Венгерской Республики, статья 8 //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин. - М.: издательство «Юрлитинформ», 2008, с. 381.

<sup>279</sup> St' u Конституция Азербайджанской Республики //Конституции стран СНГ и Балтии. Сост. Г.Н. Андреева – М.: Юристь, 1999. с. 43:

<sup>280</sup> St' u Конституция Республики Беларусь //Конституции стран СНГ и Балтии. Сост. Г.Н. Андреева – М.: Юристь, 1999. с. 123:

<sup>281</sup> St' u Конституция Республики Казахстан //Конституции стран СНГ и Балтии. Сост. Г.Н. Андреева – М.: Юристь, 1999. с. 201:

«ղազախական հայրենասիրությունը»: Այսինքն՝ «ղազախական հայրենասիրությունը» այստեղ համարվում է սահմանադրական կարգերի հիմունքներից մեկը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1.1. Պետության գործառույթների դասակարգման, համակարգային նկարագրի հարցում կան երկու տարբերվող հայեցակարգեր: Դրանցից մեկը պետության ողջ գործունեությունն ամփոփում է սերտորեն փոխկապված, փոխլրացնող և փոխապահովող երկու՝ ներքին (իրավասահմանում, իրավակենսագործում, իրավապաշտպանություն) և արտաքին (պետության արտաքին ինքնիշխանության իրականացումը) գործառույթներում: Ավելի տարածված մյուս մոտեցումը պետության գործառույթների հիմնական դասակարգումը կատարում է ըստ ուղղվածության (ներքին և արտաքին), այնուհետև դրանք՝ ըստ ոլորտների Անկախ եզրութաբանական ու դասակարգման վարկածների տարբերություններից, պետութենագիտության մեջ բոլոր մոտեցումները պաշտպանության խնդիրը դիտարկում են առաջնակարգային: Պետության գործառույթների շրջանակի դիալեկտիկ շարժը՝ էվոլուցիան և հեղափոխությունը չեն շոշափել պաշտպանության գործառույթը, որը կրելով բովանդակային փոփոխություններ վերածվել է արտաքին, մշտական, համապետական, համասոցիալական գործառույթի, որը հիմնվում է երկրի ռազմական դոկտրինի վրա:

Պաշտպանության գործառույթը հասարակություն-պետություն կապերի բնույթով պայմանավորված ունի իրականացման առանձնահատկություն: Մնացած գործառույթների իրականացման ոլորտում պատմականորեն տեղի է ունենում պետական և հասարակական սեկտորների միջև գործառույթների անընդհատ վերաբաշխում՝ «պետականացման կամ ապապետականացման» օրինաչափությանը համապատասխան: Դա չի գործում պաշտպանության գործառույթի դեպքում. այն որպես օբյեկտիվ հասարակական խնդիր վերապահված կամ պատվիրակված է միայն պետությանը, քանի որ գործառույթի բնույթը պահանջում է գործողությունների մշտական ու միասնական, համակարգված ու կենտրոնացված իրականացում, կենսագործման նպատակային, երաշխավորված կառուցակարգ: Գործողությունների այս կարգը կարող է ապահովել միայն պետությունը, որպես լիիշխան, հատուկ քաղաքական կազմակերպություն:

1.2. Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգը վերլուծելով պետության գործառույթների տեսության, ռազմագիտության ու ռազմա-

կան իրավունքի տեսության միջառարկայական մոտեցումների միջոցով, հիմք է տալիս վեր հանելու դրա հետևյալ առանձնահատկությունները.

Այդ գործառույթի օբյեկտը երկրի ռազմական պաշտպանության հարաբերություններն են: Հետևաբար, երկրի պաշտպանության գործառույթի բովանդակությունը, իրականացման ձևերը, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի կազմակերպման ու զինված պայքարի (պատերազմի) վարման սոցիալ-պատմական օրինաչափություններով: Պաշտպանության գործառույթի ներգործության օբյեկտում գլխավոր դերակատարը զինված ուժերն են՝ իրենց բնորոշ կազմակերպագործառութային կողմերով: Պաշտպանական հարաբերությունների պետական կառավարումը (պետական մարմինները) իմաստավորված է մարտունակ բանակի առկայությամբ, որն էլ գործառույթի իրականացման արդյունավետության հիմնական ցուցիչն է:

Պաշտպանության գործառույթի կենսագործման հիմնական և գրեթե մենաշնորհային սուբյեկտը պետությունն է, որն այն կատարում է իշխանական ապարատի և հատուկ ստեղծված կառույցի՝ զինված ուժերի միջոցով: Պաշտպանական գործառույթի իրականացման կառուցակարգում, դրա կազմակերպման և կառավարման բոլոր մակարդակներում՝ բարձրագույն քաղաքական ղեկավարումից մինչև ագրեսորի դեմ տարվող մարտն իրականացնում են հանրային իշխանական կառույցները: ՀՀ օրենսդրության համաձայն պաշտպանության գործառույթի ձևավորման ու իրականացման սուբյեկտներ են՝ օրենսդիրը, կառավարությունը, նախագահը, դատարանները, անվտանգության խորհուրդը, գործադիր իշխանությունը, պետության զինված կազմակերպությունը:

Երկրի պաշտպանության գործառույթի իրականացման ձևերի ու մեթոդների հարցի հատուկ հետազոտությունը պետության գործառույթների տեսության, ռազմական գիտության, ռազմական իրավունքի տեսամեթոդաբանական մոտեցումների միավորման միջոցով հնարավորություն է տալիս եզրակացնել, որ պաշտպանական հարաբերությունների կառավարումը բազմամակարդակ է, իսկ երկրի պաշտպանության գործառույթն իրականացնելիս կիրառում են օրենքով ամրագրված և՛ համընդհանուր, և՛ հատուկ ձևեր ու մեթոդներ, որոնք բխում են գործառույթի ներգործության օբյեկտի առանձնահատկություններից: Այդ հատուկ ձևերը և մեթոդները կիրառվում են կառավարման վերջին մակարդակում՝ զինված ուժերում, ինքնատիպ

են՝ պայմանավորված դրանց ռազմական բնույթով. լինելով երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների իրականացման եղանակներ, դրանք ենթադրում են զենքի և զինամթերքի օգտագործում:

**1.3. Պաշտպանության ոլորտի իրավական կարգավորման և կառավարման անմիջական սկզբունքները** դիտարկելով պետության սահմանադրական հիմունքների համակարգում նկատում ենք, որ գործառույթի կենսագործման կառուցակարգը, որպես կառավարչական գործունեություն, առանձնահատուկ է նաև իր իրականացման սկզբունքներով. ոլորտի կառավարման ամեն մի մակարդակին բնորոշ են իր սկզբունքները: Տարամակարդակ սկզբունքների առկայությունը առաջ է բերում խնդիր՝ վեր հանել ամեն մի մակարդակին բնորոշ սկզբունքները, պարզել դրանց հարաբերակցությունը՝ առաջնայնությունը, ստորադասությունը: Տեսական այս հարցի լուծման բանալին կառավարման գիտության մեթոդաբանական դրույթներն են այն մասին, որ, կառավարվող օբյեկտների բովանդակությունը, ձևերը, կառուցվածքը գենետիկորեն պայմանավորված են սոցիալ-պատմական օրինաչափություններով, իսկ պետական կառավարման մեջ գլխավոր, որոշիչ դերը կատարում են կառավարվող օբյեկտները, տվյալ դեպքում բանակը:

Պաշտպանության իրականացման արդյունավետության շահերը պահանջում են հաշվի նստել ռազմական արվեստի այն հիմնադրույթի հետ, որ պաշտպանության կազմակերպման ու կառավարման հիմքում, ինչպես մարտավարական, այնպես էլ բարձրագույն պետական կառավարման մակարդակում պետք է ընկած լինեն պատերազմի և զինված պայքարի օրենքներն ու օրինաչափությունները:

Պետական կառավարման համակարգում պաշտպանության գործառույթի սահմանադրական կարգավորման հիմքերը ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի նստել պաշտպանական ոլորտի առանձնահատկությունների հետ. ոչ թե ստորին մակարդակի սկզբունքները պետք համապատասխանեցվեն վերիններին, այլ վերին մակարդակի կառավարման սկզբունքները պետք է հարմարեցվեն ստորիններին: Մաշտ կարևոր ու սկզբունքային նշանակության սահմանադրական խնդիր է, որը նրբորեն պետք է կենսագործվի սահմանադրական կարգավորման համակարգում՝ խնդիր ունենալով չառաջացնել կոլիզիաներ տարբեր մակարդակի կառավարման սկզբունքների միջև, հարմարացնել վերին մակարդակի սկզբունքները ռազմական և զինված պայքարի օրենքների վրա խարսխված ռազմավարական ու մարտավարա-



կան սկզբունքներին, ներդաշնակորեն ինտեգրել սրանց պետական կառավարման կազմակերպագործառության ընդհանուր սկզբունքների համակարգում: Այս խնդիրը պահանջում է պաշտպանության հարաբերությունների, հատկապես դրա կառավարման վերին մակարդակների հիմնադրույթների սահմանադրական հավասարակշռված կարգավորում, որում կամայականորեն չեն անտեսվի պաշտպանության կամ ռազմական ստրատեգիայի ու մարտավարության սկզբունքները, մյուս կողմից էլ ընդհանուր սկզբունքները կհարմարեցվեն դրանց:

**2.1.** Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման համաշխարհային փորձի ուսումնասիրության համար կիրառելով իրավատեխնիկական չափանիշը և հետազոտության հիմնական օբյեկտ դարձնելով ազատական (հիմնականում իշխանությունների բաժանմամբ) սահմանադրական կարգավորման տիպի մի շարք երկրների սահմանադրությունները, դրանք հնարավոր է դասակարգել կարգավորման երեք իրավատեխնիկական խմբի՝ տարալուծված, կենտրոնացված, խառը: Պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման համաշխարհային պրակտիկայում հատուկ խումբ են կազմում ոչ տիպիկ հիմնակարգավորումներով, այսինքն՝ դասակարգման ընդհանուր խմբերից (տիպերից) շեղվող երկրները (Ճապոնիա, սոցիալիստական երկրները, Իրանի Իսլամական Հանրապետությունը): Ատիպիկ խմբի երկրների հիմնական մասի պետական կառավարումը կառուցված է կենտրոնացման սկզբունքով, իսկ պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորումն աչքի է ընկնում դրան սահմանադրական ինստիտուտների շարքում էական տեղ հատկացնելով, կարգավորման մանրամասնեցմամբ, կառուցվածքային առանձնացման ու տարալուծման եղանակների գուգատեղմամբ, բովանդակային առումով էական տարբերությունն արևմտյան աշխարհի սահմանադրական ինստիտուտներից: Յուրահատուկ է պաշտպանական հարաբերությունների կարգավորումը Ճապոնիայում, որի 1947 թ. Սահմանադրությունն ամրագրելով «պացիֆիզմի» սկզբունքը, չի նախատեսում ռազմական կառավարման և զինվորական ծառայության պարտականության դրույթներ:

**2.2.** Հետազոտման օբյեկտ սահմանադրություններից հիմնական խումբը կազմում են պաշտպանական հարաբերությունների տարալուծված կարգավորումը սահմանադրության կառուցվածքային տարբեր մասերում, մեծամասամբ որպես ա-

առանձին պետական մարմինների լիազորություններ (կամ իրավասության մաս) կամ էլ որպես մարդու իրավունքների ենթահիստիտուտներ՝ հայրենիքի պաշտպանությանը (կամ զինվորական ծառայության) մասնակցելու պարտականություն, ռազմական դրություն (Ֆրանսիա, Իսպանիա, Իտալիա, ԱՄՆ, Հնդկաստան, հետխորհրդային հանրապետությունների մեծ մասը և այլն): Պաշտպանական հարաբերությունների տարրալուծված սահմանադրական կարգավորման տեխնիկական որդեգրած երկրների սահմանադրություններն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի՝ ա) տարրալուծված կարգավորում՝ շատ ընդհանուր հիմնադրույթների միջոցով՝ հիմնական և մանրամասն իրավական կարգավորումը թողնելով օրենքների վրա (ԱՄՆ, Ֆրանսիա, Հնդկաստան, ՌԴ), բ) տարրալուծված սահմանադրական կարգավորում՝ որոշակիորեն մանրամասնեցված իրավադրույթներով (Իտալիա, ԱՊՀ որոշ երկրներ):

Հնդկաստանի ընդարձակ Սահմանադրության մեջ տարրալուծված տեխնիկայից բացառություն է կազմում արտակարգ դրության հայտարարման կարգը և դրա ռեժիմն իր բոլոր տարրերով Սահմանադրության առանձին մասում (բաժնում) ամրագրելը: Իսպանիան, Հայաստանը և Ադրբեջանը սահմանադրական կարգի հիմունքներում նախատեսել են զինված ուժերի ստեղծման նպատակները (սոցիալական առաքելությունը), նրանց կարգավիճակի որոշ տարրերը (չեզոքություն, քաղաքացիական վերահսկողություն) կարգավորող հատուկ հոդված:

Պաշտպանական հարաբերությունների տարրալուծված տեխնիկայի կիրառմամբ սահմանադրական տեսլականին բնորոշ հիմնական սահմանադրական իրավական ինստիտուտներն են՝ հայրենիքի պաշտպանության և զինվորական ծառայության պարտականությունը, զինված ուժերի հրամանատարի (կամ գերագույն գլխավոր հրամանատարի), պաշտպանական (կամ անվտանգության) խորհրդի հատուկ ինստիտուտը, պատերազմ հայտարարելը, ռազմական (կամ արտակարգ) դրության հայտարարումը, երբեմն նաև պատվիրակված օրենսդրումը:

**2.3.** Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման **առանձնացված իրավական տեխնիկա** կիրառած երկրներում (Լիտվա, Բրազիլիա) պաշտպանության հետ կապված բոլոր սահմանադրական դրույթները զետեղել են առանձին գլխում (բաժնում, մասում), հիմնական օրենքի կառուցվածքային այլ մասերում այդ ոլորտին նվիրված դրույթներ գրեթե չկան: Իրավատեխնիկա-

կան տեսանկյունից պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման **խառը մոտեցման** կիրառման դեպքում (Հունգարիա, Գերմանիա, Շվեյցարիա, Ավստրիա) այդ բովանդակությամբ սահմանադրական դրույթները գետեղված են և՛ սահմանադրության առանձնացված կառուցվածքային մասերում, և՛ տարրալուծված կերպով՝ մարդու իրավունքների ինստիտուտում, պետական մարմինների լիազորություններում: Որպես կանոն, պետական մարմինների լիազորությունների շարքում պաշտպանական հարաբերություններին նվիրված դրույթները սակավ և չմանրամասնեցված են:

Երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանձնացված և խառն իրավական տեխնիկա կիրառած երկրների սահմանադրական հիմնական պաշտպանական ինստիտուտներն են՝ զինվորական ծառայության, զինապարտության ու քաղաքացիական աշխատանքի (որոշ երկրներում ներառյալ կանանց) պարտականություն, պատերազմի ժամանակ որոշ իրավունքների սահմանափակում կամ կասեցում, պաշտպանության խորհրդարանական կոմիտե՝ քննչական իրավունքներով, խորհրդարանական հատուկ կոմիտե, որը պատերազմի ժամանակ կարող է փոխարինել խորհրդարանին կամ հատուկ կարգավիճակով մարմին՝ պաշտպանության պետական խորհուրդ, պատերազմի մասնակիցների և վետերանների, զոհվածների ազգականների ապահովություն, քաղաքացիական պաշտպանության կարգավորում, պատերազմական և արտակարգ դրության տարատեսակ ռեժիմներ: Գերմանիան ունի պաշտպանության ոլորտում հիմնական իրավունքների ապահովման լիազոր:

**2.4.** Պաշտպանական հարաբերությունների պետական կառավարումը բազմամակարդակ է, կառավարման ամեն մի մակարդակին բնորոշ են իրեն հատուկ օբյեկտից բխող յուրահատուկ սկզբունքներ: Ռազմական ստրատեգիան, կառավարման տեսությունը և իրական սահմանադրական կարգավորման պրակտիկան ընդհանրապես կառավարումը, և հատկապես պետական կառավարումը բաժանում են սովորական և արտակարգ տեսակների: Ընդհանուր պետական կառավարումն իրականացվում է մի քանի իրավական ռեժիմներով (տեսակներով)՝ ա) **սովորական, ընթացիկ կառավարում** (ներառում է նաև պաշտպանական հարաբերությունների կառավարումը խաղաղ ժամանակ), բ) **արտակարգ կառավարում**, այսինքն՝ ընդհանուր կառավարման կարգերի սկզբունքներից, ընթացակարգերից շեղվող, կարգից դուրս

իրականացվող կառավարում: Արտակարգ կառավարման ընթացակարգերն իրենց հերթին լինում են կառավարումը պատերազմական կամ հատուկ ներքին դրության իրավիճակներում: Դասակարգման այս մեթոդաբանությունից ելնելով պաշտպանական հարաբերությունների կառավարման ոլորտին բնորոշ են կառավարման երկու կարգեր՝ ա) պաշտպանական ոլորտի կառավարում խաղաղ (սովորական) ժամանակաշրջանում, բ) պաշտպանական ոլորտի կառավարում պատերազմական ժամանակաշրջանում:

Պաշտպանական գործառույթի սահմանադրական կարգավորման հայեցակարգը և նորմատիվ մոդելը պետք է հաշվի նստեն այս իրողության հետ և կարգավորիչ մոդելում նախատեսեն երկտարբերակ ռազմական կառավարում՝ խաղաղ ժամանակի և պատերազմական իրավիճակի: Այս տարբերակման հիմքում ընկած են ռազմական կառավարման առանձնահատկությունները և սկզբունքները: Քաղաքական համակարգն ու պետական ապարատը կառուցված կազմակերպման ու գործունեության ժողովրդավարական սկզբունքների, հատկապես հակակշիռների ու զսպիչների համակարգով իշխանությունների բաժանման, քաղաքական այլակարծիքության վրա, ունակ չէ անարգելք, արագ ու արդյունավետ իրացնել ռազմական ստրատեգիայի պահանջներն ու սկզբունքները:

**3.1.** Բարձրագույն պետական կառավարումը, որ մոդելավորված է իշխանությունների բաժանման սկզբունքով՝ պաշտպանական լիազորությունները բաշխելով օրենսդիր ու գործադիր մարմինների միջև, խաղաղ ժամանակ նույնպես պետք է հարմարեցված լինի ռազմական ստրատեգիայի ու տակտիկայի սկզբունքներին: Դրանց պահանջների դրսևորման ինստիտուցիոնալ ձևը գլխավոր հրամանատարն է՝ միանձնյա, բարձրագույն պաշտոնյան, որն իր կարգավիճակով մարմնավորում է ռազմամարտավարական սկզբունքների մեծ մասի կենսագործման կառուցակարգը:

ՀՀ պաշտպանության կառավարման բարձրագույն համակարգի սահմանադրական հիմնադրույթների համաձայն պաշտպանության քաղաքականությունն իրականացնում է կառավարությունը, որի համար նա օժտված է ոլորտի կառավարման համակարգի մաս կազմող մի շարք էական լիազորություններով: ՀՀ վարչապետը խաղաղ ժամանակ պաշտպանության ոլորտում էական լիազորություններ ունեցող պաշտոնյա է. նա պաշտպանական քաղաքականության մեջ համակարգող, առաջարկող, ներկայացնող էական լիազորություններ ունի, մասնավորապես, գլխավոր-

րում է պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ որոշումներ ընդունող Անվտանգության խորհուրդը, ՀՀ-ին սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում ունի մի շարք էական, պաշտպանական համակարգը գործի դնող լիազորություններ: Այսպիսով, պաշտպանական ոլորտի կառավարման բոլոր հիմնական լիազորությունները կենտրոնացված են կառավարությունում:

ՀՀ-ն խաղաղ ժամանակի ռազմաստրատեգիական կառավարման համակարգի ակնհայտ գիծը դրա կառավարակենտրոն և դրանով պայմանավորված վարչապետակենտրոն բնույթն է: Սահմանադրական և օրենքով ամրագրված իր լիազորությունների տեսակարար կշռով վարչապետը գերակայում է մնացած բոլոր մասնակից սուբյեկտների նկատմամբ: Կառավարման այս համակարգը ապահովում է գերկենտրոնացվածություն, հետևաբար նաև օպերատիվություն: Սակայն պետական կառավարման ոլորտում կառավարությունը և, հատկապես, վարչապետն, ի վերջո, քաղաքականացված սուբյեկտներ են, հետևաբար կարող են ազդվել քաղաքական իրավիճակի վայրիվերումներից: Կառավարական ճգնաժամերը տարբեր դրսևորումներով կարող են առաջացնել հակասություն կառավարման ընդհանուր սահմանադրական ու ռազմաստրատեգիական կառավարման սկզբունքների միջև, վտանգել երկրի պաշտպանության շահերը, ինչն անթույլատրելի է:

Պաշտպանական ոլորտի կառավարման գերկենտրոնացվածությունն օրինաչափորեն նկատվում է նաև այլ երկրներում: Նախագահական և խառը կառավարման ձևերում պաշտպանական լիազորությունների հիմնական մասը կենտրոնացված է առաջնային մանդատով նախագահների մոտ: Խորհրդարանական միապետություններում գլխավոր հրամանատարը քաղաքական ցնցումներից ու ճգնաժամերից հեռու միապետներն են:

Դասական համարվող խորհրդարանական հանրապետություններից ոչ մեկում ռազմաստրատեգիական կառավարման օրինաչափ կենտրոնացումը ուղղորդված չէ դեպի կառավարություն և վարչապետ: Կան ռազմաստրատեգիական կառավարման օրինաչափ կենտրոնացման նախագահակենտրոն, խորհրդարանակենտրոն, դուալիստական (նախագահախորհրդարանական) կառուցակարգեր, որում կառավարությունը կատարում է միայն գործադիր ապահովող գործառույթներ: Նման սահմանադրական օրինաչափության հիմքում ընկած հիմնական պատճառը խորհրդարա-

նական հանրապետությունում կառավարության չափից դուրս քաղաքականացվածությունն է, ինչի հետևանքով այն ունակ է ազդվելու քաղաքական գործոններով պայմանավորված վայրիվերումներից: Բացառություն է կազմում Գերմանիան, սակայն դրա և ՀՀ Սահմանադրություններով ամրագրված լուծումների միջև նմանությունները արտաքուստ և խաբուսիկ են, որովհետև ԳԴՀ-ի Սահմանադրությունը պաշտպանական հարաբերությունները կարգավորում է մանրամասն, համակողմանի ու շատ ճկուն կերպով, ներդաշնակելով դաշնային մակարդակով իշխանությունների բաժանման համակարգը՝ ռազմական կառավարման ստորին մակարդակի սկզբունքների հետ: Այն ունի պատերազմական իրավիճակում կառավարման կենտրոնացման, դրա արագացման ապահովման բավականին հետաքրքիր ընթացակարգեր՝ ներառյալ օրենսդրման և գործադիրի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ոլորտներում:

ՀՀ վարչապետի որպես քաղաքականացված ֆիզուրայի շուրջ ռազմական լիազորությունների կենտրոնացումն իրենում պարունակում է ազգային անվտանգության հնարավոր սպառնալիք: Այս սպառնալիքի ձևավորմանը նպաստող սահմանադրական գործոններ են ոլորտում խորհրդարանի ոչ էական մասնակցությունը, ՀՀ նախագահի անիշխանությունը, Անվտանգության խորհրդի կազմակերպական ու գործառույթային առանձնահատկությունները. ունի իմպերատիվ-պարտադիր որոշումների ընդունման իրավազորություն, սակայն կազմված է միայն նախարարներից, իշխանության որևէ այլ թև կամ մարմին այնտեղ ներկայացված չէ: Նման օրենսդրական լուծումն անհավասարակշիռ է, հատկապես, որ պատերազմի ժամանակ վարչապետը դառնում է գլխավոր հրամանատարը: Հետևաբար, պաշտպանական ոլորտի խաղաղ կառավարման համակարգը վերանայման կարիք ունի, որի ընթացքում պահպանելով կառավարման կենտրոնացվածությունը՝ պետք է փորձել գտնել այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն պետության գլխի, օրենսդիր մարմնի մասնակցությունը ռազմաստրատեգիական խնդիրների լուծմանը, իհարկե, չվնասելով երկրի պաշտպանության շահերին:

**3.2.** Համաշխարհային սահմանադրական պրակտիկայում պատերազմի ժամանակ նախատեսվում են պետական մարմինների վերակազմավորումներ, սակայն դրա կարգերը միասնական չեն: Ամեն մի երկիր որդեգրել է ընդհանուր պետական համակարգի վերակառուցման, պատերազմի պայմաններում կառավարման իր յու-

րահատուկ կառուցակարգը՝ պայմանավորված տվյալ պետության կառավարման ձևով ու սահմանադրական ավանդույթներով, պետության կառուցման հիմքում ընկած քաղաքական-ստրատեգիական գաղափարախոսությամբ, պատերազմելու պատմական փորձով, աշխարհաքաղաքական առանձնահատկություններով: Որպես օրինաչափություն նախագահական, կիսանախագահական հանրապետություններում, սահմանադրական միապետություններում պատերազմական շրջանում ռազմաստրատեգիական կառավարման լիազորությունները կենտրոնանում են նախագահի կամ միապետի ձեռքին, խորհրդարանի վերահսկողության տակ:

2015 թ. ՀՀ Սահմանադրության և դրա հիմքով ընդունված օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմական վերակառուցման ինստիտուտները բավարար չեն, իսկ եղածների մի մասի արդյունավետությունը կասկածելի է: Պետական կառավարման վերակառուցումներ նախատեսված չեն ո՛չ Անվտանգության խորհրդի, ո՛չ նախագահի, ո՛չ դատական համակարգի ինստիտուտներում: Պատերազմական գործողությունների ռազմաստրատեգիական պլանավորման հարցում անհասկանալի է Անվտանգության խորհրդի լիազորությունների հարցը. օրենքով թվարկվածները միայն խաղաղ ժամանակի համար են:

Հստակ չէ պատերազմի ժամանակ ռազմաստրատեգիական կառավարման ոլորտի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների հարցը. գործում են ամբողջովին, թե մասամբ, եթե ամբողջովին, ապա դա չի՞ խոչընդոտի ստրատեգիական, օպերատիվ և տակտիկական կառավարմանը: Իսկ, եթե չեն գործում, ապա դա չի՞ կարող հանգեցնել գործադիր ռազմականացված իշխանության չարաշահումների, ինչպե՞ս ապահովել արագացված օրենսդրումը: Այս հարցադրումների հետ կապված ՀՀ Սահմանադրությունն ունի միայն կառավարության վստահության հարցին վերաբերող իրավակարգավորում, որը ևս իր լուծումների արդյունավետությամբ կասկածանքների տեղիք է տալիս: Պաշտպանական ոլորտի օրենքներում ավելի շատ շեշտադրված են լիազորությունները, այսինքն՝ «ինչ պետք է անել», սակայն այդ լիազորությունների իրականացման արագ, օպերատիվ, արդյունավետ կառուցակարգերը, այսինքն՝ «ինչպես անել», նախատեսված չեն:

ՀՀ 2015 թ. Սահմանադրությամբ ու պաշտպանության ոլորտը կարգավորող օրենքներով ռազմական դրության ժամանակ կառավարման պետական համակարգում նախատեսված վերակառուցումներն ու լիազորությունների վերաբաշխումը

նախատեսված են սակավ ձևերով, հետևաբար, անընդունակ են պատերազմական իրավիճակում պետական կառավարման ընդհանուր համակարգը, հատկապես օրենսդիր ու գործադիր, վերածել ռազմական կառավարման սկզբունքներին ու պահանջներին համահունչ կառույցի: Այս եզրակացությունն հաստատում են նաև աշխարհի իրավական պետության համբավ ունեցող խորհրդարանական և այլ երկրների սահմանադրությունները:

**3.3.** Երկրի պաշտպանության գործառույթի իրականացման իրավական հիմնական միջոցներից է օրենսդրումը, որն ի տարբերություն իրավաստեղծագործության այլ տեսակների բարդ, ձևականացված անշրջանցելի փուլերից կազմված ընթացակարգ է: Պատերազմի ժամանակ ձևականացված և ժամանակատար ընթացակարգերը, որոնք խաղաղ ժամանակ որակյալ և արդյունավետ օրենսդրման երաշխիք են, կարող են վերածվել ռազմական գործողությունների պլանավորման ու վարման, պաշտպանության խնդիրների լուծման խոչընդոտի:

Պաշտպանության կառավարման սկզբունքները հատկապես պատերազմի ժամանակ պահանջում են ստրատեգիական գործողությունների հանկարծակիություն, արագություն, վճռականություն և անընդհատություն և այլն: Դրան հակառակ խորհրդարանում օրենսդրումն իր բնույթով դանդաղաշարժ է, հատկապես, եթե դրանում չկա քաղաքական մեծամասնություն: Պատերազմի ժամանակ հնարավոր են իրավիճակներ, երբ խորհրդարանի աշխատանքի պարբերականությունը խախտվի կամ դառնա անհնարին, ինչը բերելու հակասության ռազմական նպատակահարմարության և օրինականության սկզբունքի միջև: Այս խնդրի լուծման ուղիներից է օրենքների զանգվածային անտեսումը: Սակայն նման գործելաոճի դեպքում հնարավոր են նաև չարաշահումներ, իրավական հիմնարար սկզբունքների ու նորմերի խախտումներ: Դա կանխելու և օրենսդրման կառուցակարգը պատերազմական կանոններին ու պահանջներին համապատասխանեցնելու համար շատ երկրներ, նաև խորհրդարանական կառավարման ձև ունեցող, իրենց պատմական փորձից ելնելով՝ նախատեսել են սահմանադրական ինստիտուտներ, որոնք գործողության մեջ են դրվում միայն պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ և կոչված են արագացնելու ու անընդհատ դարձնելու երկրի պաշտպանության ապահովման օրենսդրական կառուցակարգը:



Գերմանիայում պատերազմի դեպքում տեղի է ունենում սովորական սահմանադրական կառավարման համակարգի զանազան տարրերի մի քանի իրավական փոխակերպումներ, ներառյալ գործողության մեջ են մտնում օրենսդրման արագացման միջոցառումներ. ձևավորում է խորհրդարանի երկու պալատների Միավորված կոմիտեն, որը խորհրդարանական գործունեության և նիստերի գումարման համար անհաղթահարելի արգելքների դեպքում փոխարինում է նրան: Իտալիայում սահմանադրորեն ամրագրված է պաշտպանական հարաբերությունների իրավական կարգավորման կենտրոնացման ու օպերատիվացման միջոց համարվող պատվիրակված օրենսդրության ինստիտուտը: Հունգարիայի խորհրդարանը անհրաժեշտության դեպքում հիմնադրում է պաշտպանության պետական խորհուրդ՝ նախագահի գլխավորությամբ, որը կարող է հրապարակել օրենքների կիրառումը կասեցնող կամ օրենքներից շեղվող որոշումներ, ներմուծել այլ արտակարգ միջոցներ, բացառությամբ Սահմանադրության գործողության կասեցման:

ՀՀ սահմանդրաիրավական քաղաքականության հրատապ խնդիր է պատերազմի ժամանակ արագացված օրենսդրման հարցերի խորքային իմաստավորումը և համաշխարհային փորձին հետևելով ընտրելու և ամրագրելու պատերազմական իրավիճակի համար նախատեսված օրենսդրման պարզեցված, արագ ընթացակարգ, ինչը հնարավոր պատերազմական իրադրության մեջ իրավիճակին ադեկվատ գործող կդարձնի նաև օրենսդրումը, հնարավորություն կտա ունենալու արագ արձագանքող, ռազմաստրատեգիական, օպերատիվ և տակտիկական կառավարման սկզբունքներին համապատասխանող, հակաժողովրդավարական ռեժիմի կամ տարատեսակ չարաշահումների սպառնալիքներ ու վտանգներ չպարունակող օրենսդրման կառուցակարգ:

**3.4.** Պաշտպանության նպատակով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորման հետազոտությունը ՄԻԵԿ-ի, մի շարք երկրների սահմանադրական պրակտիկայի համատեքստում հիմք է տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները:

Միայն օրենքով սահմանափակվող մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման նպատակների շրջանակների սահմանման հարցում Հայաստանը միայն տեխնիկական շարադրման տեսանկյունից է հետևել ՄԻԵԿ-ին: Սահմանափակման նպատակների շրջանակի հարցում չկա ուղղակի փոխառում:

Դրանք, ի համեմատ ՄԻԵԿ-ի, ՀՀ Սահմանադրության մեջ ենթարկվել են որոշակի փոփոխությունների, և՛ դրանց շրջանակի տեսանկյունից (կատարվել է դրանց և՛ նեղացում, և՛ ընդլայնում), և՛ բովանդակային առումով: ՀՀ գործող Սահմանադրության մարդու և քաղաքացու մի շարք իրավունքների, ազատությունների օրենքով սահմանափակման հիմքերի-նպատակների շարքում չկա «պաշտպանությունը»:

ՄԻԵԿ-ում ևս չկա «պաշտպանության» շահը կամ նպատակը, որպես մարդու, իրավունքների սահմանափակման արդարացում: Սակայն ՄԻԵԿ-ը պաշտպանական ոլորտի վերաբերյալ ունի մի քանի վերապահումներ, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ոլորտին ՄԻԵԿ-ն ունի հատուկ վերաբերմունք (տե՛ս հոդված 15-ը): Պաշտպանության շահերին առանձնահատուկ վերաբերմունքը հաստատում է նաև 6-րդ արձանագրության 2 հոդ., որը պետությանն իրավունք է տալիս իր օրենսդրությամբ նախատեսել մահապատիժ պատերազմի կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի ժամանակ կատարված արարքների համար:

ՀՀ Սահմանադրությամբ թվարկված «շահերի» կամ «նպատակների» շրջանակում «պաշտպանություն» հասկացությանն ամենամոտն է «պետական անվտանգությունը»: Բայց և՛ ռազմական արվեստի տեսությունը և անվտանգաբանությունը տարբերություն են դնում «պաշտպանություն» և «անվտանգություն» (կամ «պետական անվտանգություն») հասկացությունների միջև: Պետական անվտանգությունն ազգային անվտանգության շատ նեղ ոլորտ է: Իսկ ՌԴ-ն մարդու իրավունքների սահմանափակման նպատակ է ճանաչում և՛ «պետության անվտանգությունը», և՛ «պաշտպանության ապահովումը»:

Այլ երկրներում մարդու իրավունքների սահմանափակման նպատակների սահմանադրական իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ իրավակարգավորումները մարդու իրավունքների սահմանափակման նպատակների հարցում ունեն երեք մոտեցում ա) մարդու իրավունքների սահմանափակման նպատակը կամ շահը ձևակերպված է շատ ընդհանուր, օրինակ՝ «հասարակական շահերը կամ մարդու հիմնական իրավունքի պաշտպանությունը» (Շվեյցարիա), բ) սահմանադրությամբ սահմանված չեն մարդու իրավունքների սահմանափակման նպատակները (Գերմանիա, ԱՄՆ, Հունգարիա), սակայն դրա բազմաթիվ հոդվածներում կան պաշտպանական կամ ռազմական կարիքների համար հիմնական կոնկրետ իրավունքների սահմանափակումներ, հետևաբար, երկրի պաշտպանության

գործառույթի շահերի անտեսում սահմանադրական կարգավորման մեջ չկա, գ) հիմնական իրավունքների սահմանափակման հիմքերը կամ նպատակները թվարկմամբ կոնկրետացված են: Այս տեսակի սահմանադրությունների գերակշռող մասը, որպես ինքնուրույն հիմք ամրագրում է «երկրի պաշտպանությունը»: Ղազախստանը նունիսկ «ղազախական հայրենասիրությունը» սահմանել է որպես հանրապետության հիմնարար սկզբունք: Լավագույն է այն կարգավորումը, որով սահմանափակման հիմքերը օրինականացված ու կոնկրետացված են, սակայն այդ դեպքում ոչ մի կարևոր նշանակության հասարակական շահ չպետք է դուրս մնա ամրագրման շրջանակից, ինչպես մեր դեպքում «պաշտպանության» շահերը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Իրավական ակտեր

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», հաստատված է ՀՀ նախագահի 25.12.2007 ՆՀ-308-Ն հրամանագրով: Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2008.01,07/1 (591), (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41116>),
2. «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը՝ ընդ. 2018 թ. մարտի 23-ին, (ՀՕ-155-Ն) //ՀՀՊՏ 2018.03.28/23(1381), Հոդ. 348;  
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120709>),
3. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ընդունված 2017 թ. նոյ. 15-ին (ՀՕ-196-Ն) //ՀՀՊՏ, 2017.12.06/73(1348), Հոդ.1210  
(<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627> 1/18),
4. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ընդունված 2008 թ. նոյ. 27-ին (ՀՕ-198-Ն) //ՀՀ ՊՏ 2008.12,24/73 (663), հոդված 1319,
5. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը ընդուն. 2006 թ. դեկտեմբերի 5-ին, (ՀՕ-258-Ն) //ՀՀ ՊՏ 2007.01.17/4(528), Հոդ. 27  
(<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105235>),
6. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ընդուն. 2002 թ. //Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 94-95,
7. «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով ընդուն. 2018 թ. մարտի 1-ին (ՀՕ-145-ն) //ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), հոդ. 311,
8. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), թարգմանեց Գառնիկ Բադալյանը (ոչ պաշտոնական թարգմանություն), «Նաիրի» հրատարակչություն, Թեհրան, 2005, 129 էջ,
9. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, հաստատված ՀՀ նախագահի ՆՀ-37-Ն 07.02.2007 հրամանագրով, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.02.15/11(535), Հոդ. 228,
10. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն //«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Եր., 2007, 130 էջ:

11. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, 92 էջ,
12. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեով 1995 թ. հուլիսի 5-ին: Եր.: Մխիթար Գոշ, 1997, 48 էջ:
13. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2005 թ. նոյեմբերի 27-ին - Եր., «Բավիղ» ՍՊԸ տպարան, 2005, 64 էջ (ՀՀ ՊՏ 05.12.05, հատուկ թողարկում):
14. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2015 թ. դեկտեմբերի 6-ին - Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015, 94 էջ (ՀՀ ՊՏ 21.12.2015, հատուկ թողարկում):
15. Конвенция о защите прав человека и основных свобод 1950 г.   
 //https://www.echr.coe.int/Documents/Convention\_RUS.pdf
16. Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристь, 1999, 640 էջ,
17. Конституции участников СНГ. – М.: Издательская группа НОРМА-ИНФРА. М., 1999, - 736 с.
18. Конституция Азербайджана, Армении и Грузии. Constitution of Armenia, Azerbaijan and Georgia. Verfassungen von Armenien, Azerbaidshan und Georgien. Реформы Права и юстиции на южном Кавказе. Сборник материалов, № 27, gtz, Ереван 2007, 401էջ,
19. Конституция Азербайджанской Республики //Конституции стран СНГ и Балтии. Сост. Г.Н. Андреева – М.: Юристь, 1999. 640 էջ,
20. Конституция Венгерской Республики /Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջեր 387-391, 448 էջ,
21. Конституция Греции, 1975 г., //հղումն րսս   
 http://www.concourt.am/armenian/legal re-   
 sources/world\_constitutions/constit/greece/greece-r.htm

22. Конституция Индии 1949 г. /Конституция зарубежных государств; Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, Соедин. Штаты Америки, Япония, Индия; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2006, т. 423-574, 608 т. 2,
23. Конституция Испании /Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, т. 202-239, 448 т. 2,
24. Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1974 г. //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, т. 69-92, 448 т. 2,
25. Конституция Литовской Республики (принят 25 октября 1992 г., с изменениями от 20 июня 1996 г. и 12 декабря 1996 г.) //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристъ, 1999, т. 550-595, 640 т. 2,
26. Конституция Республики Польша 1997 г., //hqlnlfu ruu <https://worldconstitutions.ru/?p=112>
27. Конституция Республики Беларусь //Конституции стран СНГ и Балтии. Сост. Г.Н. Андреева – М.: Юристъ, 1999. 640 т. 2,
28. Конституция Республики Казахстан //Конституции стран СНГ и Балтии. Сост. Г.Н. Андреева – М.: Юристъ, 1999. 640 т. 2,
29. Конституция Российской Федерации. –М.: Издательство «Ось – 89», М.: 2001, 48 т. 2,
30. Конституция Соединенных Штатов Америки /Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издател. «Юрлитинформ», 2008, т. 240-257, 448 т. 2,
31. Конституция Туркменистана //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юристъ, 1999, 640 т. 2,
32. Конституция Федеративной Республики Бразилии //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, 448 т. 2,
33. Конституция Французской Республики /Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, 448 т. 2,

34. Конституция Швеции (Королевства Швеция) от 27 февраля 1974 г.  
[http://www.sweden4rus.nu/rus/info/juridisk/konstitucija\\_shvecii](http://www.sweden4rus.nu/rus/info/juridisk/konstitucija_shvecii)

35. Конституция Японии 1947 г. //Конституция зарубежных государств; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2006, էջեր 381-394, 608 էջ,

36. Протокол № 1 к Конвенции о защите прав человека и основных свобод (Париж, 20 марта 1952г.) с изменениями от 11 мая 1994 г. //К. Экштайн Основные права и свободы. по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, էջ 428-429,

37. Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г. //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: изд. «Юрлитинформ», 2008, էջ 93-127, 448 էջ:

### **Մասնագիտական գրականություն**

1. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկավիճակը և հետագա բարելավման խնդիրը. – Եր.: Տիգրան Մեծ, 2017, 304 էջ,

2. Աղայան Ա., Պետության և իրավունքի տեսություն: Դասախոսություններ /Եր., Տիգրան Մեծ, 2011, 416 էջ,

3. Աղայան Ա., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., 2002, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 71 էջ,

4. Զաքս Միխայիլ, Սահմանադրական իրավունքներ, մաս 1. Հիմնական իրավունքների տեսություն: 2-րդ հրատարակություն /Մ. Զաքս. Թարգմանություն՝ Լևոն Սարգսյան:- Եր.: Տիգրան Մեծ, 2015. 312 էջ,

5. Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը /ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ.- Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 1997, 398 էջ,

6. Խաչատրյան Հ.Ս., Չինաստանի ժողովրդավական Հանրապետության Սահմանադրությունը. Տեսական-իրավական վերլուծություն /ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.-Եր.: 2012, 228 էջ,

7. Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Եր., ԳՈՇ, 1997, 433 էջ:
8. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք առաջին:- Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2016, 416 էջ,
9. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք.- Երևանի պետ. Համալսարան.- Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, 608 էջ,
10. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի – Եր.: Իրավունք, 2010, 1086 էջ:
11. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանի ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Օրենսդրության զարգացմանն աջակցող իրավագիտական կենտրոն, Եր., 1995, 120 էջ,
12. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ընդհանուր խմբ.- մբ՝ Գ. Դանիելյանի.- Երևանի պետ. Համալսարան- ԵՊՀ հրատ., 2012, 704 էջ,
13. Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները.- վերահրատարակություն՝ վերամշակումներով.- Եր., - Նժար, 2016, 672 էջ,
14. Շահգելոյան Մ., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., 2002, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 71 էջ,
15. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը և հետագա բարելավման խնդիրը. – Եր.: Տիգրան Մեծ, 2017, էջ 283-300:
16. Նազարյան Վ. «Լայն ժողովրդավարության և ուժեղ պետականության Հիմնական օրենքը», /117 հարց և պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին, Եր., 1995, էջ 9-10, 275 էջ,
17. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ /Հեղ. խումբ, գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Եր.: Լուսաբաց հրատարակչության տուն, 2014, 692 էջ,



18. Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը (համառոտ պարզաբանումներ), Եր., Տիգրան Մեծ, 2016, 448 էջ,
19. Սաֆարյան Ս., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները (թեմայի հաշվետվություն), Եր., 2002, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 130 էջ,
20. Վալեսյան Ա., Վալեսյան Լ., Քաղաքական աշխարհագրություն. – Եր., ԵՊՀ հրատ.: 2005, 339 էջ,
21. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, 338 էջ,
22. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.): Եր., Եր. համ. հրատ., 2006, 208 էջ,
23. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, 288 էջ,
24. Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. 280 էջ,
25. А.А. Безуглов, С.А. Солдатов Конституционное право России. В трех томах, Том 1.: М.: 2001, 800 էջ,
26. Азмин Д.М., Система права и ее строение: методологические подходы и решения. – М., Юстицинформ, 2014 – 392 էջ,
27. Ардан Филипп, Франция: государственная система: пер. с франц .- М.: Юрид. лит., 1994, 176 էջ,
28. Арутюнян Г.Г., Габричидзе М.Б., Конституционное право: энциклопедический словарь. – М., НОРМА, 2006, 544 էջ,
29. Арутюнян А.Ш., Граматика свободы (проблемы постсоветского реализма).- Ереван, АРТ, 2007, 141 էջ,
30. Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, 400 էջ,

31. Афанасев В.С. Государство, новые подходы к сущности, функциям, типологии // В кн. Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп.-М.: Юристь, 1996, с. 281-285, 472 т<sub>2</sub>,
32. Баглай М.Б., Габричидзе Б.Н., Конституционное право Российской Федераций. М., Издател. группа ИНФРА.М-КОДЕКС, 1996, 512 т<sub>2</sub>,
33. Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право, под ред д.ю.н., профессора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” - М., “За права военнослужащих”, 2004, 640 с.;
34. Брюно Жарросон, От Сунь-цзы до Стива Джобса: искусство стратегии: Dunod, Paris, 2016, пер. на рус. язык Троицкая М., «Издательская Группа «Азбука-Аттикус», М., 2017, 39 с., ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=29629406&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=29629406&lfrom=204420127));
35. Бэзил Лиддел Гарт, Стратегия непрямых действий: История в одном томе. АСТ; М., 2017, 60 с.; [http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=26110964&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=26110964&lfrom=204420127);
36. Вагаршян А.Г., «Обороноспособность как принцип организации и деятельности государственного аппарата». Евразийский юридический журнал, № 12 (55), М., 2012, ст. 147-149;
37. Венгеров А.Б., Теория государства и права. М., 2000, 608 т<sub>2</sub>,
38. Военная стратегия / Под редакцией Маршала Советского Союза Соколовского В. Д. - Издание второе, исправленное и дополненное. - М.: Воениздат, 1963. 504 с.;
39. Военное право. Под ред засл. деятеля науки РФ, академика Кузнецова Н.И.- М.: издательство Военный университет МО РФ – Всеармейский издательский центр гуманитарной учебной литературы, 1996, 318 т<sub>2</sub>,
40. Габричидзе Б.Н., Елисеев Б.П., Российское административное право. Изд. группа НОРМА-ИНФРА.М.: 1998, 622 т<sub>2</sub>,
41. Галузин А.Ф. Правовая безопасность и ее принципы.- СПб., Издательство Р. Асланова. Юридический центр пресс, 2008. 361 т<sub>2</sub>,

42. Гомеров И.Н., Государство и государственная власть: предпосылки, особенности, структура.- М.: 2002, 832 էջ,
43. Гринин Л.Е., Государство и исторический процесс: Эпоха формирования государства: Общий контекст социальной эволюции при образовании государства. Изд. 2-ое, перераб. и доп.-М.: изд. ЛКИ, 2011, 368 էջ,
44. Гумплович Л., Общее учение о государстве / соч. Людвиг Гумпловича; пер. со 2-го нем. пзд. со вступ. очерком и доп. ст. И.Н. Неровецкого.- Санкт-Петербург: типография Т-ва "Общественная воля", 1910. - 516 с.;
45. Дабровольский А.М., Военно-административное право (лекции, прочитанные в 1914-1918 учебных годах). СПб., 1914;
46. Дмитрук В.Н., Теория государства и право. М., Новое знание, 2002.- 184 էջ;
47. Дюринг Е., Ценность жизни. М.: Красанд. 2010.-320 с;
48. Елинек Г., Общее учение о государстве.- СПб.: из-во Юридический центр пресс, 2004, 752 էջ,
49. Зеленков М.Ю., Основы теории национальной безопасности / М.Ю. Зеленков.- М.: 2015, 253 էջ,
50. Институты конституционного права иностранных государств. М.: «Городец-издат», 2002, 496 էջ,
51. «Категории, закономерности и принципы военной стратегии» // в кн. Военная стратегия, с. 32-39; հղմովս ըստ <http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>
- .
52. К. Экштайн, Основные права и свободы. по российской Конституции и Европейской Конвенции. М., NOTA BENE, 2004, 496 էջ,
53. Каутский К. Материалистическое понимание истории. Том 2. Государство и развитие человечества; пер. с нем. Е.А. Преображенского. - М.: Л.: Государственное социально-экономическое издательство, 1931. - 851 с.
54. Ковачев Д. А., «О правовых институтах чрезвычайного режима в иностранных государствах». /в. Кн. «Институты конституционного права иностранных государств. /отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, էջեր 378-493, 496 էջ,

55. Ковачев Д. А. Конституционный принцип: Понятие, реальность и фиктивность /В кн.: Очерки конституционного права иностранных государств. М., 1999, էջ 28-29 (հղումն ըստ Այվազյան Ն. Ա., Այվազյան Ա. Ն., Սահմանադրության էությունը և բովանդակությունը (Համեմատական սահմանադրական վերլուծություն). – Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 134, 204 էջ):
56. Комаров С.А. Общая теория государства и права.- М., Юрайт, 1997, 418 էջ,
57. Конституционное (государственное/ право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. 764 էջ,
58. Конституционное право государств Европы /Отв. ред. Д.А. Ковачев.- М.: Волтерс Клувер, 2005, 320 էջ,
59. Конституционное право зарубежных стран: под общей ред. М.Б. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. – 2-е изд., перераб. – М.: НОРМА, 2005, 1056 էջ,
60. Конституция Российской Федерации: Проблемный комментарии. Отв. ред. В.А. Четвернин.- М., 1997, 702 էջ,
61. Коньшев В. Н., Сергунин А.А., Военная стратегия современного государства: - СПб: Изд-во Родные просторы, 2012. - 158 էջ,
62. Краткий юридический словарь / под. ред. А.Н. Азрилияна.- М.; Институт новой экономики, 2005, 1088 էջ,
63. Критерии законодательного установления пределов прав человека //в к. Конституция Российской Федерации: Проблемный комментарии. Отв. ред. В.А. Четвернин.- М., 1997, էջեր 30-36, 702 էջ,
64. Маклаков В.В., Вступительная статья к Конституция Японии //Конституция зарубежных государств; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2006, էջ 381-394, 608 էջ,
65. Марченко М.Н. Проблемы теории государства и права, М.: ТК Велби, Изд-во Проспект, 2005.- 640 էջ,
66. Мигачев Ю.И., Тихомиров С.В., Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, 456 էջ,

67. Михалев С. Н., Военная стратегия: Подготовка и ведение войн Нового и Новейшего времени /Вступ. ст. и ред. В. А. Золотарева. - М.: Жуковский: Кучково поле, 2003. - 952 с.;
68. Морозова Л.А. Теория государства и права. Курс лекции / Л.А. Морозова.- М.: Эксмо, 2008.- 480 էջ,
69. Нерсесянц В.С., Общая теория права и государства. – М.: изд. группа НОРМА-ИНФРА. М., 1999, 552 էջ:
70. Новгородцев П.И., Политические идеалы Древнего и Нового мыра. Изд. 2-е. М.: КРАСАНД, 2011.- 216 с.:
71. Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.- 2-е изд., перераб. и доп. - М.: Юристь, 1996, 360 էջ,
72. Общая теория права и государства /под ред. В.В. Лозарева.- М.: Юрист, 1994, 360 էջ:
73. «Подготовка государства к обороне» //в кн. Военная стратегия, с. 86-97; հղումը քստ <http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>.
74. Поляков А.В., Тимошина Е.В., Общая теория права.- СПб.: Издательский Дом С.-Петербур. Гос. Университета, 2005, 472 էջ;
75. Проблемы теории государства и права /Под ред М.Н. Марченко, - М.: Юристь, 2001.- 760 էջ,
76. Протасов В.М., Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-ое издание, перераб. и доп., М., Юрайт-М, 2007, 346 էջ,
77. Россинский Б.В., Административное право. – М.: Право и закон, 2001, 688 էջ,
78. Савенков А.Н. Конституционная законность и военная безопасность России. М., 2002, 381 էջ:
79. Самойлов В.Д., Государственного управление. Теория, механизмы, правовые основы.- М: ЮНИТИ\_ДАНА: Закон и право, 2015. 311 էջ,
80. Сорокин В. В., Общее учение о государства и права переходного периода: монография. – М.: Издат.-во «Юрлитинфарм», 2010, 425 էջ:
81. Свечин А., Стратегия. - М.-Л.: Государственное военное издательство, 1926. – 400 էջ,

82. Соколов А.Н., Правовое государство: от идеи до ее материализации.- Калининград: ФГУИПП, «Янтарный сказ», 2002.- 456 էջ,
83. Тактика /В.Г. Резниченко, И.Н. Воробев, Н.Ф. Миришниченко.- 2-е изд., перераб. и доп.- М.: Воениздат, 1988, 496 էջ,
84. Теория государства и права /Отв. ред. д.ю.н., проф. В.Д. Перевалов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Норма, 2006. 469 էջ,
85. Теория государства и права. Под ред. В. Корельского и В. Первалова. М., 1997. 570 էջ,
86. Теория государства и права /под ред. С.С. Алексеева. – М., Юрид. лит., 1985, 480 էջ,
87. Теория государства и права, курс лекций /под ред. Н.И. Матузова и А.В. Малько.- М., 2012, 672 էջ,
88. Тихомиров Ю.А. Государство: монография - М.: Норма: ИНФРА-М, 2013, 320 էջ,
89. Тихомиров Ю.А. Курс административного права и процесса.- М.: 1998, 798 էջ:
90. Тихомиров Ю.А., Управление на основе права.- М.: «Формула права», 2007.- 485 էջ,
91. Трикоз Е.Н., «Конституционное регулирование вопросов обороны и использования вооруженных сил в зарубежных государствах Европы». //«Институты конституционного права иностранных государств, отв. ред. док. юрид. наук Д. А. Ковачев, - М.; Городец-издат», 2002, 320 էջ:
92. Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, 224 с,
93. Халипов В.Ф., Энциклопедия власти. М.: Академический Проект. 2005. 1054 с.,
94. Чиркин В.Е., Опыт зарубежного управления: государственное и муниципальное управление: М.: Юрист, 2006, 184 էջ,

95. Эдвард Н. Люттвак, Стратегия: Логика войны и мира. /пер. с англ. яз. Ковалёв А.Н. и Платошкина Н.Н.. – 3-е изд.: Университет Дмитрия Пожарского; М., 2017, 63 с.; ([http://www.litres.ru/pages/biblio\\_book/?art=10412053&lfrom=204420127](http://www.litres.ru/pages/biblio_book/?art=10412053&lfrom=204420127));
96. Энгельс Ф., Происхождение семьи, частной собственности и государства // Маркс К., Энгельс Ф. Сочинения, изд. 2-е. — М.: Государственное изд.-во политической литературы, 1961. - 50 т.- Т. 21, с. 24-175,
97. Ю.М. Козлов, Е.С. Фралов, Научная организация управления и право, изд. Московского университета, 1986, 248 էջ,
98. Zippelius Reinhold, Geschichte der Staatsideen /Reinhold Zippelius.- Orig.- Ausg., 9, verb. Aufl.- Munchen: Beck, 1994, 213 էջ (գերմաներեն),
99. Katz Alfred Staatsrecht: Grundkurs im öffentlichen Recht /von Alfred Katz.- 11, uberarb. Aufl.- Heidelberg: Muller. Jur. verl., 1992, 398 էջ (գերմաներեն),
100. Auer J.E. Article nine of Japan's Constitution, from Renunciation of Armed Force «forever» to the third largest defense Budget in the World // Law and Contemporary Problems. Vol. 53, Spring 1990, № 2. P. 173 (անգլերեն),
101. Morgenthau Hans J. Politics Among Nations. 4-th edn., N.Y., 1967. 419 էջ (անգլերեն),
102. Wolfers A. Discord and Collaboration. Essays on International Politics. Baltimore: Johns Hopkins University Press, 1962. 312 էջ (անգլերեն),
103. Lippman W., US Foreign Policy: Shield of the Republic. Boston, 1943. 128 էջ (անգլերեն):

### **Գիտական հոդվածներ և պարբերականներ**

1. «ՀՀ զինված ուժերի զարգացման տեսլականը», Հայկական բանակ, թիվ 1-2 (95-96). 2018, 261 էջ,
2. «Պաշտպանության ռազմավարական վերանայում», Հայկական բանակ, թիվ 3 (85), 2015, 130 էջ,
3. Վաղարշյան Ա., «Պետության կառավարման ձևեր և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմներ», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 2 (88). 2016, էջ 45-53,

4. Վաղարշյան Ա., Բարսեղյան Լ., «Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. Նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 1-2(95-96). 2018, էջ 232-245,
5. Բարսեղյան Լ., «Երկրի պաշտպանության խնդրի (նպատակի) լուծման կառուցակարգի հնարավոր սահմանադրական ուղիները. Պաշտպանության գործառույթ, թե պաշտպանունակության սկզբունք», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N 105, 2018, էջ 23-31,
6. Բարսեղյան Լ., «Երկրի պաշտպանության հարաբերությունների օրենսդրական կարգավորումը անկանալուց հետո. Կարգավորման օբյեկտիվ խնդիրները և իրական միտումները 1991-1995 թթ», «Տինանսներ և էկոնոմիկա», # 5-6, (213-214), 2018, էջ 187-191,
7. Բարսեղյան Լ., «Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը և դրա արդիականացման ու ժողովրդավարացման հիմնական ուղղությունը. սոցիալ-իրավական պետության ձևաչափի մեխանիկական ընդօրինակում (ռեցեպցիա), թե ազգային առանձնահատկություններով տեղայնացում», «Հանրային կառավարում», ՀՀ ՊԿԱ-ի գիտական հանդես, N 21, 2017, էջ 61-78,
8. Բարսեղյան Լ., «Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական առանձնահատկությունները և պետության սահմանադրական կառուցմանը ներկայացվող պահանջները», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N 99, 2017, էջ 46-52,
9. Վաղարշյան Ա., «Հայրենիքի պաշտպանության խնդիրը և պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքների համակարգի վերախմաստավորման անհրաժեշտությունը», ԼՂՀ դատական իշխանություն, ԼՂՀ դատավորներ ՀԿ, Ստեփանակերտ, 2012, թիվ 1/5/, էջ 13-19,
10. Վաղարշյան Ա., «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը», Հայկական բանակ, Եր., 2016, թիվ 2(88) էջ 45-53,
11. Վաղարշյան Ա., Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգա-



յին և ձևական իրավական վերլուծություն), Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն, Եր., 2017, № 3 (24), էջ 3-16,

12. Половченко К.А., Конституционное регулирование вопросов обороны в Республике Сербия, Социально-политические науки, 2018, N 2, с. 114-118.

### **Ատենախոսություններ և սեղմագրեր**

1. Андреев А.Ф., Правовые основания применения Вооруженных Сил Российской Федерации по защите целостности и неприкосновенности территории России: Дисс. : канд. юрид наук. М.: ВУ, 2001, 165 էջ;

2. Золотарев В.А., Военная безопасность России: политико-правовые проблемы: Дисс. ... докт. юрид наук. М.: ВУ, 1999; 686 էջ;

3. Кучма Ю.Н., Законодательство военного времени - средство управления государством в условиях Великой Отечественной войны (системный анализ): Автореф. дис. ... канд. юрид. Наук, М.: ВУ, 1995, 23 էջ;

4. Мигачев Ю.И., Конституционные права военнослужащих (Сравнительное исследование законодательства Российской Федерации, США, Франции и ФРГ): Дисс. ... канд. юрид. наук. М.: ВКИ, 1993, 152 էջ;

5. Пчелинцев С.В., Правовое регулирование военного положения в Российской Федерации: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 1998, 234 էջ;

6. Томилов И.Г., Реализация принципа разделения властей в деятельности государственных органов по руководству Вооруженными Силами РФ: Дисс. ... канд. юрид. наук. М.: ВУ, 1999, 238 էջ;

7. Հարությունյան Հ., Պետության կառավարման ձևի արդի հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում: ԺԲ.00.01 մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2018, 27 էջ:

8. Գևորգյան Ա., Պետությունն ազգային անվտանգության համակարգային կառուցվածքում (ազգային առանձնահատկությունների տեսաիրավական վերլուծություն), ԺԲ.00.01 մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2019, 29 էջ: